

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

## ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆ -150



9(47.925.)

2h-58

հշ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆ – 150

(հողվածների ժողովածու)

5505

ՄԵՍՐՈՊ ԱՐԹ. ԱՇԾԵՄ  
ՄԱՏԵՆԱՇԱՐ



ARCH. MESROB ASHJIAN  
BOOK SERIES

130

130

ԵՐԵՎԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

2015



ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

Ա 583

### Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Վ. Բ. Բարխուդարյան, Ա. Ա. Մելքոնյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ա. Խառատյան, պատմ. գիտ. դոկտորներ Է. Լ. Դանիելյան, Հ. Մ. Հարությունյան, Է. Գ. Մինասյան, Ռ. Օ. Սահակյան, պատմ. գիտ. թեկնածուներ Կ. Հ. Խաչատրյան, Հ. Կ. Սուքիասյան:

Ա 583 Անդրանիկ Օզանյան–150 (հոգվածների ժողովածու), Եր.:  
Պատմության ինստիտուտ, 2015. – 210 էջ:

Ժողովածուում ընդգրկված են 2015 թ. փետրվարի 25-ին Երևանում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կազմակերպած հանրապետական գիտաժողովում ընթերցված գեկուցումները: Այն նվիրված էր Անդրանիկ Օզանյանի ծննդյան 150-ամյակին:

Գիտաժողովը տեղի է ունեցել ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի ֆինանսական օժանդակությամբ:

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-860-18-3 © ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2015

ՎԱՀԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ

պատմ. գիտ. դոկտոր, դոցենտ

### ՋՈՐՈՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻՆ

Հայ և բուլղար ժողովուրդների բարեկամության և հայ-բուլղարական զինված համագործակցության լավագույն արտահայտությունը հայերի մասնակցությունն էր 1912–1913 թթ. Բալկանյան առաջին պատերազմին: Այն համաշխարհային պատմության մեջ երկու հեռավոր, բայց բախտակից ազգերի միակամ գործելու եզակի օրինակներից է:

Այս պատերազմը, մասնավորապես «կորչի Բեռլինի պայմանագիրը» կարգախոսը, ոգեշնչման նոր աղբյուր դարձավ նաև հայ ժողովրդի համար<sup>1</sup>:

Բալկանյան առաջին պատերազմը (1912 թ. հոկտեմբերի 9 – 1913 թ. մայիսի 30) տեղի է ունեցել Բալկանյան դաշինքի (Բուլղարիա, Հունաստան, Սերբիա, Չեռնոգորիա) պետությունների և Օսմանյան կայսրության միջև: Պատերազմն ավարտվեց վերջինի պարտությամբ. 1913 թ. մայիսի 30-ի Լոնդոնի հաշտության պայմանագրով Օսմանյան կայսրությունը կորցրեց եվրոպական իր բոլոր տիրույթները բացառությամբ Կ. Պոլսի և Արևելյան Թրակիայի մի փոքր մասի: Բալկանյան երկրորդ պատերազմի ժամանակ (1913 թ. հունիսի 29 – օգոստոսի 10), Բուխարեստի պայմանագրով Բուլղարիան կորցրեց ոչ միայն իր նվաճումների մեծ մասը Սակեդոնիայում ու Օսմանյան կայսրությունում, այլև Հարավային Դոբրուջան, իսկ Կ. Պոլսի հաշտության պայմանագրով (սեպտեմբերի 29) Օսմանյան կայսրությանը վերադարձրեց Ադրիանուպոլիսը: Բալկանյան դաշինքի պառակտումը, հետո էլ պարտությունը բացատրվում են դաշնակիցների տարածայնություններով և մեծ տերությունների հրահրմամբ:

<sup>1</sup> Жебокрицкий В., Болгария во время Балканских войн 1912-1913 гг., Киев, 1961, с. 96.

Արշակ Չոպանյանը Փարիզից Բուլղարիայի վարչապետ Իվան Գեշովին ուղղված նամակում գրում էր. «Մենք երբեք չենք մոռանա համիդյան ջարդերից հետո Ձեր ժողովրդի հյուրընկալությունը: Հայերի գաղթը եղեռնի արդյունք էր: Այժմ այդ հայերը դժվարանում են արտահայտել իրենց զգացումները: Սակայն կովկասահայերը իրենց թերթերում գրում են և արտահայտում հանդուգն որոշումներ բալկանյան ժողովուրդներին օգնելու գործում»<sup>2</sup>:

Պատերազմի նախապատրաստական շրջանում բուլղարական բանակի սպա Կարապետ Վարդազարմյանը հրավիրում է Բուլղարիայում բնակվող Անդրանիկ Օզանյանին ու հայկական կուսակցությունների այլ ներկայացուցիչների և առաջարկում ազգային կամավորական խմբեր կազմակերպել: Այդ նպատակով Պլովդիվում խորհրդակցություն է հրավիրվում, որին մասնակցում էին Կ. Վարդազարմյանը, Լևոն Ֆեներձյանը, Անդրանիկը, Ասատուր Պետիկյանը:

Անդրանիկը, որը 1907 թվականից բնակություն էր հաստատել Բուլղարիայի Գալաթա քաղաքում, եռանդուն մասնակցություն է ունենում բուլղարների և մակեդոնացիների հակաթուրքական ազատագրական շարժմանը: Թիֆլիսի ժանդարմական վարչության պետին հայտնի էր, որ Վառնայում գտնվող Անդրանիկը 1911 թ. Սև ծովով գեներ էր փոխադրել Բուլղարիա<sup>3</sup>: Նա սերտ կապեր էր հաստատել մակեդոնական ազատամարտի անվանի գործիչներ Սարաֆովի և Գարվանովի հետ: Ժամանելով Սոֆիա՝ Անդրանիկը Գարեգին Նժդեհի (Գարեգին Տեր-Հարությունյան) ակտիվ մասնակցությամբ ձեռնամուխ եղավ հայկական կամավորական ջոկատ ստեղծելու գործին: Կամավորների 17 000-ի հասնող Մակեդոնա-Օդրիսյան երկրապահ զորքի ընդհանուր հրամանատար, գեներալ-մայոր Նիկոլայ Գենևի

<sup>2</sup> Ղասաբյան Չ. Մ., Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմության (1896-1970), Երևան, 1986, էջ 19:

<sup>3</sup> Агаджан Озаян, Документы и материалы, "Вестник архивов Армении". 1991, N 1-2, с. 110.

հրամանով հայկական կամավորական վաշտը պաշտոնապես միացվեց 12-րդ Լոզենգրադյան դրուժինային (հրամանատար՝ լեյտենանտ Տրիֆոն Բոյաջիև)՝ որպես նրա երկրորդ վաշտ: Այն վերջնականապես ձևավորվեց հոկտեմբերի 8-ին:

1912 թ. հոկտեմբերի 3-ին կամավորական զորքի ընդհանուր հրամանատար, գեներալ-մայոր Ն. Գենևի և շտաբի պետ, մայոր Պյոտր Դարվինգովի կարգադրությամբ Հայկական վաշտի հրամանատար է նշանակվում 1906 թ. Սոֆիայի Կնյաժևոյի սպայական դպրոցն ավարտած, բուլղարական բանակի պողպորուչիկ Գարեգին Նժդեհը: Ազգային վաշտի հրամանատարի պաշտոնում տվյալ դեպքում Գ. Նժդեհին հաստատելու առաջարկը պատկանում էր բուլղարական ազատագրական պայքարի անվանի գործիչներից փոխգնդապետ Ալեքսանդր Պրոտոգե-րովին:

Քանի որ Բուլղարիայի օրենքներով վաշտի հրամանատար կարող էր դառնալ միայն այդ պետության սպան, այդ իսկ պատճառով հայկական համայնքում առավել հեղինակավոր Անդրանիկը դառնում է վոյևոդա (խմբապետ): Նույն սկզբունքից ելնելով՝ Անդրանիկն առաջարկում էր բուլղարական բանակի մեկ այլ հայազգի սպայի՝ Պողոս Պողոսյանի թեկնածությունը, սակայն նա արդեն իսկ պաշտոն էր ստացել և մեկնել նշանակման վայրը:

Սահմանված կարգի համաձայն՝ նման վաշտերը կարող էին զինակոչել 150-160 մարդ, սակայն, որպես բացառություն, հայերին թույլ տրվեց հավաքագրել 230 հոգի: Թրակիա կատարած արշավի ժամանակ նրան միացան ևս 42 կամավորներ: Բալկանյան առաջին պատերազմին մասնակցած հայերի թիվն անհամեմատ ավելի շատ էր, քանի որ, բացի հայկական վաշտից, հայեր էին մարտնչում նաև բուլղարական բանակի այլ ստորաբաժանումներում: Նրանցից էին՝ 12-րդ դրուժինայի մակեդոնական III վաշտի հրամանատարի փոխտեղակալ Թորգոմը (Արտաշես Սերեճյան), բժիշկ Արմեն Սյունին (Արշակ Մնացա-

կանյան), բուժակ Արանը և ուրիշներ: Ա. Սյունին Մակեդոնա-Օդրինյան III բրիգադի բժշկա-առողջապահական բաժնի ընդհանուր վարիչն էր<sup>4</sup>: Սոֆիայի իգական գիմնազիայում Անդրանիկը և Գ.Նժդեհը ղեկավարում էին հայ երիտասարդների ռազմական պատրաստման գործը: Մարտական խմբեր են ձևավորվում Վառնայում, Ռուսչուկում, Դոբրուջայում, Ֆիլիպոպոլսում, Բուրգասում, Սոպրիչում<sup>5</sup>:

Խորհրդանշական էր, որ ռազմի դաշտ մեկնելուց առաջ հայ կամավորներն առաջին հերթին ուխտի գնացին Սոֆիայի կենտրոնական գերեզմանատանը հանգչող Քրիստափոր Միքայելյանի շիրիմին: Ճառով հանդես եկավ Նժդեհը, որն ասաց. «Դուք, պարտականութեան ազատատենչ ասպետներ, թշնամիի դեմ նետվել է առաջ ուզեցիք ձեր դրոշակներով միասին ձեր հպարտ գլուխները ծռել Քրիստափորի գերեզմանին առջև, որը ազատութեան ծարավին հետ մեր սրտերուն մեջ վրեժխնդրութեան սրբազան կրակը թրեց... երդվեցք մեծ յեղափոխականի գերեզմանի առաջ»<sup>6</sup>:

1912 թ. հոկտեմբերի 8-ին վաշտը Սոֆիայի հայկական Ա. Աստվածածին եկեղեցում հանդիսավոր երգում տվեց, հոկտեմբերի 23-ին մասնակցեց Ալեքսանդր II-ի արծանի մոտ կազմակերպված հանրահավաքին, կամավորները լուսանկարվեցին և հայկական գաղթօջախի ներկայացուցիչների ուղեկցությամբ ճանապարհվեցին ռազմաճակատ<sup>7</sup>: Ֆիլիպոպոլսում նրանք ընդունեցին Բուլղարիայի թագուհու գործած կամավորների դրոշը: Ռոդոսթոյում Գ. Նժդեհի արտասանած ճառն ինչ-որ տեղ բա-

<sup>4</sup> Ա. Սյունին հեղինակ է նաև սկզբնաղբյուրային բնույթ ունեցող «Հայկական վաշտը Անդրանիկի առաջնորդությամբ 1912-1913 թթ. բալկանյան պատերազմում» աշխատության, որը լույս է տեսել Բաքվում 1914 և Սոֆիայում 1926 թվականներին:

<sup>5</sup> Սյունի Ա., Հայկ. զորամասը Պալքան-բուրք պատերազմին մեջ, Սոֆիա, 1926, էջ 2-3:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 6:

<sup>7</sup> Սյունի Ա., Հայկական վաշտը Անդրանիկի առաջնորդությամբ 1912-1913 թթ. Բալքանյան պատերազմում, Բազու, 1914, էջ 35:

ցատրում և փորձում է հիմնավորել հայերի մասնակցությունը հեռավոր, բայց բախտակից ժողովրդի հակաթուրքական պայքարին. «Այո՛, Մակեդոնացի՛ եղբայրներ, այդ ողբերգական օրերին, կուի այդ սպասումի ժամանակ ես, ինչպես և հայ ժողովուրդը, որ սիրում ենք Մակեդոնիան, նրա տանջանքները և նրա ապագա ազատութիւնը, մենք ձեզ հետ էինք մեր մտքերով, մենք ձեզ հետ էինք մեր զգացմունքներով: Մենք եղբայրներ էինք մեր դժբախտութիւններով, մենք եղբայրներ էինք մեր ցանկութիւններով: Մեր ժողովուրդները եղբայրացան տաճկական կախաղանների վրայ և տաճկական բանտերում... Թոյլ տւէք յուսալու, որ նա (Մակեդոնիան – Վ. Մ.) իւր երջանկութեան մեջ չի մոռանա կարեկից լինելու իւր դեռևս դժբախտ քրոջը՝ Տաճկա-Հայաստանին, և հարկաւոր դէպքում օգնութեան ձեռք կը կարկառէ նրան՝ տաճկական լծի տակից ազատելու համար»<sup>8</sup>:

Բոլշևիկ Լև Տրոցկին՝ Անտիո Օտտո կեղծանվամբ, «Անդրանիկը և իր ջոկատը» հողվածում այսպես է նկարագրել Անդրանիկին. «Նա փառահեղ է իր մուգ մոխրագույն հագուստով. կողքից կախ է ընկած հեռադիտակ և բրաունինգ ատրճանակ, կրծքին ամրացրած է մի փունջ ծաղիկ և ժապավեն՝ «Մահ կամ ազատություն» մակագրությամբ»<sup>9</sup>: «Վաշտի հրամանատարը սպայի հագուստով մի հայ էր, որին պատվում էին պարզապես «ընկեր Գարեգին»<sup>10</sup>:

Իր անմիջական տպավորությունները Լ. Տրոցկին անփոփում էր հետևյալ ձևակերպմամբ. «Այսպիսին է մաքուր ռոմանտիզմի փոքրիկ գլուխը բալկանյան իրադարձությունների սարսափելի գրքում»<sup>11</sup>:

Պատերազմի ժամանակ Հայկական վաշտը մասնակցեց Մեսթանլիի (հոկտեմբերի 6) մարտերին, նոյեմբերի 6-ին Արևելյան Թրակիայում՝ Մակազ-Թեփեի մոտ, ռազմական գործողութ-

<sup>8</sup> Սյունի Ա., Հայկական վաշտը, էջ 109-110:

<sup>9</sup> Հորիզոն, 3 օգոստոսի 1913 թ.:

<sup>10</sup> Антраник Озаян. Документы и материалы. с. 113-116.

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 116:

յունների մեջ մտավ և աչքի ընկավ Ուզուն-Յամիղլար լեռնագագաթի և Բալկան Թորեսի շրջանում ծավալված մարտերում:

12-րդ դրուժինայի հրամանատար, փոխտեղակալ Կունևր, գնահատելով հայ կտրիճների հերոսությունը, ասել է. «Օ, առիժներ են, կատարեալ առիժներ, այսօր մեզ բոլորիս նրանք փրկեցին, եթե նրանք չլինեին, մենք բոլորս էլ ջարդելու, զոհելու էինք»<sup>12</sup>: Մակագ-Թեփուն, որտեղ հայերը ամենից շատ զոհերը տվեցին, հնչում էին բուլղարների հիացական բացականչությունները՝ «Браво арменци, браво»: Մակագ Թեփեի մարտերից հետո Գ. Նժդեհը դիմում է իր զինակիցներին. «Սիրելի՛ ընկերներ, համբուրում եմ ձեր սուրբ վերքերը. կեցցե՛ Մակեդոնիայի ազատութեան համար մղուղ կռիւը: Դուք պատուով կատարեցիք ձեր պարտքը: Գարեզին»<sup>13</sup>:

Պատերազմում Գ. Նժդեհի հանդեպ ձևավորված անսահման նվիրվածության և հարգանքի մասին իր հերթին վկայում է բուլղար ականատեսը. «Շարքային զինվորների վերաբերմունքը իրենց վաշտի հրամանատար, փոխպորուչիկ Գարեզին Նժդեհի նկատմամբ նման չէր սովորական պետի հանդեպ ունեցած հարգանքի, այլ ինչ-որ առանձնահատուկ ակնածանքի՝ կարծես ինչ-որ գերագույն էակի առաջ»<sup>14</sup>:

Անցնելով 25 կիլոմետր՝ Յայկական վաշտը ազատագրեց Գյունուրջինե քաղաքը, նոյեմբերի 15-ին զորասյան գլխամասում հետապնդելով թուրքերին՝ հասավ Մարիցայի գետափը, դիրքեր գրավեց Մերհանլա գյուղի մոտ: Անդրանիկն այստեղ թշնամու թնդանոթային ուժեղ կրակի տակ կարողացավ հմուտ շրջանց կատարել խուճապի մատնված թուրքական զորամասերը սկսեցին հանձնվել: Գերի հանձնվեց նաև թուրքական կորպուսի հրամանատար Մեհմեդ Յավեր փաշան: Անցնելով Դիմոտիկա, Ուզուն-Քյուփրի, Քելան, Մալգարա քաղաքներով՝ Յայկա-

<sup>12</sup> Սիւնի Ա., Յայկական վաշտը, էջ 76-77:

<sup>13</sup> Մարմարեան Ա., Զօր. Անդրանիկ եւ իր պատերազմները, Կ. Պոլիս, 1920, էջ 211-212:

<sup>14</sup> Տե՛ս Սիմոնյան Գ., Անդրանիկի ժամանակը, հ. Ա, Երևան, 1996, էջ 349:

կան վաշտը դեկտեմբերի 14-ին հասավ Մարմարայի ծովափի Պանադոս գյուղը, որտեղ Ադրիանուպոլսի զրավունից հետո էլ շարունակում էր հերոսաբար պաշտպանել Մարմարայի ծովափնյա դիրքերը (1912 թ. դեկտեմբերի 16 – 1913 թ. հունվարի 20, ապա հունվարի 29 – մարտի 22-ը): Էնվեր փաշան, որ 10 հազար դեսանտային զորք էր ափ հանել, ջախջախվեց Շար-Քեոյի, Միսրեթի և Յալիպոլի մոտ: Յաշտուլունից հետո՝ ապրիլի 21-ին, կամավորական դրուժիաները ուղևորվեցին ազատագրված Մակեդոնիա, որտեղ նրանք որոշ ժամանակ կայազորի դեր պետք է կատարեին: Բալկանյան երկրորդ պատերազմում, երբ դաշնակիցներն իրար դեմ ելան, Սերբիան և Մակեդոնիան միացան Ռումինիային՝ ընդդեմ Բուլղարիայի, Յայկական վաշտն այլևս չմասնակցեց քրիստոնյա երկրների պատերազմին:

Ընդհանուր առմամբ Կրջալյան զորաբանակի կազմում Յայկական վաշտը մասնակցեց մոտ 20 արշավանքի և աչքի ընկավ հատկապես Մեստանլիի (1912 թ. նոյեմբերի 4), Ուզուն Յամիղլերի (նոյեմբերի 6), Բալկան-Դերեսի (նոյեմբերի 7), Սել-Մերհալիի (նոյեմբերի 15) մարտերում: Պատերազմի երկրորդ շրջանում կամավորական բանակի կազմի մեջ հայերը մասնակցել են Մերեֆթե (1913 թ. հունվարի 22), Շար-Քեոյ քաղաքների զրավմանը, նույն վայրում թուրքական դեսանտի ոչնչացմանը (հունվարի 26-28) և այլ արշավանքների<sup>15</sup>:

Կոչանի քաղաքի մոտ 1913 թ. մայիսի 28-ին Յայկական վաշտը հանձնեց գույքը և պաշտոնապես կազմալուծվեց: Գերազանց ծառայության համար Անդրանիկը ստացավ փոխտեղակալի (պրոպորուչիկ), Նժդեհը՝ պրոուչիկի աստիճան, 8 հոգի՝ կրտսեր ենթասպայի և 16 հոգի՝ եֆրեյտորի աստիճան: Բուլղարական կառավարության անունից Ա. Պրոտոզերովը «Ձինվորական քաջության II աստիճանի խաչով» Անդրանիկին պար-

<sup>15</sup> Մակարեան Ա., Յուշագիրք Թրակիոյ եւ Մակեդոնիոյ հայ զաղութներու, Սելանիկ, 1927, էջ 537-538:

զևատրել էր դեռ 1913 թ. հունվարին՝ Ռոդոսթոյի հանդիսությունների ժամանակ<sup>16</sup>:

Սպայական քաջության խաչով պարգևատրվեց Նժդեդը, մեկ հոգի՝ III աստիճանի, իսկ 23 հոգի արժանացան IV աստիճանի խաչերի: Անդրանիկը ստացավ նաև «Բալկանյան արծիվ» ժողովրդական տիտղոսը: Երախտապարտ բուլղար ժողովուրդը Սոֆիայում հավերժացրել է Անդրանիկի և Նժդեհի անունները: Հույն-բուլղարական սահմանի վրա այսօր կանգնած է Առաջին բալկանյան պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը, որի պատվանդանի վրա փորագրված են բազմաթիվ հայերի անուններ: Այդ առթիվ Բուլղարիայի ազգային պետական գործիչ Միլան Դամյանովը գրել է. «Այդ անուններն օտար չեն, նրանք մեր զինակից եղբայրներն են, որոնք արյուն թափեցին իրենց հայրենիքի և բախտակից Մակեդոնիայի և Թրակիայի համար: Փառք հայկական գումարտակին»<sup>17</sup>:

«Ճամկահայաստանը (Արևմտյան Հայաստանը – Վ. Մ.) պետք է հավատացած լինի, որ, շնորհիվ այդպիսի որդիների, որոնք ընդունակ են մեռնելու օտար գործի համար, մոտիկ ասպագայում կարող են ունենալ երջանիկ և հարատև ապահովություն», - գտնում էին Գեներալ Ռ. Դարվինգովը: Իսկ Ռոդոսթոյի նախկին նահանգապետ Է. Դիմիտրովը նշում էր. «Այդ պատերազմն արշավ էր հանուն եղբայրների ազատագրման: Եվ տարօրինակ կլիներ, եթե այդ արշավում հայերը բացակայեին»<sup>18</sup>:

Բալկանյան պատերազմների շրջանում Անդրանիկը և մյուսները նշանակալի աշխատանք տարան նաև Բուլղարիայի հայկական գաղթօջախներում՝ Հայկական հարցի աշխուժացման և բալկանյան ժողովուրդների օրինակով Արևմտյան Հայաստանն Օսմանյան կայսրությունից ազատագրելու ուղղությամբ:

<sup>16</sup> Андраник Озаян. Документы и материалы, с. 123-127.

<sup>17</sup> "Пеход", 27 апреля 1941 г.

<sup>18</sup> Андраник Озаян. Документы и материалы, с. 127.

**ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ՍԱՐՏԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ  
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՌՈՒՄ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՈՒՄ  
(1914 թ. հոկտեմբերի 23 – 1916 թ.)**

Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական (Կովկասյան) ռազմաճակատում ռուսական զինուժի հետ մարտական գործողություններին մասնակցել են նաև հայ կամավորական խմբերը<sup>1</sup>: Հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունը մասնակցեց կամավորական շարժմանը՝ հույս ունենալով, որ Արևմտյան Հայաստանը կազատագրվի օսմանյան տիրապետությունից և արևմտահայությունը կստանա խոստացված ինքնավարությունը:

Հայ կամավորական ստորաբաժանումներից առաջինը կազմավորվեց Անդրանիկի հրամանատարության ներքո գործող I խումբը, որը աչքի ընկավ մի շարք մարտական գործողություններում, որոնցից առավել նշանավորներն էին Դիլմանի ճակատամարտը և Բիթլիսի (Բաղեշի) գրավումը:

Ռուս-թուրքական ռազմաճակատում I խմբի մարտական գործողությունների պատմությունը կարելի է բաժանել հետևյալ փուլերի.

1. 1914 թ. հոկտեմբերի 23-ից մինչև 1915 թ. հունվարի 5-ը,
2. 1915 թ. հունվարի 5-ից մինչև ապրիլի 1-ը,
3. 1915 թ. ապրիլի 15-ից մինչև հուլիսյան նահանջը,
4. 1915 թ. սեպտեմբերից մինչև 1916 թ. գարուն:

Հայկական խմբերից առավել աչքի էր ընկնում I դրուժինան, որի մարտիկները մասնակցում են տարբեր մարտական գործողությունների և արժանանում ռուսական հրամանատար

<sup>1</sup> Հայ կամավորական ստորաբաժանումները հայտնի էին գունդ, բանակ և դրուժինա անուններով:

րության բարձր գնահատականին: Կամավորական I խումբը տեղակայվում է Սալմաստում: Նրա հրամանատարն էր Անդրանիկը (Օզանյան), որի օգնականները կամ տեղակալներն էին Սեպուհը (Արշակ Ներսիսյան) և Սմբատը (Բորոյան): Խմբի բժիշկն էր Հակոբ Ջավրիյանը (Յակով Ջավրիկ)<sup>2</sup>: Շտաբի կառավարիչն (շտաբի պետ) էր Արշակ Ջամալյանը:

Անդրանիկի հրամանատարությամբ I խումբը Ջուլֆայից շարժվում է Խոյ, ուր միանում է գեներալ Ֆեոդոր Գ. Չեռնոզուբովի Ադրբեջանական ջոկատին<sup>3</sup>: Նոյեմբերի 3-ին դրուժինան ստացավ մարտական առաջին առաջադրանքը՝ գրավել Բուրուշ-Խորան լեռնանցքը: Մարտից առաջ կամավորներից մեկը աղոթք կարդաց՝ «Հայր մեր», որից հետո կամավորները, ռազմարշավային գորասյուն կազմելով, ուղղվեցին Դիլման: Ժամը 12-ին դրուժինան հասավ Դիլման, որտեղ գեներալ Ֆ. Գ. Չեռնոզուբովը մարտիկների ստուգատես կատարեց, ապա հրամայեց սկսել հարձակումը: Նոյեմբերի 4-ին Դեեր գյուղում դրուժինային միանում է Պոլտավյան կազակային գնդի 3/4 հարյուրյակը՝ կապիտան Մ. Հովսեփյանի գլխավորությամբ<sup>4</sup>:

Գեներալ Ֆ. Գ. Չեռնոզուբովի առաջարկությամբ գեներալ Թ. Նազարբեկյանը գալիս է Հայկական I խմբի տեղակայման վայրը, որպեսզի ներկա գտնվի ստուգահանդեսին, սակայն երկար սպասելուց հետո տեղեկանում է, որ կամավորներին շտապ ուղարկել են Դիլմանից արևմուտք գտնվող Բուրուշ-Խորանի լեռնանցքը: Բանակային հետախուզությունը տեղեկացրել էր այդ շրջանում հակառակորդի զգալի ուժերի կուտակման մասին<sup>5</sup>:

Նոյեմբերի 5-ին I խումբը մարտական առաջին մկրտությունն ունեցավ Աշնակ գյուղի համար մղված մարտում: Գյուղը

գտնվում էր Բուրուշ-Խորան լեռնանցքից հարավ: Վաղ առավոտյան Անդրանիկն անձամբ գլխավորում է գրոհը<sup>6</sup>: Թուրք-քրդական 2,5 հազարի հասնող ուժերը, գրավելով գերիշխող դիրքեր, համառ դիմադրություն են ցույց տալիս և նույնիսկ փորձում են հակազրոհի դիմել: Քրդական 500 հոգուց բաղկացած ջոկատը փորձում է շրջանցել կամավորների աջ թևը: Նիկոլը երկու դասակներով կազմակերպելով պաշտպանությունը՝ կասեցնում է քրդական զորաշարժը: Ինչպես վկայում է գեներալ Թ. Նազարբեկյանը, նոյեմբերի 5-ին Անդրանիկն իր ուժերով միայնակ դիմազրավում էր հակառակորդին: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 6-ին, կամավորներին օգնության են շտապում ռուսական լրացուցիչ ուժեր՝ հրածիզների մեկ գումարտակ չորս լեռնային թնդանոթներով և կազակային չորս հարյուրյակ<sup>7</sup>: Ժամը 16-ին մոտենում են քրդական նոր ուժեր, որոնք անցնում են ճակատային հարձակման: Անդրանիկի հրամանով կամավորների կիսավաշտն անցնում է հակազրոհի և հակառակորդին հարկադրում է նահանջել:

Հայ-կազակական ուժերը զբաղեցրել էին ճակատի մոտ 3,5 վերստը: Առավել խոցելի տեղամասը պաշտպանության ծախս թևն էր: Այն ուժեղացվում էր երկու դասակներով: Հայ-ռուսական ուժերը ոչ միայն ետ են մղում գրոհը, այլև անցնելով հակահարձակման՝ հակառակորդին դուրս են մղում գյուղից: Աշնակի համար մղած մարտում զոհվում է 6 և վիրավորվում 8 կամավոր: Հայ կամավորներն արժանանում են Ադրբեջանական ջոկատի<sup>8</sup> հրամանատար, գեներալ Ֆ. Գ. Չեռնոզուբովի բարձր գնահատականին<sup>9</sup>:

<sup>6</sup> Գեներալ Թ. Նազարբեկյանի վկայությամբ, «Հայկական I դրուժինան Պարսկաստանում գտնվող զորքերից (ռուսական-Ռ. Ս.) առաջինն էր, որ մարտական մկրտություն ստացավ» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, ք. 17 շրջ.):

<sup>7</sup> ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, ք. 18:

<sup>8</sup> Ջոկատը կոչվում էր «Ադրբեջանական»: Հյուսիսային Պարսկաստանի Ատրպատական անվան աղավաղված ձևից:

<sup>9</sup> Андраник Озанян. Документы и материалы. Составители: Руководитель – Арутюнян А. О., Эвоян В. С., Мирзоян С. С., Сафян П. Г., Шатирян Г. М., «Բանբեր Հայաստանի արխիվներ», 1991, N 1-2, էջ 138:

<sup>2</sup> Գեներալ Թ. Նազարբեկյանի բնորոշմամբ. «Այդ դրուժինան նրա (Չ. Ջավրիկի-Ռ. Ս.) գավակն էր» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, ք. 15):

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 133, ք. 30:

<sup>4</sup> Նույն տեղում, ֆ. 1267, ց. 2, գ. 32, ք. 4 շրջ.:

<sup>5</sup> Նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 1, ք. 17:



Նոյեմբերի 6-ի առավոտյան թուրք-քրդական ուժերն անցնում են լայնածավալ հարձակման փորձելով վերագրավել Աշնակը: Հարձակումը ետ է մղվում: Հայ-կազակային պաշտպանության ծախսն է տեղակայված ուժերն անցնում են հարձակման և հակառակորդին դուրս մղում զբաղեցրած դիրքերից: Ժամը 13-ին օգնության է հասնում Կովկասյան V հրաձգային գունդը երկու լեռնային թնդանոթներով: Հրետանու կրակը և ռուս-հայկական զորքերը վերջնականապես պարտության մատնեց թշնամուն: Հակառակորդը խուճապահար փախավ: Գերվեց 15 քուրդ: Որպես ռազմավար կամավորները գրավեցին 15 արկղ փամփուշտ, դեղամիջոցներ և 17 ծի: Կամավորների կորուստը կազմեց 11 սպանված և 15 վիրավոր<sup>10</sup>:

Այսպիսով, մինչև համալրման ժամանակը հայ կամավորները և կազակները մեկ օրից ավելի դիմակայում էին գրեթե չորս անգամ զերազանցող թուրք-քրդական ուժերին: Ավելին, պաշտպանվելով տեղամասի ծախսն, կամավորները երկու անգամ անցնում են հակահարձակման, որը հնարավորություն է տալիս ապահովել պաշտպանությունը թևային կրակից:

Նոյեմբերի 6-ի երեկոյան կամավորները և Սունժենյան-Վլադիկավկայան I կազակային գունդը (4 թնդանոթ և հրաձիգների մեկ գումարտակ) տեղակայվում են Բուրուշտրան գյուղում: Իսկ հաջորդ օրը՝ նոյեմբերի 7-ին, առավոտյան ժամը 8-ին գեներալ Թ. Նազարբեկյանի հրամանով սկսվում է լեռնանցքի գրավման օպերացիան: Թուրքերը և քրդերը Բուրուշտրան լեռնանցքից երկու թնդանոթից և հրացաններից կրակ են բացում<sup>11</sup>: Հայ կամավորների երկու վաշտ զբաղեցնում են մարտական տեղամասի ծախսը: Կամավորների երկու վաշտ գտնվում էր նրանց թիկունքում՝ որպես պահեստազոր: Ընդհանուր ղեկավարությունն իրականացնում էր Սունժենյան-Վլադիկավկայան գնդի հրամանատար, գնդապետ Սերգեյ Չենցովը:

<sup>10</sup> ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 32, թ. 8 շրջ.-9:

<sup>11</sup> Նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 18 շրջ.:

Հրետանային նախապատրաստությունից հետո հակառակորդը հարձակվում է ռուսական պաշտպանական տեղամասի ծախսն, թուրքական հետևակային ուժերը ևս կենտրոնանում են ծախսն, թուրքական հետևակային ուժերը ևս կենտրոնանում են ծախսն, թուրքական հետևակային ուժերը ևս կենտրոնանում են ծախսն:

Ռուսական հրետանու պատասխան կրակը թուրք հրետանավորներին հարկադրում է դադարեցնել հրետանակոծությունը: Դա հնարավորություն է տալիս կամավորներին և հրաձիգներին վարել նշանառու կրակ: Հակառակորդը, չդիմանալով հայ-ռուսական ուժերի ճնշմանը, փախուստի դիմեց: Այդ մարտից հետո Աղրբեջանական ջոկատի գործառնները և Հայկական I կամավորական խումբը առաջացան Բուրուշտրան: Վերջինի համար մղված մարտերում կամավորների կորուստը կազմել է երկու սպանված և երկու վիրավոր<sup>12</sup>: Մարտին մասնակցում է գեներալ Ֆ. Գ. Չեռնոզուբովի ուղարկած 50-հոգանոց քրդական հեծելաջոկատը: Գեներալ Թ. Նազարբեկյանի վկայությամբ՝ քրդերը որևէ օգուտ չտվեցին: Նրանց հետաքրքրում էր միայն թալանը, որը բացասաբար էր ազդում զորքի կարգապահության վրա<sup>13</sup>: Այդ էր պատճառը, որ նոյեմբերի 9-ին գեներալ Թ. Նազարբեկյանը քրդերին հրամայում է վերադառնալ Պարսկաստան<sup>14</sup>:

Աղրբեջանական ջոկատի հետագա առաջխաղացումն ընթանում է հակառակորդի կողմից առանց որևէ լուրջ դիմադրության:

1914 թ. նոյեմբերի 7-ի երեկոյան կամավորները զիջերեցին Բուրուշտրան գյուղում: Նոյեմբերի 8-ին գնդապետ Ս. Ի. Չենցովի հրամանով կամավորները պետք է գրավեին Կաշկուլյան լեռնանցքը: Երեկոյան ժամը 17-ին դրուժինան առանց մարտի գրա-

<sup>12</sup> Զօրաւար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը, Երևան, 2000, էջ 11: 1914 թ. նոյեմբերի 19-ին Ազգային բյուրոյին ուղղված հեռագրում Ա. Չամալյանը հայտնում է, որ Աշնակի և Բուրուշտրանի համար մղած մարտերում I խմբի կորուստը կազմել է 10 սպանված և 11 վիրավոր: Նա միաժամանակ խնդրում է ուղարկել ձմեռային հագուստ (տես ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 27, թ. 9):

<sup>13</sup> ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 19 շրջ.:

<sup>14</sup> Նույն տեղում, թ. 22 շրջ.:

վում է Կաշկուլ գյուղը և մարտական պահպանությունը տեղակայում է Կաշկուլի լեռնանցքում:

Վերը նշված մարտական գործողությունները կամավորները մղում էին ձմեռային պայմաններում՝ լեռներում: Նրանք գրկված էին տաք հագուստից և կերակուրից: Կամավորները ստիպված էին սնվել միայն հացով, իսկ ջրի փոխարեն խմել հալեցրած ձյուն: Կամավորները չունեին լեռնային հանդերձանք, երթային վրաններ, զինվորական խոհանոցներ և այլն: Մարտիկները հրացանները ստացել էին հոկտեմբերի 28-ին, այսինքն՝ ռազմաճակատ մեկնելուց հինգ օր հետո<sup>15</sup>: Չնայած վերը նշված թերություններին, դրուժինան իրեն ավելի լավ դրսևորեց, քան շարային որոշ զորամասեր:

Բուրուշխորան և Կաշկուլ լեռնանցքների գրավումը ռազմական կարևոր նշանակություն ունեցավ: Այն հնարավորություն էր տալիս զարգացնել հարձակումը Օսմանյան կայսրության տարածքում: Պեներալ Ֆ. Գ. Չեռնոզուբովի միջնորդությամբ Անդրանիկը ներկայացվում է պարզևատրման Ար. Գեորգիի IV աստիճանի մեղալով<sup>16</sup>: Նոյեմբերի 8-ի երեկոյան Ջանիկ գյուղ է գալիս գեներալ Թ. Նազարբեկյանի Կովկասյան II հրաձգային բրիգադը, որի կազմի մեջ է մտնում Հայկական I կամավորական դրուժինան: Նոյեմբերի 9-ից մինչև 16-ը կամավորները հսկում են Կաշկուլյան լեռնանցքը: Խմբի զլխավոր ուժերը տեղակայվում են Խանիկում:

1914 թ. նոյեմբերի 15-ի երեկոյան ստացվում է գեներալ Թ. Նազարբեկյանի հրամանը՝ նոյեմբերի 16-ին I խումբը պետք է տեղակայվի Կոթուր գյուղաքաղաքում, ուր պետք է մոտենա Սունժենյան I կազակային գունդը՝ գնդապետ Ջեմցովի հրամանատարության ներքո: Ինչպես վկայում է գեներալ Թ. Նազարբեկյանը, Կոթուրի բնակիչները մահմեդականություն ընդունած հայեր էին<sup>17</sup>:

<sup>15</sup> ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 32, ք. 2 շրջ.-3:

<sup>16</sup> Նույն տեղում, ֆ. 818, ց. 1, գ. 536, ք. 31:

<sup>17</sup> ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, ք. 26:

ճանապարհների դժվարությունների պատճառով խումբը միայն երեկոյան ժամը 17-ին հասավ Կոթուր, ուր և շուտով եկավ կազակային գունդը: Հայ-կազակական ուժերին հանձնարարված էր նոյեմբերի 17-ին գրավել Կոթուրի կիրճը, որն ուներ ռազմավարական նշանակություն, քանի որ նրա միջով էր անցնում Խոջից վան տանող միակ ճանապարհը<sup>18</sup>:

Հակառակորդը վաղօրոք զբաղեցրել էր երեք վերստ ձգվող գերիշխող դիրքեր: Թ. Նազարբեկյանը և շտաբի պետը, ուսումնասիրելով տեղանքը և հակառակորդի զբաղեցրած դիրքերը, որոշում են կիրճի ճակատային գրոհը զուգակցել լեռներով շրջանցիկ զորաշարով<sup>19</sup>: Այստեղ դիրքավորվել էին քրդական զգալի ուժեր և մեկ վաշտ զինվորներ<sup>20</sup>:

Կապիտան Ա. Հովսեփյանցի հրամանով I, II և III վաշտերն ուղղվում են Գերիգորան կոչվող բարձրունքը, իսկ IV վաշտը՝ Ռազի գյուղը: Անդրանիկը, զլխավորելով հեծելազորը, գրոհով աջակցում է հետևակ կամավորների հարձակմանը: Թ. Նազարբեկյանի վկայությամբ՝ Անդրանիկի նախաձեռնությամբ կամավորները հետապնդում են հակառակորդին, որը նահանջում է Կոթուրի կիրճը<sup>21</sup>: Գեներալը հուշագրում է. «զլխավոր ուժերով շարժվելով Կոթուր ես լեռներից տեսնում էի, թե ինչպես դրուժինան դուրս է մղում հակառակորդին լեռնային դիրքերից»<sup>22</sup>: Կամավորները կրնկակոխ շարժվում են թուրքերի հետևից և գրավում Կոթուրից 15 վերստ հեռավորության վրա գտնվող Գարատել գյուղը: Գեներալ Թ. Նազարբեկյանին ապշեցրել էր այն հանգամանքը, որ Սունժենյան կազակային գնդի հրամանատար գնդապետ Ս. Ի. Ջեմցովը չաջակցեց հայ կամավորներին՝ հակառակորդի հետապնդմանն օժանդակելու համար, այլ հրամայեց գունդը տեղակայել Ռիզա գյուղում: Այս անփութության համար

<sup>18</sup> Նույն տեղում, ֆ. 1267, ց. 2, գ. 32, ք. 12 շրջ.-13:

<sup>19</sup> Նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 1, ք. 25 շրջ.:

<sup>20</sup> Նույն տեղում, ֆ. 1267, ց. 2, գ. 32, ք. 18 շրջ.-19:

<sup>21</sup> Նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 1, ք. 25 և շրջ., ֆ. 1267, ց. 1, գ. 3, ք. 16:

<sup>22</sup> Նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 1, ք. 25 և շրջ.:



նա խստորեն հանդիմանվեց զեներալ Թ. Նազարբեկյանի կողմից<sup>23</sup>:

Հակառակորդը, սակայն, չէր պատրաստվում հանձնել կիրճը: Քրդերը դիրքավորվում են Ալազյոզ գյուղի հյուսիսում գտնվող բարձունքներում: Մարտի ընթացքում կամավորներին են հանձնվում սպիտակ դրոշ կրող երկու քրդեր: Նրանք հանձնում են իրենց ցեղապետեր Սաղըն և Օսման բեյերի նամակը, ուր նրանք և երեք այլ բեյեր պատրաստակամություն են հայտնում հանձնվել ռուսներին<sup>24</sup>: Նրանց թվում էր եզդի ցեղապետ Ջհանգիր աղան: Ցեղապետերն ուղարկվում են զեներալ Թ. Նազարբեկյանի մոտ: Վերջինիս պահանջով քուրդ ցեղապետերը հանձնում են մոտ հարյուր միավոր զենք՝ հայտարարելով, որ դա իրենց ունեցած ողջ զենքն է: Բոլորի համար պարզ էր, որ քրդերը հանձնել էին ունեցած զենքի և զինամթերքի չնչին մասը: Անդրանիկի ունեցած տվյալների համաձայն՝ քրդական չորս ցեղապետերն ունեին երեք հազար հրացան<sup>25</sup>: Միաժամանակ, օսմանյան հրամանատարությունը նրանց տվել էր 1600 հրացան<sup>26</sup>: զեներալի հանձնարարությամբ՝ հայ կամավորները պետք է աննկատ հսկեին քրդերին<sup>27</sup>: Ինչպես վերհիշում է զեներալ Թ. Նազարբեկյանը, սկզբնական շրջանում քրդերը հանձնում են մոտ երեք հազար հրացան, սակայն, երբ իրավիճակը սկսում է փոխվել, նրանք աշխատում էին այլևս չհանձնել զենքը<sup>28</sup>: Կարճ ժամանակում, քուրդ ցեղապետերի հրամանով, քրդական յոթ գյուղերը ռուսներին հանձնում են մոտ երեք հազար միավոր զենք<sup>29</sup>:

<sup>23</sup> Նույն տեղում, ք. 26 շրջ.:

<sup>24</sup> ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 32, ք. 16 և շրջ.:

<sup>25</sup> ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 533, ք. 16:

<sup>26</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 102, ք. 42:

<sup>27</sup> ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, ք. 31:

<sup>28</sup> Նույն տեղում, ք. 33 շրջ.:

<sup>29</sup> Նույն տեղում: Հետագայում քուրդ ցեղապետերը կարողանում են անցնել Օսմանյան կայսրություն ու զխավորել իրենց զինված կազմավորումները և կռվել ռուսների դեմ: Նրանցից երկուսը՝ Սաղըն և Հուսեյին բեյերն իրենց զին-

Նույն բերի 17-ի մղած մարտական գործողությունների արդյունքում կամավորները կռիվներով անցան 15 վերստ դժվարանցանելի լեռնային տեղանքով: Կոթուրի կիրճի գրավումից հետո՝ նույն բերի 18-ին, կիրճով անցավ զեներալ Թ. Նազարբեկյանի բրիգադը և գրավեց Շարապխանե գյուղը:

Կամավորների II և III վաշտերի մի մասը դիրքեր է գրավում Գարաթեյ գյուղի առջևում գտնվող բարձունքներում, իսկ հիմնական ուժերը տեղակայվում են գյուղում: Քանի որ խիստ սառնամանիքներ էին, հրամանատարությունը հաճախակի փոփոխում էր մարտական պահպանությունում գտնվող զինվորներին:

Շարապխանեի գրավումից հետո տեղեկություն է ստացվում, որ նույն բերի 17-ին հակառակորդը հեռացել է Սարայից: Նույն բերի 18-ին Ադրբեջանական ջոկատը գրավում է Սարայը: Տեղի հայ և ասորի հոգևորականությունը և բնակչությունը ջերմորեն ողջունում է ռուս և հայ մարտիկներին: Սարայում I խումբը համարվում է Ա. Ջամալյանի հրամանատարությամբ ժամանած մոտ 100 հեծյալ կամավորներով: Նրանք ժամանել էին Մոսկվայից, Պետրոգրադից և ԱՄՆ-ից<sup>30</sup>:

Նույն բերի 25-ին I խմբի հետախույզները հայտնեցին, որ Սարայից արևմուտք՝ 22 վերստ հեռավորության վրա, հակառակորդը ուժեր է կուտակում: Նույն օրը թուրք-քրդական ուժերը հարձակվում են Ասուրլի գյուղում տեղակայված կազակային ուժերի վրա: Նույն բերի 26-ի երեկոյան Թ. Նազարբեկյանը հրամայում է Հայկական I խմբին և Սուևժենյան կազակային գնդի երեք հարյուրյակներին՝ զնդապետ Ա. Ի. Չենցովի հրամանատարությամբ ջախջախել հակառակորդին, միաժամանակ կատարել

ված ջոկատներով ամբողջությամբ կոտորում են չորս հայկական գյուղերի բնակիչներին (տես ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 533, ք. 16-17):

<sup>30</sup> ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, ք. 34, ֆ. 503, ց. 1, գ. 63, ք. 4: 1915 թ. դեկտեմբերի 20-ի նամակում Ա. Վրացյանը դժգոհություն է հայտնում ԱՄՆ-ից ժամանած կամավորների պահվածքի մասին: Նրանց թվում կային արկածախնդիրներ, որոնք նույնիսկ Թիֆլիս չհասան, որպեսզի ընդգրկվեն կամավորական խմբերում (տես ՀԱԱ, ֆ. 1267, ց. 4, գ. 14, ք. 7):

հետախուզություն<sup>31</sup>: Հետախուզության չճշտված տեղեկության համաձայն՝ հակառակորդի ուժերը կազմում էին երեք գումարտակ և հազար քուրդ, իսկ ըստ այլ տեղեկության՝ 14 գումարտակ, 6 թնդանոթ և 5000 քուրդ<sup>32</sup>:

Կապիտան Մ. Հովսեփյանն առաջարկում է գրավել Մերկուլ գյուղը, քանի դեռ հակառակորդը չէր հասցրել այնտեղ կենտրոնացնել հիմնական ուժերը: Գնդապետ Ս. Ի. Ջենցյուլը սկզբնապես մերժում է, սակայն, ի վերջո, կամավորների IV վաշտին թույլատրում է գրավել գյուղը, սակայն հրաժարվում է նրանց օգնության ուղարկել կազակային մեկ հարյուրյակ: Նրանց տրվում է միայն երկու կազակային դասակ և երկու թնդանոթ:

Հրետանային նախապատրաստությունից հետո կամավորները և կազակներն անցնում են հարձակման: Հակառակորդը չդիմանալով նահանջում է՝ մարտադաշտում թողնելով 70 սպանված: Տներինց մեկում ամրացած թուրք սպան և հինգ զինվորները համառ դիմադրություն են ցույց տալիս: Ավելորդ կորուստներ չտալու համար Անդրանիկի հրամանով տուները հրդեհվում է<sup>33</sup>:

Նոյեմբերի 29-ին կամավորները մարտեր են մղում Կարկալու գյուղի համար, սակայն, հանդիպելով հակառակորդի ուժեղ դիմադրությանը, նահանջում են Ասուրլի: Այստեղ ի խումբը մնում է մինչև դեկտեմբերի 1-ը<sup>34</sup>:

Գրավված թուրքական գյուղերում հայտնաբերվում է զգալի քանակությամբ զենք և զինամթերք: Միայն երկու գյուղերի խուզարկության արդյունքում բռնագրավվում է 63 «Մաուզեր» հրացան<sup>35</sup>:

Մարտական առաջին հաջողությունները ոգևորել էին կամավորներին: Նրանք անհամբեր սպասում էին, թե երբ է տրվելու Վան արշավելու հրամանը: Ավելին, Ադրբեջանական ջոկատի

<sup>31</sup> ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 32, ք. 20:

<sup>32</sup> Նույն տեղում, ք. 21:

<sup>33</sup> Նույն տեղում, ք. 29:

<sup>34</sup> Նույն տեղում, գ. 3, ք. 17:

<sup>35</sup> ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 29, ք. 5:

հրամանատար, զեներալ Ֆ. Գ. Չեռնոզուբովը նույնիսկ ցանկանում էր երկու լեռնային թնդանոթ տալ Անդրանիկին՝ Վան արշավելու համար<sup>36</sup>: Սակայն Սարիղամիշի ուղղությամբ թուրքական լայնածավալ հարձակումը հնարավորություն չի տալիս Վանի ազատագրումն հրականացնել:

Դժվար է ենթադրել, թե ինչ արդյունքի կհասնեին կամավորները, եթե վերը նշված առաջարկությունը կատարվեր: Կարծում ենք, որ կամավորները զգալի արգելքների կհանդիպեին, քանի որ առաջացումն ընթանալու էր առանց մանրագնահին հետախուզության: Հայտնի չէին հակառակորդի ուժերի թվաքանակը և սպառազինությունը: Ինքնին հասկանալի է, որ առանց Ադրբեջանական ջոկատի առաջացման և աջակցության Անդրանիկի խումբը չէր կարող ճեղքել հակառակորդի ուժերը: Նման գործողությունը հնարավոր կլիներ, եթե ողջ ռուս-թուրքական ռազմաճակատում ռուսական ուժերը շարունակեին լայնածավալ հարձակումը: Բացի այդ, անհասկանալի էր, թե ինչպե՞ս էր խումբը ապահովվելու զինամթերքով և պարենով: Կարելի է ենթադրել, որ Կովկասյան բանակի հարձակումը շարունակվելու դեպքում ի խումբը, հնարավոր է, հասներ որոշակի արդյունքի և նպաստեր Վանի ազատագրմանը: Առաջարկված օպերացիան բավականին հանդուգն ծրագիր էր և հնարավոր է, որ դրական արդյունք ունենար:

Ադրբեջանական ջոկատի հետագա առաջխաղացումը կասեցվում է օսմանյան III բանակի նախաձեռնած լայնածավալ հարձակման հետևանքով Սարիղամիշ քաղաքի շրջանում ռուսների համար ստեղծված ծանր իրավիճակով: Դա, սակայն, չէր կարող անդադրադադար շյուսիսային Պարսկաստանում գործող ռուսական ուժերի գործողությունների վրա: Այնուամենայնիվ, Ֆ. Գ. Չեռնոզուբովը հրաման է ստանում շտապ նահանջել ռուսական սահման: Թ. Նազարբեկյանը գտնում էր, որ նահանջի հրա-

<sup>36</sup> Նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 1, ք. 34:

մանը վաղաժամ էր, քանի որ հակառակորդի կողմից որևէ լուրջ վտանգի սպառնալիք չկար<sup>37</sup>:

Ռազմական պատմաբան և Կովկասյան ռազմաճակատում մարտական գործողություններին մասնակցած գեներալ Նիկոլայ Կորսունը նշում է, որ Ադրբեջանական ջոկատի դեմ գործում էին փոքրաթիվ թուրքական և քրդական ստորաբաժանումներ: Այս հանգամանքը հարկադրում է Ֆ. Գ. Չեռնոզուբովին դիմել հրամանատարությանը՝ խնդրելով բեկանել հրամանը, սակայն ապարդյուն: Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարի օգնական Ալեքսանդր Չ. Միշլանսկու հրամանով Ադրբեջանական ջոկատը սկսում է արագորեն նահանջել<sup>38</sup>:

Հայկական I խմբին հանձնարարվում է պաշտպանել ջոկատի գումակը: Կամավորներն առանց հանգստի անցնում են մոտ 50 վերստ<sup>39</sup>: Ռուսական զորքին հետևում էր հայ և ասորի բնակչությունը: Զինվորները և կազակներն օգնում են կանանց ու երեխաներին՝ նրանց տեղավորելով ձիերի և սայլերի վրա<sup>40</sup>:

1914 թ. դեկտեմբերի 2-ին խումբը հասավ Կոթուր, իսկ երկու օր անց՝ դեկտեմբերի 4-ին, օգնության շտապեց Ռազի բնակավայրի մոտ ծանր մարտեր մղող Կովկասյան IV կազակային դիվիզիային<sup>41</sup>: Դեկտեմբերի 5-ին Կովկասյան II հրաձգային բրիգադի ստորաբաժանումները գործողություն են ձեռնարկում Բելաջիկ գյուղը զրավելու համար, որն ավարտվում է անհաջողությամբ: Բնակավայրի զրավումը հանձնարարվում է Անդրանիկին: Կամավորների հարձակմանն ականատես եղած Թ. Նազարբեկյանը վկայում է. «Դրուժինիկներն առանց կրակելու, ուղղակի անցան հարձակման»<sup>42</sup>: Կամավորները, որոնց թվում կային նաև

<sup>37</sup> Նույն տեղում, ք. 37:

<sup>38</sup> Корсун Н., Алашкертская и Хамаданская операции на Кавказском фронте мировой войны 1915 г., Москва, 1940, с. 33.

<sup>39</sup> ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, ք. 36 շրջ.:

<sup>40</sup> Նույն տեղում, ք. 36:

<sup>41</sup> Նույն տեղում:

<sup>42</sup> Նույն տեղում:

տեղացիներ, գերազանց կողմնորոշվելով տեղանքում, կարողանում են հակառակորդին դուրս մղել Բելաջիկից: Բելաջիկում I խումբը մնում է 17 օր՝ հանգստանալով և համարելով շարքերը:

Դեկտեմբերի 23-ին կրկին ստացվում է նահանջի հրամանը: Գեներալ Ալ. Չ. Միշլանսկին, չկարողանալով ճիշտ և սթափ գնահատել օպերատիվ իրադրությունը, կրկին բոլոր զորամասերին հրամայեց նահանջել: Եվ դա այն դեպքում, երբ օսմանյան III բանակի հարձակման թափն ընկել էր, և գեներալ Ն. Ն. Յուդենիչը սկսել էր հակառակորդի շրջապատման և ջախջախման օպերացիան:

Թ. Նազարբեկյանը I խմբին հրամայում է պաշտպանել բնակավայրերը լքող հայ և ասորի քաղաքացիական բնակչությանը<sup>43</sup>: Քանի որ խմբի ուժերն անբավարար էր փախստականների հսկա զանգվածի անվտանգությունն ապահովելու համար, Անդրանիկի հրամանով տղամարդկանց տրվեց ռազմավարային զենք և զինամթերք<sup>44</sup>: Միաժամանակ Անդրանիկը հեծելազորային ստորաբաժանման հրամանատար Ավոյին հրամայում է կարճ ճանապարհով շտապել Խոյ՝ տեղի հայ բնակչության նահանջն ապահովելու համար<sup>45</sup>: Անդրանիկի հրամանով բնակիչներին տրվում է խմբում եղած ռազմավարային հրացաններ<sup>46</sup>:

Հայ և ասորի փախստականների՝ կանանց, երեխաների, ծերունիների և տղամարդկանց նահանջն ընթանում էր կլիմայական ծանր պայմաններում, չէին բավականացնում փոխադրամիջոցները: Նահանջի ողջ ճանապարհը լցված էր փախստականներով և զորքով: Հատկապես մեծ դժվարություններ էր հարուցում անանցանելի ցեխը, որը հասնում էր մինչև ծնկները: Ն. Գ. Կոր-

<sup>43</sup> Ատրապատականից հեռանում է զրեթե ողջ քրիստոնյա բնակչությունը՝ հայեր և ասորիներ, որոնց թիվը կազմում էր 44 հազար հոգի (տե՛ս Արությունյան Ա. Ա., Первая мировая война и армянские беженцы (1914-1917 гг.), Автореферат на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 1989, с. 13):

<sup>44</sup> ՀԱԱ, ֆ. 43, ց. 1, գ. 83, ք. 2:

<sup>45</sup> ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, ք. 36:

<sup>46</sup> Նույն տեղում, ֆ. 43, ց. 1, գ. 83, ք. 1:

սունի գնահատմամբ՝ Հյուսիսային Պարսկաստանից ռուսական Ադրբեջանական ջոկատի նահանջը բացասական քաղաքական ազդեցություն ունեցավ: Դրա հետևանքով Ուրմիա լճի շրջակայքում բնակվող քրդերի մի մասն անցան թուրքերի կողմը<sup>47</sup>:

Նահանջը բարոյալքող ազդեցություն ունեցավ նաև I խմբի մարտիկների մի մասի վրա: Նրանց համար անհասկանալի էր, թե ինչու Հյուսիսային Պարսկաստանում զգալի հաջողությունների հասած և Վանից 10 ժամ հեռավորության վրա գտնվող Ադրբեջանական ջոկատը նահանջեց: Ջուլֆայում մարտիկների թվում կային «բավական բանակությամբ կամավորներ, որոնք հուսահատված ցանկանում էին թողնել և հեռանալ իրենց գործին, սակայն բարեբախտաբար այդ դրությունը երկար չտևեց»<sup>48</sup>:

Ադրբեջանական ջոկատի կազմում գործող զանազան զորամասերի զինծառայողների կողմից շարունակաբար բռնագրավվում էր կամավորների զենքերը: 1914 թ. դեկտեմբերի 29-ին Ջուլֆայում տեղի են ունենում որոշ անախորժություններ: Կամավորներից խլվում է զենքը: Այդ մասին 1915 թ. փետրվարի 15-ի զեկուցագրում Անդրանիկը հայտնում է զեներալ Ֆ. Գ. Չեռնոզուբովին: Անդրանիկը ցավով հայտնում էր, որ կամավորների զենքը բռնագրավելիս նրանց նույնիսկ ստացագիր չի տրվում<sup>49</sup>:

1915 թ. հունվարի 17-ին դրուժինան տեղակայվում է Մարանդում<sup>50</sup>:

Այսպիսով, 1914 թ. նոյեմբերի 5-ից մինչև դեկտեմբերի 23-ը մղված մարտական գործողությունների ընթացքում I խմբի կորուստը կազմել է 17 սպանված և 9 վիրավոր: Հիվանդացել և ապաքինվելուց հետո դրուժինա է վերադարձել ավելի քան 530

<sup>47</sup> Корсун Н., Алашкертская и Хамаданская операции, с. 34.

<sup>48</sup> Ավետիսյան Մարո, Էջեր հայկական կամավորական շարժման պատմությունից, ԲՀԱ, 2005, N 1, էջ 82-83:

<sup>49</sup> ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 134, ք. 4:

<sup>50</sup> Նույն տեղում, գ. 1, գ. 3, ք. 8, ֆ. 45, ց. 1, գ. 2, ք. 2 շրջ.:

մարտիկ: Խումբը նշված ժամանակահատվածում համալրվել է 231 կամավորներով<sup>51</sup>:

Հանգիստը և համալրումը օգտագործվում է թուրք-քրդական զազանություններին զոհ գնացած Հյուսիսային Պարսկաստանի մի շարք հայկական բնակավայրերի բնակչության թաղումը կազմակերպելու համար: Պարսկական իշխանությունների օժանդակությամբ կատարվում է սպանվածների թաղումը: Հաֆթվան գյուղի հայկական գերեզմանատանը փորվում են երկու մետր խորությամբ փոսեր: Նրանցից յուրաքանչյուրում թաղում են մոտ 50 նահատակների: Թաղման արարողությունը կատարում է Բաշկալեի սուրբ Բարդուղիմեոս վանքի Տեր Մաթևոս քահանա Մարտիրոսյանը<sup>52</sup>:

Մարտական գործողությունների սկզբում խումբը ստանում է 1300 հրացան: Ռուսական տարբեր զորամասերի զինծառայողների կողմից բռնագրավվում է 409 հրացան, որոնցից վերադարձվում է միայն 42 միավորը, մնացած 367-ը թողնվում է հրետանային պահեստում: 1915 թ. փետրվարի 2-ի դրությամբ խմբի պահեստում կար 72 «Մոսին», 16 ավստրիական «Մանլիհեր», 25

<sup>51</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 87, ք. 29-30, տես նաև ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 63, ք. 5: 1915 թ. հունվարի 5-ին Ավետիք Սահակյանին ուղղված հեռագրում Անդրանիկն իր զայրույթն ու զարմանքն է հայտնում, որ, չնայած իր բազմաթիվ նախազգուշացումներին, այնուամենայնիվ Գարեգին Նժդեհին թույլատրվել է անդամագրվել կամավորական շարժմանը, (տես ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 27, ք. 11): Վարդանն իր հուշերում հետաքրքիր տեղեկություններ է հայտնում Լեռնահաստանի ապագա հերոս Գարեգին Նժդեհի մասին: Վարդանը իմանալով, որ նա զինվորական կրթություն է ստացել Բուլղարիայում, ցանկանում է իր խմբում ունենալ նման կրթություն և մարտական փորձ ունեցող սպայի: Վարդանը տեղյակ էր, որ Անդրանիկը դեմ էր, որ Գ. Նժդեհին ընդունեն խմբից որևէ մեկում և նույնիսկ սպառնացել էր, որ կհեռանա կամավորական խմբից: Ինչպես վկայում է Վարդանը. «Ես ուշադրություն չդարձնելով Անդրանիկի սպառնալիքներին, ուզեցի Նժդեհի հետ ծանոթանալ, իմանալ նրա անցյալը և Անդրանիկի հետ ունեցած ընդհարման պատճառները»: Վարդանը նշում է, որ պարզելով Անդրանիկի հետ ունեցած տարածայնությունների շարժառիթները, «պայմանական ձևով ընդունեցի, նախազգուշացնելով վերացնել յուր թերությունները, հակառակ պարագային ստիպված կլինեմ հեռացնել: Համաձայնվեց և խոստացավ» (տես ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, ք. 72):

<sup>52</sup> ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 153, ք. 13 և շրջ.:

թուրքական «Մաուզեր» և երկու այլ հրացան<sup>53</sup>: Իսկ փետրվարի 26-ին կատարած հաշվառումը ցույց է տալիս, որ դրուժինայում առկա էր 835 հրացան, իսկ հրետանային պահեստում՝ 367-ը: 5 հրացան կորել էր Աշնակ գյուղի համար մղած մարտի և Կարգալի լեռ կատարած հետախուզության ժամանակ: 93 հրացան հանձնվել էր Խոյուն<sup>54</sup>:

1915 թ. հունվարի 14-ի հեռագրում Անդրանիկը Ջուլֆայում գտնվող Ա. Ջամալյանին հրամայում է այնտեղ գտնվող կամավորներին ենթարկել բժշկական քննության, հիվանդներին տեղավորել հոսպիտալում, իսկ առողջներին Սեպուհի հետ ուղարկել Մարանդ: Անդրանիկը հրամայում է կալանել այն կամավորներին, որոնք կիրառարկեն կատարել հրամանները<sup>55</sup>: Մարանդում գտնվելու ժամանակը հրամանատարությունն օգտագործում է ստորաբաժանումում մարտիկներին իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնելու և հատկապես կարգապահությունն ամրապնդելու համար:

1915 թ. փետրվարի 1-ին Անդրանիկը հատուկ հրամանով ազդարարում է I խմբում ոստիկանություն հիմնելու մասին: Հայոց զինուժի պատմության մեջ առաջին անգամ ծնունդ է առնում ռազմական ոստիկանությունը:

Անդրանիկի հրամանն ուղղված էր խմբի ողջ անձնակազմին՝ հրամանատարներին և շարքայիններին: Հայդուկապետը հիշեցնում էր, որ կամավորների առջև դրված է մեծ և սուրբ պարտականություն: Նրանք գիտեն, թե ինչպես է օսմանյան բռնապետությունը դարեր շարունակ թալանել և կեղեքել հայոց հողը: Ուստի, յուրաքանչյուր կամավոր պիտի տոգորվի այն գիտակցությամբ, որ «իւր սկսած գործը բարձր է, մաքուր է և Սուրբ, և ինքն էլ նոյն սկզբունքով առաջնորդուելով պետք է բարձր ու մաքուր պահի այն Դրօշակը, որ պարզած է Հայրենիքի ազատու-

<sup>53</sup> Լույն տեղում, գ. 148, թ. 10:

<sup>54</sup> Լույն տեղում, գ. 134, թ. 4 և շրջ.:

<sup>55</sup> Լույն տեղում, գ. 149, թ. 1:

թեան համար, ոչ միայն կռուի դաշտը, այլև մեզ շրջապատող օտարների առջև ևս»<sup>56</sup>:

Անդրանիկը ցավով և ավստասանքով նշում է, որ կամավորների թվում կան նաև այնպիսիները, որոնք գաղափարական ցածր գիտակցության և պահվածքի պատճառով կռիվներում հայ մարտիկների վաստակած հարգանքն ու պատիվն ի չիք են դառնում:

Խմբում զինվորական կարգուկանոն հաստատելու նպատակով Անդրանիկը մարտիկներին ներկայացնում է տաս կետից բաղկացած պահանջներ, որոնց կատարման հսկողությունն իրականացնելու էին վաշտապետերը, հիսնապետերը և տասնապետերը: Անդրանիկը մարտիկներից պահանջում է, որպեսզի տագնապ հայտարարելու դեպքում նրանք 10 րոպեի<sup>57</sup> ընթացքում կազմ ու պատրաստ լինեն առաջադրանքը կատարելու համար:

Առավել կարևոր և ուշագրավ են IX և X հոդվածները<sup>58</sup>: IX հոդվածով ազդարարվում է, որ I խմբում կազմակերպվել է «երդուեալ Ոստիկանութիւն»: Ոստիկանն իրավունք ուներ առանց սահմանափակման մուտք գործել կամավորների զբաղեցրած բնակարանները և հավաքատեղիները: Եթե ոստիկանը գտնում էր, որ կամավորի կողմից խախտվել է զինվորական կարգապահությունը, ապա իրավունք ուներ նրան կալանել: Կալանվածը որևէ առարկություն և դիմադրություն ցույց տալու իրավունք չուներ: Դրա հետ միասին, հրամանում նշվում է, որ ոստիկանը պարտավոր է «միշտ քաղաքավարի վերաբերմունք ցույց տալ»<sup>59</sup>:

<sup>56</sup> Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, Երկու գրքով, գ. Ա, Երևան, 1996, էջ 497-498:

<sup>57</sup> 1915 թ. մարտի 29-ի հրամանում վերը նշված ժամանակը սահմանվում է հինգ րոպե (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 149, թ. 4 շրջ.):

<sup>58</sup> Տե՛ս Սահակյան Ռ. Օ., Ռազմական ոստիկանության կազմակերպումը հայկական առաջին կամավորական ջոկատում, «Հայկական բանակ», 2004, N 1, էջ 36-41, նաև՝ Կարապետյան Մ., Ռուսական կայսրության բանակի հայ զորապետերի հայկական կազմավորումների և Հայաստանի Հանրապետության ռազմական պատմության աղբյուրագիտական ուրվագծեր, Երևան, 2010, էջ 34:

<sup>59</sup> ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 149, թ. 3 շրջ.:

Ինչպես նշում է ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանը, «...Անդրանիկը հասկապես առաջին զիծ էր մղում կամավորների կողմից զինվորական պարտքի գիտակցման և անթերի կատարման խնդիրը»<sup>60</sup>:

Ի խմբի մարտիկներից ընտրվում են ինը ոստիկաններ: Նրանք ներկայացնում են ստորաբաժանման բոլոր սոցիալական խավերը, արևմտահայ և արևելահայ հատվածները: 1915 թ. փետրվարի 4-ին Մարանդում տեղի է ունենում ոստիկանների երդման արարողություն: Ոստիկանապետ է նշանակվում կամավորական Միքայել Մովսիսյանցը<sup>61</sup>:

Ի խմբում զործել է դատարան, որի կազմում ընդգրկվել են վաշտապետները՝ Նիկոլը, Սեպուհը, Սմբատը, Բժիշկ Ն. Տեր-Թովմասյանը և շտաբի պետ Ա. Ջամայանը<sup>62</sup>:

1915 թ. փետրվարի 27-ին դրուժինան հրաման է ստանում բանակել Սեփյա վար գյուղում: Այստեղից կամավորները կատարում են հետախուզական բնույթի հանձնարարություններ: Միաժամանակ կանոնավոր կերպով շարունակվում են մարտական պատրաստակամության դասընթացները: Մարտական հերթապահությունից կամ առաջադրանքներից ազատ վաշտերի հրամանատարները զրեթե ամեն օր իրենց ենթակաների հետ անց էին կացնում դաշտային զործնական պարապմունքներ<sup>63</sup>: Ապրիլի 15-ին դրուժինան հրաման է ստանում ուղղվել Դիլման<sup>64</sup>: Ի խմբի առավել նշանավոր մարտը Դիլմանի ճակատամարտն էր:

Իրավիճակը սրվում էր նաև այն հանգամանքով, որ Խոյի հետ կապող միակ ճանապարհով փախչում էին հազարավոր հայ և ասորի փախստականներ: Դա նաև բացասաբար էր անդրադառնում զորքի բարոյահոգեբանական վիճակի վրա: Ապրիլի 17-ի առավոտյան ժամանեցին լրացուցիչ ստորաբաժանումներ,

<sup>60</sup> Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 498:

<sup>61</sup> ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 154, ք. 1:

<sup>62</sup> Նույն տեղում, գ. 155, ք. 3:

<sup>63</sup> Նույն տեղում, ք. 7:

<sup>64</sup> Նույն տեղում, գ. 1, գ. 3, ք. 30:

որոնց թվում Հայկական Լ դրուժինայի մնացած վաշտերն Անդրանիկի զլխավորությամբ:

Թ. Նազարբեկյանի զնահատմամբ՝ չնայած այն հանգամանքին, որ Խալիլ բեյն ամենայն մանրամասնությամբ տեղյակ էր իր թվային և կրակային առավելության մասին, այնուամենայնիվ չէր կարող հաջողության հասնել, քանի որ կորցրել էր հարմար պահը՝ նա մեկ օրով ուշացրել էր հարձակումը: Խալիլն այդ հնարավորությունն ուներ ապրիլի 16-ին, երբ Դիլմանի ջոկատը նահանջում էր, չկար պահեստազոր, իսկ նման դեպքում «աղետն անխուսափելի կլիներ»<sup>65</sup>: Շարունակ ժամանում են ռուսական ճոր ուժեր: Հայ կամավորները, չունենալով սակրավորական բաժին, ստիպված են լինում խրամատներ փորել սվիններով: Եվ ինչպես նշում է Թ. Նազարբեկյանը. «Ահա այս մարտից հետո Անդրանիկը զնահատեց սակրավորական փոքր բաժնի և մարտից հետո ինձ խնդրեց դրուժինային տալ այդ բաժնից և հետագայում մշտապես սկսեց դրանից օգտվել»<sup>66</sup>:

Ապրիլի 18-ի վաղ առավոտյան ժամը 4-ին հակառակորդը հարձակման անցավ: Իր հուշերում Թ. Նազարբեկյանը գրում է. «Մենք (սպաները – Ռ. Ս.), հետևելով հակառակորդի հարձակմանը, հիանում էինք նրա կանոնավոր առաջացմամբ, որը բառիս բուն իմաստով օրինակելի էր»<sup>67</sup>: Թուրքական զրոհի զլխավոր հարվածն ուղղված էր Կովկասյան Լ հրաձգային բրիգադի պաշտպանության կենտրոնին և աջ թևին: Կենտրոնի պաշտպանության ողջ ծանրությունն ընկած էր Հայկական Լ դրուժինայի վրա: Անդրանիկն անձամբ շրջում էր կամավորների դիրքերը, քաջալերում վաշտի հրամանատարներին «յիշեցնելով անոնց իրենց պարտականությունները»<sup>68</sup>:

<sup>65</sup> ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, ք. 32 շրջ.:

<sup>66</sup> Նույն տեղում, ք. 32 շրջ.:

<sup>67</sup> Նույն տեղում, ք. 37:

<sup>68</sup> Զորավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը, էջ 18:



Գեներալ Թ. Նազարբեկյանի հրամանով աջ թևն է անցնում Սունժենյան կազակային զունդը: Միաժամանակ խալիլ բեյի ուժերի հարձակումը կասեցնելու նպատակով նրա թիկունքն է ուղարկվում գնդապետ Գ. Ա. Դոկուչանի V հրաձգային զունդը: Հակառակորդը հարկադրված է լինում նահանջել: Հակառակորդի գրոհը ետ մղվեց, որից հետո Թ. Նազարբեկյանն իր ուժերով անցնում է հարձակման: Անդրանիկը հանդուգն գրոհով թուրքերին դուրս է մղում Բարչիշլի գյուղից, որի գրավումը վերջնականապես ամրապնդեց ռուսների հաղթանակը: Եակատամարտին մասնակից փոխգնդապետ Օրլովի և շտաբս-կապիտան Նեստերովսկու վկայությամբ Անդրանիկի ձեռնարկած հակահարձակումը ձախողեց հակառակորդի հնարավոր հետագա գործողությունները և զգալիորեն նպաստեց թուրքական ճնշման թուլացմանը<sup>69</sup>:

Ապրիլի 19-ին գեներալ Թ. Նազարբեկյանը հրամայում է սկսել խալիլ բեյի դիվիզիայի հետապնդումը: Այդ նպատակի համար առանձնացվում է երեք զումարտակ՝ երեք թնդանոթով և Սունժենյան կազակային զունդը: Ռուսները հասնում են թուրքերի վերջապահին: Նրանց միջև սկսվում է մարտ, որը շարունակվում է մինչև գիշեր: Չի հաջողվում կանգնեցնել փախչող հակառակորդի հիմնական ուժերը, որը, խուսափելով հետապնդումից, կարողանում է հեռանալ<sup>70</sup>:

Դիլմանի ճակատամարտում թուրքերի կորուստը կազմել է մոտ 2 հազար սպանված<sup>71</sup>, իսկ ռուսներինը՝ 600 սպանված և 800

<sup>69</sup> Андраник Озаян. Документы и материалы. т. 2, с. 166:

<sup>70</sup> Կովկասյան IV բանակային կորպուսի հետախուզական բաժանմունքի աշխատակից, ենթասպա Տ. Պոլյանի տեղեկության համաձայն՝ խալիլ Դիլմանի պարտության համար վրեժխնդիր է լինում իր դիվիզիայում ծառայող հայերից: Բիթլիսում նրա հրամանով սպանվում են մոտ 800 հայ զինծառայողներ և զինվորական բժիշկներ: Գնդակահարությունն ի կատար են ածում նույն դիվիզիայի թուրք զինվորները (տե՛ս "Армянский вестник", Москва, N 43-44, 5 ноября 1917, с. 7):

<sup>71</sup> Ըստ այլ տեղեկության՝ 3500 սպանված (տե՛ս Ա.Դո, Հայության երկունքը. Հայաստանի պատմության բանգարանի նոր և նորագույն բաժնի Ա-Դրի ֆոնդ, ֆոնդ 839/195(դ), ք. 29):

վիրավոր: Կամավորներից զոհվում է 21 և վիրավորվում 55 հոգի<sup>72</sup>:

Դիլմանի հաղթանակի առթիվ կամավորների կողմից հյուսվեց Անդրանիկին նվիրված հետևյալ երգը.

«Հերոս մռնչեց, Սուլթան դողողաց

Վիլիելմի աջքին արտասուներ ցուլաց,

Սուրդ թշնամույ կրծքին շողշողայ,

Հայոց ղեկավար, հերոս Անդրանիկ»<sup>73</sup>:

Դիլմանի հաղթանակը կարևոր նշանակություն ունեցավ: Այն ոչ միայն ձախողեց օսմանյան հրամանատարության Կովկասը նվաճելու ռազմաքաղաքական ծրագրերը, այլև արագացրեց օրհասական պայքար մղող Վանի հայության փրկությունը<sup>74</sup>: Ապրիլի 19-ին Ադրբեջանական ջոկատի կազմում խումբը սկսեց շարժվել Վանի ուղղությամբ: Թ. Նազարբեկյանի վկայությամբ, Անդրանիկը մշտապես ձգտում էր հետապնդել հակառակորդին և «ճիշտ էր զուշակում նրա (հակառակորդի – Ռ. Ս.) նահանջի ճանապարհը, միշտ առաջինն էր հասնում նրա վերջապահին և մարտի բռնվում»<sup>75</sup>:

Հայ հետախույզները պարզում են, որ խալիլի նահանջի իրական ուղղությունը Մոսուլն է: Թ. Նազարբեկյանն ապարդյուն փորձում էր հրամանատարությանն ապացուցել, որ Անդրանիկի հայթայթած տեղեկությունն առավել հավաստի է, քան բանակային հետախուզության տվյալները<sup>76</sup>: Գեներալ Իվան Ե. Տրուխինը, սակայն, մնում է անդրդվելի, և խալիլը կարողանում է խուսափել շրջապատումից և իր ուժերը վերջնական ջախջախումից փրկել: Երկուսն է, ռուսներին չհաջողվեց իրականացնել սեփական մտա-

<sup>72</sup> ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, ք. 42 և շրջ., ֆ. 1267, ց. 1, գ. 3, ք. 30, ֆ. 428, ց. 1, գ. 133, ք. 43:

<sup>73</sup> Անտեան Ս., Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920). Հուշամատեն էւ ջօր. Անդրանիկ, Փարիզ, 1954, էջ 164:

<sup>74</sup> История первой мировой войны. 1914-1918, в двух томах, том 2, Москва, 1975, с. 91.

<sup>75</sup> ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 4, ք. 13:

<sup>76</sup> Նույն տեղում, ք. 10:

հաղացումը, սակայն խալիլն էլ, իր հերթին, չկարողացավ օգնության հասնել Վանը պաշարած Ջևղեթին<sup>77</sup>:

Մայիսի 14-ին Անդրանիկը տեղեկացնում է Թ. Նազարբեկյանին, որ հետախույզ կամավորներին հաջողվել է պարզել, որ թուրքական դիրքերի վրա գրոհելու համար հարմար մատույցներ կան ծախ թևում, սակայն հարձակման համար անհրաժեշտ են զգալի ուժեր:

Գիշերը մարտական պահպանությունը չի նկատում, թե ինչպես թուրքերը հեռացել էին տեղակայման վայրից: Այդ փաստը չի երևում նույնիսկ առավոտյան: Ռուսներին մոլորեցնելու և տեղում գտնվելու պատրանք ստեղծելու համար թուրքերը հեռանալիս թողել էին իրենց վրանները: Մայիսի 15-ի կեսօրին առաջինը տազնապ է բարձրացնում I խմբի բժիշկ Տեր-Թովմասյանը: Նա իր կասկածներն է հայտնում Թ. Նազարբեկյանին: Գեներալը հրամայում է երկու պլաստունյան զույգարտակներին և Հայկական I խմբին հետապնդել թուրքերին և հարկադրել նրանց մարտի բռնվել: Հետապնդողներին տրվում է երկու թնդանոթ: Նրանց հետևում են բրիգադի հիմնական ուժերը<sup>78</sup>: Կամավորներն առաջինն են հասնում թուրքական վերջապահին և հարկադրում մարտի բռնվել: Կամավորներին օգնության են հասնում պլաստունները: Փոխհրաձգությունը շարունակվում է մինչև գիշեր: Երկու կողմն էլ կորուստներ է ունենում:

Մայիսի 16-ի առավոտյան հայ-ռուսական ուժերը վերսկսում են հարձակումը: Գնդապետ Օբրագովի հրամանատարությամբ առաջապահ ուժերը հասնում են N 9285 լեռնանցքը: Սակայն գնդապետ Ջեմցովի դանդաղկոտությունը հնարավորություն չի տալիս իրականացնել խալիլի ուժերի լիակատար շրջապատումն ու ջախջախումը:

Մայիսի 17-ին շարունակվում է խալիլի հետապնդումը: Վերջինս ռուսներին մոլորեցնելու և իրական նահանջի ուղին քո-

<sup>77</sup> Корсун Н., Алашкертская и Хамаданская операции, с. 42.

<sup>78</sup> ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 4, ք. 4-6:

ղարկելու նպատակով իր հիմնական ուժերից առանձնացնում է մի քանի զորասյուն: Նրանց հանձնարարվում է տարբեր ուղղություներով նահանջել<sup>79</sup>:

Հակառակորդի նման մարտավարությունը մոլորեցնում է ռուսական հրամանատարությանը, այդ թվում՝ Ադրբեջանական ջոկատի հրամանատար Ֆ. Գ. Չեռնոզուբովին: Նրա հրամանով Վանից խոշապ է ուղարկվում զորք՝ խալիլ բեյի հավանական նահանջի ճանապարհը փակելու նպատակով: Այդ նույն ժամանակ Կովկասյան II հրաձգային բրիգադը մարտեր էր մղում խալիլի վերջապահի հետ:

Հայկական I կամավորական խումբն անցնում է գեներալ Տրուխինի Վանի ջոկատի կազմի մեջ<sup>80</sup>: Մայիսի 19-ին I խումբը կռվի մեջ է մտնում թուրքական գերակշիռ ուժերի հետ: Սիբիրյան կազակների օգնությունը հնարավորություն է տալիս հարկադրել հակառակորդին նահանջել<sup>81</sup>: Մայիսի 25-ին գեներալ Տրուխինը հրաման է ստանում շարժվել Վան: Նրա հետ Վան է ուղղվում նաև Հայկական I խումբը<sup>82</sup>:

Մայիսի 15-ի դրությամբ I խմբի հաստիքացուցակը հետևյալն էր. հրամանատար՝ 1, շտաբ՝ 9, մատակարարներ՝ 12, զինապահ՝ 1, լրաբեր՝ 3, Սամսոնի ծառաները՝ 3, հեծյալներ՝ 14, ծիավորների խումբ՝ 47, I վաշտ՝ 206, II վաշտ՝ 205, III վաշտ՝ 195, զուսակ՝ 76, ոստիկաններ՝ 5, ընդամենը՝ 978 մարտիկ:

Մինչև 1915 թ. հունիսի 4-ը I խմբից պաշտոնապես հեռացել էր 75 հոգի: Խմբում մնացել էր 903 մարտիկ: Հունիսի 6-ի դրությամբ կամավորների ընդհանուր թվաքանակը 900 հոգի էր<sup>83</sup>:

Մայիսի 1-ին I դրուժինան հասնում է Վանից տաս վերստ հեռավորության վրա գտնվող Վարազա վանք, իսկ հունիսի 3-ին՝ Արտամետ, հունիսի 4-ին խմբին ջերմ ընդունելություն են ցույց

<sup>79</sup> Լույն տեղում, ք. 8:

<sup>80</sup> Լույն տեղում, ք. 13-14:

<sup>81</sup> Լույն տեղում, ք. 13:

<sup>82</sup> ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 25, ք. 4:

<sup>83</sup> Լույն տեղում, գ. 163, ք. 158:

տալիս Վանում<sup>84</sup>, որից հետո՝ հունիսի 10-ից հետո<sup>85</sup>, մարտիկներն ուղղվում են Ոստան ու Աղթամար և հունիսի 14-ին Սուրբ Հակոբի մոտ միանում է Արարատյան ջոկատին<sup>86</sup>։

Կամավորական Կարապետ Թարփոշյանը վկայում է, որ Սորպում Անդրանիկը, դիմելով մարտիկներին, ասում է. «Սիրելի եղբայրներ, դուք յուրաքանչյուրդ մի Անդրանիկ եք, եթե հերոսաբար կռվեք մեր դարավոր թշնամու դեմ, մեր հայրենիքը ազատագրելու համար։ Վաղը հարձակվելու ենք Խնձորիկի վրա և Դատվանի վրա, դուք պետք է հերոսաբար կռվեք և ոչ մի երկյուղ չունենաք թշնամուց, նա մեր կամավորների և ռուս կոզակների անունը լսելիս լեղապատառ փախչում է»<sup>87</sup>։

1915 թ. հունիսի սկզբին Վանում կազմավորվում է գեներալ Տրուխինի ջոկատը, որը բաղկացած էր Երևանյան սահմանապահ գումարտակից, Չաբայկալյան II առանձին կազակային բրիգադի 12 հարյուրյակներից, Կովկասյան լեռնահեծելազորային մարտկոցից, Արարատյան և I դրուժինաներից<sup>88</sup>։ Ինչպես նշում է ռազմական պատմաբան Աշոտ Հարությունյանը, սա միակ դեպքն էր, երբ կամավորական դրուժինաները միավորվեցին։ Հետագայում, սակայն, ռուսական հրամանատարությունը նախընտրեց նրանց կրկին առանձնացնել «հավանաբար քաղաքական դրդապատճառներով»<sup>89</sup>։ Միավորումից հետո դրուժինաների ընդհանուր մարտակազմը հասավ 5500 հոգու<sup>90</sup>։

Գեներալ Տրուխինի ջոկատը, շարժվելով Վանի հարավային ափով, մոտենում է Ուրթաբ և Կոտոմ գյուղերին։ Հունիսի 12-ից

<sup>84</sup> ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14, 1 մաս, ք. 34։

<sup>85</sup> Նույն տեղում, գ. 39, ք. 26։

<sup>86</sup> Նույն տեղում, ֆ. 818, ց. 1, գ. 533, ք. 20։

<sup>87</sup> Նույն տեղում, ֆ. 402, ց. 1, գ. 15, ք. 1։ Հունիսի 6-ի դրությամբ I խումբը բաղկացած էր չորս վաշտերից։ I վաշտում մարտիկների թվաքանակը 206 էր, II-ում՝ 205, III-ում՝ 195, իսկ IV-ում՝ 188։ Ոստիկանները թվով հինգն էին (տես ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 163, ք. 158)։

<sup>88</sup> Корсун Н., Алашкертская и Хамаданская операции, с. 61, 69.

<sup>89</sup> Арутюнян А. О., Кавказский фронт 1914-1917 гг., Ереван, 1971, с. 318-319.

<sup>90</sup> Նազարյան Ա. Ա., նշվ. աշխ., էջ 52։

17-ը ջոկատը համառ մարտերից հետո գրավում է Ջևհն գյուղը<sup>91</sup>։ Այս մարտական գործողության ընթացքում աչքի ընկավ կամավորական I խումբը։

Հունիսի 28-ին և 29-ին գեներալ Տրուխինի ջոկատը պարտության է մատնում թուրքական 106-րդ և 107-րդ գնդերին, վեց բնդանոթներով։ Նա, այլոց գործողությունների թվում, առանձնացնում է Անդրանիկի և Քեռու մարտիկների՝ Ջևհն գյուղի մոտ նախածեռնած գիշերային հարձակումը, որին աջակցում են Չաբայկալյան կազակային ստորաբաժանման կազակները։ Հրամանատարը նաև առանձնացնում է Անդրանիկի և Դրոյի հանդուզն հարձակումը հակառակորդի ծախսի վրա։ Գեներալը միաժամանակ հիշատակում է Համազասպի դրուժինայի հարձակումն առանց հրետանու աջակցության և հակառակորդի հետապնդումը<sup>92</sup>։

Բանակային հետախուզության հայթայթած տեղեկությունների համաձայն՝ հակառակորդի ուժերը սակավ էին և բարոյալքված։ Դա դրդում է գեներալ Տրուխինին իր ջոկատից առանձնացնել Հայկական I և II դրուժինաները, Չիտայի կազակային գունդը՝ զորային ավագ Վասիլևի հրամանատարությամբ։ Ստորաբաժանմանը հանձնարարվում է առաջանալ Մշո դաշտ՝ Վարդենիս գյուղը<sup>93</sup>։ Նման հրաման է ստանում նաև Կովկասյան հեծելազորային դիվիզիայի հրամանատար, գեներալ Գ. Ռ. Շարպանտյեն<sup>94</sup>։ Հնարավորություն էր ստեղծվում փրկել Մուշի և գավառի, ինչպես նաև Սասունի հայությանը զանգվածային ջարդերից։ Սակայն 1915 թ. հուլիսի 11-ին անսպասելի ստացվում է նահանջի հրամանը<sup>95</sup>։

Կարծում ենք, Մուշի գրավումն իրական էր, քանի որ թուրքական հրամանատարությունը չունեի զգալի ուժեր։ Ինչ վերա-

<sup>91</sup> Масловский Е. В., Мировая война на Кавказском фронте 1914-1917 г. Стратегический очерк, Париж, 1933, с. 170.

<sup>92</sup> ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 533, ք. 22։

<sup>93</sup> Նույն տեղում, գ. 536, ք. 34։

<sup>94</sup> ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 3, ք. 36 շրջ.։

<sup>95</sup> Անդրանիկը նահանջի հրամանը ստանում է հուլիսի 13-ին (տես Զորավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը, էջ 34)։

բերում է քրդերին, ապա Սարիղամիշի ճակատամարտի օրինակն ակնառու ցույց տվեց, որ նրանք ռուսական զորքերի մարտական հաջողությունից հետո գերադասում էին լքել ռազմաթափառները, հեռանալ լեռներ և սպասել իրադարձությունների հետագա զարգացմանը:

Կովկասյան IV բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Պ. Ի. Օզանովսկու ունեցած տվյալների համաձայն՝ հակառակորդը նրա կորպուսի դեմ կենտրոնացրել էր 70 հազար զինվոր և սպա<sup>96</sup>: Գեներալ Պ. Ի. Օզանովսկին, ենթադրելով, որ իր կորպուսն ի վիճակի չի լինելու դիմագրավել թուրքական զերակշիռ ուժերին, չէին բավականացնում արկերը, բացի այդ զինվորները հոգնել էին երկարատև ռազմերթերից և անընդհատ մարտական գործողություններից, որն էլ ավելի է մեծացնում հակառակորդի առավելությունը<sup>97</sup>:

Նահանջի հրամանը, փաստորեն, կազմալուծում է հայ կամավորական ջոկատները: Թ. Նազարբեկյանն իր հուշերում վկայում է, որ կամավորներին խորապես վշտացրել էր նահանջի հրամանը: Նա նշում է. «7-րդ գնդից հետո եկավ Հայկական 2-րդ դրուժինան բավականին կարգին վիճակում: Այստեղ ես առաջին անգամ տեսա Դրոյին, որն իր եռանդով ինձ վրա լավ տպավորություն թողեց: 2-րդ դրուժինայից հետո եկավ Անդրանիկի 1-ին դրուժինան ոչ այնքան կարգին վիճակում: Մարդիկ շատ ճնշված էին: Դա հասկանալի էր: 1-ին դրուժինայի կազմը գլխավորապես Մշո դաշտից էր»<sup>98</sup>:

Հայտնի է նաև նահանջի մասին Անդրանիկի զնահատականը. «Այս նահանջը կատարեալ կեղծիք մըն է, դուք (ռուսական իշխանությունները-Ռ.Ս.) կ'ուզէք որ Հայաստանը առանց Հայունմնայ, ահա ձեր մտապատկերը»: Անդրանիկի համոզմամբ՝ կարելի էր օգտագործել շրջակա լեռները, որոնք հնարավորություն են

<sup>96</sup> Корсун Н., Алашкертская и Хамаданская операции, с. 105.

<sup>97</sup> Նույն տեղում:

<sup>98</sup> ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 19, ք. 147 և շրջ.:

տալիս հաջողությամբ դիմագրավել հակառակորդին: Սակայն նրա կարծիքը հաշվի չի առնվում<sup>99</sup>:

Երբ 1916 թ. օգոստոսի 7-ին Անդրանիկը գտնվում էր Վլադիկավկազում, Հակոբ քահանա Սառիկյանը նրանից խնդրում է պարզաբանել հուլիսյան նահանջի պատճառները: Անդրանիկը հետևյալն է ասել. «...ես գիտեի և կբռնայի, թե թյուրքն այդչափ (70000-ոց զորք-Ռ. Ս.) չունի—ան ալ անկատար վիճակի մեջ է, սակայն որու՞ կսես»<sup>100</sup>:

1915 թ. հուլիսի 20-ին Թ. Նազարբեկյանը Անդրանիկից ստանում է հեռագիր, ուր նա տեղեկացնում էր, որ իր դրուժինայի մարտիկների 85 %-ը Մշո դաշտից, Կուփից, Բուլանըխից և Խնուսից են, որոնց նա ազատել է ծառայությունից, որպեսզի կարողանան գտնել հարազատներին: Մնացածները ոտաբորիկ են և հյուժված ու ցանկանում են հեռանալ: Անդրանիկը վերջում խորհուրդ է հարցնում գեներալից, թե ինչպես վարվի: Ապա խնդրում է ստանալ գեներալ Ա. Մ. Նիկոլակի թույլտվությունը, որպեսզի գնա Իզդիր՝ դրուժինան համալրելու համար<sup>101</sup>: Հուլիսի 20-ին Մոնիսից Անդրանիկի հեռանալուց հետո Դրոն և իր դրուժինան են պաշտպանում փախստականներին: Նրանց կամավոր միանում է սահմանապահ հեծելավաշտը ռոտմիստր (կապիտան) Կորուկովի հրամանատարությամբ<sup>102</sup>:

Հուլիսյան անկանոն և հապճեպ նահանջից հետո դրուժինաները զրեթե ամբողջությամբ կազմալուծվում են<sup>103</sup>: Նահանջը բարոյալքող ազդեցություն է ունենում ողջ մարտակազմի վրա: Ս. Վրացյանն այդ օրերի մասին հետևյալն է գրում. «Յուսալքումի ու վիատութեան օրեր էին դրանք: Ամեն ինչ սև էր երևում. կարծես էլ ապագայի համար յոյսի ոչ մի նշոյլ չէր մնացել: ...Կամաւորներից

<sup>99</sup> Տես Ջորավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրուփունը, էջ 35:

<sup>100</sup> ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 11, ք. 179:

<sup>101</sup> ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 3, ք. 26 և շրջ.:

<sup>102</sup> Նույն տեղում, ք. 27 շրջ.:

<sup>103</sup> ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 11, ք. 8 շրջ.:

շատերն ընտանեկան կամ անձնական հոգսերով ծանրաբեռնած և կամ թուլանալով՝ թողին շարքերը: Մի պահ ստեղծեց շատ խառնակ ու երերուն վիճակ»<sup>104</sup>:

Վանի հուլիսյան նահանջով ավարտվում է կամավորական շարժման երրորդ փուլը: Այսպիսով, 1914 թ. հոկտեմբերից մինչև 1915 թ. հուլիս տեղի ունեցած մարտական գործողությունների ընթացքում կամավորների կորուստը կազմել է 485 սպանված և 1260 վիրավոր, հիվանդ և անհայտ կորած<sup>105</sup>:

1915 թ. հուլիսի 7-ին «Չայ կամավորների կարգադրիչ մարմինն» իր արած հայտարարությունում կոչ էր անում հայրենակիցներին տրամադրել նյութական միջոցներ՝ կամավորական խմբերի համար: Կարգադրիչ մարմինը հայտնում էր, որ դրամական միջոցների զգալի մասը տրամադրել է հայ գյուղացիությունը<sup>106</sup>:

Ստեղծված վիճակը կարճ ժամանակ անց հաղթահարվում է: Առաջին գնդի մարտիկներին ուղղված Անդրանիկի կոչում ասված էր. «Կոչ են անում ձեզ, շտապ ճանապարհել երևան, Քանաքեռ գիւղը, միանալու Ա. Գնդին, որ պետք է վերակազմի մինչև ամսիս (սեպտեմբերի-Ռ.Ս.) 10-ը:

Երանք, որոնք տկար են, կարող են մնալ մինչև վերջնականապես կազդուրելը:

Ընկերներ

Տասն ամիս չարչարեցինք լեռների ու ձորերի մեջ, կրեցինք ամեն տեսակ զրկանքներ, անցանք ահագին տարածութիւններ, շատ անգամ քաղցած ու բոբիկ: Բայց այս բոլորը չպետք է յուսահատեցնի ձեզ:

Բուպեն հասած է, երբ մենք պետք է ի յայտ բերենք յանդուութիւն ու կորով և մեր սիրած գործը պետք է մղել մեզ դէպի վրիժապահանջ Չայրենիքը:

Ուրեմն՝ մինչև ամսի 10-ը ձեզ տեսնեն գործի գլուխ»<sup>107</sup>:

<sup>104</sup> «Չորիզոն», Թիֆլիս, N 2, 3 յունարի 1916:

<sup>105</sup> ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 533, ք. 29:

<sup>106</sup> «Մշակ», Թիֆլիս, N 145, 7 յուլիսի 1915:

<sup>107</sup> «Չորիզոն», N 197, 2 սեպտեմբերի, 1915:

1916 թ. հունվարի 3-ին Երևանի պարետը պաշտոնապես հայտնում է Վարդանին, որ Կովկասյան բանակի դաշտային շտաբի հրամանի համաձայն բոլոր դրուժինաներն անցնում են շտաբի ենթակայության ներքո և հրամանատարներ են նշանակվելու շարային սպաներ, իսկ տնտեսական մասը ղեկավարելու են աստիճանավորները<sup>108</sup>: Հունվարի 5-ին Երևանում կայանում է կամավորական խմբերի հրամանատարների խորհրդակցություն: Խմբերի լուծարման դեմ են արտահայտվում Անդրանիկը, Դրոն, Չամազասպը և Իշխանը: Որոշվում է Վարդանին ուղարկել Թիֆլիս և խնդրել Կովկասյան բանակի շտաբին՝ չեղյալ համարել որոշումը:

1916 թ. հունվարի 29-ին առաջին գորասյունը՝ կազակային երեք հարյուրյակ, Չայկական I դրուժինան և երկու դաշտային թնդանոթ, դուրս գալով Արճեշից, մարտի մեջ մտնելով քրդական անկանոն ուժերի հետ, հարկադրում է նրանց փախուստի դիմել: Նույն օրը գորասյունը գրավում է Նորաշեն գյուղը: Չորախումբը, զարգացնելով մարտական հաջողությունները, քրդերին դուրս է մղում Քոչեր և Աղիլջևազ (Արծկե) գյուղերից և հունվարի 31-ին գրավում Ախլաթը, իսկ փետրվարի 6-ին՝ միանում զենքերալ Դ. Կ. Աբացիկի Բիթլիսի ջոկատին: Փետրվարի 7-ին համատեղ ուժերով նրանք գրավում են Դատվան գյուղը:

Փետրվարի 11-ին ռուսները սկսում են թուրքական դիրքերի գրոհը: Չարձակումը տեղի էր ունենում բաց տեղանքում և խոր ծյան միջով: Թուրքական հրետանու և հետևակի կրակը ռուսներին և հայ կամավորներին հարկադրում է դադարեցնել հարձակումը և դիրքավորվել խիստ աննպաստ պայմաններում ծյան մեջ<sup>109</sup>: Թուրքական հրամանատարությունը, օգտվելով տեղացող ծյունից և քամուց, սկսում է աջ թևից շրջանցել I դրուժինան: Կամավորներին օգնության է հասնում կազակային մեկ հարյուրյակ: Չակառակորդը, զգալով իր թվային գերակշռությունը, անցնում է

<sup>108</sup> ՀԱԱ, ֆ. 1168, ց. 1, գ. 323, ք. 186:

<sup>109</sup> Նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 11, ք. 3 շրջ.:

հարձակման, սակայն ռուսների զնդացրային և հրացանային նշանառու կրակը հարկադրում է թուրքերին դադարեցնել առաջխաղացումը:

Փետրվարի 10-ին Հայկական I դրուժինայի հետախույզները հայտնում են, որ հակառակորդը ուժեր է կենտրոնացնում Բիթլիսից (Բաղեշ) Դատվան ճանապարհի մոտ գտնվող խանի (իջևանատան) փլատակների առջևում և պատրաստում ձեռնարկներ: Տեղեկանալով այս մասին՝ գեներալ Դ. Կ. Աբացիևը Վոլգյան գնդին և Չերնոմորյան կազակային երեք հարյուրյակներին հրամայում է առաջանալ Խլաթ<sup>110</sup> և գրոհել: Գրոհողների աջ թևում գտնվում էր Հայկական I դրուժինան: Հարձակումն ընթանում էր բաց տեղանքում և խոր ծյան պայմաններում:

Գեներալ Դ. Կ. Աբացիևը թերագնահատել էր հակառակորդի ուժերը և, մարտի նետելով սակավ ուժեր, լրջորեն վտանգել էր նրանց: Թուրքական հրամանատարությունը, տեսնելով հարձակվողների սակավ լինելը, նախաձեռնում է ռուս-հայկական ուժերի թևային շրջանցումը աջ թևից, որտեղ գտնվում էին հայ կամավորները: Դ. Կ. Աբացիևը մարտի է նետում իր ունեցած վերջին պահեստագործ կազակային հարյուրյակը:

Ոգևորված թվական գերակշռությունից՝ հակառակորդն անցնում է հարձակման, սակայն կանգնեցվում է ռուս-հայկական ուժերի դիպուկ հրաձգությամբ: Այդուհանդերձ, թուրքերը չեն հրաժարվում աջ թևի գրոհից, որտեղ գտնվում էին հայ կամավորները: Նրանք ծանր կորուստներ էին կրում՝ ետ մղելով թուրքերի համառ գրոհները: Գեներալ Դ. Կ. Աբացիևի հրամանով կամավորներին օգնության են ուղարկում հետախույզների և հրաձիգների մեկ դասակ: Ի վերջո, հաջողվում է կասեցնել թուրքերի առաջխաղացումը: Հակառակորդը հարկադրված է լինում նահանջել<sup>111</sup>:

1916 թ. փետրվարի 12-ին սաստիկ բքի պատճառով մարտական գործողություններ տեղի չեն ունենում: Փետրվարի 13-ին

<sup>110</sup> Նույն տեղում, թ. 12 շրջ.:

<sup>111</sup> Նույն տեղում, գ. 10, թ. 4 և շրջ.:

հետախույզները հայտնում են, որ հակառակորդը լքել է դիրքերը և նահանջել Բիթլիսի կիրճը և դիրքեր գրավել կիրճի խորքում գտնվող Կաշակ և Բոր գյուղերի միջև: Փետրվարի 15-ին Բիթլիսի ջոկատը գրոհում է թուրքերի դիրքերը: Հակառակորդն այդ օրը համառ դիմադրություն է ցույց տալիս: Հայկական I դրուժինայի սվինային գրոհն անհաջողությամբ է ավարտվում և, զգալի կորուստներ կրելով, նրանք նահանջում են<sup>112</sup>: Նույնպես ապարդյուն է անցնում նաև փետրվարի 16-ին և 17-ին Կովկասյան VIII հրաձգային, Լաբինսկյան գնդերի և Հայկական I դրուժինայի համատեղ հարձակումը:

Գեներալ Դ. Կ. Աբացիևը հրավիրում է զորամասերի հրամանատարների խորհուրդ: Որոշվում է հակառակորդի համար անսպասելի նախաձեռնել զիշերային գրոհ՝ թուրքերին դուրս մղել բարձունքներից և գրավել Բիթլիսը:

Հարձակումը սկսվում է փետրվարի 18-ի, լույս 19-ի գիշերը, ժամը 3-ին: Ձորքը շարժվում է անաղմուկ, առանց հրետանային նախապատրաստության և կրակելու: I դրուժինան գրավում է հակառակորդի խրամատները: Կամավորների գրոհն անակնկալի է բերում թուրք զինվորներին, որոնք չեն կարողանում որևէ լուրջ դիմադրություն ցուցաբերել: Խուճապն ու խառնաշփոթն այնքան ուժեղ էր, որ թուրքերն իրար վրա կրակ են բացում<sup>113</sup>:

Խրամատները գրավելուց հետո հայ-ռուսական ուժերը ներխուժում են Բիթլիսի հյուսիսային մասում գտնվող Կոմանց բաղը: Թուրք զինվորները խուճապահար լքում են քաղաքը: Գերությունից ազատվում են 300 հայ կանայք ու երեխաներ<sup>114</sup>: Հր. Սիմոնյանի գնահատմամբ. «Բիթլիսը Անդրանիկի երկրորդ մեծ հաղթանակն էր՝ Դիլմանից հետո»<sup>115</sup>: Բիթլիսի գրավման ժամանակ կամավորների կորուստը կազմել է 15 սպանված և 55 վիրա-

<sup>112</sup> Նույն տեղում, թ. 6 շրջ.:

<sup>113</sup> Նույն տեղում, գ. 11, թ. 7, ֆ. 402, գ. 1, գ. 15, թ. 4:

<sup>114</sup> Չորավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրությունը, էջ 42:

<sup>115</sup> Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 509:

վոր<sup>116</sup>, իսկ ռուսներից՝ 24 սպանված և վիրավոր: Գրավվեց 20 թնդանոթ և հրետանային պահեստը: Գերվեց մոտ հազար զինվոր<sup>117</sup>:

Դ. Կ. Աբացիկի 1916 թ. փետրվարի 22-ի N 782 հրամանով կազմվում է նոր ջոկատ: Նոր կազմավորումը գլխավորում է Չեռնոմորսկյան I գնդի հրամանատար, գնդապետ Ֆիլիպովը: Ջոկատը կազմված էր Հայկական I խմբից, VI հրաձգային գնդի գումարտակից՝ երկու գնդացիներով, Լաբինսկյան I և Չեռնոմորսկյան I գնդերի մեկական հարյուրյակներից՝ չորս գնդացիներով: Հայկական II դրուժինայի մեկ վաշտ թողնվում է Բիթլիսում<sup>118</sup>:

Թ. Նազարբեկյանի կարծիքով՝ Դ. Կ. Աբացիկը կոպիտ սխալ է թույլ տալիս՝ չհետապնդելով հակառակորդին մինչև Սդերո, քանի դեռ չէին գրավվել քաղաքի շրջակա գերիշխող դիրքերը: Հակառակորդը շտապում է օգտվել այդ անփութությունից և գրավել Բիթլիսի վրա գերիշխող բարձունքները՝ սկսելով դրանք ամրացնել<sup>119</sup>:

Փետրվարի 22-ից մինչև մարտի 12-ը գնդապետ Ֆիլիպովի ջոկատի կազմում Հայկական I դրուժինան և ռուսական զորամասերը պայքար էին մղում Բիթլիսի և Մուշի միջև ընկած տարածքը քրդական դիվերսիոն-հետախուզական կազմավորումներից ազատագրելու նպատակով<sup>120</sup>: Փետրվարի 27-ին I խմբի ստորաբաժանումները տեղակայվում են Բիթլիս-Մուշ ճանապարհի հետևյալ բնակավայրերում.

1. Չուխուր-Նորաշենում՝ I վաշտը և հեծելազորը,

<sup>116</sup> Ղորղանեան Գ., Հայերու մասնակցութիւնը համաշխարհային պատերազմին Կովկասեան ռազմաճակատին վրայ (Նիւթեր պատմութեան համար), «Հայրենիք», Բոստոն, քիւ 11, սեպտեմբեր, 1927, էջ 82:

<sup>117</sup> Корсун Н., Эрзерумская операция на Кавказском фронте 1916 году, Москва, 1938, с. 136. Ըստ Թ. Նազարբեկյանի՝ ութ սպա, 300 զինվոր, տարբեր տրամաչափի 27 թնդանոթ, մի քանի հազար հրացան, լավ կահավորված հոսպիտալ, հրետանային պահեստն իր արհեստանոցներով և այլն (տես՝ ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 10, թ. 9):

<sup>118</sup> ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 8, թ. 54-61:

<sup>119</sup> Նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 11, թ. 15:

<sup>120</sup> Նույն տեղում, թ. 29 և շրջ.:

2. Հասքոյում՝ III վաշտը և Անդրանիկը,

3. Մարնիկում՝ II վաշտը<sup>121</sup>:

Անդրանիկը Սմբատին հրամայում է գրավել Նոկ գյուղի շրջակա բարձունքները: Քրդերն անընդհատ հարձակումներ էին գործում՝ ձգտելով վերահսկողության տակ վերցնել Բիթլիս-Մուշ ճանապարհը: Հակառակորդի ակտիվ հարձակողական գործողությունները վտանգում էին հաղորդակցության ուղիները Չուխուր-Նորաշենի և Հասքոյի միջև: Քրդերի անընդհատ հարձակումները վտանգում են II վաշտին, ուստի Անդրանիկն օժանդակ ուժ է ուղարկում: Սակայն մինչև օգնության ժամանումը Սմբատին հաջողվում է հետ մղել հակառակորդին: Համալրման ժամանումից հետո քրդերը դադարեցնում են հարձակումը<sup>122</sup>:

Մարտի 2-ին և 3-ին հրամանատարությանն ուղղված զեկուցագրերում Անդրանիկն առաջարկում է անհապաղ գրավել Մուշից հարավ գտնվող Սուրբ Ախպերիկը, որի շրջանում և խոյթում կենտրոնացել էին մինչև տաս հազարի հասնող զինված քրդեր: Անդրանիկը գտնում էր, որ քրդերին անհրաժեշտ է օր առաջ ջախջախել, քանի դեռ ծյունը չի հալվել և հակառակորդը հնարավորություն չունի ազատ տեղաշարժվել: Անդրանիկի առաջարկը հավանություն է գտնում, սակայն չի իրականանում Բիթլիսին սպառնացող վտանգի պատճառով: I խումբը հրաման է ստանում վերադառնալ Բիթլիս<sup>123</sup>:

Գեներալ Թ. Նազարբեկյանը վկայում է, որ հայ փախստականներին ուղեկցող երեք քրդեր հայտնել էին I խմբի վաշտի հրամանատարներից մեկին, որ Մուսա բեկը մոտ հազար քրդերով նախապատրաստվում է գրավել Չուխուր-Նորաշեն-Հասքոյ ճանապարհները: Մուսա բեկին հետևելու էին թուրքական կանոնավոր ուժերը: Հարձակումը նախատեսվում էր մարտի 13-ին<sup>124</sup>:

<sup>121</sup> Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 82:

<sup>122</sup> ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 8, թ. 54-61:

<sup>123</sup> Նույն տեղում, թ. 54-61, Андраник Озаян. Документы и материалы, с. 206.

<sup>124</sup> Նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 11, թ. 32:

1916 թ. մարտի 13-ին քրդերը սկսում են հարձակումը, սակայն հետ են մղվում: Նրանց, սակայն, հաջողվում է գրավել գերիշխող բարձունքները: Բիթլիսի ջոկատի հրամանատարը հրամայում է ամեն գնով պաշտպանել դիրքերը և թույլ չտալ, որ պետզի հակառակորդը ներխուժի Մշո դաշտ: Նրա հրամանով Մարնիկում տեղակայված 292-րդ դրուժինային օգնելու նպատակով ուղարկվում է Հայկական I խումբը:

Հայկական I խմբի երկու վաշտերը Վերին Մարնիկում պարտության են մատնում քրդերին և հարկադրում նահանջել: Նրանք, սակայն, համալրում ստանալով վերսկսում են հարձակումը: Հայ կամավորների և Կովկասյան VIII հրաձգային գնդի վաշտի համատեղ գործողությունների արդյունքում քրդերը պարտվում և ծանր կորուստներ կրելով նահանջում են<sup>125</sup>:

Մարտի 24-ին խմբին հանձնարարվում է հսկողության տակ վերցնել Կարախաշտա գծից հարավ և հյուսիս գտնվող շրջանը: Կամավորները, չկարողանալով դիմազրավել թուրքական հարձակմանը, նահանջում են Բիթլիս: Միայն ռուսական օժանդակության շնորհիվ հնարավոր է լինում կասեցնել հակառակորդի հարձակումը և նրան հարկադրել նահանջել:

Կոտնի գյուղի մոտ ռուսական երկու աշխարհագորային դասակներ հարկադրված են լինում նահանջել քրդերի գերակշիռ ուժերի ճնշման պատճառով: Աշխարհագորայիններին օգնության հասած կամավորական երկու վաշտերը միասնական ուժերով պարտության են մատնում քրդերին և հարկադրում նահանջել<sup>126</sup>:

Հակառակորդը Բիթլիսից փախչելուց հետո կենտրոնանում է Կասր գյուղում: Նրա թվաքանակը, քրդերի հետ միասին, հասնում է հինգ հազարի: Կար երեք թնդանոթ: Նշված ուժերից բացի, սպասվում էր Դարդանելի շրջանից ժամանած զորամասերի տեղափոխումը Բիթլիսը գրավելու համար<sup>127</sup>:

<sup>125</sup> Նույն տեղում, թ. 34

<sup>126</sup> Նույն տեղում, թ. 35:

<sup>127</sup> Նույն տեղում, թ. 35 շրջ.:

Բիթլիսը պաշտպանում էին գնդապետ Օբրազցովի հրամանատարության ներքո գործող ուժերը: Քաղաքը գրոհող թուրքական զորամասերն իրենց որակական կազմով, սպառազինությամբ և հանդերձանքով արմատապես տարբերվում էին մինչ այդ ռուսների դեմ կռվող զորքերից: Թուրքական զորամասերին վարժեցրել էին գերմանացի հրահանգիչները և, ամենակարևորը, նրանք հոգեբանորեն ավելի լավ էին պատրաստված, քանի որ հաղթանակ էին տարել ֆրանս-բրիտանական գերակշիռ ուժերի դեմ: Այս հանգամանքը զգացվեց առաջին իսկ ընդհարման ժամանակ:

Թուրք-քրդական անընդհատ հարձակումները և նոր, թարմ համալրման ժամանումը զենեռալ թ. Նազարբեկյանին բերում է այն եզրակացության, որ հակառակորդը նախապատրաստվում է Բիթլիսի գրոհին: Ուստի զենեռալը սկսում է իր ենթակայության ներքո գտնվող զորամասերը մոտեցնել Բիթլիսին: Առաջին հերթին Հայկական I դրուժինան շտապ հրաման է ստանում վերադառնալ քաղաք<sup>128</sup>:

1916 թ. մարտի 16-ին I խումբը հասնում է Բիթլիս և մասնակցում քաղաքից արևմուտք գտնվող Կարա գյուղի շրջանում տեղի ունեցող պաշտպանական մարտերին<sup>129</sup>: Մարտի 23-ին գնդապետ Օբրազցովը կամավորներին հանձնարարում է քրդերին հեռացնել Կարախաշտա ճանապարհից և իրականացնել խորքային հետախուզություն Մշո դաշտից: Մոտկանի ուղղությամբ և պաշտպանել Բիթլիսը արևմուտքից<sup>130</sup>: Մարտի 24-ի առավոտյան դրուժինան ձեռնամուխ է լինում մարտական առաջադրանքի կատարմանը:

Կամավորների հետախուզությունը հայտնաբերում է Քղիից արևմուտք գտնվող լեռան շրջանում առաջացող հակառակորդի առաջապահ գումարտակը: Ինչպես երևում էր նրա շարժման ուղ-

<sup>128</sup> Նույն տեղում, գ. 12, թ. 4-5:

<sup>129</sup> Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 82-83:

<sup>130</sup> ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 8, թ. 54-61:



դությունից, թուրքերը շրջանցում էին Կարպը: Այդ գորաշարժի նպատակն էր շրջանցել Բիթլիսը արևմուտքից՝ թևային հարձակում նախատեսելով:

Մարտի 24-ի, լույս 25-ի գիշերը սպասվում էր Բիթլիսի գրոհը: Ինչպես նշում է իր հուշերում Թ. Նազարբեկյանը, իրեն զարմացրել էր Կովկասյան IV բանակային կորպուսի հրամանատարության որդեգրած անտարբեր վերաբերմունքը: Վերջինի կողմից որևէ գործնական քայլ չէր կատարվում քաղաքի պաշտպանությունն ապահովելու համար: Մարտի 25-ին թուրքերը վճռական հարձակման են անցնում: Գնդապետ Օբրազցովը կամավորների մեկ վաշտն ուղարկում է Կարպի լեռնանցքը՝ հրամայելով այն ամեն զնով պաշտպանել<sup>131</sup>: Մարտի 27-ին Բիթլիսի դրությունն առավել ծանր և օրհասական դարձավ<sup>132</sup>:

Կարպ գյուղի և համանուն լեռնանցքի պաշտպանության համար ծանր մարտեր են մղվում: Կամավորները դիմագրավում են թուրք-քրդական ուժերին: Ռուսական հրամանատարությունը կամավորների և Կարպի միջև տեղակայում է հրաձիգների երկու վաշտ՝ երկու թնդանոթներով և զնդացիներով:

Կամավորական վաշտի դրությունն ավելի վտանգվեց, երբ մարտի 26-ին 292-րդ աշխարհագորային դրուժինան, չդիմանալով հակառակորդի անընդհատ գրոհներին, նահանջում է՝ չնախազգուշացնելով յուրայիններին: Դա թուրքերին հնարավորություն տվեց երկու թևերից շրջանցել հայկական վաշտը: Կամավորները, միայնակ մնալով և շրջապատումից խուսափելու նպատակով, հարկադրված են լինում նահանջել:

Մարտի 26-ին I խմբի երկու վաշտերը և հրաձիգները պաշտպանում էին Բիթլիսի հյուսիսարևմտյան մատույցները: Նրանք, սակայն, չստանալով սպասվող օգնությունը, նահանջում են՝ հետապնդվելով հակառակորդի կողմից: Մարտի 27-ի գիշերը թուրքերը դադարեցնում են հետագա հարձակողական գործո-

<sup>131</sup> Նույն տեղում:

<sup>132</sup> ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 12, ք. 17:

դությունները և նահանջում հարավ՝ Քղի: Նման քայլին հարկադրեց դիմել զնդապետ Շչերբանինի ջոկատը, որը դուրս էր եկել Մարաթուկ-խոշտա ճանապարհի վրա: Այս հանգամանքը կամավորներին հնարավորություն է տալիս կրկին վերագրավել Կարպի լեռնանցքը: Բիթլիսի պաշտպանության ընթացքում կամավորների կորուստը կազմել է 20 սպանված, 8 վիրավոր և 20 անհայտ կորած<sup>133</sup>:

Վանի ջոկատի հրամանատար, գեներալ Տրուխինի վկայությամբ՝ իր կողմից Անդրանիկը մի քանի անգամ ներկայացվել է մարտական պարգևների, սակայն Կովկասյան բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Պ. Ի. Օգանովսկին հիմնականում անուշադրության է մատնել դրանք<sup>134</sup>: Համանման վկայություն է հայտնում գեներալ Մ. Սիլիկյանը: Արդեն խորհրդային տարիներին գեներալ Թ. Նազարբեկյանին գրած նամակներից մեկում նա հայտնում է, որ Դրոյի դրուժինայի կատարած քաջագործությունների մասին ինքը գրել է Կովկասյան IV բանակային կորպուսի հրամանատարությանը և Դրոյին ու աչքի ընկած մարտիկներին ներկայացրել Գեորգիկյան խաչով պարգևատրելու: Ինչպես վկայում է Մ. Սիլիկյանը. «Հետագայում ես իմացա, որ նրանք (կորպուսի հրամանատարությունը-Ռ.Ս. ) մերժել է այդ պարգևները և խնդրել այլևս ներկայացումներ չանել»<sup>135</sup>: Ինչպես երևում է Թ. Նազարբեկյանի դաշտային գրքույկից, նա էլ, իր հերթին, 1916 թ. ապրիլի 21-ին դիմել է Ֆ. Գ. Չեռնոզուբովին խնդրելով հայտնել, թե I դրուժինայի հրամանատարական կազմը՝ Անդ-

<sup>133</sup> Բաղդասարեան Տիգրան, Վանի կռիվները եւ վերջին իշխանութիւնը, «Վեմ», Փարիզ, թիւ 4, հոկտեմբեր-դեկտեմբեր, 1918, էջ 32:

<sup>134</sup> Андраник Озанян. Документы и материалы, էջ 176: Կովկասի ռուսալեզու մամուլն իր հերթին չէր տպագրում հողվածներ, որտեղ ներկայացվում էին կամավորների մարտական գործողությունները: Հ. Թումանյանի վկայությամբ «Кавказское слово» թերթի խմբագիրն ուղղակիորեն հայտարարում է. «Все нам интересно, кроме дружинников» («Մեզ ամեն ինչ հետաքրքրում է, բացի դրուժինիկներից») (տես Չաքարյան Ա., Շիրվանզադեի հրապարակախոսական ժառանգությունից (1914-1919 թթ.), Երևան, 2006, էջ 30):

<sup>135</sup> ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 22, ք. 9 շրջ.:

րանիկը, Ամբատը և մյուսները, ստացել են, արդյո՞ք, Դիմանի ճակատամարտի համար ներկայացված բարձրագույն զինվորական պարգևները<sup>136</sup>:

1916 թ. մարտից սկսած ռուսական հրամանատարության հրամանով լուծարվում են բոլոր հայկական կամավորական խմբերը: Նրանք աստիճանաբար դուրս են բերվում ռազմաճակատից և ուղարկվում քիկունք: Սեպտեմբերին ավարտվում է հայկական կամավորական շարժման երկամյա մարտական գործողությունների պատմությունը: 1916 թ. մարտի 13-ի N 179 հրամանով գեներալ Ն. Ն. Յուդենիչի հրամանով սկսվում է դրուժինաների վերակազմավորումը հրաձգային զուժարտակների<sup>137</sup>:

Ամփոփենք՝ 1914-1916 թթ. ընթացքում Հայկական կամավորական I խումբը՝ Անդրանիկի զլխավորությամբ, ռուսական տարբեր զորամասերի կազմում մասնակցեց ռուս-թուրքական ռազմաճակատի գրեթե բոլոր կարևոր մարտական գործողություններին: Անդրանիկի կերպարը շատ դեպքերում եղել է հակասական. ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանի բնորոշմամբ՝ «Անդրանիկն իր ազգի նման բարդ էր ու հակասական: Նա տրամադրության մարդ էր...»<sup>138</sup>:



ՀՀ պաշտպանության նախարարության «Անդրանիկ Օգանյան» մեդալը

<sup>136</sup> Նույն տեղում, գ. 23, թ. 17:

<sup>137</sup> Նույն տեղում:

<sup>138</sup> Սիմոնյան Հ., Չորավար Անդրանիկ (ընդհանուր բնութագիր), ՊԲՀ, 2000, N 1, էջ 47:

## ԳԱՅԱՆԵ ՄԱԽՄՈՒՐՅԱՆ

պատմ. գիտ. դոկտոր

### ԱՐԵՎՍՏԱՅԱՅ ԴԻՎԻԶԻԱՆ ԵՎ ԱՄՆ-Ի ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1917-1918 ԹԹ.

1917 թ. սկզբին ռուսական Կովկասյան բանակը 170 կմ առաջ էր անցել 1914 թ. սահմանից՝ ներառելով Մուշն ու Դատվանը: Սակայն Հոկտեմբերյան հեղափոխության առաջնորդները հետամուտ էին անհապաղ հաշտություն կնքելու թշնամու հետ ու Օսմանյան կայսրությանը վերադարձնելու նրա լծից ազատագրված բոլոր տարածքները: Իրենց հերթին, Թիֆլիսում կենտրոնացված քաղաքական ուժերը հայտարարում էին Ռուսական Հանրապետության մաս լինելու մասին, բայց չէին ենթարկվում բոլշևիկյան կառավարությանը: Ընդ որում, Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը կատարեց բոլշևիկների Բրեստ-Լիտովսկից արձակած պահանջն ու 1917 թ. դեկտեմբերի 18-ին (5-ին) երզնկայում կնքվեց զինադադար:

Մինչհեղափոխական, 880-650-հազարանոց ռուսական զորքերը քիչ թե շատ կայուն վիճակ էին պահպանում մինչև 1917 թ. նոյեմբերի 8-ին բոլշևիկյան «Խաղաղության մասին» հռչակագրի ընդունումը: Վերջինը խթանեց 965 կմ ձգվող դիրքերից զանգվածային դասալքությունն ու 500-250 հազարի հասած բանակային կառույցի քայքայմանը: Վիճակը էլ ավելի ծանր էր, քանի որ այդ ամբողջ համակազմից խրամատներում կար մոտավորապես 60 հազ. մարդ<sup>1</sup>: Ա.Օզանյանի վկայությամբ՝ 1918 թ. փետրվարի 15-ին նրա 2-հազարանոց դիվիզիայի Սարիղամիշ հասնելու օրը, ռուսական վերջին կառախումբը հեռացել էր դիրքերից: Նման իրավիճակը հղի էր լայնածավալ թուրքական

<sup>1</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 50 շրջ., 54, Gibbons H. A., Armenia in the World War, NY, American Committee opposed to the Lausanne Treaty, 1926, p. 13.

առաջխաղացմամբ, հետևաբար կործանման եզրին էր ոչ միայն արևմտահայ հատվածը, այլև մեր ամբողջ ժողովուրդն անխտիր:

Բուն Արևմտյան Հայաստանում գործում էր գեներալ-լեյտենանտ Պ. Ավերյանովի ու Հ. Ջավրյանի Գեներալ-կոմիսարիատի փոքրաթիվ վարչակազմը՝ Վանի նահանգապետ (սեպտեմբերի 22/9-ից՝ կոմիսար) Կոստի Համբարձումյանի հետ: «Երզնկայէ երզրում մինչեւ Վան 12-15 հազար թրքահայ զինուած ժողովուրդ շատ դիրութեամբ կրցան այդ ճակատները պաշտպանել երեքուկէս ամիս և խոշոր վտանգի ժամանակ, դէպի Կովկաս փոխադրել հարիւր հազար գաղթական»<sup>2</sup>: Այդ թվում «Քլքիտի կողմը 950 հոգի, Երզրումի մէջ 251 զինուոր և 53 սպայ, ...4-րդ զունդը Երզրումի Թէքէ-Տրէսի մէջ ուներ 450 զինուոր, Խնուսի 2-րդ զունդը, 5-րդը Վանէն դէպի վար Հայոց Ձորի մէջ 500 հոգի»<sup>3</sup>: Խնուս-Մուշի շրջանում գործող Մանուկի, Մուշեղի և Չուլոյի (Հարություն Արահամյանի) ջոկատը ուներ 300 զինվոր, որ մինչ հեղափոխական ժամանակահատվածում եղել էր 1.500-հոգանոց Սասունի զունդը: Գունարած Ալաշկերտում առկա Սմբատի, Բաբերդում Սեպուհի, Վանում՝ Գրիգոր Բուլղարացու, Լ. Շաղոյանի, Տ.Բաղդասարյանի, Երզնկայում՝ Սեբաստացի (Խրիմյան) Մուրադի ուժերը:

Կոմիսարիատը գտնում էր, որ առաջին հերթին պետք էր պաշտպանել Վանը, Խնուսն ու Կարինը<sup>4</sup>: Ն. Թ. ղեկտեմբերի 12-ին (նոյեմբերի 29-ին) կազմակերպվող Հայկական կորպուսի հրամանատար Թ.Նազարբեկյանը Հայոց Ազգային խորհրդում առաջարկեց թուրքահայերից գործնասեր կազմել ու ընդառաջել Անտանտի թուրքահայ ստորաբաժանումներ հավաքելու առաջարկին<sup>5</sup>: Հաջորդ օրը ՀԱԽ-ում ունկնդրեցին Պողոս Նուբարի հեռագիրը: Նա նույնպես առաջարկում էր բանակաշինություն ու համաձայնության դեպքում պատրաստ էր բանակցելու «անգլիա-

<sup>2</sup> Միհրանեան Ա., Ինչպե՞ս պետք է գրաւել Թրքահայաստանը (Չօր. Անդրանիկի կարծիքը), Կ. Պոլիս, 1921, էջ 9, ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, ք. 50 շրջ.:

<sup>3</sup> Միհրանեան Ա., նշվ. աշխ., էջ 8:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, ք. 79 շրջ.-80:

<sup>5</sup> Նույն տեղում, ք. 51:

կան ու ֆրանսիական կառավարությունների հետ, դրամական և այլ կարգի» օժանդակության մասին<sup>6</sup>: Հետաքրքրական է, որ վերոնշյալ դիվանագիտական նախաձեռնությունն, ինչպես և 1917 թ. դեկտեմբերի 14/1-ին ռուսական հրամանատարության կողմից ՀԱԽ-ի նիստում կատարված հաղորդումը՝ Ալաշկերտն ու Խնուսը ընդգրկող Հայաստանի «ինքնորոշվող երկիր» դառնալու մասին, կատարվել են բոլշևիկների «Ռուսաստանի ու Արևելքի բոլոր աշխատավոր մահմեդականներին դիմումով» գաղտնի համաձայնագրեր չեղյալ հայտարարելուց հետո ու նրանց «Թուրքահայաստանի» մասին հռչակագրից համարյա մեկ ամիս առաջ<sup>7</sup>:

Որպես այդ նոր, «ինքնորոշվող» միավորի քաղաքական ատյան, ղեռնա մայիսին, Երևանում ընտրվեց ու շուտով Թիֆլիս տեղափոխվեց Արևմտահայ ազգային խորհուրդն ու նրա գործադիր մարմինը՝ Բյուրոն: Հատկապես ռազմական շինարարության համար ԱԱԽ-ի կոնֆերանսը (ուժեղացրած ժողովը) ղեկտեմբերի 25-27/12-15-ին, ընտրությամբ ձևավորեց Հայաստանի ապահովության խորհուրդը: Երզրումում տեղակայված նրա զինուժի փոքրաթիվ զորահանդեսով, 1918 թ. փետրվարի 12-ին/հունվարի 30-ին Կարինում հայտարարվել էր ազգային անկախության մասին:

Քառյակ դաշինքի և Անտանտի, միապետական, բուրժուական ու բոլշևիկյան Ռուսաստանի, Անդրկովկասում հայերի և տեղի թաթարների շահերի բախման բարդ հանգույցում իր ուրույն տեղն է ունեցել նաև ԱԱԽ-ի և Պարսկաստանի գործունը: 1917 թ. ապրիլին անգամ ԱԱԽ-ի պետքարտուղար Ռ. Լանսինգը համոզված էր Ռուսաստանի՝ Քառյակ դաշինքի հետ անջատ, հայերի համար աննպաստ պայմանագիր կնքելու մեջ<sup>8</sup>: Ավելի ուշ՝ ն. ք. մայիսի 22-ին, ԱԱԽ նախագահ Վ. Վիլսոնը դիմեց Պետրոգրադի

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, ք. 52 շրջ.:

<sup>7</sup> Նույն տեղում, ք. 55:

<sup>8</sup> Papers Relating to the Foreign Relations of the United States, 1917, Suppl.2 The World War, in 2 vols., vol. I. Wash., GPO, 1932, p. 16-17, 120 (այսուհետև Paper Relating):

ժամանակավոր կառավարությանը և շեշտեց, որ ոչ մի ժողովրդի չեն ստիպի ենթարկվել իրեն անընդունելի տիրակալությանը<sup>9</sup>:

Քիչ անց՝ մայիսի 29-ին, Թիֆլիսում ԱՄՆ հյուպատոս Ֆ.Վ. Սմիթը իր նստավայրում առաջին հանդիպումն է ունեցել Ա. Օզանյանի հետ: Նրանք զրուցել են արևմտահայ զորքեր ստեղծելու մասին<sup>10</sup>: Քննարկումներին ներկա էին խարբերոցի ուսուցիչ, այդ քաղաքում ամերիկյան եփրատ-քուլեջի հռչակավոր պրոֆեսորների ընտանիքի անդամ Լևոն Լյուլեճյանն ու թարգմանիչ Վ. Թոթովենցը: Հյուպատոսն առաջարկեց ֆինանսավորել արևմտահայ կազմավորվելիք զորամասը (ղիվիզիան)՝ դրա գործողությունները վերահսկելու պայմանով: Ֆ. Սմիթը ցանկանում էր օգտագործել նույն օրերին Կոնգրեսում հաստատված ռուսական 100-միլիոնանոց վարկի մի մասը:

Հունիսի 2-ին Անդրանիկը հյուպատոսին հանձնեց անհրաժեշտ քացատրագիրը և մարտական գործողությունների օպերատիվ քարտեզը: Նրա նկարագրության համաձայն՝ կարևորագույն հենակետերն էին. «Մէկ կողմէ՝ Պայպուրթ, Քէլքիթ, Երզնկա-Մամախարուն-Էրզրում, Ա.Կարապետ-Խնուս, Սանազկերտ, Ալաշկերտ, Ղարաքիլիսէ, Վան և միւս կողմէ՝ Օլբի Սարըղամիշ, Կարս, Արտահան, Կաղզվան, Իջտիր, Ալեքսանդրապոլ, Ղարաքիլիսէ, Նախիջեւան, Չուլֆա, անդին՝ Շերէպխանէ»<sup>11</sup>: «Այս բոլոր տարածութիւններու վրայ ռուս բանակը... մօտաւորապէս լրեց 3000 թնդանօթ, 3000 միթրայեօզ, մէկ միլիառ փամփուշտ, 100 հազար մարդու հազնելիք հագուստ, 100 հազար հոգիի ուտելիք, մօտաւորապէս 15-17 հազար ձի, մօտ 1 միլիոն ռուբլ և շրաքնէլ, 100

<sup>9</sup> Papers Relating, 1917, Suppl.2 The World War, vol. I, p. 73.

<sup>10</sup> Մարմարեան Ա., Չօր. Անդրանիկ եւ իր պատերազմները, Կ.Պօլիս, 1920, էջ 263-264, Կարինյան Գ., Ազգային հերոս Չօր. Անդրանիկ եւ իր պատերազմները, Փարիզ, 1953, էջ 171-173, Չելեպյան Ա., Չորավար Անդրանիկ, Երևան, 1990, էջ 379-380, Նազարյան Ա.Ս., Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում (1914-1918 թվականներ), Երևան, 1999, էջ 116-117, Այվազյան Հ., Չորավար Անդրանիկ և Հովհաննես Թումանյան, Երևան, 2004, էջ 76:

<sup>11</sup> Քարտեզի նկարագրումը տես Սիիրանեան Ա., նշվ. աշխ., էջ 7:

հազար հրացան, փոխադրութեան անհամար կառքեր, բազմաթիւ օթօմոքիլներ թէ՛ բեռներու և թէ՛ զօրքերու փոխադրութեան յատուկ, այդ օթօներու բոլոր յարակից փոխնորդ մասերով և անխնայով, ծիւր թամբեր, պենզին, կօշիկի համար հսկայ քանակութեամբ կաշիներ և ամէն տեսակ զանազան պիտոյքներ»<sup>12</sup>:

Թիֆլիսում սկիզբ առած ամերիկյան այդ նախաձեռնությունը համնկավ Մոսուլի տակ ու Եվրոպայում՝ ժամանակավոր կառավարության լայնածավալ հարձակումների նախապատրաստմանը: Այնուհետև, Պատրոզրադում ԱՄՆ ղեսպան Դ. Ռ. Տրենսիսը Թիֆլիսից իր մոտ ժամանած Ֆ. Վ. Սմիթի վերոնշյալ փաստաթղթերը հանձնեց ռազմական ու ծովային նախարար Ա. Կերենսկուն, իսկ դրանց պատճեններն ուղարկեց Վաշինգտոն ու Եվրոպական մի շարք մայրաքաղաքներ: Փարիզի Հայկական ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարն ևս նման մի հուշագիր պատրաստեց պետքարտուղար Ռ. Լանսինգի համար:

Հուշագրի համաձայն՝ Հայաստանը, որի կազմում ընդգրկվում էին օսմանյան վեց նահանգները, Կիլիկիան և Տրապիզոնը, ստանալու էր ինքնավարություն և լինելու էր Դաշնակիցների համատեղ հովանու ներքո: Հիմք ընդունելով ամերիկյան տեսակետը Ազգերի Լիգայի և մանդատների նկատմամբ՝ նոր խնամակալությունը բոլոր երկրներին տրամադրելու էր հավասար իրավունքներ տնտեսության, առևտրի և կրթության ոլորտներում, ինչպես նաև Բաղդադի երկաթգծով ազատ տեղաշարժի իրավունք դեպի Պարսկաստան ու Հնդկաստան: Տասնհինգամյա մանդատի սահմաններում տերություններից մեկը պետք է գործընկերներից վարկ ստանար ու փոխհատուցեր Հայոց ցեղասպանության զոհերի կրած վնասները: Հովանավորը կարող էր զորքեր դասավորել տեղում, ու 15 տարիների ընթացքում նրա բանակը պետք է աստիճանաբար փոխարինվեր ձևավորվող հայ-

<sup>12</sup> Սիիրանեան Ա., նշվ. աշխ., էջ 7:

կական զինված ուստիկանությամբ<sup>13</sup>:

Վերոհիշյալ դիմումը անպատասխան մնաց, իսկ արևմտահայ դիվիզիա ձևավորելու խնդիրը սառեցվեց մինչև 1917 թ. օգոստոսի 3-ը: Այդ օրը ԱՄՆ պետքարտուղարը ծանոթացավ Անտանտի Հայաստանն ազդեցության ուղորտների բաժանելու ծրագրին: Նա տեղեկացավ, որ Արևմտյան Եվրոպայի տերությունները հայերին օսմանյան գերիշխանությունից ազատելու գաղափարը փոխարինեցին հայերի ինքնավարությամբ նույն Օսմանյան կայսրության կազմում, այն էլ առանց արտաքին հսկողության<sup>14</sup>: Նոր տվյալներին ի պատասխան՝ Արտերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան վարչության աշխատակից, ակնամավոր քարոզիչ Է. Յարրոուն հյուպատոս Ֆ. Վ. Սմիթի ներկայությամբ Ա. Օզանյանին ծանոթացրեց անգլիացի գեներալ Օ. Շորի և նրա ուղեկից Ջ. Գրեյսիի հետ: Քառյակը քննեց 8 զնդից բաղկացած 10-20-հազարանոց հայկական զինուժ հավաքելու հարցը՝ այն ֆինանսավորելու և 150 անգլիացի խորհրդակազմներ տրամադրելու պայմանով: 1917 թ. օգոստոսի 22-ին ԱՄՆ-ի Պետդեպարտամենտի ղեկավարը ստացավ նոր մանրամասներ Հայաստանին վերաբերող 1916թ. համաձայնագրի մասին<sup>15</sup>:

Հայ ժողովրդի ինքնապաշտպանության շուրջ ընթացող բանակցությունների երրորդ վճռորոշ փուլը սկսվեց 1917 թ. հոկտեմբերի 30/17-ին, երբ Ռ. Լանսինգը տեղեկացավ, որ Միջագետքում օսմանյան բանակը պատրաստում է լայնածավալ հարձակում անգլիացիների դեմ: Նոյեմբերի 3-ին ԱՄՆ-ի պետքարտուղարը ստացավ Պոդոս Նուբարի դիմումը: Վերջինս պատիվ ուներ հաղորդելու, թե «Հայկական հարցը այժմ դասվեց միջազգային այն հարցերի շարքին, որոնք վճռելու է հաշտության ապագա վեհաժողովը: [Իսկ պետական անձանց այսպիսի մեծ հավաքում]

<sup>13</sup> United States National Archives, Washington D.C., Record Group 59 General Records of the Department of State, class 701.67m51/document 2/Enclosure (այսուհետև՝ US NA):

<sup>14</sup> US NA, RG 59, 763.72/6168.

<sup>15</sup> Ibid., 763.72119/750.

Միացյան Նահանգների կառավարությունը ունենալու է վճռորոշ ազդեցություն»<sup>16</sup>: Նման պնդումներն անհնար էր անել առանց Եվրոպայի քաղաքական գործիչների համաձայնության:

Ուշագրավ է, որ 1917 թ. նոյեմբերի 7-ին Ռ. Լանսինգը ստացավ Ֆ. Վ. Սմիթի զեկուցագիրը: Հյուպատոսը տեղեկացնում էր քրդերի հետ Վանում նրանց անկախության հարցով բանակցելու և համաձայնության գալու հնարավորության մասին: Հայկական կողմը սատարում և իրագործելի էր համարում այդ նախագիծը: Ըստ դիվանագետի զեկուցման՝ քրդերի ռազմական միջամտությունն Անտանտին ապահովում էր մեծ առավելություններ, իրականացնելի էր աննշան ծախսով և հնարավոր էր կազմակերպել Թիֆլիսից<sup>17</sup>: Լոնդոնում իսկույն գումարվեց մեկ բազմամարդ կոնֆերանս՝ ԱՄՆ-ի ուժեղ պատվիրակությամբ հանդերձ: Կոնֆերանսի ավարտին Թիֆլիսում ստացան մի պատասխան, թե քրդերին վերաբերող նախագիծը «հետաքրքիր» էր, սակայն Վաշինգտոնն ի վիճակի չէր հատկացնել իրենից հայցված ֆինանսական միջոցները:

Միևնույն պահին՝ նոյեմբերի 21/8-ին, Թիֆլիսում Հայոց ազգային խորհրդի նիստում Մ. Պապաջանյանը ներկայացրեց իր առաջին զեկույցը: Նա պատմեց փոխզնդապետ Ա. Թորգոմի (Արշակ Երվանդյանի) երեք ամսում 12-16-հազարանոց արևմտահայ հետևակի դիվիզիա կազմելու առաջարկի մասին: Չորամասը նույն Ա.Թորգոմի և Անդրանիկ Օզանյանի ղեկավարությամբ պետք է «օգնության գնար անգլիացիներին»: Ընդ որում, Անտանտի երկրները մտադիր էին տրամադրել խորհրդակազմներ և հանդերձանք, իսկ ընդհանուր ծախսերը հոգալու էր ռուսական ժամանակավոր կառավարությունը: Ա. Թորգոմը պատրաստ էր անցնել արտասահման և խորհրդի կարգադրությամբ շարունակել բանակցությունները Եվրոպայում<sup>20</sup>: Նոյեմբերի 30/17-ին այդ գործիչն անձամբ՝ Արևմտահայ խորհրդի անդամների հետ, ներկայա-

<sup>16</sup> Papers Relating, 1917, Suppl.2 The World War, vol. I, p. 795.

<sup>17</sup> Ibid., p. 295.

ցավ ՉԱԽ-ի նիստին: Այժմ փոխզնդապետը հստակեցրեց, որ 10-15 հազ. հոգուց բաղկացած արևմտահայ դիվիզիան ընդգրկվելու էր միասնական Հայկական զորաբանակի (կորպուսի) կազմում և պաշտպանելու էր Կովկասյան ռազմաճակատը Արևմտյան Հայաստանում: Ռուսական բանակի հրամանատարությունը, Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարն<sup>18</sup> ու Թ. Նազարբեկյանը սատարում էին այդ զորամասի ձևավորմանը:

Դաշնակիցներն իրենց օգնությունն էին խոստանում նաև այդ ծրագրի համար, իսկ Ա. Թորգոմը զգուշացրեց, որ գործին մեծագույն եռանդ է հարկավոր, այլապես Հայաստանի արևելյան մասն էլ չի ազատվի վտանգից: 1917 թ. դեկտեմբերի 12-ին/նոյեմբերի 29-ին գեներալներ Թ. Նազարբեկյանն ու Մ. Արեշյանն առաջարկեցին հավաքագրել թուրքահայ և պարսկահայ կամավորականներին առանձին, կանոնավոր զնդերում: Միևնույն ժամանակ Ֆ. Վ. Սմիթն առաջարկել էր իր կառավարությանը 1 միլիոն դոլար տրամադրել հայկական ստորաբաժանումների համար, իսկ ԱՄՆ դեսպան Ու. Պեյջը Լոնդոնից գրել էր Վաշինգտոն, թե Ամտանտի անդամները մասնակցելու են այդ գործի ֆինանսավորմանը:

Դեկտեմբերի 17/4-ին, միանգամայն անսպասելի, մասնակցության հայտ էր ներկայացրել նաև Պարսկաստանը: Թեհրանում հայցում էին ԱՄՆ-ի օգնությունը ինչպես հետպատերազմյան կոնֆերանսին մասնակցելու, այնպես էլ իր սահմաններում կռվող Ռուսաստանի, Անգլիայի և Թուրքիայի ուժերն իր երկրից հեռացնելու հարցում: Թեհրանի իշխանություններն ԱՄՆ պետքարտուղարին հիշեցնում էին իրենց երկրի չեզոք կարգավիճակի մասին, այնինչ երեք բանակների գործողությունները մեծ վնաս էին հասցնում բնակչությանը: Ի փոխհատուցում՝ պարսկական դաշինքը խոստանում էր վերանայել 1828 թ. Թուրքմենչայի պայմանագիրը, ինչպես նաև չեղյալ հայտարարել վերջին ժամանակա-

<sup>18</sup> Հայերեն քարզմանությամբ, պաշտոնը գործածվում է նաև գլխավոր կոմիսար կամ զորավար-կոմիսար ձևերով:

հատվածում իրեն պարտադրված բոլոր համաձայնագրերը<sup>19</sup>: Այսպիսով, շահը ԱՄՆ-ին հրավիրեց իր երկրում փոխարինելու Ռուսաստանին և Անգլիային:

1918 թ. ամռանը Պարսկաստանում իրոք չեղյալ հայտարարվեց Թուրքմենչայի պայմանագիրն ու ԱՄՆ-ին հանձնեցին մինչև այդ Ռուսաստանին պատկանող բոլոր կոնցեսիաները<sup>20</sup>: Մակայն այդ քայլը վնասակար էր եվրոպայի ևս յոթ երկրներին, հատկապես Անգլիայի տնտեսական կապերին: Չէ որ նրանց բոլոր համաձայնագրերը, հիմք ընդունելով Թուրքմենչայը, ամրագրեցին արտերկրայնության (extritorial) իրավունքը, երբ խոսքը քաղաքացիական դատավարության մասին էր: Քրեական գործերի դեպքում օտարերկրացին կանգնում էր տեղական դատարանի առաջ:

Իսկ այժմ, 1917 թ. դեկտեմբերի 26-ին պետքարտուղարը նոր զեկուցագիր ստացավ եվրոպական գաղտնի համաձայնագրերի և Արևմտյան Հայաստանում ռուսական ազդեցության գոտու չափերի մասին: Նրան տեղեկացրին, որ բուլշևիկների՝ Վաճից, Բիթլիսից և Էրզրումից հրաժարվելուց հետո Ամտանտի առաջնորդները Փարիզի հայ պատվիրակությանը դարձյալ պաշտոնապես հավաստիացրել են նրանց երկիրը թուրքական լծից մոտ ժամանակներում ազատելու և Դաշնակիցների խնամակալության ներքո ինքնավար պետություն հիմնադրելու մասին: Ռ. Լանսինգն անմիջապես պատասխանեց, որ ԱՄՆ-ը միանում է Գերագույն ռազմական խորհրդին: Հաջորդ օրն իսկ նա ստացավ գաղտնի համաձայնագրերի ամբողջական տեքստերը:

Այնուհետև դեկտեմբերի 28/15-ին առավելապես Արևելյան Հայաստանի դրությամբ զբաղված Թիֆլիսի կենտրոնական ՉԱԽ-ը նորից անդրադարձավ Ամտանտի և արևմուտքում ազա-

<sup>19</sup> Papers Relating, 1918, Suppl. I The World War, in 2 vols., vol. I. Wash., GPO, 1933, p. 895-897.

<sup>20</sup> US NA, RG 59, 763.72119/1708; Papers Relating, 1918, Suppl. I The World War, in 2 vols., vol. I, Wash., GPO, 1933, p. 908-910, 912.

տագրված տարածքների խնդիրներին: Անդրանիկը զեկուցեց նրա անդամներին գործի ելությունը: Նրա պատմածից հետևում էր, որ ՀՀԴ բյուրոն փորձեց իր կուսակցությանը վերագրել համազգային ատյանի որոշումը: Սակայն Անդրանիկը շեշտադրում էր ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ ներկայացուցչական մարմինների կարևորությունը: Նա լրացրեց, որ ռուսական բանակի և արտաքին աշխարհի հետ պետք է գործ ունենան համազգային կազմակերպությունները, և հատկապես այդ վերջինների համատեղ որոշումներին է ենթարկվելու նրա ղեկավարած զորքը<sup>21</sup>:

Ա.Մանուկյանը հավելեց, որ ինքը՝ որպես ՀԱԽ-ի առաջնորդներից մեկը, պատկերացնում էր արդիական կանոնավոր դիվիզիան ռուսական զեներալ-կոմիսարիատի ենթակայությամբ: Հատկապես այդ կոմիսարիատին Արամն անվանում էր Հայաստանի կառավարություն, իսկ երկու խորհուրդները՝ նրանց 8-հոգանոց համատեղ մարմնի, Հայ զինվորական միության, կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների միջոցով, պետք է նպաստեին ընդհանուր գործի հաջողությանը: Ա. Օզանյանը միանգամայն զոհացավ նման մոտեցումից<sup>22</sup>:

Անդրանիկը շեշտադրեց, թե որքան նպաստավոր էր Կովկասի անվտանգության համար Բաղդադում և Երուսաղեմում հաստատված բարեկամական հսկողությունը: Ուստի Անգլիայի և Ֆրանսիայի կողմից իրագործվող միջոցառումները շահավետ էին հայ, հատկապես արևմտյան հատվածի ժողովրդի համար: Ռուսական բանակը վաղուց սերտ կապ ուներ ու ձեռք էր մեկնում Դաշնակիցների միացյալ սպայակույտին, և որևէ կարիք չկար թույլ տալ թշնամուն մոտենալ Անդրկովկասին: Ընդգծելով թ. Նազարբեկյանի Հայկական կորպուսին ենթակա լինելու հանգամանքը՝ Անդրանիկը պահանջեց, որ երկու խորհուրդների միացյալ ատյանը սահմանափակվեր տնտեսական հարցերով և

<sup>21</sup> ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, ք. 78 շրջ., 79 շրջ.:

<sup>22</sup> Նույն տեղում, ք. 80 և շրջ.:

օտարների կատարած ծախսերի հսկողությամբ: Սակայն կոիվները ժամանակ պահանջվում էր միանձնյա ղեկավարություն, մասնագիտական հմտություն ու բանակային կադրերի ներդրում<sup>23</sup>:

Մենք հնարավորություն ունենք ծանոթանալ Ա. Օզանյանի այդ օրերին կազմված ու Դաշնակիցներին ներկայացված հուշագրին: Ընդգծելով նրանց բարոյական ու նյութական աջակցության կարևոր լինելը՝ հեղինակը մասնավորապես զգուշացրեց. «Մեզ անհրաժեշտ են զինուորականներ գործի կազմակերպության արագութեան համար, փրկելու համար երկիրը և այն ահաւոր խուճապը, որ պիտի առաջանայ դանդաղութենէն: Եթէ մենք դանդաղինք, թշնաին կրնայ մեզ կանխել և ամբողջ Կովկասը կը մատնուի արեան ու հրդեհի: Մեր ժողովուրդը անկազմակերպ է և անփորձառու, դուք պետք է օգնէք մեզ, մասնաւոր գործի սկզբնաւորութեան շրջանին»: Հեղինակը հաղորդում էր. «Ինձ յանձնուած է կազմել երեք զօրագունդ՝ հետիոտն, ծիաւոր և թնդանօթածիզ, զնդացիրներով և ամէն յարմարութիւններով միասին: Այս կազմը իրականացնելու համար Հայաստանի Երկրպահ զօրամասի իրամանատարութիւնը պետք ունի 350 սպաներու զանազան աստիճաններով: Մինչեւ օրս ինձ տրուած է 40-50 սպաներ, որոնք տակաւին երկ դուրս են ելած զինուորական վարժարանէն, անփորձ և պատանի: Գործի հիմք լաւ դնելու համար մեզ հարկաւոր են մօտ 1000 պատերազմական փորձառութիւն ունեցող զինուորականներ ...:

Այս րոպէիս պատրաստ ունինք Մանազկերտ-Ալաշկերտ-Պուլանըզ գիծի վրայ 3000 զինուոր: Վան կը խոստանայ տեղին վրայ կազմակերպել 6000 զինուոր: Խնուս ունինք 1000: Երիզա-Կարին գծի վրայ 2000 (1000-ական): Մինչեւ քսան օր մենք կունենանք 15000 հոգի զէնքի տակ...: Այսօր լուր կայ Երզնկայէն և Խնուսէն, որ կը նահանջեն, Պիթլիսի ուղղութեամբ Ախլաթ կամուրջը թողուած են: Թէքնիք մարդիկ կը պակասին, երկաթուղային պաշ-

<sup>23</sup> ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, ք. 82-82 շրջ.:

տօնեաները կը ձգեն իրենց գործերը և կը հեռանան, վաղը միւս օր մեր երկաթուղագծերն ալ պիտի դադրին գործել: Տրապիզոն կը դատարկուի՝ թողելով ահագին հարստութիւն: Վրացիք չեն ջանար պաշտպանել այդ գիծը: Թշնամին կըրնայ մեզ կտրել այդ գծով: Վերադարձողները իրենց ճանապարհին կը քանդեն ամեն ինչ: Քելքիթի թիւրքեստանի տիվիզիան ալ կը լքէ ճակատը:

Վանի մէջ կանգնող հայկական 5-րդ զուկուտն էլ այն մնացած է 800 հոգի, որոնք չեն ուզեր մնալ»: Ինչ վերաբերում էր Հայկական զորաբանակին, ապա «քօրպուսի զուկուտը իրականին մէջ միայն պաթալիօններ են, հազարական զինուորներով: Թրանսփօրթի համար վագօններ չը կան: Հայաստանի լեռնանցքներու ծիւները փոխադրելու համար չը կայ ոչ մի միջոց...: Կ'ըսեն, որ Կովկասի իւրաքանչիւր լեռը պիտի պայթի հրաբուխի պէս: Վլատիկավկասէն մինչեւ Պագու և Գանձակ: Գանձակէն մինչեւ Նախիջեան բոլոր թրքութիւնը զինուած է, բացի հիւսիսային Պարսկաստանի շահսեվաններէն...:

Այս բոլորէն յետոյ Կովկասի յեղափոխական կառավարութիւնը թուրքերէն զուկուտը կը կազմէ և կը զինէ, որպէսզի Կովկասեան երեք ազգութիւնները աւելի կատաղի կռիվ մղեն և աւելի լայնօրէն կոտորեն զիրար: Թաթարները արդէն սկսած են յարձակումներ կայարաններու վրայ...: Վաղը երբ ծիւներ հալին՝ յարձակումները աւելի կատաղի պիտի ըլլան: Մենք արդէն ձեռք ենք քաշած մեր կեանքէն՝ պատրաստ ենք կռիւ և արիւն թափելու, տեսնենք ի՞նչ պիտի ըլլայ այդ դժբախտ երկրին վախճանը»:

Չորավարի եզրափակիչ խոսքը լի էր դառնութեամբ. «Ձեզի կ'իյնայ, հզօր դաշնակիցեր, օգնելու՝ առաջքն առնելու համար գալիք անողոք կացութեան:

Ես զարմանքով լսեցի, որ կովկասեան կառավարութիւնը կ'օգնէ թուրքերուն, թուրքերը, որ արդէն ապստամբութեան դրօշակ բարձրացուցած են և ցաւ ի սիրտ լսեցի նաեւ որ իրօք ալ, առանց խտրութեան, կ'օգնէ թուրքերուն դրամով: Թույլ տուէր ինձ ըսելու, որ վտանգը կը մօտենայ և մեծ է, ոչ թէ միայն հայ ժո-

ղովուրդին, այլ և Դաշնակից դատին համար»<sup>24</sup>:

Այս քննարկումների համատեքստում դեկտեմբերի 29/16-ին ԱՄՆ դեսպան Ու. Պեյքը Ռ. Լանսինգին հասցրեց եվրոպական խաղակիցների մեկ հուշագիր: Այն արձանագրեց արևմտահայ դիվիզիայի կազմավորման համար շտապ կարգով գումար հատկացնելու և այդ զորամասին սպա խորհրդականներ տրամադրելու անհրաժեշտությունը<sup>25</sup>: Երեք օր հետո՝ 1918թ. Ամանորին, ՀԱԽ-ում ընթերցվեց Արևմտահայ կոնֆերանսի որոշումը: Նրանում խոսքը Երկրապահ զորաբաժնի մասին էր. այդ միավորման մեջ ընդունում էին եզդիներին, ասորիներին և բոլոր բարեկամ խաղաղատենչ ժողովուրդների ներկայացուցիչների: Կոնֆերանսը հայտարարեց ընդհանուր զորակոչ, դիվիզիան ենթարկվեց Հայկական կորպուսին, իսկ քաղաքական բնույթի հարցերը հանձնում էին գեներալ-կոմիսարիատին ու երկու խորհուրդները ներկայացնող, 16 անդամների հանձնաժողովին: Չորաբաժնի հրամանատար առաջարկվեց Անդրանիկ Օզանյանը<sup>26</sup>:

Սակայն ՀԱԽ-ի անդամներն ունեին երկու առարկություն: Ս. Հարությունյանը վիճում էր Վ. Փափազյանի հետ, թե Արևմտահայ խորհուրդը չպետք է ընդհանուր զործին մասնակցեր որպէս հավասարազոր կողմ, իսկ Ա. Երզնկյանը խոսք բացեց Անդրկովկասյան կոմիսարիատին ենթարկվելու և 1914թ. սահմանին հետ քաշվելու մասին, որպէսզի թուրքերն ու տեղի թաթարները չզրգռվեին: Մերժելով Հ. Չավրյանի տեսակետը՝ Ս. Մամիկոնյանն ու Ռ. Տեր-Մինասյանն արևմտահայ զորաբաժնի ու նրա հրամանատարի դեմ ելույթներ ունեցան: Նրանք ճգնում էին այս ծրագրի ղեկավարներին Անտանտից շեղել դեպի Անդրկովկասյան կոմիսարիատը, շեշտադրում էին սեփական խորհրդի կարևորությունն ու կուսակցական գործոնը:

<sup>24</sup> Թովուրյան Է., Մեծ պատերազմը եւ հայ ժողովուրդը, Կ. Պոլիս, 1920, էջ 49-51:

<sup>25</sup> Գալոյան Գ. Ա., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 20:

<sup>26</sup> ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, ք. 91:



Անդրանիկը հիշեցրեց, թե ինչպես ընդամենը 3 օր առաջ Ռ. Տեր-Մինասյանը չէր առարկում դիվիզիայի հարցում, ու հենց նրան առաջարկեց դառնալ այդ զինուժի պետը: Գեներալ-կոմիսարի օգնական Դ. Ջավրյանն արդեն իսկ ստորագրեց ՀԱԽ-ի անդամներին կարդացած ու նրանց հավանությանն արժանացած հրամանը: Իհարկե, օգնականը դա ինքնազուլիս չարեց, քանի որ ռուսական հրամանատարությունը Ա. Օզանյանին առաջարկեց գնդապետներ, զենք ու հագուստ տրամադրել: Թուրքական բանակին հարկավոր էր դիմադրել հնարավորինս շուտ և այնտեղ, ուր կան մարտերին հարմար ազատ վայրեր, լի պահեստներ ու պաշտպանությանը հարմար բազմաթիվ դիրքեր: Սակայն ՀԱԽ-ի կազմակերպչական ճիգերն աչքի չէին ընկնում նվաճումներով Հայկական կորպուսում հավաքված էր ընդամենը 9 հազ. մարդ: Թեև Երզրումում, օրինակ, մնաց 600 անտեր արդիական թնդանոթ, իսկ հակառակորդը հայերի չափ ուժասպառ էր ու տկար: Չորավարի սրտից արյուն էր գնում<sup>27</sup>:

Մինչդեռ, արևելահայ Խորհուրդը չէր հաստատում արևմտահայ պաշտոնակիցների միաձայն որոշումը և մտադիր էր կազմել զանազան վայրերում երկրապահ անջատ գնդեր միայն: Վերջնական վճիռը հետաձգեցին մինչև 1918թ. հունվարի 2-ը (1917թ. դեկտեմբերի 20-ը): Այդ օրը Խ. Կարծիկյանը մեկուսացրեց ՀԱԽ-ը գեներալ-կոմիսարիատից, իսկ Անդրանիկը հստակորեն բաժանեց կազմակերպչական գործառույթներն ու պնդեց, որ ռազմական դիրքերում գտնվելիս նրա դիվիզիան ենթարկվելու է Թ. Նազարբեկյանին, ուրեմն նաև՝ թիֆլիսյան ՀԱԽ-ի անդամներին:

Ա. Մամիկոնյանը նշեց ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի հյուպատոսների շահագրգռված լինելու հանգամանքը և ԱՄՆ-ի ձգտումը՝ համագործակցելու այս տերությունների դիվանագետների հետ<sup>28</sup>: Մի քանի ելույթից հետո Անդրանիկն արծազանքեց իրեն հակասողներին՝ նրանց անգործունյա լինելու մեղադրան-

<sup>27</sup> ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, ք. 93 շրջ.-95:

<sup>28</sup> Նույն տեղում, ք. 100 շրջ.:

քով և տեղեկացրեց, որ վաղն իսկ գնալու է Երզրում և հրաժարվում է իրեն տրված պաշտոնից:

Շարունակելով նույն բանավեճը՝ Խ. Կարծիկյանը առաջարկեց չխանգարել արևմտահայերին՝ պարզապես անհնարին է բանակցել, երբ թշնամուն չես դիմադրում և թուրք զավթիչներին ես հանձնում ազատագրված տարածքները: Դ. Ջավրյանը նույնպես քննադատեց ՀԱԽ-ին ու հիշեցրեց, որ ամերիկացիների և ֆրանսիացիների հետ թիֆլիսյան բանակցությունները, ինչպես և անգլիացիների հետ հանդիպումները Պարսկաստանում նախածեռնել էր Կովկասյան բանակի հրամանատարությունը: Հատկապես կոմիսարիատն ու նրա պետը՝ գեներալ-լեյտենանտ Պ. Ավերյանովը, ստացել էր Պաշտպանության համաձայնությունը 20 միլիոն ռուբլի վարկ տալ՝ Հայաստանը պաշտպանելու նպատակով: Դրանից հետո փող հայցեց նաև Անդրկովկասյան կոմիսարիատը:

Լրացուցիչ ճառերից հետո որոշվեց կազմակերպել Հայաստանի երկրապահ գործմասը, ընդ որում, երկու Խորհուրդներն ստեղծեցին երեք անդամից բաղկացած մի մարմին, որ գործելու էր Գեներալ-կոմիսարիատին կից: Դիվիզիան հանձնվում էր Հայկական կորպուսին: Այդ երկրապահ գործի հրամանատարին ընտրելու համար ստեղծվել էր հավասարության հիմունքով ձևավորված 12-հոգանոց կոմիտե: Ի վերջո, երկու թեկնածուներից՝ Ս. Միլիկյանից և Ա. Օզանյանից, Անդրանիկը հավաքեց 9 ձայն<sup>29</sup>:

Ընտրությունների հաջորդ իսկ օրը՝ 1918 թ. հունվարի 3-ին, Ռ. Լանսինգը պարսկական դեսպանորդին գրեց, որ Թեհրանի նուտայով ներկայացված հայցը՝ դուրս հանել իր երկրից բոլոր մարտնչող բանակները, ուշագրավ է և արժանի կարեկցանքի: Այնուամենայնիվ, այդ դիմումը լրացուցիչ հետազոտման կարիք ունի<sup>30</sup>: Որպես հետևանք՝ հունվարի 21-ին Վաշինգտոնում ստացան Պարսկաստանի կառավարության պաշտոնական բողոքը՝

<sup>29</sup> ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, ք. 103 շրջ.:

<sup>30</sup> US NA, RG 59, 763.72119/2618.

ինչպես ամերիկացիների և Անտանտի համատեղ ճիգերով հայկական և ասորի զորամիավորումների հանդերձման, այնպես էլ անգլիացի և ֆրանսիացի սպաների ղեկավարությամբ Ուրմիայի շրջանում նրանց վարժեցնելու վերաբերյալ<sup>31</sup>: Միացյալ Նահանգների պաշտոնյաները խորհրդակցություն սկսեցին Մեծ Բրիտանիայի իրենց գործընկերների հետ, քանի որ չէին ցանկանում խափանել Թեհրանի հետ հնարավոր մերձեցումը կամ նպաստել Իրանում գերմանա-թուրքական ազդեցության աճը: Հետևաբար՝ Վաշինգտոնը կտրականապես հերքում էր Ուրմիայի շրջանում զինուժի վարժեցման գործում դրամական որևէ հատկացումով իր մասնակցությունը:

1918 թ. հունվարի 24-ին Լոնդոնում ծառայող ԱՄՆ ղեսպանին առաջարկեցին ամերիկացի սպաներ ուղարկել պարսկական բանակ, ինչպես և ամեն հնարավոր ձևով մասնակցել եվրոպական ծրագրերին: Այնուհետև, փետրվարի 1-ին Պետդեպարտամենտում ստացան Թավրիզում ԱՄՆ-ի հյուպատոսի զեկուցագիրը: Փաստաթղթում նշվում էր, որ իր քաղաքում և Ուրմիայում ծավալված ռազմական շինարարությունը նախաձեռնել էին նույն վայրի ներկա Անտանտի հյուպատոսները: Նոր զինուժը պաշտպանում էր տեղական բնակչությանը և, տեղեկանալով Թիֆլիսի ծրագրերի մասին, ձգտում էր նրանց նեցուկ լինել: Սակայն Թավրիզի զեներալ-նահանգապետը կտրականապես դեմ էր զինվորների վարժեցնելուն, իսկ հյուպատոսներին սպառնում էին սպանությամբ<sup>32</sup>:

Վիճակը մեղմացնելու համար Լոնդոնից առաջարկեցին Պարսկաստանի անկախության օգտին եռակողմ հայտարարություն անել: Սակայն Վաշինգտոնը մերժեց այդ գաղափարն ու

նշեց, թե «Պարսկաստանի հարցում Մեծ Բրիտանիայի և Միացյալ Նահանգների զբաղեցրած դիրքերը միմյանցից շատ են տարբերվում»<sup>33</sup>: ԱՄՆ-ի ղեկավարությունը գերադասում էր պարտազուրկ մնալ ու պահպանել ձեռքերի լիակատար ազատություն:

Քիչ ավելի ուշ՝ փետրվարի 18-ին, Թեհրանում ԱՄՆ ղեսպանորդը Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար Ե. Լեբեդինսկուց ստացավ միջնորդագիր և աշխատանքային զրույց ունեցավ պարսիկ պաշտոնյաների հետ: Նրան ասացին, որ այդ երկրի պետական սահմանները փակվել են բոլոր զինծառայողների, ինչպես նաև Կովկասում հավաքագրված հայերի առջև: Իր կողմից ղեսպանորդը պահանջեց կառավարական միջոցառումներ իրականացնել՝ երկրում բնակվող ամերիկացիների և այլ քրիստոնյաների կյանքի և սեփականության անվտանգությունն ապահովելու համար: Պետդեպարտամենտը մտահոգված էր տեղում գերմանա-թուրքական ազդեցությամբ և փորձում էր գնահատել նրան տված խոստումների հուսալիությունը:

1918 թ. մարտի 14-ին Վաշինգտոնում տեղեկացան բրիտանացիների՝ Թեհրանում ներկայացրած հայտագրի բովանդակության մասին: Լոնդոնում վճռական էին նոր զորքեր տեղադրելու Իրանի՝ Հայաստանին սահմանակից մասում<sup>34</sup>: Ն. թ. մարտի 21-ին Պետդեպարտամենտից մի շարք հարցեր հղեցին Թեհրանում գործող իրենց ղեսպանորդին: Մասնավորապես՝ հնարավո՞ր էր արդյոք բրիտանական զորքերի մուտքը Կովկաս, արդյո՞ք նրանք պատրաստ էին պաշտպանել հայերի կյանքը, ու՞ ո՞րն էր այդ բանակի նպատակը Ադրբեջանում և ամբողջ Կովկասում: Պետքարտուղար Ռ. Լանսինգի հեռագիրը շարունակում էր. ի՞նչ են անելու բրիտանական ուժերը, եթե պարսկական կողմը միանա գերմանա-թուրքական դաշինքին և հայերին ինչպե՞ս են վերաբերվում

<sup>31</sup> US NA, RG 59, 763.72111/6862.

<sup>32</sup> Papers Relating, 1918, Suppl. I The World War, vol. I, p. 899. Նաև՝ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, ք. 3-3 շրջ., 6:

<sup>33</sup> US NA, RG 59, 763.72/8741.

<sup>34</sup> Papers Relating, 1918, Suppl. I The World War, vol. I, p. 904.

Ռեշտում տեղակայված բուլչիկները: Հաջորդ օրը Ռ. Լանսինգը պատասխանեց Կոնգրեսում տրված հարցին, թե ինքը չի կարող Անգլիայի և Ֆրանսիայի դեսպաններին սեփական կարծիքը հայտնել 1915-1916 թթ. գաղտնի համաձայնագրերի վերաբերյալ և գերադասում էր այդ փաստաթղթերի մասին հարցեր չտալ եվրոպացի նշյալ դիվանագետներին:

Այնինչ նրա ելույթի պահին Անտանտի սպաները Ուրմիայի նահանգում զինել, վարժեցրել ու իրենց հրամանատարության տակ էին պահում 5-7 հազար հայ և ասորի ռազմիկների, իսկ Բրիտանիայի հրամանատարներն ամերիկացիներին բացատրում էին, որ չեն պատրաստվում գրավել Կովկասի նավթաբեր հորատանցքերը, սակայն լուրջ մտահոգված են Պարսկաստանում հայերի անվտանգության հարցով: Թավրիզում տնավորված ԱՄՆ հյուպատոսը չէր հավատում Իրանի՝ Վաշինգտոնի նկատմամբ տածած քաղաքական թշնամանքին, բայց ինքը միաժամանակ գտնում էր, որ տեղի հայ բնակչությունը լուրջ վտանգի մեջ էր:

Մինչև 1918 թ. ապրիլի 3-ը Միացյալ Նահանգները չէին հրաժարվում արևմտահայ դիվիզիայի հանդերձավորումից, սակայն այդ օրը պետքարտուղար Ռ. Լանսինգը հիշեցրեց եվրոպացիներին. իր երկիրը թուրքիային պատերազմ չի հայտարարել, ուստի նա չի կարող բանակաշինության նպատակով գումարներ հատկացնել: Այսպիսով, Վաշինգտոնում գերադասեցին չզժվարացնել թուրքիայի արշավանքը դեպի Բաքու, այնտեղ սահմանափակվեցին եվրոպայում ծավալված իրենց բանակի մարտերով և մարդասիրական օգնությամբ՝ ի նպաստ Արևմտյան Հայաստանում ու Անդրկովկասում իրենց կյանքի համար մարտնչող հայերի:

Իսկ Արևմտահայ դիվիզիան, կամ Երկրապահ զորամասը, որը 1918 թ. հունվարի 2-ի (1917 թ. դեկտեմբերի 20-ին) հաստատվել էր Հայոց ազգային խորհրդում, ապա ն. թ. հունվարի 4-

ինչ Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար, հետևազորի գեներալ Մ. Պրժևալսկու հ. 167 գաղտնի հրամանով Անդրանիկ Օզանյանը հաստատվել է Հայկական առանձին դիվիզիայի հրամանատարի պաշտոնում: Նրա սպայակույտի պետ է նշանակվել գնդապետ Մ. Զինկևիչը: Այնուհետև՝ հունվարի 16-ին, բարձր նշանակության առնչությամբ և Կովկասյան ռազմաճակատի նոր գլխավոր հրամանատար գեներալ-մայոր Ե. Լեբեդինսկու հ. 77 հրամանով զորավարը ստացել է դերակալ գեներալ-մայորի աստիճան: Հայկական կորպուսի մասին ավելի վաղ՝ 1917 թ. դեկտեմբերի 13-ին/նոյեմբերի 30-ին արձակած հ. 136 հրամանին համաձայն, Հայկական կամավորական դիվիզիան բաղկացած էր 3 զորախմբերից (բրիգադից)՝ յուրաքանչյուրում 2 գունդ: Առաջին զորախումբը միավորում էր երկու գումարտակներից բաղկացած էրզրումի և Երզնկայի գնդերը, որոնք լրացված էին 2 լեռնային մարտկոցով ու 3 վաշտերից կազմված հեծյալ գնդով: Երկրորդ բրիգադը ներառում էր Խնուսի, Ղարաքիլիսայի գնդերը և 2 լեռնային մարտկոց: Երրորդում կար Վանի 1-ին ու 2-րդ գունդը, Մակվի գումարտակը, 2 լեռնային մարտկոց ու 3 վաշտերից կազմված Ջեթթունի հեծյալ գունդը<sup>35</sup>:

1918 թ. փետրվարի դրությամբ Երկրապահ զորամասը ունեցել է 2 հազար զինվոր ու կռվել է մինչև մարտի 12-ը: Երզրումի անկումից հետո նրա անձնակազմը ապահովեց շուրջ 40 հազար գաղթականության ու տեղի բնակչության տեղափոխությունը և տեղում ներկա ստորաբաժանումների նահանջը Արևելյան Հայաստան: Մեկ ամիս հետո՝ ապրիլի 6-ին, Վանի 6-7 հազար դիրքապահներ նմանապես փոխադրեցին 60-70 հազար մարդ:

<sup>35</sup> Korganoff G., La Participation des Arméniens à la Guerre Mondiale sur le Front du Caucase (1914-1918), Paris, Massis, 1927, p. 78; Андраник Озанян. Документы и материалы, сост. А. О. Арутюнян и др., гл. ред. А. А. Фелекян, "Вестник архивов Армении", Ереван, 1991, № 1-2, с. 243.

Պաշտպանական զործողությունների ավարտին՝ ապրիլի 9-ին, ԽԱՀ-ը քննարկել է Արևմտահայ Խորհրդի ապառազմականացման, նրա բանակայինների միաձուլման և Անդրանիկի հրաժարականի հարցը<sup>36</sup>: Ընդհանուր հայտարարի չեն եկել, բայց ապրիլի 14-ին զորավարը նշանակվեց նոր զինված ուժի՝ Հայկական առանձին հարվածող զորամասի հրամանատար: Այն ստեղծվեց ապրիլի 23-ին/10-ին<sup>37</sup> Ալեքսանդրապոլում: Միավորը մարտնչել է մինչև հունիսի 4-ը, երբ Ա. Օզանյանն անհամաձայնություն հայտնեց Բաբունի խայտառակ պայմանագրին ու ՀԱԽ-ին տեղյակ պահեց ընդհանուր զինուժից հեռանալու մասին: Հունիսի 5-ին նույն ատյանը հավաստիացրել էր Անդրանիկին ու նրան ենթակա զինվորներին Հայկական կորպուսի կազմից արձակվելու լուրն<sup>38</sup>, ու հաջորդ իսկ օրը 30 հազար փախստականին խնամակալ 1.400 մարտիկները մեկնարկեցին իրենց նոր արշավը:

<sup>36</sup> ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, ք. 172:  
<sup>37</sup> Հարվածող զորամասի ձևավորման օրն արձանագրվել է մեր հոդվածին կից հավելվածում հրապարակվող 4-րդ փաստաթղթում. US NA, RG 59, 184.021/86/Encl.7՝ հավաքածու M820 General records of the American commission to negotiate peace, 1918-1931, American delegation, Field mission of the American delegation, Harbord military mission to Armenia. Microfilm publications, National Archives and Records Service, General Service Administration, 1970, reel 230, vol. 204, պահվում է ՀԱԱ, միկրոժապավենների հավաքածու, հ. 2: Ա. Օզանյանի ստանձնած ուժերի վերակազմության մասին տես նաև Քաջունի Ե., Հայկական Առանձին Հարուածող Չորամասը: Ժեներալ Անդրանիկ, Պոսթոն, 1921, էջ 10, ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 97, ք. 1, 6, 23-24, Չելեպյան Ա., նշվ. աշխ., էջ 460:  
<sup>38</sup> Տարիանման մասին ՀԱԱ, 1021, ց. 2, գ. 978, ք. 6, Քաջունի Ե., նշվ. աշխ., էջ 50, 95, 233, Բաբունի պայմանագրի բնույթը Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы Политархива МИД Каизеровской Германии, Ереван, 1995, с. 532-534:

**ՀԱՎԵԼՎԱԾ**

Որպես հավելում ներկայացնում ենք նոր տոմարով թվագրված չորս նամակ, որոնք հայտնաբերել ենք ԱՄՆ-ի ազգային արխիվի Ջ. Հարբորդի ռազմական առաքելության դիվանում: Դրանք անգլերեն թարգմանությամբ ներկայացվել են ամերիկացիներին 1919 թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 4-ը: Ժապավենների տեսքով գրությունները պահվում են Հայաստանի ազգային արխիվում, որտեղ կազմում են միկրոժապավենների 2-րդ հավաքածուն:

**Փաստաթուղթ թիվ 1**

Հայկական առանձին հարվածող զորամասի հրամանատար  
 գեներալ-մայոր Ա. Օզանյանի նամակը Բաբունի  
 տեղակայված բրիտանական զորքերի հրամանատար,  
 գեներալ-մայոր Վ. Ս. Թոմսոնին  
 30 նոյեմբերի 1918 թ., ժամը 1  
 US NA, RG 59, 184.021/86/Encl. 8; M820, Reel 230, vol.  
 204, ՀԱԱ, մհ 2

...I have the honor to make the following request: The representatives of Karabagh, which has a population of 300.000,<sup>1</sup> have earnestly requested me to enter Shushi, which has been entirely occupied by Turkish troops, with my force. Should you not permit me to do so, I and the above mentioned representatives earnestly request you to send immediately a small detachment of the Allied military force to the town of Shushi, in order to immediately prevent any possibility of outrage and disturbance between the two nationalities – Armenians and Turks. This could easily be done as only Shushi and three or four surrounding

<sup>1</sup> Փաստաթղթում 3.000:

villages are in the hands of Azerbaijan followers.

Up to the present time the greater part of the Armenian population of Karabagh does not recognize their regime and are endeavoring to upset it by all available means in order to retake the occupied districts.

Taking into consideration your orders, I am giving immediately special instructions to all the Armenian villages of Karabagh to live peacefully with the Tartars.

Signed: Andranik, Major General.

### Փաստաթուղթ թիվ 2

Հայկական առանձին հարվածող զորամասի հրամանատար գեներալ-մայոր Ա. Օզանյանի նամակը Ադրբեջանի վարչապետ

Ֆ. Խան-խոյսկուն, Շուշիում ադրբեջանական զորքերի հրամանատար Ա. Բեկ Սուլթանովին, Շուշվա մահմեդական Ազգային խորհրդին, Շուշվա Հայ ազգային կառավարության<sup>1</sup> նախագահ Ե. Իշխանյանին, Ղարաբաղի գավառի Հայկական թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսին

1 դեկտեմբերի/18 նոյեմբերի 1918թ., թիվ 636

US NA, RG 59, 184.021/86/Encl. 9; M820, Reel 230, vol. 204, ՀԱԱ մհ 2

Այս նամակը՝ ռուսերենով, պահվում է՝ ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 52, թ. 1 և շրջ.:

...I have today received the order № 501 issued by the English General commanding at Baku. This written order raised my

<sup>1</sup> Եշվել է որպես Հայ ազգային կոմիտե: Ղարաբաղի վարչությունը նրա գործադիր կոմիտեն, ընտրվել է 1918 թ. մարտի 12-ին Շուշի քաղաքում ու գործել մինչև օգոստոսի 4-ը: Այնուհետև երկրամասի առաջին համագումարը ձևավորել է Ղարաբաղի ժողովրդական կառավարություն:

suspicious regarding its authenticity. In the first place the name of the English General representing the Allies in Baku is not mentioned and secondly if this order is meant to be official I presume it should have been handed to me by the representatives of the Armenian and Mussulman population of the town of Shushi or by some official or other, but in no circumstances by an old blind Armenian from the village of Harar.

Regarding my advance from Zangezur to Shushi, I have very many important reasons for this. It is now nearly a year since the Tartars cut off all communications of the Armenians between Zangezur and Karabagh.

Many hundreds of bodies of Armenian soldiers were found along the rivers Zabugh and Hagari who were returning through Zangezur to Karabagh. In July and August thousands of Armenian refugees from Turkey who intended to settle in Karabagh were barbarically massacred. The complete destruction of the large Armenian village of Kaladarasi, constant looting, murder and outrages by the Tartars in Zangezur, the huge number of Armenians who are unable to return to their country, Karabagh, and finally, the barbaric manner in which the Tartar population is treating the Armenians everywhere in Karabagh. All this forces me to again connect these two neighboring countries.

Signed: Andranik, Major General.

### Փաստաթուղթ թիվ 3

Հայկական առանձին հարվածող զորամասի հրամանատար գեներալ-մայոր Ա. Օզանյանի նամակը բրիտանական

27-րդ դիվիզիայի հրամանատար գեներալ Վ. Մ. Թոմսոնին

2 դեկտեմբերի 1918 թ., թիվ 641

US NA, RG 59, 184.021/86/Encl. 6; M820, Reel 230, vol. 204, ՀԱԱ, մհ 2

Sir, Taking advantage of the opportunity I take the liberty of putting before you the condition of the Armenian emigrants (refugees).

Today under the wintry sky more than 300.000 refugees are wandering on the plains and in the mountains of the Caucasus, naked and dying of hunger.

Over 30.000 refugees have taken refuge at Sisian where daily several dozens of Armenians die of hunger and cold.

I therefore hasten to beg you to give all possible assistance to these unfortunate people in order to save them from certain death.

Signed Andranik, General.

#### Փաստաթուղթ թիվ 4

Հայկական առաւելագոյն հարվածող զորամասի հրամանատար գեներալ-մայոր Ա. Օզանյանի նամակը Բաքվում տեղակայված բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Վ. Ս. Թոմսոնին  
2 դեկտեմբերի 1918 թ., թիվ 638

US NA, RG 59, 184.021/86/Encl. 7; M820, Reel 230, vol. 204, ՀԱԱ, մհ 2

In December, 1917, at the suggestion, sent by telegraph, of the Chief of the Armenian National Delegation, Boghos Nubar Pasha, I consented to organize an Armenia Military Force for the defense of the three Armenian Vilayets in Turkey occupied by the Russian.

At the time, the Russian Forces were evacuating these Armenian Vilayets and it was necessary to have forces to replace them.

On December 28, 1917, was held the Conference of the Armenians of Turkey, which decided among other things to proclaim the mobilization of the Armenians and to organize that

necessary force, one and a half division, i.e. three Brigades, consisting of 6 regiments, of which two were to be at Van, two at Alashkert and two in the Erzerum region. Boghos Nubar Pasha informed us that the expenses of these forces would be defrayed by the Allied Governments.

As a result of the mobilization, between January 5<sup>th</sup> and March 2, 1918, apart from local forces which already existed in an unorganized condition in these three vilayets, we were able to raise about 9.000 soldiers, so that total of Armenian soldiers rose to about 25.000.

On March 2, 1918, I left for Erzerum, but unfortunately Bolshevik tendencies had spread among the soldiers, General J. Odishelidze had removed the breach blocks of the heavy guns of the forts of Erzerum, and in the artillery, organization was, as no doubt Captain Goldsmith noticed, absolutely lacking, so that during the eight days I spent at Erzerum it was impossible to get the administrative and military machine to move, and all these misfortunes culminated in the defeat at Erzerum.

After the defeats at Sarikamish and Kars, as the morale of the Armenians of Turkey was not extinguished, the Council for the defense of Armenia suggested to me the formation of a detachment.

On April 23<sup>rd</sup> I organized the detachment, with the intention of going to assist in the defence of Russian Armenia which was in danger.

My detachment undoubtedly played an important part, taking part in all the historic battles which took place from Alexandropol to Gharakilisa.<sup>1</sup>

In the course of time the detachment passed by the village of

<sup>1</sup> Այժմ Գյումրի և Վանաձոր:

Kazanchi,<sup>1</sup> where on April 28<sup>th</sup>, took place the battle of Chichetepe.<sup>2</sup> Then on May 15, 16 and 17<sup>th</sup>, for three days we fought at Gyulliboulagh,<sup>3</sup> Bozyokhoush,<sup>4</sup> and Jalaloghli.<sup>5</sup> At the same time I occupied Gharaisa.<sup>6</sup> After three fights I went to Dilijan, where my detachment was bivouacked, when peace was concluded between Turkey and the Armenian Republic of Erivan.

Never consenting to submit to this peace, which was insulting to every revolutionary and patriot, I decided to advance my detachment across Persia towards the British Army, which I hoped to join at Salmas.

At the beginning my detachment consisted of 1.000 men, but it increased daily and reached 3.500.

On June 8<sup>th</sup> the detachment, leaving the village of Elenovka<sup>7</sup> crossed the district of Daralagyaz, and on June 20<sup>th</sup> arrived at Nakhichevan. There in order to prevent any Turkish advance towards Julfa by the railway, I blew up some tunnels and bridges and destroyed the railway

On June 21<sup>st</sup> I arrived at Julfa where, by a clever maneuver I crossed the bridge over the Araxes and took prisoner two Turkish officers and 20 soldiers who were guarding the bridge.

Thence I advanced towards Khoi, hoping to find at Salmas the Assyrian and Armenian forces from Van.

On June 22<sup>nd</sup> at 20 kilometers from Khoi we had our first fight with Regular Turkish Forces, about 600 men. I fought them with

<sup>1</sup> Ներկայիս Մեղրաշենը, որը գտնվում է Արթիկից հյուսիս-արևմուտք:

<sup>2</sup> Հի նույնացվում:

<sup>3</sup> Բյուրակն գյուղը գտնվում է Ամասիայից 12 կմ հարավ-արևմուտք:

<sup>4</sup> Անվանումն աղավաղված է: Այժմ Շիրակի մարզի Մուսայեյյան գյուղն է, այն հսկում է 2273 մ բարձրություն ունեցող Սև խաչի լեռնանցքը: Այստեղ ծավալված կռիվների մասին Քաջունի Ե., նշվ. աշխ., էջ 17-18:

<sup>5</sup> Ստեփանավանն է:

<sup>6</sup> Ներկայիս Մեղվահովիտն է, տեղակայված է Տաշիրից հարավ-արևմուտք, Մուսայեյյանից Տաշիր և Ստեփանավան տանող ճամփաբաժանի վրա:

<sup>7</sup> Այժմ քաղաք Սևան:

my cavalry only, and captured 2 guns and 3 machine guns. The same day, on occupying the Armenian village of Gaidavare I learned that all the Armenian population had been massacred, that all the Assyrian and Armenian forces which were at Salmas had five days ago withdrawn towards Urmia.

For the next day my detachment advanced towards Khoi and even entered one quarter of the town, but in consequence of the fall of Salmas I lost the opportunity of joining the Allied British Army and, as the Turks received reinforcements from Sheitan-Avan<sup>1</sup> I was obliged to retire to Julfa.

I wished to go to Karabagh, but as the village of Yaydji<sup>2</sup> offered resistance, I was obliged to punish it, and took two guns.

At this time the Turks were advancing towards Julfa. Two regiments were to pass by Nakhichevan in order to go to Persia. My detachment encountered them near Nachichevan, and after a terrible fight, and before superior forces, the detachment retired and came to Karabagh.

There, in the district of Sisian, Ghapan and Zangezour, I busied myself with the organization and the defence of this territory against the Turkish bandits who threatened it. I have organized a military force of about 6.000 men, apart from my detachment which numbers 2.000.

After the occupation of Shushi by Turkish troops, I had decided on receiving a formal request in writing from the Armenian population of Karabagh, to go to Shushi, the more so because we

<sup>1</sup> Ավան Սալմաստի գավառում և բուրջական 4-րդ բանակի 36-րդ դիվիզիայի կայանատեղի (Թրդիպաշենան Ա., Անդրանիկը, Փարիզ, 1942, էջ 374, Չելչայան Ա., նշվ. աշխ., էջ 512):

<sup>2</sup> Գտնվում է Նախիջևանում՝ Ջուղայի մոտ: Իր 1800 տներով Յայճինը ութ ամիս փակ էր պահում ճանապարհը, իսկ այնտեղ ապաստանած 40 թուրք զինվորները ղեկավարում էին տեղի հրոսակներին: Անդրանիկը մեկ ժամում գրավեց այդ գյուղն ու այն 13 այլ ավանների հետ միասին, հրո ճարակ դարձրեց: Նրա հաղթանակի լուրը մեծապես սաստեց ադրբեջանցիների ավազակային հարձակումները:

had recently heard, despite our being cut off from the world for some months, that the British had entered Baku and we hoped to meet them in this direction.

For that purpose I on November 29<sup>th</sup> began operations. But on December 1<sup>st</sup> I received a telegram in the name of the British General at Baku who informed me of the armistice having been concluded on all fronts and suggested my not undertaking any hostile action.

Although the authenticity of the telegram appeared suspicious owing to its having no signature, and owing to the channels through which it reached me, I nevertheless stopped all military operations and at the same time I have sent you, Sir, enclosed herewith a copy of my reply, in which are explained the motives which have compelled me to such action.

Today I have had the good fortune to receive your two delegates who have given me your message.

In accordance with your suggestion I have stopped all hostile action and I am withdrawing to Gerusi, where I shall await, Sir, your instructions.

Since the formation of the Armenian military force, I do not know how much money has been [allotted] by the Allies, but, for my part, since its formation until today, my detachment has received only 185.000<sup>1</sup> Rubles. Consequently at this moment it is suffering greatly from the lack of money and clothing.

I do not consider it superfluous to add that since the beginning of the war, I have organized seven [units], about 7.000 soldiers, fought 59 battles, and until today, fought the common enemy, Turkey.

Signed: Andranik, Major General.

<sup>1</sup> Վատ ընթերցելի, հնարավոր է կարդալ որպես 135.000 ռուբլի:

1918 թ. ԳԱՐՆԱՆԸ ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆԻ ՋԱՎԱԽՔ  
ՄԵԿՆԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Անդրանիկ Օզանյանի գործունեության վերաբերյալ տալագրվել է ահռելի գրականություն: Սակայն ժողովրդական հեղուսի բուռն ու փոթորկալից կյանքի բազմաթիվ դրվագներ դեռ հետազոտության կարիք ունեն: Դրանց մեջ կարելի է առանձնացնել նաև 1918 թ. գարնանը Ախալքալաքի գավառ նրա զորամասի մեկնելու հանգամանքների խնդիրը, որին անդրադարձած հեղինակների մեծ մասը, արծանագրելով այդ փաստը, այնուամենայնիվ լիովին չի բացահայտել այդ արշավանքի իրական դրդապատճառները, այն իր ավարտին չհասցնելու խոչընդոտների հարցը և այլն: Խնդրի համակողմանի լուսաբանման համար կարևոր նշանակություն ունի Հայաստանի ազգային արխիվի թիվ 370 ֆոնդում պահվող մի փաստաթուղթ<sup>1</sup>: Այն գրված է 1918 թ. մայիսի 13-ին Ախալքալաքի ազգային խորհրդի կողմից ի պատասխան Անդրանիկ զորավարի մայիսի 8-ին նույն խորհրդին հասցեագրած թիվ 184 գրության: Սակայն մինչև սույն փաստաթղթին անդրադառնալը, վերոհիշյալ ժամանակաշրջանում Անդրանիկի ջոկատի Ջավախք ուղարկելու անհրաժեշտության խնդիրն ավելի հստակ դարձնելու համար, ներկայացնենք հայկական այդ գավառում տիրող իրավիճակը:

1917 թ. հոկտեմբերին բուլշևիկյան հեղաշրջումից հետո ինչպես Եվրոպայում, այնպես էլ Անդրկովկասում ռազմաքաղաքական իրադրությունն արմատապես փոխվեց: Պատերազմից դուրս գալուն ուղղված Վ. Լենինի գլխավորած խորհրդային կառավարության քաղաքականությունը հանգեցրեց ռուսական բա-

<sup>1</sup> Տես Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 370, ց. 1, գ. 1, ք. 18-19 շրջ.: Փաստաթուղթն ամբողջապես տե՛ս սույն հոդվածի հավելվածում:



նակի կազմալուծմանը: Պեկտեմբերի վերջին և 1918 թ. սկզբին, ոգևորված Անդրկովկասից ռուսական զորքերի հեռանալով, թուրքական հրամանատարությունն սկսեց նախապատրաստվել հակահարձակման:

Պետրոգրադում տեղի ունեցած իրադրածություններն իրենց կնիքը դրեցին նաև Ջավախքի իրավիճակի վրա: Օսմանյան թուրքերի դրոժմամբ աշխուժացան Ախալցխայի և Ախալքալաքի մահմեդականները՝ «մեսխեթցի» թուրքերը: Նրանք 1917 թ. դեկտեմբերին հարձակվեցին Ախալցխա քաղաքի վրա, որի հայ և վրացի բնակչության վեցամսյա հերոսական ինքնապաշտպանությունը գլխավորեց երիտասարդ գործիչ, քաղաքագլուխ Ջորի Ջորյանը<sup>2</sup>:

Օրեցօր խորացող իշխանական ճգնաժամի պայմաններում Հայոց ազգային խորհուրդը, ելնելով հայ բնակչության անվտանգության նկատառումներից, քայլեր ձեռնարկեց հայկական գավառներում վարչաքաղաքական ու ռազմական մարմիններ ստեղծելու ուղղությամբ: 1917 թ. վերջին ձևավորվեց Ախալքալաքի Ազգային խորհուրդը, որի ղեկավարությունը ստանձնեց քաղաքագլուխ, դաշնակցական Մկրտիչ Մարգարյանը: Խորհրդի անմիջական օժանդակությամբ նոյեմբերին կազմակերպվեց Ախալքալաքի հայկական հրացանածիգների (հրածգային) գունդը<sup>3</sup>, ստեղծվեց գավառի պաշտպանության ժամանակավոր կոմիտե, որոնք որոշ աշխատանք կատարեցին ակտիվացած մեսխեթցիների սանձարձակությունները զսպելու ուղղությամբ: Ի դեպ, այդ գործում ինչպես Ախալքալաքի, այնպես էլ Ախալցխայի գա-

<sup>2</sup> Ախալցխայի վեցամսյա ինքնապաշտպանության մասին մանրամասն տես Սանոսյան Ա., Ախալցխայի և Ախալքալաքի գավառների 1918 թ. ինքնապաշտպանությունը, Երևան, 1992 և դեպքերի ակնուտես ու մասնակից Երվանդ Սիմոնյանի հուշերը (Սիմոնյան Ե., Ախալցխան կրակե օղակում, Երևան, 2000):

<sup>3</sup> Սիմոնյան Գ. Ռ., Անդրանիկի ժամանակը, հ. Ա, Երևան, 1996, էջ 666: Ա. Հարությունյանի վկայակոչած նյութերի համաձայն այդ զորամասը գործելու էր որպես Հայկական կորպուսի մի ստորաբաժանում և կոչվելու էր առանձին հրածգային գումարտակ: Ախալցխայում ստեղծվելու էր սակրավորների գումարտակ (Арutyонян А. О., Кавказский фронт 1914-1917 г., Ереван, 1971, с. 332-334):

վառներում հայերն ու վրացիները գործում էին միասնաբար՝ զրեւով զինական համագործակցության վառ էջեր:

«Գաւառի ինքնապաշտպանութիւնը,- կարդում ենք Ախալքալաքի Հայոց ազգային խորհրդի փաստաթղթերում,- և թշնամուն արգելելը ներս խուժել մեր գաւառի այս կամ այն ծայրից, Ախալցխային օգնութեան հասնելու օրհասական պահանջը և Արդահանից սպասուող վտանգի էական նշանակութիւնը պահանջում էին մեզանից ունենալ կամաւորական, պարտիզանական խմբեր, որոնք սկիզբ են առել մեզանում դեռ յունւար ամսից (1918 թ. - Ա.Մ.) և որոնց գոյութիւնն ու անհրաժեշտութիւնը չի կարող ոչ մի առարկութեան նիւթ լինել, և որպէսզի այդ խմբերը չկրեն խուժանական ամբոխային մարդախմբերի բնաւորութիւնը, խորհուրդս աշխատանք ու միջոց չէր խնայում կազմակերպելու և կանոնաւոր զօրախմբերի բնաւորութիւն տալու նրանց»<sup>4</sup>: Այդ դժվարին, բայց հույժ կարևոր խնդիրը լուծելու համար Ախալքալաքի ազգային խորհուրդը, ցավոք, դրսից օժանդակություն չստանալով, ստիպված էր բավարարվել սեփական միջոցներով:

Թեպետ տեղի ռուսական զորամասը 1917 թ. վերջին բռնել էր Ռուսաստան վերադառնալու ճանապարհը, սակայն չէր կամենում ընդառաջ գնալ հայկական ուժերի ցանկությանը՝ զենքը տեղում թողնելու վերաբերյալ: Մեծ դժվարությամբ հաջողվեց մուտք գործել զինվորական քաղաք, որտեղ հնարավոր եղավ գտնել հազիվ «...100-ի չափ բերդան հրացաններ, աննշան քանակութեամբ փամփուշտներ, մթերքների չնչին պաշար և առհասարակ ամեն ինչ թալանած ու քարուքանդ եղած, ջարդուած դրութեամբ. աւելորդ է խօսել զինւորական զգեստների մասին, որոնց բոլոր պահեստները գտնւեցին բաց դռնով և դատարկ դարակներով»<sup>5</sup>: Ուստի հնարավոր եղավ զինել տեղական զնդին զինվորագրվել ցանկացող 5 հազար երիտասարդներից միայն 2 հազարին:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 1, թ. 18:

<sup>5</sup> Նույն տեղում:

Պահանջվեցին անդուլ ջանքեր՝ զինական ջոկատների համար որոշակի քանակությամբ հագուստ, սնունդ և զինամթերք ձեռք բերելու համար: Սակայն այդ կարիքները լիարժեք հոգալ այդպես էլ չհաջողվեց: Այդուհանդերձ, շուտով՝ Թիֆլիսից Ախալքալաք գնդապետ Առաքելովի ժամանելուց հետո, տեղում շարունակվեց Հայկական կորպուսի առանձին զնդի կազմավորման գործը:

Նույնիսկ այսպիսի ծանր պայմաններում Ախալքալաքի հայությունը շրջանցիկ ու վտանգավոր ճանապարհներով զգալի քանակությամբ հացահատիկ առաքեց Ախալցխայի պաշտպաններին: Ասպինձայի ծորում թուրքերը փակել էին ճանապարհը Ախալցխայի ու Ախալքալաքի միջև: Արտաքին աշխարհից լիովին կտրված՝ լիակատար շրջափակման մեջ, Դամալա գյուղը հերոսական կռիվներ էր մղում շրջակա թուրք մեսիթեթցիների դեմ:

Այդ օրերին Ջավախք ժամանած հայտնի կամավորական Ուսուլ Խեչոն (Խաչատուր Տեր-Կարապետյան), իր հայրենի Ախալցխայի հետ կապը վերականգնելու նպատակով, փորձեց Ախալքալաքի գավառի հյուսիսում ճեղքել պաշարման օղակը և ճորարեթով դուրս գալ Դամալա: Հաջողություն չունենալով՝ նա Բակուրիանով անցավ Բորժոմ, ուր ճանապարհը թուրքերից մաքրելու համար օգնության խնդրանքով դիմեց վրացի զեներալ Գ. Արջևանիձեին: Վերջինս բավարարվեց միայն խոստումներով: Խեչոն վերադարձավ Ախալքալաք և վճռեց խնդիրն իրականացնել տեղական ուժերով: Նպատակի իրականացման ճանապարհին գլխավոր խոչընդոտը թրջաբնակ Կոկիա գյուղն էր: Ուսուլ Խեչոն և նրա զինակից ընկերներից բաղկացած մոտ հազար հոգանոց մի զորախումբ (հիմնականում՝ դաշնակցականներ) Ախալքալաք քաղաքից, Վարևան, Ալաստան, Ազավրեթ և այլ գյուղերից, մարտի կեսերին հարձակվեցին Կոկիայի վրա: Ինչպես այս, այնպես էլ հարևան մի քանի գյուղերում ապրող թուրքերը երկօրյա դիմադրությունից հետո փախուստի դիմեցին դեպի Արդահան: Սակայն, որքան էլ հայ զինյալների այս քայլը թե-

լադրված լինել կենսական անհրաժեշտությամբ, անթույլատրելի և անհեռատես գործողություն էր: Նախ՝ դրա արդյունքում հնաբավոր չեղավ բացել ճանապարհը դեպի Ախալցխա և երկրորդ՝ զավառում անտեղի սրվեցին հայ-թուրքական հարաբերությունները: Եվ երրորդ. Արդահանում թուրք փախստականները, տեղի մահմեդականներին գրգռելով հայերի դեմ, սադրեցին հայկական կոտորածներ: Հազարավոր արդահանցի կանայք, երեխաներ ու ժներ, մեծ դժվարություններ կրելով, մազապուրծ հասան Ախալքալաքի գավառ:

Արդահանցի գաղթականների ողբալի վիճակը, թուրքերի կողմից նրանց հարազատների նկատմամբ գործադրած վայրագությունների մասին լուրերը ջավախքցի երիտասարդներին մղեցին փոխադարձ վրիժառության: Տեղի դաշնակցական ու տեռական մի քանի գործիչների առաջնորդությամբ նրանք ուժ գործադրեցին տեղի թուրքերի նկատմամբ: Այսպես գավառում քրիստոնյա-մահմեդական փոխհարաբերությունները ծայր աստիճան սրվեցին: Տեղական իշխանությունները, Անդրկովկասյան սեյմը, Հայոց և Վրաց ազգային խորհուրդները գործնական քայլեր չկատարեցին Ախալքալաքի և Ախալցխայի գավառներում ազգամիջյան լարվածության թուլացման ուղղությամբ, որն այնքան անհրաժեշտ էր թուրքական զորքերի ներխուժման նախօրյակին: Սեյմը միայն տարբեր ազգերի ներկայացուցիչներից կազմված մի քննիչ հանձնաժողով ուղարկեց տարածաշրջան: Վերջինս էլ ոչ մի շոշափելի արդյունքի չհասավ<sup>6</sup>:

1918 թ. մարտ-ապրիլին՝ Վեհիբ փաշայի զորքերի հարձակումից և հատկապես Կարսի մարզի գրավումից հետո, Ախալքա-

<sup>6</sup> Ախալցխայում, քաղաքապետ Ջորի Ջորյանի հեռատես քաղաքականության շնորհիվ, հնարավոր եղավ խուսափել հայերի ու վրացիների կողմից տեղի թուրք բնակչության նկատմամբ բռնությունների գործադրումից: Այդ հանգամանքը 1918 թ. մայիս-նոյեմբերին գավառի թուրքական բռնազավթման շրջանում, ստիպեց ինչպես տեղացի թուրքերին (որոնց մեծ մասն այդպես էլ չհեռացավ գավառից), այնպես էլ օսմանյան զորքերին հրաժարվելու քրիստոնյաներին կոտորելու ծրագրերից, և ամենակարևորը, հնարավորություն տվեց հայ և վրաց բնակչությանը խուսափելու աղետաբեր արտագաղթի պարտադրանքից:

լաքի վիճակը խիստ ծանրացավ: Թուրքերի կողմից բռնագրավված տարածքներից նորանոր հայ գաղթականներ հաստատվեցին այստեղ<sup>7</sup>: Ախալքալաքցիները կարողացան բանակցությունների մեջ մտնել թուրքական զինվորականության և Արդահանի մահմեդականների ներկայացուցիչների հետ և ապրիլի 9-ին Արդահանի ու Օլթիի գավառների 1500 հայ բնակիչների՝ հիմնականում կանանց ու երեխաների, վրացական Սարո գյուղում փոխանակել իրենց գավառի Կոկիա, Թոք և թուրքական այլ գյուղերի բնակիչների հետ<sup>8</sup>:

Ասպինձա և Ախալցխա տանող կյանքի ճանապարհը մնում էր թշնամու հսկողության տակ: Ախալցխայի պաշտպանները հացահատիկի խիստ պակաս զգում էին: Ապրիլի վերջին գավառի հյուսիսարևմտյան շրջան տեղափոխված կապիտան Ալեքսիձեի հրետանային մարտկոցի աջակցությամբ՝ Ուսուլ Խեչոյի զորաջոկատը շարժվեց դեպի Դամալա: Ճանապարհին նրանց միացավ դամալացիների վաշտը: Հայ-վրացական ուժերին հաջողվեց Դամալայի մատույցներից հետ շարտել թուրքերին, ապա նաև ազատագրել Ասպինձան: Նույն ժամանակ հայ-վրացական ուժերի ախալցխայան խմբավորումն ազատագրեց Ախալցխա-Ախալքալաք ճանապարհին ընկած Մուսխ վրացական գյուղը: Սակայն, փոխանակ խճուղին բացելու նպատակով երկուստեք առաջ շարժվելու և միավորելու ուժերը, Անդրկովկասյան սեյմի հրամանով, վրացական ուժերը թողեցին Ասպինձան ու քաշվեցին Դամալա, ապա՝ Վարևան, այնտեղից էլ՝ Բակուրիան<sup>9</sup>:

Վերոհիշյալ դեպքերից հետո նոր աշխուժացում ապրեց օրեցօր առաջացող օսմանյան զորքերի օգտին Ախալցխայի ու

<sup>7</sup> Ընդհանուր առմամբ մինչև մայիսի սկիզբը Ախալքալաքի գավառում ապաստանած հայ գաղթականների թիվն անցավ 6 հազարից, որոնց անհրաժեշտ պարագաներով, հատկապես սննդամթերքով ապահովելու խնդիրն իր վրա վերցրեց Ախալքալաքի ազգային խորհուրդը (տես ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 1, թ. 18):

<sup>8</sup> Տես ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 125ա-126 և Մշակ, 1918, թիվ 81:

<sup>9</sup> Տես Սանոսյան Ա., նշվ. աշխ., էջ 82-87, 160-163, Սիմոնյան Ե., նշվ. աշխ., էջ 38-41, Շարժում, Ախալցխա, 1918, թիվ 29:

Ախալքալաքի մահմեդականների լրտեսական գործունեությունը: Ապրիլի 13-ին տեղի գործադիր իշխանությունների 40 մահմեդական ներկայացուցիչների ստորագրությամբ թուրքական հրամանատարությանը ներկայացվեց մի փաստաթուղթ, որում հարց էր բարձրացվում ռուսական հեղափոխությունների հռչակած ինքնորոշման իրավունքով, մոտ երեք դար Օսմանյան կայսրության կազմում եղած Ախալցխայի գավառը և Ախալքալաքի գավառի մի մասը օսմանյան տերությանը միացնելու մասին: Հատուկ ընդգծվում էր, որ այս «...գավառների մահմեդական բնակչությունը մեծ մասամբ ունի թուրքական ծագում և իր հոգևոր կապերը չի խզել Թուրքիայի հետ»<sup>10</sup>:

Ինչպես երևում է, իրենց անջատողական գործունեության արդարացման համար մահմեդական առաջնորդները վկայակոչում էին ինքնորոշման իրավունքի ընձեռած հնարավորությունը՝ մոռանալով այդ հարցում հաշվի նստել բնակչության մեծամասնության՝ հայերի ու վրացիների կարծիքի հետ: Այս քայլը, ինչպես ապացուցելու եկան հետագա դեպքերը, կազմակերպվել էր թուրքական հրամանատարության կողմից և համաձայնեցվել Անդրկովկասյան սեյմի մուսավաթական խմբակցության հետ<sup>11</sup>:

Հենվելով տեղերում ձևավորված ռազմական, ազգային ու քաղաքացիական մարմինների վրա՝ Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, հակառակ Վրաց ազգային խորհրդի ձգտումներին,

<sup>10</sup> Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, с. 310-311. Հմմտ: Ջամալեան Ա., Իմ պատասխանները, Յառաջ, 1928, 4 հուլիսի, թիվ 690, էջ 2:

<sup>11</sup> Հետագայում Անդրկովկասյան սեյմի 1918 թ. մայիսի 26-ի նիստում, երբ արդեն դաշնությունը տանուլ էր տվել պատերազմը և կանգնած էր լուծարման շեմին, վրաց մենչևիկների առաջնորդներից Ի. Ծերեթելին իր արտասանած ճառում հարկ համարեց սուր քննադատության ենթարկել մուսավաթականներին Ախալքալաքի ու Ախալցխայի մահմեդականների պատակտչական քայլերը խրախուսելու և թուրքական զավթողական պլաններին աջակցելու համար (տես Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 324-325): Դրանով նա փորձում էր Անդրկովկասյան դաշնությունը լուծարելու, Օսմանյան կայսրությանը տարածքային զիջումներ կատարելու գործում իր կուսակցությանն «ազատել» պատասխանատվության մասնաբաժնից:

կարողացավ վիճելի համարվող Ախալքալաքի և Բորչալուի գավառների վրա տարածել իր ազդեցությունը, որոշ ռազմական օգնություն ցուցաբերել Ջավախքին: «Այս ամբողջ ժամանակամիջոցում (1917 թ. հոկտեմբեր – 1918 թ. մայիս – Ա.Ս.), – գրում էր Արշակ Ջամալյանը, – մեր հողային շրջանը կազմող բոլոր գավառները, դրանց բույն և Ախալքալակն ու Չայկական Բորչալուն, ենթարկում էին բացառապես Չայոց Ազգային խորհրդին: Վրաց Ազգային խորհուրդը որեւէ առթիւ, որևէ միջամտութիւն չի ունեցել այդ գավառների գործում»<sup>12</sup>:

Ակնհայտ է, որ 1917 թ. վերջից մինչև 1918 թ. մայիսի կեսերը Ջավախքում ստեղծվել էր հայկական իշխանություն, որի հետ հաշվի էր մատում Անդրկովկասյան սեյմը: Ի դեպ, վերջինս, հավանաբար ելնելով այդ իրողությունից, ոչ մի շոշափելի քայլ չկատարեց թուրքական ներխուժումն Ախալքալաք կանխելու ուղղությամբ: Անպատասխան մնացին ախալքալաքցի հայտնի մտավորականների՝ գրող Դերենիկ Դեմիրճյանի և հասարակական գործիչ Պողոս Աբեյանի դիմումները սեյմին՝ տեղում եղած հարուստ հացամթերքը թուրքերի ձեռքը չընկնելու համար, նախապես գավառից դուրս բերելու վերաբերյալ<sup>13</sup>:

1918 թ. մարտի վերջին Չայոց ազգային խորհուրդը, հաշվի առնելով, որ սեյմը մոռացության է տվել Ջավախքում լուրջ պաշտպանական ուժեր ստեղծելու խնդիրը, սկսեց այդ ուղղությամբ նոր միջոցներ որոնել: Չայկական կորպուսի հրամանատար գեներալ Թ. Նազարբեկյանի խորհրդով որոշվեց դիմել զորավար Անդրանիկի օգնությանը, որն Ալեքսանդրապոլում ձեռնամուխ էր եղել նոր զորամասի կազմավորման գործին: Նազարբեկյանը մտադիր էր Անդրանիկի զորամասն օգտագործել կամ Մերդենեկում կամ Ախալքալաքում, որոնք թուրքական առաջխաղացման ճանապարհին ամենախոցելի օղակներն էին<sup>14</sup>:

<sup>12</sup> Ջամալեան Ա., Չայ-վրացական կնճիղը, Չայրենիք, 1928, ապրիլ, էջ 89:

<sup>13</sup> Տե՛ս ԳԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, ք. 123ա:

<sup>14</sup> Տե՛ս Սիմոնյան Գ. Ռ., Անդրանիկի ժամանակը, հ. Բ, Երևան, 1996, էջ 103:

Սակայն Նազարբեկյանը, անտեղյակ լինելով, որ Ապահովության խորհուրդն իր հերթին ծրագրել է զորավարի ուժերն ուղարկել Պարսկաստան՝ այնտեղից Միջագետք անցնելու և անգլիացիներին միանալու համար, առանց Անդրանիկին տեղեկացնելու, ապրիլի 6–ին կարգադրում է Չայկական կորպուսի շտաբից հեռագրել Ախալքալաք ճանաչված զորավարի գալստյան լուրը հայտնելու համար: Չաջորդ օրը Ալեքսանդրապոլում ստացվում է Ախալքալաքի զինական ուժերի հրամանատար գեղապետ Առաքելովի ոգևորական հեռագիրը. «Խնդրում եմ հայտնեք իմ անկեղծ ուրախությունը Անդրանիկի՝ այդ ազգային հերոսի Ախալքալաք նշանակման մասին: Ես անձամբ կխնդրեի շտապեցնեիք նրա գալուստը, որովհետև միմիայն նրա երևան գալը կոգևորե ժողովրդին, որպիսի ոգևորությունը չափազանց կարևոր է: Մեծ կարիք եմ զգում հրացանների, ընդհանրապես զենքերի»<sup>15</sup>: Եվ իրոք, Անդրանիկի «գալստյան» լուրը մեծ ոգևորություն առաջադրեց ջավախահայության շրջանում: Մարդիկ անհամբեր սպասում էին զորավարի գալուն:

Սակայն ինչպես երևում է վերոհիշյալից՝ այս «նշանակմանը» տեղյակ էին գրեթե բոլորը, բացի իրենից՝ Անդրանիկ Օզանյանից: Պատահական չէ, որ Ազգային խորհուրդը, կռահելով, որ գեներալ Նազարբեկյանի այս անակնկալ և չհամաձայնեցված որոշումը կարող է առաջացնել Անդրանիկի հասկանալի դժգոհությունը, ապրիլի սկզբին իր ներկայացուցիչ Պարույր Լևոնյանի (աշուղ Ջիվանու որդին) միջոցով պաշտոնապես առաջարկություն ներկայացրեց զորավարին՝ իր 1400 հոգանոց Չայկական առանձին հարվածող զորամասով Ախալքալաք անցնելու և Կարսի մարզից թուրքերի մուտքը գավառ կանխելու նպատակով: Անդրանիկը սկզբում թերահավատորեն վերաբերվեց առաջակին: Նա Լևոնյանին հայտնեց, որ Ալեքսանդրապոլից Ախալքալաք անցնելու համար իրեն հարկ կլինի բախվել Աղբաբայի (այժմ

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 104:

Ամասիա – Ա.Մ.) մեծաթիվ թուրք բնակչության և այդ շրջանում վխտացող բազմաքանակ թուրքական զինվորականության հետ: «Աստուց մեջէն անցնելով Ախալքալաք հասնիլ, – ասում էր Անդրանիկը, – այն ալ 1000 հոգիով, ինչ որ կը նշանակէ 6–700 հրացան: Այդքան ուժ անբաւական է»: Երկրորդ հանգամանքը, որն ըստ զորավարի՝ հուշում էր այդ ձեռնարկման անհեռանկարայնությունը, գավառին ու նրա տեղանքին իր անծանոթ լինելն էր. «Ես աչքերս զոց կը ճանչնամ Հայաստանի ամէն մէկ ծորը, բլուրը, կիրճը. իսկ սա քարտէսին վրայ երեւցող երկիրը (Ախալքալաքը – Ա.Մ.) ինձ անծանոթ է»<sup>16</sup>:

Սակայն, ինչպէս ցույց տվեցին հետագա դեպքերը, այնուամենայնիվ, Անդրանիկը, ենթարկվելով զինվորական կարգապահությանը, փորձեց իրականացնել այդ խնդիրը: Նա թեև անծանոթ էր Ջավախքին, սակայն տասնամյակներ շարունակ Արևմտյան Հայաստանում կռվել էր ախալքալաքցի ֆիդայիների հետ, սերտ շփումներ ունեցել ծնունդով ախալքալաքցի հայտնի զործիչներ Ռուբեն Տեր–Մինասյանի, Համո Օհանջանյանի, Ռուբեն Դարբինյանի ու այլոց հետ և չէր կարող անտարբեր մնալ ջավախքցիների ճակատագրի նկատմամբ, առավել ևս, որ պաշտպանության տակ վերցնելով Ալեքսանդրապոլ–Ախալքալաք գիծը, կանրապնդվեր հայկական ուժերի աջ թևը և կփակվեին թուրքական զորքերի ուղիները դեպի Լոռի ու Թիֆլիս: Անկասկած, Ալեքսանդրապոլից մինչև Ախալքալաք գիծը փոքրաթիվ ուժերով պահելու այդ ծրագիրը, ինչպէս իրավացիորեն նկատել է ակադեմիկոս Հ. Սիմոնյանը, գրեթե անհնարին խնդիր էր, սակայն արդարացված էր՝ ունեցած սահմանափակ միջոցների պայմաններում:

Վերոհիշյալից պարզորոշ երևում է, որ 1918 թ. գարնանը, պայմանավորված թուրքական զորքերի ընդհանուր հարձակմամբ, հայ հասարակական-քաղաքական շրջանակները, հատկապես Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, գիտակցելով իր

<sup>16</sup> Չելեպյան Ա., Չորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, Երևան, 1990, էջ 449:

թույլ տված սխալը՝ թուրք-անդրկովկասյան ճակատում ռազմավարական նշանակություն ունեցող Ախալքալաքի գավառի ինքնապաշտպանության խնդիրը աչքաթող անելու հարցում, փորձում էր վիճակը փրկել զորավար Անդրանիկի ուժերն այնտեղ ուղարկելու միջոցով:

Ըստ Հայկական առանձին հարվածող զորամասի պորուչիկ Կոլմակովի՝ 1918 թ. ապրիլի 10 (23)-ին, դուրս գալով Ալեքսանդրապոլից, իրենց «...ջոկատն ուղղություն վերցրեց դեպի Ախալքալաք՝ գեներալ Անդրանիկից հրաման ստանալով չանցնել Թուրքիայի հետ կնքված զինադադարի նախատեսած սահմանափակ գիծը՝ Ախուրյան գետը»<sup>17</sup>:

Անդրանիկի զորամասը շարժվեց դեպի Շիրակի հյուսիս-արևմտյան և հասավ Գյուլջիյոլ (այժմ Թորոս – Ա.Մ.) գյուղը: Ապրիլի 13 (26)-ին զինվորները դիրքեր բռնեցին Աշոցքից Լոռի տանող ռազմավարական նշանակության ճանապարհի երկայնքով, Կարախաչի լեռնանցքի մուտքի մոտ՝ Դուզխարաբա (այժմ՝ Հարթաշեն) և Չիֆթլի (Չուլգադրթյուր) գյուղերում: Ջարգացնելով հաջողությունը՝ հաջորդ օրը նրանք հասան Ղազանչի գյուղը և մարջողությունը՝ հաջորդ օրը նրանք հասան Ղազանչի գյուղը և մարտի բռնվեցին տեղի թուրքերի ու քրդերի հետ: Թշնամին ի վիճակի չեղավ դիմադրելու և նահանջեց Ախուրյանի վտակ Ղալիչայի աջ ափը: Այս հաղթական կռվում Հայկական առանձին հարվածող զորամասը ստացավ իր առաջին մարտական մկրտությունը:

Ղազանչիից հետո Անդրանիկի զորագունդն ընդհուպ մոտեցավ Ախալքալաքի գավառին: Նրա հսկողության տակ հայտնվեց Աշոցքի սարահարթի զգալի մասը՝ Ղազանչի–Շիջթափա (Սեպասար)–Չիֆթլի–Բոգոլխուշալի (Մուսայեյյան) շրջատարածքը<sup>18</sup>: Աղբաբայի թուրքերի ու քրդերի սարսափից իրենց գյուղերը լքած հայ գյուղացիների զգալի մասը վերադարձավ տուն: Սակայն

<sup>17</sup> Микаелян В. А., Закарян А. А., Поручик Колмаков о деятельности Андраника в 1918 г., ԼՀԳ, 1988, N 8, էջ 67:

<sup>18</sup> Տես Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 598–599: Այդ օրերին Ջավախքում մեծ ոգևորությամբ սպասում էին Անդրանիկի գալստյանը:

շուտով թուրքական զորքերը, զրեթե անարգել գրավելով Կարսի մարզի ողջ տարածքը, ապրիլի 16 (29)–ին դուրս եկան Ախուրյանի ափը: Մի զորաջոկատ էլ Աղբաբայի թուրքերի աջակցությամբ հասավ Ախուրյանի ակունքների շրջանը և անմիջական վտանգ ստեղծեց Աշոցքն ու Ջավախքը կապող ճանապարհի համար:

Նման ծանր պայմաններում զեներալ Նազարբեկյանը, անհանգստացած ռազմաճակատի փլուզման վտանգից, Ալեքսանդրապոլից հեռագիր հղեց Անդրանիկին՝ հանձնարարելով հարվածող զորամասի ուժերով երկարացնել պաշտպանական գիծը, Գյուլիբուլաղ (այժմ՝ Վարդաղբյուր) գյուղից հասցնել մինչև Ախալքալաքի գավառի հարավային սահմանները: Հայաստանի ազգային արխիվում պահվող այդ հեռագրի տեքստում ասվում էր. «Իրադրության փոփոխության կապակցությամբ, ...հրամայում եմ Ձեր ենթակայության տակ գտնվող ջոկատով անհապաղ մտնել Խանչալը–գյուլ լճի և Մարդատապինսկոյեի (Մաղաբափա լճի – Ա.Ս.) շրջանը, որտեղ և ամրանալ, պահպանելով լիակատար հանգստություն Ախալքալաքի գավառի հարավային մասում և հաստատել հսկողություն Կարսի մարզի սահմանի վրա»<sup>19</sup>:

Այդ դժվարին խնդրի իրագործման ճանապարհին Անդրանիկի առջև ծառայան նոր խնդիրներ: Բազմաթիվ արևմտահայ ռազմիկներ, չկամենալով մնալ իրենց համար անծանոթ զորահրամանատարների ենթակայության տակ, փախչում էին զորամասերից և, չնայած Անդրանիկի հակազդեցությանը, Աշոցքի սարահարթում միանում Հարվածող զորամասին, որի զինվորների թիվն արդեն հասել էր 2600–ի<sup>20</sup>:

Անդրանիկը Գյուլիբուլաղից մայիսի 8–ին նամակով դիմեց Ախալքալաքի Հայոց ազգային խորհրդին՝ մատչելի զներով իր զորամասին սննդամթերք տրամադրելու առաջարկով: Վերոհիշ-

յալ նամակին, ինչպես արդեն նշվել է հոդվածի սկզբում, Ախալքալաքի ազգային խորհուրդը պատասխանեց մայիսի 13–ին գաճազան պատճառաբանություններով, ըստ էության, մերժելով օգնություն տրամադրելու վերաբերյալ զորավարի խնդրանքը:

Ախալքալաքի ազգային խորհուրդը նման պահվածքով, փաստորեն, վիժեցնում էր Անդրանիկի Ջավախք մտնելու վերաբերյալ Հայոց ազգային և զինվորական մարմինների ծրագիրը: Իր այս անհասկանալի քայլը խորհուրդը «հիմնավորում էր» գաճառում ստեղծված ծանր իրավիճակով արդահանցի բազմահազար գաղթականների առկայությամբ, սննդամթերքի ու խոտի, դրանց ձեռքբերման համար ֆինանսական միջոցների բացակայությամբ, տեղի զինական ուժերի պետքերը միայն իր միջոցներով հոգալու իրողությամբ և այլն: Ընդ որում՝ Ազգային խորհրդի նախագահի փոխարեն գրությունը ստորագրած Վ. Այվազյանն Անդրանիկին ներողամտաբար խնդրում էր նման քայլը «...չընդունել որպես խուսափողական միջոց ազգային կարիքների դիմաց, այլ անհրաժեշտութիւնից ստիպած մի յայտարարութիւն՝ իրազեկ անելու Ձեզ Ախալքալաքի դրութեան և պայմանների հետ...»<sup>21</sup>:

Սույն նամակին հանգամանորեն ծանոթանալով՝ կարելի է կռահել, որ նրա հեղինակները, զանց առնելով երկրամաս Անդրանիկի գալու կապակցությամբ Ջավախքի հայության, այդ թվում՝ ինքնապաշտպանական ուժերի աննախադեպ ոգևորությունը, հիմնավոր պատճառաբանություններ չէին բերում Ախալքալաք շարժվող զորավարի ուժերին օգնելու առաջարկից հրաժարվելու համար: Նախ՝ անհասկանալի էր, թե ինչու՞ այդ նամակի տակ Ախալքալաքի ազգային խորհրդի նախագահի փոխարեն դրված էր նրա անդամներից մեկի՝ Վ. Այվազյանի ստորագրությունը: Դա արդեն առնվազն տարօրինակ էր, եթե չասենք՝ վիրավորական: Երկրորդ՝ Անդրանիկ Օզանյանը չէր հրաժարվում իր

<sup>19</sup> Սիմոնյան Հ. Ռ., Անդրանիկի ժամանակը, հ. Բ, էջ 113, Կարապետյան Հ., Անդրանիկ, հ. 3, Երևան, 1994, էջ 496:

<sup>20</sup> Տես Սիմոնյան Հ. Ռ., նշվ. աշխ., էջ 118:

<sup>21</sup> ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 1, ք. 18, Սիմոնյան Հ. Ռ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 115–116:

գորքի կարիքների համար միջոցներ հատկացնելուց, այլ միայն փորձում էր դրանք ձեռք բերել ավելի մատչելի գներով:

Չավեշտալի է, որ նամակագիրները մի կողմից խոստովանում էին, որ «...ճիշտ է թէ Ախալքալաքը իր գաւառով հաշվվում է հացառատ երկիր, բայց շնորհիւ հարևան գաւառների կարիքներին հացի ու գարու բաւական պաշար դուրս է հանւած գաւառիցս զանազան ուղղութեամբ: Սակայն խորհուրդս յանձն է առնում ամեն միջոց գործ դնել՝ բաւարարելու Ձեր գորամասը պահանջւած քանակութեամբ հացով ու գարով», բայց անմիջապէս ավելացնում է. «եթէ այդ բանի համար միջոցներ կհայթիայթիւն Ձեր կողմից թէ դրամով և թէ տրանսպորտով, քանի որ խորհուրդս անկարող է խոստում անել, որ ինքը կգտնի միջոցներ և այդ նպատակի համար, նկատի առնելով տեղական գնդի, պարտիզանական զօրախմբի, նրանց վարած կոիւների համար պահանջւած զենքերի ու փամփուշտների և ի վերջոյ գաղթականութեան համար պահանջուող միջոցների ստիպողական կարիքը»<sup>22</sup>: Ծիծաղելի է, որ նամակում առաջարկվում էր նաև խոտի ու հարդի հարցով իրենց փոխարեն դիմել տեղի ռուս աղանդավորներին՝ դուխոբորներին:

«Դժվարությունների» մեջ նշվում էր նաև այն հանգամանքը, որ «...մեր գիւղացիութիւնը զգալի չափով զրկւած լինելով աշխատող ձեռներից՝ համառում է մինչ օրս վճարել որևէ տուրք կամ նպաստ Ազգային կարիքների համար»<sup>23</sup>: Այդ վերջինը, անշուշտ, բացահայտ կեղծիք էր, քանի որ գյուղացիության վճարած հարկերի հաշվին էին պահվում գավառի ինչպես զինական, այնպես էլ ազգային մյուս կառույցները: Իսկ իրենց անվտանգության նկատառումներով եկող ժողովրդական հերոսին օգնելը, կասկածից վեր է, որ ամեն ջավախեցու պարտքի ու պատվի գործն էր լինելու:

Ամենայն հավանականությամբ տեղական իշխանություններն անգամ ժողովրդին չէին իրազեկել զորավարի նամակի մա-

<sup>22</sup> ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 1, ք. 18:

<sup>23</sup> Նույն տեղում:

սին և իրականում ջանքեր չեն խնայել նրա մուտքը գավառ ծախողելու համար: Ի՞նչն էր պատճառը, որ սկզբում Անդրանիկի գալստյան լուրը մեծ խանդավառութամբ էր ընդունվել ժողովրդի և ազգային շրջանակների կողմից, քիչ անց՝ վերաբերմունքն արմատապես փոխվել էր:

Բանն այն է, որ Հայոց ազգային խորհրդում և քաղաքական որոշակի շրջանակներում կար այն մոտեցումը, որ Անդրանիկին թուրքական ճակատի Ալեքսանդրապոլ-Ախալքալաք հատված ուղարկելը սխալ քայլ է: Նրանց կարծիքով, հաստատված զինադադարը, որը նախատեսում էր կրակի դադարեցում և Ախուրյան գետով կողմերի միջև ռազմաճակատի նոր գծի հաստատում, կարող էր խախտվել Անդրանիկի զինվորների ինքնագլուխ քայլերի, կամ, որ ավելի հավանական է՝ թուրքերը, զորավարի նկատմամբ ունենալով անհամողութողական կեցվածք, կարող էին վերսկսել հարձակումը և անցնել Ախուրյանը: Այդ կարծիքին էր նաև Ապահովության խորհրդի նախագահ Կոմսը՝ Վահան Փափագյանը, որն առաջարկում էր Անդրանիկի ուժերը հետ քաշել ավելի ապահով շրջան:

Նման պայմաններում Թիֆլիսում զործող հայկական ազգային ու զինական մարմինները, թուրքերին «չգրգռելու» մտահոգությամբ, անկասկած, հրահանգել էին Ախալքալաքի ազգային մարմիններին՝ գրեթե անլուծելի պայմաններ դնել Անդրանիկի առջև և ի չիք դարձնել նրա մուտքը Չավախք:

Հանդիպելով նման վերաբերմունքի, ինչպես և նկատի առնելով Ախուրյանի ուղղությամբ թուրքական զորքերի առաջխաղացման պատճառով շրջապատման մեջ ընկնելու վտանգը, Անդրանիկը հրաժարվեց Ախալքալաք անցնելու մտադրությունից: Նա Կարախաչի դժվարանցանելի լեռնանցքով դուրս եկավ Կորոնցովկա (այժմ՝ Տաշիր): Թուրքական զորքերն անարգել շարժվեցին Աշոցքի և Չավախքի ուղղություններով:

Գավառի հյուսիսային գյուղերի բնակչությունը՝ մոտ 40 հազ. մարդ, գաղթեց դեպի Բակուրիան, իսկ հարավայինը՝ 30-35

հազ. մարդ, հիմնականում Ծալկա՝ տեղում թողնելով իր ամբողջ անշարժ գույքը: Անգամ չհաջողվեց գավառից դուրս բերել հարյուր հազարավոր փութ ալյուր և մինչև 10 մլն. փութ հացահատիկի բերքը<sup>24</sup>: Այս վերջին փաստը խոսում է այն մասին, որ Ախալքալաքի գավառում իրականում հացահատիկի հարուստ պաշարներ կային և դրանից Անդրանիկի զորքին բաժին չհանելու տեղի ազգային խորհրդի պատճառաբանությունները շինծու էին: Այս ամենի հետևանքն այն եղավ, որ ինչպես բերքի, այնպես էլ բնակչության ունեցվածքի մեծ մասը բաժին ընկավ թուրքերին:

Այդ օրերին «Հորիզոն» թերթում Արսեն քահանա Բլրցյանը գրում էր. «Թուրքերի թնդանոթների և զնդացիորների տարափի տակ, փախստականները չկարողացան իրենց ունեցած ինչքից որևէ բան վերցնել իրենց հետ և ամեն բան թողին գյուղերում: Շատ հայերի գերել են թուրքերը»<sup>25</sup>: Չգաղթեցին միայն թրքախոս հայ կաթոլիկներն ու ռուս դուխոբորները: Այսպես մինչև մայիսի վերջը արտագաղթեց ամբողջ Ախալքալաք քաղաքի և 61 հայկական գյուղերի բնակչությունը<sup>26</sup>:

Բակուրիանի անտառներում մնալով բաց երկնքի տակ թուրքերի հարձակումների, վրացական կառավարության անբարյացակամ վերաբերմունքի, սկսված հիվանդությունների պատճառով մինչև տարեվերջ ջավախքցի գաղթականներն ունեցան 40 հազար զոհ<sup>27</sup>: Հարց է ծագում, եթե զորավարի մուտքը Ջավախք արհեստականորեն չվիժեցվեր, հնարավոր կլինե՞ր կանգնեցնել թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի գավառ և բնաջնջումից փրկել ջավախահայությանը:

<sup>24</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, ք. 34:

<sup>25</sup> Արսեն քահանայ Բլրցյան, Ախալքալաքի գաղթականությունը, Հորիզոն, 27 հունիսի 1918, թիվ 125:

<sup>26</sup> ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեռնի անձն. ֆ. 1, ց. 1, գ. 242, ք. 4-5:

<sup>27</sup> Մանրամասն տես Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 282-294:

Կարծում ենք՝ նման հարցի պատասխանը հնարավոր կլինի գտնել միայն համանման մի քանի այլ հարցերի համատեքստում, որոնք բոլորն էլ կապված են 1918 թվականի հետ և առ այսօր պատմագրության մեջ շարունակում են մնալ որպես վիճահարույց հարցեր: Նույն տրամաբանությամբ կարող ենք ասել, եթե փետրվարին Անդրանիկ Օզանյանին հաջողվեր էր զորումում ճակատն անսասան պահել, ապա չէին լինի դրան հաջորդած մի շարք ձախողումներ: Կամ եթե մայիսի վերջին Անդրանիկը, թողնելով Դսեղում դեպի Թիֆլիս տանող գաղթականների ճանապարհի հսկողությունը, մասնակցեր Ղարաբաղի ճակատամարտին, արդյոք հնարավոր չէ՞ր լինի կանխել թուրքերի մուտքը Լոռու խորքեր: Կամ եթե ամռանը զորավարը, իր հսկողության տակ գտնվող Նախիջևանի գավառը՝ Բաքվի կոմունայի նախագահ Ստ. Շահունյանին հղած հատուկ «հեռագրով» խորհրդային Ռուսաստանի տրամադրության տակ դնելու փոխարեն, մնար տեղում, արդեն այդ ժամանակ հնարավոր չէ՞ր դառնա այդ գավառի միացումը Հայաստանի Հանրապետությանը: Եվս մեկ համանման հարցադրում. եթե հոկտեմբերին, Արցախ շարժվելիս Անդրանիկը Ավդալարի (Չաբուդի) ձորում հաշվի չառներ անգլիական զեներալ Թոմսոնի պատվիրակների՝ արշավանքը դադարեցնելու վերաբերյալ պահանջը, և, այնուամենայնիվ, մտներ Շուշի, այդ ժամանակ արդեն Արցախը չէ՞ր անցնի ՀՀ կազմի մեջ:

Նման ոչ դյուրին հարցերի պատասխանները տալու փոխարեն, որպես կանոն, պատմաբանները հիշեցնում են այն ճշմարտությունը, որ պատմության մեջ «եթե»-ներ չեն լինում: Ենթադրություններով հնարավոր չէ ստեղծել տրամաբանական կառույց: Արդյոք պատահական է, որ վերոհիշյալ բոլոր իրավիճակները վերաբերում են բարդ ու հակասական 1918 թվականին: Իհարկե՞ ոչ: Այդ տարեթիվը հազեցած է Հայոց պատմության մեջ շրջադարձային իրադարձություններով, ռուսական կովկասյան ճակատի փլուզման պատճառով թուրքերի կողմից Արևմտյան Հայաստանի վերագրավում ու ներխուժում Արևելյան Հայաստան:



տան, երկրամասում անկախ պետականությունների ստեղծում, նրանց միջև սահմանների ձևավորման դժվարին գործընթաց, Քառյակ դաշինքի երկրների պարտության պատճառով տարածաշրջանում իրավիճակի կտրուկ փոփոխություն և այլն:

Այսպիսի պայմաններում Անդրկովկասի ժողովուրդներից յուրաքանչյուրը փորձում էր օգտվել պատմության ընձեռած հնարավորությունից՝ իր համար առավելագույնս շահեկան վիճակի հասնելու համար: Բնականաբար, չէին կարող չլինել նաև ծախողումներ, հատկապես հայերի համար, ովքեր մեծ-մեծակ էին մնացել թուրքական ներխուժման առջև: Ցավալի է, որ այդ ծախողումներում, կամ որ ավելի ճիշտ է ասել՝ համեստ արդյունքների հասնելու իրողության մեջ, ինչպես ժամանակի գործիչները, այնպես էլ հետագայի ուսումնասիրողները փորձում են գտնել մեղավորներ: Որպես կանոն, այդ «մեղավորների» մեջ հաճախ հայտնվում են ազգի կողմից սիրված հերոսները, տվյալ դեպքում՝ Անդրանիկ Օզանյանը: Կարծում ենք՝ դա այնքան էլ պատահական չէ, քանի որ ժողովուրդը միշտ հերոսներից է ակնկալել առավելագույն արդյունք, նրա հետ է կապել նաև դժվար ու անլուծելի խնդիրների կենսագործումը:

Լրացել է մեծն զորավար Անդրանիկ Օզանյանի ծննդյան 150-ամյակը: Ինչպես հարյուրամյա, այնպես էլ ավելի վաղ տեղի ունեցած իրավիճակներում մեր ունեցած անհաջողությունների համար մենք շարունակում ենք «մեղավորներ» փնտրել: Բայց համոզված ենք, որ այդ թեմաներով նոր բանավեճերը ոչ միայն չեն հանգեցնի ճշմարտության բացահայտմանը, այլև մեզ ավելի կխճճեն բարդ հարցերի մեջ, հանիրավի կստվերեն իրական հերոսների կերպարները և ժողովրդին կհեռացնեն իրենց իդեալներից, հերոսներ, որոնց անմահացնելու և նրանց օրինակով սերունդներին դաստիարակելու հարցում ժողովուրդները երբեք չեն սխալվում: Ուրեմն, մեկընդմիշտ հիշենք, որ հերոսներն իրականում արել են այն, ինչը ճիշտ են համարել և ամենակարևորը՝ որքան կարողացել են: Նշանակում է՝ ինչպես Անդրանիկ Օզան-

յանին, այնպես էլ մեր ժողովրդի նվիրական մյուս անուններին գնահատելիս երբեք չպետք է մոռանալ իրադարձությունների վերլուծության ամենաանաչառ մեթոդը՝ պատմականության սկզբունքը և ազգին անմնացորդ ծառայելու հերոսների առաքելությունը:

## ՅԱՎԵԼՎԱԾ

### Ախալքալաքի Յայոց ազգային խորհրդի պատասխան նամակը զորավար Անդրանիկին

13 մայիսի 1918 թ.

Ի հետևումն Ձեր 8 մայիսի N 184 գրութեան՝ Ախալքալաքի Յայոց Ազգային խորհուրդը, երկար խորհրդակցութեան միջոցով Ձեր յիշեալ գրութիւնը, հարկաւոր համարեց մանրամասն, թէ ներկայ գրութեամբ և թէ գրութիւնս բերող ներկայացուցիչների միջոցաւ ծանոթացնել Ձեզ ազգային խորհրդի դրութեան հետ, որից և անմիջապէս բխում է Ձեր N 184 և 194 գրութիւններով արւած դիմումների լուծումը:

Դեռ սրանից մօտ 6 ամիս առաջ խորհուրդս հազար ու մի դժարութիւններով ու արգելքներով հազիւ տիրանալով տեղիս զօրանոցին՝ հազիւ գտաւ այնտեղ 100-ի չափ բերդան հրացաններ, աննշան քանակութեամբ փամփուշտներ, մթերքների չնչին պաշար և առհասարակ ամեն ինչ թալանած ու քարուքանդ եղած, ջարդած դրութեամբ. աւելորդ է խօսել զինուորական զգեստների մասին, որոնց բոլոր պահեստները գտնւեցին բաց դռնով և դատարկ դարակներով:

Ահա այսպիսի պայմաններում խորհուրդս ստանալով պետական դատարկ ու կիսաքանդ զօրանոցներ՝ ձեռնարկեց կազմակերպել տեղական բառալեօնը, որը այժմս վերածւելով գնդի, ունի 3500-ից աւելի զինուորներ, որոնց զգեստաւորելու, զինելու և ռազմամթերքի պաշար պատրաստելու ամբողջ գործը ընկած է միայն տեղիս խորհրդի վրայ:

Ախալքալաքի Հայկական գունդը մինչև օրս պետութիւնից չի ստացել համարեայ ոչինչ՝ ո՛չ դրամով և ո՛չ էլ մթերքներով: Մեր Ազգային և Զինուորական կենդրոնական մարմիններն իսկ իրենց կողմից դեռ ոչ մի օժանդակութիւն չեն արել. չնայած թէ՛ մեր և թէ՛ գնդապետի բազմիցս դիմումների, որոնք միշտ մնացել են ծայր բարբառոյ յանապատի:

Այնպէս որ Ախալքալաքի գունդը իր ամբողջ գոյութիւնը այժմս հիմնել է միայն տեղիս Ազգային խորհրդի միջոցների վրայ: Խորհուրդս հոգում է զօրքի թէ՛ սնունդը և թէ՛ ծեռք բերում նրանց համար զէնք ու ռազմամթերք, զգեստաւորում է նրանց և նոյնիսկ դրամական օժանդակութիւններ տալիս՝ զինւորների ռոճիկները բաժանելու. իսկ այս չանել, կամ կիսով չափ պակաս թողնելը, անշուշտ, առիթ կտար լքման, որից շատ է զգուշանում խորհուրդս՝ նկատի ունենալով շրջապատող պայմանները և մեր զօրքի դիրաթէք տրամադրութիւնը դէպի լքումը: Բացի այս մեծաքանակ զօհողութիւններից, որ պահանջում է նաև բաւական աշխատանք և էներգեա, խորհուրդս ծանրաբեռնւած է նաև ներկայիս իր գաւառի շուրջը վիտացող թշնամիներից պաշտպանւելու խնդրով:

Գաւառի ինքնապաշտպանութիւնը և թշնամուն արգելելը՝ ներս խուժել մեր գաւառի այս կամ այն ծայրից, Ախալքալաքին օգնութեան հասնելու օրհասական պահանջը և Արդահանից սպասւող վտանգի էական նշանակութիւնը պահանջում էին մեզանից ունենալ կամաւորական, պարտիզանական խմբեր, որոնք սկիզբ են առել մեզանում դեռ յունւար ամսից և որոնց գոյութիւնն ու անհրաժեշտութիւնը չի կարող ոչ մի առարկութեան նիւթ լինել, և որպէսզի այդ խմբերը չկրեն խուժանական ամբոխային մարդախմբերի բնաւորութիւնը, խորհուրդս աշխատանք ու միջոց չէր խնայում կազմակերպելու և կանոնաւոր զօրախմբերի բնաւորութիւն տալ նրանց:

Եւ այդ խմբերի գոյութիւնը պահպանելու և նրանց զինական ու ռազմամթերքի պահանջների բաւարարութեան համար

խորհուրդս, դարձեալ չստանալով դրսից ոչ մի որևէ օժանդակութիւն, իր միջոցներով է հոգում բոլոր կարիքները:

Զցանկանալով երկարացնել գրութիւնս, խորհուրդս Ձեր ուշադրութեանն է հրաւիրում և այն, բառիս ամենալայն իմաստով մերկ, նւագած, հիվանդ ու ինչազուրկ գաղթականութեան վրայ, որ բերւեց Արդահանից Ախալքալաք և այժմս 6000-ից աւել գաղթականներ տեղաւորելով գաւառում, նորից, առանց կենտրոնական մարմինների օգնութեան, հոգում է նրանց կարիքները հնարաւորութեան սահմաններում: Նորից սպասւում է նոյն չափ գաղթականութիւն:

Ահա այսպիսի պայմանների մէջ Ախալքալաքի Հայոց Ազգային խորհուրդը իր սակաւ ուժերով ու միջոցներով, ստացած Ձեր դիմումները, որոնց բաւարարութիւնը միանգամայն վեր է տեղական խորհրդի ուժից տեղական միջոցներով:

Անկախ այս ամենից հարկաւոր է նկատի առնել և այն հանգամանքը, որ 4 ամսից աւել է կտրւած լինելով դրսի աշխարհից, զրկված հաղորդակցութեան ճանապարհներից՝ Ախալքալաքը չ'ներմուծելով որևէ նիւթեր՝ սպառել է կամ սպառելու վրայ է տեղում եղած, գաւառական փոքրիկ քաղաքին յատուկ պաշարը. ինչպէս օրինակ նալ և մեխքը, ծխախոտ և թուղթ, հնարաւոր չէ գտնել քաղաքում այն քանակութեամբ, որ բաւարարէ թէ՛ Ձեր և թէ՛ տեղիս գնդի ու պարտիզանական խմբերի պահանջներին:

Գալով հացին ու գարուն, ճիշտ է թէ Ախալքալաքը իր գաւառով հաշվվում է հացառատ երկիր, բայց շնորհիւ հարևան գաւառների կարիքներին՝ հացի ու գարու բաւական պաշար դուրս է հանւած գաւառիցս զանազան ուղղութեամբ: Սակայն խորհուրդս յանձն է առնում ամեն միջոց գործ դնել բաւարարելու Ձեր զորամասը պահանջւած քանակութեասմբ հացով ու գարով, եթէ այդ բանի համար միջոցներ կհայթհայթւին Ձեր կողմից թէ՛ դրամով և թէ՛ տրանսպորտով, քանի որ խորհուրդս անկարող է խոստում անել, որ ինքը կգտնի միջոցներ և այդ նպատակի համար՝ նկատի առնելով տեղական գնդի, պարտիզանական զօրախմբի, նրանց վարած կռիւների համար պահանջւած զէնքերի ու փամփուշտնե-

րի և, ի վերջոյ, զաղթականութեան համար պահանջող միջոցների ստիպողական կարիքը:

Այս և անհրաժեշտ է շեշտել, որ մեր գիւղացիութիւնը զգալի չափով զրկւած լինելով աշխատող ձեռներից՝ համառուն է մինչ օրս վճարել որևէ տուրք կամ նպաստ Ազգային կարիքների համար:

Իսկ ինչ վերաբերում է հարդի ու խոտի ձեռք բերելուն, խորհուրդս մատնացոյց է անում դուխաբոռական գիւղերը, որոնք, անշուշտ, կկարողանան բավարարել Ձեր կարիքներին՝ տեղում այդպիսիները գտնելու պատճառով և որոնց տեղափոխութեան տեսակետից անգամ կան շատ յարմարութիւններ: Դուխաբոռական Օռլովկա և այլ գիւղերում կան պատրաստի բաւական քանակութեամբ հարդ և խոտ, զօրքի կարիքների համար, որոնք կարող են օգտագործել Ձեր զօրամասի կարիքների համար:

Յայտնելով այս ամենի մասին Ձեզ, յարգելի Գեներալ և խնդրում ենք մեր այս գրութիւնը չընդունել որպէս մի խուսափողական միջոց ազգային կարիքների դիմաց, այլ անհրաժեշտութիւնից ստիպւած մի յայտարարութիւն՝ իրազեկ անելու Ձեզ Ախալքալաքի դրութեան ու պայմանների հետ, որոնց մանրամասն նկարագիրը կ'տան Ձեզ խորհրդիս ներկայացուցիչները:

Ընդունեցէք մեր երախտագիտական զգացմունքները դէպի Ձեզ:

Ի.տ. Ազգային խորհրդի նախագահի՝ Վ. Այվազեան

ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 1, ք. 18-19 շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

ՀԱՍՈՍՈՒՔԻԱՍՅԱՆ  
պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

ԻՆՉՊԵՏ ՀԱՅԴՈՒԿԱՊԵՏՆ ԱՐԺԱՆԻ ՀԱԿԱՅԱՐՎԱԾ ՏԿԵՑ  
ԹՈՒՐԲ ՓԱՇԱՅԻՆ. 1918 Թ. ԱՆԴՐԱՆԻԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ  
ՆՈՒՐԻԻ ԶՐՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

1918 թ. հունիսի 4-ին Բաթումում Անդրկովկասի երեք նորանկախ հանրապետությունների հետ հաշտության պայմանագրեր կնքելուց հետո Օսմանյան կայսրությունը չդադարեցրեց ռազմական գործողությունները՝ խնդիր դնելով Բաքուն և կենսունակություն հաղորդել իր «կրտսեր եղբայր» Ադրբեջանին, որը Ռուսական կայսրության Բաքվի և Ելիզավետպոլի (Գանձակ) նահանգների հիմքի վրա հավակնում էր նոր պետություն ստեղծել: Նշված խնդրի իրականացման ճանապարհին խոչընդոտ էին հանդիսանում հատկապես Գանձակի, Ղարաբաղի և Ջանգեզուրի հայերը, որոնք չէին ցանկանում հպատակվել նորահռչակ Ադրբեջանական Հանրապետությանը: Հայտնի ջարդարար էնվեր փաշայի եղբայր, Արևելյան Անդրկովկասում գործող մահմեդական բանակի հրամանատար Նուրի փաշան գործնական քայլերի դիմեց նշյալ տարածքների վրա ադրբեջանական իշխանությունը տարածելու նպատակով: Ռազմական գործողություններին զուգընթաց՝ նա սպառնական կոչերով նախկին Ելիզավետպոլի նահանգի հայ ազգաբնակչությունից պահանջում էր ենթարկվել Ադրբեջանին:

Թուրքերին առանձնապես անհանգստացնում էր Անդրանիկի պարագան, ով 1918 թ. հուլիսի վերջերին հաստատվել էր Ջանգեզուրում: Ուստի՝ իր կոչերում Նուրին չէր շրջանցում այս հանգամանքը՝ տարբեր մեղադրանքներ ու զրպարտություններ ուղղելով հայդուկապետի հասցեին:

Մասնավորապես 1918 թ. օգոստոսի 15 (28)-ին «Ադրբեջանի հայերին» ուղղված կոչում թուրք զինվորականը Սյունիքի

և Արցախի հայերին մեղադրում էր «թուրքական զորամասերից ամենուրեք պարտված և հալածված» Անդրանիկի սաղարանով մահմեդականներով բնակեցված գյուղերում իբրև թե «մասսայական սպանություններ և կոլոպուտներ» կատարելու մեջ: Նա նշյալ երկրամասերը կամայականորեն Ադրբեջանի տարածք էր հայտարարում: Բանն այն է, որ Անդրանիկի կողմից հնազանդեցվեցին Սյունիքի՝ մահմեդականներով բնակեցված որոշ գյուղերի ըմբոստ բնակչությունն ու ավազակախմբերը, որով վերջ տրվեց հայկական բնակավայրերի թալանին ու անմեղ քաղաքացիների սպանություններին: Նուրի մինչև իսկ չէր վարանում Անդրանիկին մեղադրել «անգլիական ոսկով» կաշառված լինելու և ավազակություններ կատարելու մեջ:

Նա հայտարարում էր, թե իբր ստեղծումից ի վեր Օսմանյան կայսրության քաղաքականությունը միտված է եղել «պաշտպանելու իր տարածքի ժողովուրդների տնտեսական, կրոնական և մյուս իրավունքները»: Նա հայերին մեղադրում էր մեծ տերությունների (Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ) դրդամբ կայսրության տարածքում ահաբեկչական գործողություններ կատարելու, ապստամբություններ բարձրացնելու և, հատկապես, համաշխարհային պատերազմի ընթացքում ապստամբելու և կայսրության թշնամիներին օժանդակելու մեջ<sup>1</sup>:

Ինչպես տեսնում ենք, Նուրի փաշան խեղաթյուրում էր հայտնի փաստերը: 15-րդ դարից սկսած Օսմանյան կայսրությունում իրականացվող հայահալած քաղաքականությունը կրել է շարունակական բնույթ, ինչը թուրքերը փորձում են քողարկել՝ հայերին մեղադրելով տարբեր քաղաքական կազմակերպություններ ստեղծելու ճանապարհով և եվրոպական տերությունների օգնությամբ Օսմանյան կայսրությունը կազմաքանդելու

<sup>1</sup> Սուլիսյան Դ., Հայերին ուղղված Նուրի փաշայի կոչերը և Անդրանիկի պատասխանը (հրապարակում), «Պատմաբանասիրական հանդես», 2008, N 3, էջ 261-262:

փորձերի մեջ<sup>2</sup>: Հայտնի իրողություն է նաև, որ թուրքական տիրապետության դեմ հայերն ապստամբություններ և ահաբեկչական գործողություններ էին կազմակերպում ոչ թե եվրոպական պետությունների թելադրանքով, այլ օսմանյան պետության հայահալած և ցեղասպան քաղաքականությանը դիմագրավելու այլ ճանապարհ չտեսնելով: Ի դեպ, դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին առաջ քաշված և հայերի կոտորածներն ու տեղահանություններն «արդարացնող» թուրքական նման «փաստարկները» բարձրաձայնվում են նաև մեր օրերում<sup>3</sup>:

Նշենք, որ Նուրիի կոչը տպագրվել էր օսմաներեն ու ռուսերեն տարբերակներով<sup>4</sup> և տարածվել: Կոչի համառոտ ու ընդարձակ թարգմանությունները 1918-1919 թթ. տպագրվել են ժամանակի հայկական մամուլում<sup>5</sup>:

Նուրի փաշան հայությանը հատուկ կոչ ուղղեց նաև 1918 թ. սեպտեմբերին: Սեպտեմբերի սկզբին Գանձակ քաղաքի շենքերի պատերին թուրքերենով փակցված նշյալ կոչում թուրք փաշան հայերին հորդորում էր հանգստություն պահպանել և հեռու մնալ Անդրանիկից՝ վերջինին մեղադրելով «անգլիացիների դրդամբ» Ջանգեզուրում հաստատվելու մեջ: Հակառակ պարագայում նա սպառնում էր նոր կոտորածներ կազմակերպել՝ վախեցնելով, թե «այստեղ էլ կկրկնվի Ադանայի կոտորա-

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս Մելքոնյան Ա., Օսմանյան կառավարության ժողովրդագրական քաղաքականությունը որպես ցեղասպանության դրսևորում ըստ Էրզրումի և Ախալցխայի նահանգների օրինակների, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», Երևան, 2002, էջ 39-47:

<sup>3</sup> Դրանց հիմնավոր հերքման վերաբերյալ մասնավորապես տե՛ս Տատրյան Վ., Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական հիմնական փաստարկները, Երևան, 2005, էջ 21-22:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 252, ց. 2, գ. 1, ք. 12 (օսմաներեն օրինակ), ֆ. 252, ց. 2, գ. 1, ք. 11, գ. 23, ք. 1, ֆ. 370, ց. 3, գ. 64, ք. 1 (ռուսերեն օրինակներ):

<sup>5</sup> Մասնավորապես՝ «Աշխատավոր», 18 սեպտեմբերի 1918 թ., «Հորիզոն» 18 սեպտեմբերի 1918 թ., «Մշակ» 20 սեպտեմբերի 1918 թ., 18 փետրվարի 1919 թ.:

ծը»<sup>6</sup>։ Ակնարկելով 1909 թ. Կիլիկիայի շուրջ 30000 հայերի սպանդի մասին՝ Նուրի փաշան այս անգամ արևելահայերին էր սպառնում կոտորածների հեռանկարով։ Ամենահին պատահական չէ, որ նշված կոչի հրապարակումից մի քանի օր անց՝ սեպտեմբերի 15-ին, գրավելով Ադրբեջանի ենթադրյալ մայրաքաղաք Բաքուն, նրա գլխավորած թուրք-ադրբեջանական զորքերն ու խաժամուժը կոտորեցին շուրջ 25000 հայերի<sup>7</sup>։ Այնուհետև Բաքվի գրավման առթիվ Գանձակում կազմակերպված ճաշկերույթի ժամանակ Նուրին հայտարարեց. «Ղարաբաղը պետք է հնազանդվի Ադրբեջանի կառավարությանը, իսկ եթե նա ընդդիմադրություն ցույց տա, նրան էլ կվիճակվի այն, ինչ կատարվեց Բաքվում»<sup>8</sup>։

Ի դեպ, կոչը հրապարակվել էր Բաքվի ճակատում թուրքական բանակների և Ստեփան Շահումյանի գլխավորած Բաքվի կոմունայի զորքերի (վերջինի միջուկը կազմում էին հայերը) միջև ընթացող ակտիվ ռազմական գործողությունների ընթացքում։

Վկայություններ կան, որ 1918 թ. հոկտեմբերի սկզբին՝ Շուշի թուրքերի մուտք գործելու նախօրեին, Նուրի փաշան մի սպառնական կոչ է ուղղել Ղարաբաղի հայերին՝ պահանջելով զինաթափվել, թուրք-ադրբեջանական զորքերին թույլ տալ հաստատվել Շուշիում, ենթարկվել Ադրբեջանին։ Վերջնագրին դրական պատասխան տալու համար տրվել էր 24 ժամ. հակառակ պարագայում Նուրին սպառնացել էր պատերազմական գործողություններ սկսել Ղարաբաղի դեմ<sup>9</sup>։ Հայտնի փաստ է, որ թուրքերն իրականացրեցին իրենց սպառնալիքը։

<sup>6</sup> Սուբխասյան Հ., նշվ. աշխ., էջ 264։

<sup>7</sup> Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2003, էջ 488-489։

<sup>8</sup> «Ժողովրդի ծայն», 6 հոկտեմբերի 1918 թ.։

<sup>9</sup> Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920 թթ., Երևան, 2008, էջ 105։

Հայտնի է նաև «Ձանգեզուրի գավառի համայն ազգաբնակչությանն» ուղղված մեկ այլ կոչ<sup>10</sup>, որում, թեև բացակայում են ստեղծման ժամանակի և հեղինակի մասին հիշատակումները, սակայն փաստաթղթի բովանդակության և այլ տվյալների հիման վրա մեծ դժվարություն չի պահանջում դրանց հստակեցումը։ Փաստաթղթի հայերեն և ռուսերեն բնագրերի միջև առկա են աննշան իմաստային տարբերություններ։ Կոչի ռուսերեն տարբերակում նշված է, որ այն տպագրվել է Շուշիում՝ Բ. Տեր-Սահակյանցի տպարանում, այսինքն՝ 1918 թ. սեպտեմբերի 25 (հոկտեմբերի 8)-ին Շուշի թուրքերի մուտք գործելուց հետո։ Փաստաթղթի վերջում դրված է Օսմանյան առաջին կովկասյան դիվիզիայի հրամանատարության կնիքը։

Վավերագրի բովանդակությունից դատելով՝ ամենայն հավանականությամբ այն Շուշին գրավելուց հետո Նուրիի անունից զանգեզուրցիներին ուղարկված կոչն է։ Հայտնի է, որ այն Գորիս է հասել 1918 թ. հոկտեմբերի 11-ին<sup>11</sup>։ Փաստորեն, կոչը տպագրվել է հոկտեմբերի 8-10-ն ընկած ժամանակահատվածում։ Ինչ վերաբերում է նրա հեղինակի հարցին, ապա, բացի այն, որ փաստաթղթի ոճը շատ նման է 1918 թ. օգոստոսի 15 (28)-ով թվագրվող «Ադրբեջանի հայերին» ուղղված կոչին, ակնհայտ է նաև, որ Ադրբեջանում գործող թուրք գործիչներից հենց Նուրի փաշան կարող էր իրեն իրավունք վերապահել հանդես գալու «Օսմանյան պետության անունից»։ Ներկայացվող փաստաթղթում ազգամիջյան խաղաղության և հանգստության կեղծ կոչեր անելով՝ Նուրի փաշան զանգեզուրցիներից պահանջում էր հնազանդվել ադրբեջանական իշխանություններին։

Անդրանիկն անպատասխան չթողեց Նուրիի հերյուրանքները։ Օգոստոսի 28-ի կոչին ծանոթանալուց հետո՝ հոկտեմբերի 13-ին, Նուրիին ուղղված պատասխան նամակով, որը շա-

<sup>10</sup> Սուբխասյան Հ., նշվ. աշխ., էջ 265-266։

<sup>11</sup> Հայկական առանձին հարուածող գործառնք։ Ժեներալ Անդրանիկ, Պոսթոն, 1921, էջ 117-119։

րադրված էր օսմաներենով, Անդրանիկը հերքում է իր հասցեին արված գրպարտությունները<sup>12</sup>: Հայդուկապետն իրավացիորեն նշում էր, որ ինքը թուրքերից «հաղթված և հալածված» չէ, ընդհակառակը՝ Սասունում, Սուշի Առաքելոց վանքում, Բալկաններում, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին բազում անգամներ պարտության է մատնել թուրքական զորքերին: Կարծես Նուրիի հիշողությունը թարմացնելու համար խորհուրդ էր տալիս. «Եթե չեք հիշում, կարող եք հարցնել այդ ամենին տեղյակ Յավեր փաշայից»: Վերջինս Բալկանյան պատերազմի ժամանակ գերվել էր Անդրանիկի կողմից<sup>13</sup>: Հայդուկապետը նույն հեռանկարով էր սպառնում Նուրիին: Շեշտելով թուրքական պետության ջարդարար քաղաքականություն վարելու իրողությունը՝ գրության վերջում Անդրանիկը մոտալուտ հանդիպում էր խոստանում:

Թեև նամակի սկզբում Անդրանիկը նշում է, որ փաստաթղթի ստեղծման պատճառը Նուրի փաշայի 1918 թ. օգոստոսի 15 (28)-ի կոչում իրեն ուղղված գրպարտություններն են, փաստաթղթին անդրադարձած որոշ հետազոտողներ գրում են, թե Անդրանիկի գրության պատճառը «ժողովրդի ծայն» թերթում տպված Նուրի փաշայի կոչն է: Ամենայն հավանականությամբ, վերջիններին շփոթության է մատնել 1918 թ. սեպտեմբերի վերջերին Անդրանիկին ուղղված գորավար Սմբատի նամակը, որտեղ հիշատակություն կա «ժողովրդի ծայն» թերթում եղած հրապարակման մասին<sup>14</sup>:

Մեզ հայտնի չէ, թե Անդրանիկի նամակը, արդյո՞ք, հասել է հասցեատիրոջը: Հայաստանի ազգային արխիվում պահվող փաստաթղթի օսմաներեն տարբերակը ձեռագիր թողոն է՝ շարադրված Հայկական հարվածող զորամասի ձևաթղթի վրա: Ի դեպ, ոչ հաջող հայերեն արխիվային թարգմանության հիման

<sup>12</sup> Սուքիասյան Հ., նշվ. աշխ., էջ 266-267:

<sup>13</sup> Կարապետյան Հ., Անդրանիկ, պրակ 3, Երևան, 1994, էջ 577:

<sup>14</sup> ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 32, թ. 26:

վրա 1991 թ. փաստաթուղթը ռուսերենով հրատարակվել է Ազգային արխիվի կողմից<sup>15</sup>:

1918 թ. ամռանը և աշնանը հայկական Գանձակը, Ղարաբաղն ու Ջանգեզուրը մուսավաթական Ադրբեջանին միացնելուն միտված օսմանյան զորահրամանատար Նուրի փաշայի ձեռնարկած գործողությունները մեծ մասամբ անհաջողությամբ ավարտվեցին, ինչը պայմանավորված էր նաև Անդրանիկի՝ Ջանգեզուրում գտնվելու հանգամանքով: Պատահական չէ, որ Ադրբեջանի վարչապետ Ֆ. Խան-խոյսկին հետագայում նշել է. «Ղարաբաղի հայությունը հեշտությամբ կընդուներ Ադրբեջանի իշխանությունը, եթե չլինեին Անդրանիկի սպառնալիքները»: Անդրանիկի գլխավորած Ջանգեզուրի ինքնապաշտպանական ուժերը կանխեցին թուրքերի մուտքը երկրամաս: Թուրքական զորամասերն Արցախի կենտրոն Շուշի մուտք գործեցին միայն համաշխարհային պատերազմի ավարտական փուլում՝ 1918 թ. հոկտեմբերի 8-ին, իսկ երեք շաբաթ անց հեռացան Արցախից:

<sup>15</sup> Андраник Озаян, Документы и материалы, "Вестник архивов Армении", 1991, N 1-2, с. 312-313.

**ՀՐԱՆՏ ԱՐԱՅԱՍՅԱՆ**  
**պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր**

**ԱՐՑԱՆԱՅԱՅՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՁՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ**

Ճակատագրի բերումով հայ ժողովրդի ազգային հերոս Անդրանիկ Օզանյանն իր զորամասով 1918 թ. օգոստոսի սկզբից մինչև 1919 թ. մարտի վերջը, շուրջ ութ ամիս գտնվելով Ջանգեզուրում, ամեն կերպ ձգտում էր սատար կանգնել Արցախի հայության ազգային-ազատագրական պայքարին: Այդ ժամանակ էլ արցախահայերը նամակագրական կապ են հաստատում զորավարի հետ: Տողերիս հեղինակին հաջողվել է հավաքել և 1995 թ. հրատարակել այդ 41 նամակները՝ դրանք դարձնելով ընթերցողների սեփականությունը:

1918 թ. Արցախ աշխարհի ողջ հայությունը սպասում էր զորավարի մուտքին Արցախ, բայց, ցավոք, հանգամանքների բերումով դա տեղի չունեցավ: Անդրանիկին գրում և Արցախ էին հրավիրում թե՛ Ղարաբաղի Հայոց ազգային խորհուրդը, թե՛ շրջանային զորահրամանատարները, թե կուսակցական շրջանները, թե՛ գյուղական համայնքները՝ համոզված լինելով, որ զորավարի ներկայությունը Լեռնային Ղարաբաղում կսանձի թուրք ազգայնամուլներին, վերջ կդնի ազգամիջյան ընդհարումներին, և Արցախ-Ղարաբաղը կվերամիավորվի մայր Հայաստանի հետ:

1918 թ. ամռանից սկսած մուսավաթական Ադրբեջանը ուժեր էր կենտրոնացնում Լեռնային Ղարաբաղի և Ջանգեզուրի սահմանամերձ գոտիներում: Այդ ծանր ու տագնապալի օրերին Սյունիքում Անդրանիկի գտնվելը հույս ու հավատ, մարտնչելու կորով էր ներշնչում Արցախի և Ջանգեզուրի քաջարի ժողովրդին:

Նույն թվականի աշնանը Արցախում նոր թափ է ստանում ազգային-ազատագրական պայքարը: Թուրք-մուսավաթականների դեմ մղվող հերոսական պայքարում արցախցիներին ոգևորում և հույս էր ներշնչում զորավար Անդրանիկը: 1918 թ. հոկ-

տեմբերի 18-ին Գորիսի Ազգային խորհրդի նախագահ Ա.Շիրինյանը Արցախի Վարանդայի շրջանի զորահրամանատար Սուրատբեկ Մելիք-Շահնազարյանին գրել է, որ Ջանգեզուրի հայությունը որոշել է արցախցիներին «օգնության գալ...հերոսի առաջնորդությամբ... Մոտավորապես ութ օրեն կշարժվենք դեպի Ղարաբաղ»<sup>1</sup>:

1918 թ. նոյեմբերին Առաջին համաշխարհային պատերազմում պարտված թուրքերին Անդրկովկասում փոխարինեցին Մնտանտի ուժերը: Բաքու ժամանեց անգլիական զորքը՝ գեներալ Վ.Թոմսոնի հրամանատարությամբ, որը հռչակվեց Ադրբեջանի գեներալ-նահանգապետ: Մուսավաթական Ադրբեջանը հույս ուներ, որ անգլիացիների օգնությամբ Լեռնային Ղարաբաղը կբռնակցվի Ադրբեջանին: Նավթի բուրմունքից արբեցած անգլիացի հրամանատարը խոստացավ Լեռնային Ղարաբաղի հարցը լուծել հօգուտ Մուսավաթի: Եվ, չնայած զորավար Անդրանիկն այդ ամենին տեղյակ էր, շարունակում էր Լեռնային Ղարաբաղ մտնելու նախապատրաստական աշխատանքները: Ի վերջո, 1918 թ. նոյեմբերի 18-ին զորավար Անդրանիկը իր զորամասով շարժվեց դեպի Արցախ: Նա, ջախջախիչ հարված հասցնելով թուրք-մուսավաթական ուժերին, անցնում է Ջաբուխը և ճանապարհ բացում դեպի Շուշի: Բայց ահա այդ նույն օրը Ավդալար գյուղում (Բերձոր) նրան են հանձնում Բաքվից ստացված գեներալ Թոմսոնի հեռագիրը: Անդրանիկը ստիպված էր կատարել նրա պահանջը և ետ վերադառնալ Գորիս: Դա ծանր հարված էր արցախահայությանը: Չնայած Անդրանիկը չմտավ Արցախ, սակայն արցախցիների հետ նամակագրական կապը չէր կտրում:

Արցախցիները իրենց սիրելի զորավարին ուղարկած նամակներում ներկայացնում են հայ ժողովրդի մի հատվածի ինչպես հերոսությունը, այնպես էլ ողբերգությունը, իրենց հոգսերն

<sup>1</sup> Տես Արցախը կանչում էր Անդրանիկին. փաստաթղթեր, Երևան, 1995, փաստաթուղթ N 13, էջ 29:

ու ցավերը, նրան հանգամանորեն տեղյակ պահում անգլիական գաղութարարների ստորոբյուրների և մուսավաթական Աղրբեջանի նենգությունների մասին: Արցախցիները սիրելի զորավարի առաջ նաև բացում են երկրամասի ներքին հակասությունները: Նրանք հույս ունեին, որ սիրելի զորավարը մտնելով Շուշի, կարգի կբերի բոլոր գործերը:

1918 թ. դեկտեմբերի առաջին կեսին անգլիական հրամանատարության պահանջով գալով Շուշի՝ Դիզակի և Վարանդայի զորահրամանատարները, դեկտեմբերի 16-ին նամակ են հղում զորավարին և, հայտնելով իրենց դժգոհությունն անգլիական հրամանատարությունից, միևնույն ժամանակ նշում են, որ իրենք նպատակ ունեին Արցախում «ստեղծել անկախ Ղարաբաղի նահանգ և առանձին կառավարություն»<sup>2</sup>: Արցախի հրամանատարների լիազորների կողմից դեկտեմբերի 25-ին զորավարին ուղարկված նամակում հաղորդվում է, որ արցախցիները մերժել են անգլիական հրամանատարության պահանջը և «չեն ճանաչել Աղրբեջանի կառավարությունը», և համոզված էին, որ զորավարի «Այս կողմերն անցնելուց հետո այլևս Աղրբեջանի անունն չի կարող լինել»<sup>3</sup>: Դիզակի Խծաբերդ գյուղի զինվորական հրամանատար Ներսես Բաղդասարյանը դեկտեմբերի 27-ին զորավարին գրել է, թե Ավդալարից նրա հետ դառնալը «թուրքերին ավելի է ուժ տվել, որոնք սկսել են հարձակումներ գործել մեր գյուղի վրա», սակայն նրանց «հարձակումները մշտապես հետ են մղվել, և փախուստի են մատնվել»<sup>4</sup>:

Արցախի Վարանդայի հրամանատար Սոկրատբեկ Մելիք-Շահնազարյանի 1919 թ. հունվարի 2-ին զորավարին ուղարկած նամակում հաղորդվում էր, որ անգլիական միսիան, հավաքելով զորահրամանատարներին, փորձում էր համոզել թեքվել Աղրբեջանի կողմը: Այդ ժամանակ «ես առաջարկեցի, որ եթե Աղրբե-

<sup>2</sup> Նույն տեղում, փաստ. N 18, էջ 43:

<sup>3</sup> Նույն տեղում, փաստ. N 19, էջ 44:

<sup>4</sup> Նույն տեղում, փաստ. N 21, էջ 49:

ջանի անունը լինի անգամ մեր Ղարաբաղի հայերի շրջանում, ես պարզ կասեմ, որ անգլիացիները կարող են կոտրել մեր երկրի 300 հազար ժողովրդին: Նոքա իմացան, որ Աղրբեջանին մենք չենք ընդունել նույնիսկ տաճիկ զորքերի օրոք, քանի որ ես նրանց մեզ համար ամենամեղ թուպեին, ջարդել եմ»: Իսկ երբ ներկա գտնվող թուրքերը,- շարունակում է Սոկրատբեկը,- ասացին, թե իրենք քաղաքը վերցրել են, «նրանց կտրուկ պատասխանեցի, որ եթե մյուս անգամ թույլ կտաք այդպիսի առաջարկություն անել, ես երկու ժամում քաղաքից դուրս կշարտեն ձեզ», որից հետո միայն «ի վերջո անգլիացիները գրեցին թոմսոնին, որ Աղրբեջանի ճանաչումը չենք ուզում»<sup>5</sup>: Սոկրատբեկը հաջորդ նամակում հաղորդում է, որ նախորդ օրը մայր Գիրբոնն իրեն ասել է, թե «քաղաք է մտել Աղրբեջանը և գրավել», հետևապես ես պիտի «ճանաչեմ քաղաքի աղրբեջանական կառավարությունը»: Նա նաև ասել է, որ աղրբեջանական կառավարությունն աշխատողներին աշխատավարձ է տալիս և պետք է թույլ տա քաղաքը ղեկավարի Աղրբեջանը: Հաղորդում է, որ ինքը դեմ է գնացել դրան: Հետո խնդրում է չորս գնդացի և որքան հնարավոր է փամփուշտ<sup>6</sup>:

1919 թ. հունվարի 20-ին Հայ հեղափոխական դաշնակցության Շուշիի կազմակերպությունն Անդրանիկին գրել է. «Հերոսապետ Անդրանիկ: Երկար տարիների ընթացքում Ձեզ իր ծոցում զուրգուրող Հայ հեղափոխական դաշնակցությունը՝ հանձինս Ղարաբաղի կենտրոնական կոմիտեի, այսու դիմում է Ձեզ և կանչում Ղարաբաղ, հանուն վերջինիս 300 հազարանոց հայ ժողովրդի փրկության»: Ապա ասված է, որ անգլիացիների կատարած դերը Ղարաբաղի պատմության անիվն այս կամ այն կողմը շրջելու խնդրում օրեցօր դառնում է առեղծվածային ու խիստ կասկածելի. «Ինչպես դուք հայտարարել էիք անգլիական մայրին, թե թույլ չէք տա, որ 300 հազար հայություն ունե-

<sup>5</sup> Նույն տեղում, փաստ. N 23, էջ 50-51:

<sup>6</sup> Նույն տեղում, փաստ. N 25, էջ 56-57:



ցող Ղարաբաղը տնքա թուրք-թաթարական վայրենի Ադրբեջանի անտանելի լծի տակ, մենք և՛ Ղարաբաղի հայությունը, չենք կարող հանդուրժել մի երկու տասնյակ հազար թրքությանը հպատակությունը, մանավանդ, որ Սասնա արծիվը մեզնից հեռու չէ... Ղարաբաղի հայությունը կանչում է Ձեզ և Դուք պետք է գաք»<sup>7</sup>:

Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանը 1919 թ. հունվարի 28-ին Անդրանիկին հաղորդել է. «Այն օրվանից, երբ Ձեր քաջարի զորքերը եկան և բանակ դրին Ջանգեզուրի սահմաններում, Ղարաբաղի հայությունը մինչև վերջին ժամանակներս, թեև շրջապատված թշնամիների կուռ շղթայով, իր հույսը չէր կտրում և միշտ սպասում էր բազմաչարչար հայ ժողովրդի ալեգարդ հերոսապետի գալուստին»: Եվ ապա՝ «Գեներալ Թոմսոնի հեռագրի համաձայն ակամայից կանգ առաք Հաքարուի ափին, առաջ չանցաք, որից հետո Ղարաբաղը մնաց բախտի քմահաճույքին ենթակա»: Ազգային խորհրդի նախագահը զորավարին վստահեցնում էր, որ «Ղարաբաղի հայությունը այժմ ևս ավելի քան անհաշտ է տրամադրված դեպի ադրբեջանական խանությունը, որը ձգտում է տիրանալ մեր երկրին ու իր հայադավ կարգեր հաստատել այստեղ»: Ջորավարին մի անգամ ևս հիշեցնում է, որ «Ղարաբաղի հայ ժողովրդի միակ նպատակն է՝ երբեք և ոչ մի դեպքում գլուխ չխոնարհել, չենթարկվել Ադրբեջանին և միանալ հայության ընդհանուր կենտրոնին՝ Արարատյան Հանրապետությանը»<sup>8</sup>:

Արցախի սպայական շտաբի անդամների կողմից 1919 թ. փետրվարի 2-ին Անդրանիկին ուղարկած նամակում հաղորդվում էր, որ Ղարաբաղի հայ սպաները ստեղծել են մի կազմակերպություն, որը «նպատակ է դրել Ղարաբաղի բոլոր ջլատված և զատ-զատ գործող ուժերը համերաշխության բերել, վերջ տա-

<sup>7</sup> Նույն տեղը, փաստ. N 26, էջ 59-66:

<sup>8</sup> Նույն տեղում, փաստ. N 27, էջ 63-67:

լով բոլոր կուսակցական և անհատական տարածայնություններին»: Ջորավարին խոստանում էին ամեն կերպ պաշտպանել Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդին<sup>9</sup>: Հաջորդ օրը՝ փետրվարի 3-ին, դառնացած Սոկրատեկը զորավարին հաղորդում է, որ գտնվում են ծանր վիճակում: Հետո սուր խոսքեր է ուղղում նրանց, ովքեր փորձում են դավաճանաբար երկիրը հանձնել թուրք-ադրբեջանցիներին: Հաղորդում է, որ թուրքերը 200 ծիավոր-ասկյարներ են մտցրել Խանքենդի ու շարժվում են դեպի Ջանգեզուր՝ զորավարի ճանապարհը փակելու համար: Եւ գրում էր. «Ես անգլիացիներին կտրուկ եմ պատասխանել, որ Ադրբեջանին չենք ընդունի, եթե անգամ բրիտանական կառավարությունը հրամայի»<sup>10</sup>: Այդ նույն փետրվարի 3-ին Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանը զորավարին ուղարկած նոր նամակում պատմում է, որ անգլիացիների հովանավորությամբ Լեռնային Ղարաբաղ մտած թուրքերը ոչ մի ստորության առաջ կանգ չեն առնում: Թուրքերը համարձակ էին դարձել, որովհետև այստեղ լուր է տարածվել, թե, իբրև, պատրաստվում է հեռանալ Ջանգեզուրից, որը «աղետաբեր ու կորստաբեր հետևանք է ունենալու համայն Ղարաբաղի համար: Եթե մեր ժողովուրդը իմանա, որ Դուք հեռանում եք, նա միանգամայն պիտի հուսահատվի և կորցնի իր գլուխը»: Ապա հաղորդում է, որ Արցախը «ամենայն սիրով և հոգով պատրաստ է իր ծոցում տեղ տալու անզուգական Սերոբ փաշայի ամենաարժանավոր և հարազատ հաջորդին՝ Չերդ գերագանցությանը»: Վերջում մի անգամ ևս վստահեցնում է. «Մեր ժողովուրդը միայն ու միայն Ձեզ է ցանկանում և Դուք պետք է լինեք նրանց փրկողը կրիտիկական այս ծանր կացությունից»<sup>11</sup>:

1919 թ. փետրվարի 8-ին զորավար Անդրանիկը, պատասխանելով Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդին, սպայական

<sup>9</sup> Նույն տեղում, փաստ. N 28, էջ 70-71:

<sup>10</sup> Նույն տեղում, փաստ. N 30, էջ 77:

<sup>11</sup> Նույն տեղում, փաստ. N 31, էջ 81:

միությանը, Հայ հեղափոխական դաշնակցության Արցախի կոմիտեին, Սոկրատեկին ու մյուս հեղինակներին, կոչ է անում վերջ տալ բոլոր անհամաձայնություններին, գործել համերաշխ, Ազգային խորհուրդը դարձնել իրական իշխանություն: Ջորափարը Ղարաբաղն Ադրբեջանին ենթարկվելու հարցը թողնում է արցախցիների որոշմանը: Ապա հաղորդում է, որ ինքը մի քանի օրից հետո գնում է Սիսիան և ավելի առաջ: Խոստանում է Արցախին թողնել 2 գնդացի և 50000 փամփուշտ<sup>12</sup>:

Փետրվարի 10-ին Ազգային խորհուրդը զորավարին հաղորդել է, որ այդ օրը Շուշի է մտել գեներալ-նահանգապետ Խոսրովբեկ Սուլթանովը, որը անգլիացիների սարքածն է: Վիճակը խիստ լրջացել է: Հայաստանի Հանրապետությունը «հանցավոր լռություն է պահպանում»<sup>13</sup>:

Անգլիացիների դիրքորոշումը մերկացվում է Ղազնակցության Շուշիի շրջանային կոմիտեի կողմից փետրվարի 26-ին գորավարին ուղարկված նոր նամակում:

Արցախցիները շատ էին մտահոգված զորավար Անդրանիկի կյանքի համար<sup>14</sup>: Արցախում տարածվել էր այն լուրը, թե Անդրանիկն իր զորամասով պիտի թիֆլիս գնա Շուշի-Եվլախ ճանապարհով: Այդ լուրը խիստ անհանգստացրել էր արցախցիներին: Նրանք իրենց նամակներում խնդրում էին նման սխալ չանել: Նրան տեղյակ էին պահում, որ թուրք-մուսավաթականներն ուժեր են կուտակել Աղդամ-Եվլախ ճանապարհին՝ այնտեղ զորավարի ուժերը ոչնչացնելու համար: Բացի այդ՝ խնդրում էին չմոռանալ Արցախը և հոգալ նրա մասին:

<sup>12</sup> Նույն տեղում, փաստ. N 33, էջ 84-85:

<sup>13</sup> Նույն տեղում, փաստ. N 34, էջ 88:

<sup>14</sup> Նույն տեղում, փաստ. N 36, էջ 91-102:

### ԱՆԴՐԱՆԻԿԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱԿԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԳԱՂԹԻ ԽՆԴԻՐԸ 1919 Թ. ԱՊՐԻԼԻՆ

Կովկասում բրիտանական հրամանատարության համաձայնությամբ և վերջինիս ներկայացուցիչ, մայոր Գիբոնի ուղեկցությամբ զորավար Անդրանիկը՝ Հայկական առանձին հարվածող զորամասի զլխավորությամբ, 1919 թ. մարտի վերջին-ապրիլի սկզբին Սյունիքի Գորիս քաղաքից շարժվեց դեպի Էջմիածին<sup>1</sup> այդ մասին հայտնելով Գևորգ V կաթողիկոսին և Էջմիածնի գավառի կոմիսարին<sup>2</sup>: Ջորավար Անդրանիկի այդ տեղաշարժը համընկել է գաղթականների, այդ թվում արևմտահայ փախստականների հայրենի բնակավայրեր վերադառնալու շուրջ Հայաստանի Հանրապետության (1918-1920 թթ.) կառավարության և Կովկասում բրիտանական հրամանատարության բանակցային գործընթացի ակտիվացման հետ: 1919 թ. մարտի վերջին և ապրիլի առաջին կեսին Կարսի և Շարուր-Նախիջևանի արևելահայ և արևմտահայ փախստականների հայրենի բնակավայրեր վերադառնալու խնդիրների շուրջ կայացած հայ-բրիտանական բանակցություններում գաղթականների տունդարձի հարցերը տեսական բնույթի հարցադրումներից վերածվել են համատեղ հետաքրքրություն ներկայացնող քննարկման առարկայի՝ վերադառնալու հետ հանգելով գործնական լուծումների՝ համատեղ ձեռնարկումների մասին կոնկրետ պայմանավորվածությունների:

Բանակցություններում իրավիճակի նման փոփոխությունը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ բրիտանական հրամանատարությունը, ծրագրավորելով մոտակա ժամանակահատվածում դուրս բերել իր զորամասերը Կովկասից, ձեռնարկել է կոնկրետ և գործնական-ռազմաքաղաքական ու դիվանագիտա-

<sup>1</sup> Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Երևան, 1996, էջ 553-563:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 13, թ. 15:

կան քայլեր տարածաշրջանում կայունություն հաստատելու ու ապահովելու ուղղությամբ: Այդ քայլերից առաջնայինը եղել է վիճելի տարածքներում իշխանության հանձնելը Այսրկովկասյան երեք հանրապետություններից որևիցե մեկին: Միաժամանակ, որոշակի լուծումներ է տրվել նրանց միջև գոյություն ունեցող սահմանային վեճերին: Այսրկովկասյան հանրապետությունների կողմից այս կամ այն խնդիրների լուծումների վերաբերյալ առանձին կամ երկուստեք արտահայտված առարկություններն ու բողոքները բրիտանական հրամանատարությունը, որպես կանոն, չի ընդունել՝ վիճելի հարցերի վերջնական լուծումները թողնելով Փարիզի վեհաժողովին:

Կովկասում բրիտանական հրամանատարության վերը նշված քաղաքականության իրագործման արգասիքն է հանդիսացել Կարսում և Շարուր-Նախիջևանում Հայաստանի Հանրապետության իշխանությունը հաստատելու և արևելահայ գաղթականների հայրենի բնակավայրեր վերադառնալու, ինչպես նաև Ղարաբաղի կառավարումն Ադրբեջանին հանձնելու մասին որոշումները, որոնց մասին 1919 թ. ապրիլի 4-ից 11-ը Թիֆլիս կատարած այցելության ժամանակ տեղեկացվել է ՀՀ վարչապետի պաշտոնակատար, ներքին գործերի նախարար Ա. Խատիսյանը<sup>3</sup>: Ակներև է, որ զորավար Անդրանիկի և իր զորամասի հետ միասին Ջանգեզուրից Հայաստանի Հանրապետության կենտրոնական տարածաշրջան տեղափոխելը նույնպես կատարվել է Կովկասում բրիտանական հրամանատարության այդ քաղաքականության շրջանակներում և ուղղված է եղել բրիտանական հրամանատարության Ղարաբաղի մասին որոշման անխափան իրականացմանը և Ղարաբաղի ու Ջանգեզուրի տարածաշրջանում ռազմաքաղաքական կայունության ապահովմանը:

ՀՀ կառավարության և բրիտանական հրամանատարության միջև ընթացող բանակցային գործընթացում մտտեցումների

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 32, ք. 90-91 հալ., 163-164 հալ.:

փոփոխման, ինչպես նաև Արևմտահայաստանի սահմանային շրջաններում Հայաստանի առաջին հանրապետության իշխանությունը հաստատելու հանգամանքը, ՀՀ կառավարության մոտ իրատեսական ակնկալիքներ է առաջացրել բրիտանական հրամանատարության հետ բանակցություններում արևմտահայ փախստականների հայրենիք վերադառնալու հարցին անմիջական և կոնկրետ լուծումներ տալու առումով: Առաջին աշխարհամարտում Համաձայնության պետությունների հաղթանակից հետո արևմտահայ փախստականների հայրենիք վերադառնալու կամ, ինչպես իրենք՝ արևմտահայերն են անվանել՝ ներգաղթի<sup>4</sup> խնդիրը Հայաստանի առաջին հանրապետության համար հանդիսացել է առաջնահերթ ու անհետաձգելի լուծումներ պահանջող արտաքին քաղաքական հարց<sup>5</sup>: Կովկասում բրիտանական հրամանատարության հետ բանակցություններում արևելահայ գաղթականներին իրենց հայրենի բնակավայրեր տեղափոխելու հարցերի հետ միասին ՀՀ կառավարությունը մշտապես դրել է նաև արևմտահայ փախստականների հայրենադարձության հարցը: Կարսը և Շարուր-Նախիջևանը Հայաստանի իշխանությանը հանձնելուց հետո հասնելով Արևմտյան Հայաստանի սահմաններին ՀՀ կառավարությունը հնարավորություն է ստացել բրիտանական հրամանատարության հետ բանակցություններում արևմտահայերի տունդարձի հետ կապված հարցերն արդեն իսկ դնել գործնական հողի վրա: Ընդ որում, ՀՀ կառավարությունն արևմտահայերի ներգաղթի խնդիրը համարել է «պետության ներքին գործ»<sup>6</sup>: Այսինքն՝ այն պետք է իրագործվեր հանրապետական իշխանությունների կողմից՝ բրիտանական զինված ուժերի անմիջական մասնակցությամբ:

<sup>4</sup> Համառոտ Տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի եւ կազմակերպիչ կոմիտեի հաշիւը, Թիֆլիս, 1919, էջ 4, 12:

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 145, ք. 16-17:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, ք. 45:

1919 թ. մարտի վերջին Կովկասում բրիտանական զորքերի նորանշանակ գլխավոր հրամանատար, գեներալ Թոմսոնի հետ երևանում կայանալիք խորհրդակցության համար ՀՀ կառավարության կողմից կանխավ պատրաստված հուշագրի քաղաքական 7 «ցանկություններից» վեցերորդը ձևակերպված է եղել հետևյալ կերպ. «Թուրքահայերի հայրենիք վերադարձի պլանաչափ կազմակերպում»<sup>7</sup>: Միաժամանակ, այդ փաստաթղթի չորրորդ կետում արևմտահայ փախստականների՝ Ալաշկերտ և Վան վերադարձի կազմակերպման հետ կապված նշվել է մահմեդական զինված խմբերից Սուրմալուն մաքրագործելու և Կողբում ու Արալխում զինված հենակետեր տեղադրելու հարցերի առաջնահերթ լուծման անհրաժեշտությունը<sup>8</sup>:

1919 թ. մարտի 28-ին գեներալ Թոմսոնի հետ տեղի ունեցած բանակցությունների ժամանակ Ա. Խատիսյանը դրել է Սուրմալուի մահմեդական խմբերի հարցը, որոնք կարող էին արգելք հանդիսանալ արևմտահայ փախստականների հայրենիք վերադարձին<sup>9</sup>: Ասելով, որ ՀՀ կառավարության կողմից բարձրացված այդ հարցին նա վերջնական պատասխան կտա մի քանի օր հետո, գեներալ Թոմսոնը նշել է, որ «այստեղ մենք ամեն բանում Ձեզ նեցուկ կհանդիսանանք: Դուք կարող եք զրավել կարևոր հենակետերը»: Միաժամանակ, նա ափսոսանք է հայտնել, որ «անհնար է միանգամից լուծել փախստականների վերադառնալու հարցը»<sup>10</sup>: 1919 թ. ապրիլի 1-ին ՀՀ կառավարությունը լսել է «մարտի 28-ին գեներալ Տոմսոնի հետ ունեցած խորհրդակցության հետ կապված մի քանի հարցերի մասին» ՀՀ վարչապետի զեկուցումը: Չեկուցման մեջ առանձնացվել է «Ղարս, Նախիջևան և Տաճկահայաստան» գաղթականների վերադարձի հարցը: Քննարկման արդյունքում ՀՀ կառավարությունը որոշել է հանձ-

<sup>7</sup> Նույն տեղում, գ. 32, թ. 123, նույնը՝ գ. 23, մաս 1, թ. 141:

<sup>8</sup> Նույն տեղերում:

<sup>9</sup> Նույն տեղում, գ. 23, մաս 1, թ. 144:

<sup>10</sup> Նույն տեղում:

նարարել արտաքին զործերի նախարարին՝ «Թիֆլիսի մեր դիվանագիտական Միսիայի միջոցով դիմել Անգլիական հրամանատարությանը՝ հարցին շուտ լուծում տալու համար»<sup>11</sup>:

1919 թ. ապրիլի 6-ից 8-ը Թիֆլիսում տեղի է ունեցել ՀՀ վարչապետի պաշտոնակատար, ներքին զործերի նախարար Ա. Խատիսյանի և Կովկասում բրիտանական հրամանատարության միջև բանակցությունների հաջորդ փուլը: Այստեղ Արևմտյան Հայաստան փախստականների վերադառնալու հարցը եղել է բանակցությունների օրակարգի հիմնական երեք հարցերից մեկը<sup>12</sup>: Այս հարցի հետ կապված գեներալ Թոմսոնը հայտարարել է, որ ներկայումս արևմտահայ փախստականների հայրենիք վերադառնալը հնարավոր չէ, քանի որ, մի կողմից, անհնարին է ապահովել ներգաղթյալների անվտանգությունը շարժի ժամանակ: Մյուս կողմից, այդ հարցի լուծումը կապվել է Մերձավոր Արևելքում բրիտանական ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ Միլնի Այսրկովկաս նախատեսվող այցի հետ: Գեներալ Թոմսոնի ապրիլի 6-ի նամակում ասվել է, որ «նրանք, ովքեր կանցնեն հին ռուսական սահմանը՝ դեպի Թուրքահայաստան, կանեն դա սեփական ռիսկով. ես նրանց որևէ պաշտպանություն չեմ կարող տալ»<sup>13</sup>: Հասկանալի է, որ նման մոտեցումն առաջնահերթ կապված է եղել Արևմտյան Հայաստան փախստականների վերադառնալու հետ կապված Համաձայնության պետությունների քաղաքական որոշման բացակայության, ինչպես նաև բրիտանական զինված ուժերը Կովկասից դուրս բերելու հանգամանքի հետ: Գեներալ Թոմսոնի հետ Ա. Խատիսյանի վերջին հանդիպման ժամանակ՝ գեներալը «բոլոր թուրքահայերի վերադարձը» ևս մեկ անգամ կապելով գեներալ Միլնի Այսրկովկաս այցի հետ, մատնանշել է «Կարսի, Նախիջևանի գրավման գործողությունների

<sup>11</sup> Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., Երևան, 2014, էջ 144-145:

<sup>12</sup> ՀԱԱ, 199, գ. 1, գ. 32, թ. 90:

<sup>13</sup> Նույն տեղում, թ. 86:

պլանի իրականացման անհրաժեշտությունը որպես Հայաստանի<sup>14</sup> ստեղծման հերթական քայլեր»<sup>15</sup>:

Միաժամանակ, Կովկասում բրիտանական հրամանատարության քաղաքական մասի ղեկավար գեներալ Բիչի հետ առանձնազրույցի ընթացքում խոսակցությունը գնացել է Հայաստանի հետ կապված մի քանի հարցերի շուրջ: Այստեղ Արևմտյան Հայաստան փախստականների վերադարձի մասին հարցի հետ միասին քննարկվել են ներգաղթից հետո Հայաստանի քաղաքական կառավարման համակարգը կազմակերպելու, նրանում ընդգրկվելիք տարածքների և սահմանների, հարևան երկրների և տերությունների նկատմամբ քաղաքական կողմնորոշումների հարցերը, ինչպես նաև «Երևանյան կառավարության» կողմից առանց հապաղելու Թուրքահայաստանի կառավարումն ընդունելու հնարավորության, ՀՀ նկատմամբ արևմտահայերի վերաբերմունքի և խորհրդարանում նրանց ներկայության ձևի մասին հարցերը: Արևմտահայաստան փախստականների վերադարձի հարցի քննարկման ժամանակ գեներալ Բիչը մատնանշել է նոր մարզերը ընդհանրապես արագ գրավելու անհրաժեշտությունը, այնուհետև խորհուրդ տվել ավելացնել Հայաստանի բանակի թվաքանակը<sup>16</sup>:

Ինչպես տեսնում ենք, 1919 թ. մարտի վերջին և ապրիլի առաջին կեսին ՀՀ կառավարության և Կովկասում բրիտանական հրամանատարության միջև Արևմտյան Հայաստան ներգաղթի հարցի շուրջ կայացած բանակցություններում առաջնահերթ դրվել է արևմտահայ փախստականների հայրենի բնակավայրեր վերադառնալու և վերադարձող գաղթականների անվտանգության ապահովման համար հայկական և բրիտանական զորամասերով արևմտահայ փախստականներին ուղեկցելու անհրաժեշտության հարցերը: Սակայն, վերջին հանգամանքի հետ կապ-

<sup>14</sup> Խոսքը Միացյալ և Անկախ Հայաստանի մասին է:

<sup>15</sup> ՀԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 32, ք. 164:

<sup>16</sup> Խույն տեղում, ք. 90 հակ., 164:

ված, Կովկասում բրիտանական հրամանատարության կողմից անընդհատ նշվել է Արևմտյան Հայաստան ներգաղթին իրենց զինված ուժերի անմիջական մասնակցության անհնարինությունը: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության զինված ուժերը չունեին ներգաղթի համար անհրաժեշտ քանակի զինվորական ուժեր, իսկ արևմտահայերի կանոնավոր զորամասերի կազմավորման գործընթացը դեռևս չէր սկսվել<sup>17</sup>:

Ստեղծված իրավիճակում Արևմտյան Հայաստան վերադարձող փախստականներին ուղեկցելու համար կանոնավոր զորամասերի խնդրի լավագույն լուծումը կլիներ ճախատեսվող ներգաղթին Հարվածող զորամասի հետ միասին զորավար Անդրանիկի անմիջական մասնակցությունը: Անժխտելի է, որ համազային կարևորություն ունեցող այդպիսի խնդրի լուծման գործում զորավար Անդրանիկը միանշանակ ի վիճակի է եղել ոչ միայն միավորելու և ղեկավարելու արևմտահայ և արևելահայ զինական ուժերը, այլև, որպես ժողովրդի կողմից սիրված և հարգված ազգային-քաղաքական գործիչ, ի գորու է եղել իր շուրջը համախմբելու ինչպես արևմտահայ փախստականներին, այնպես էլ հայ ժողովրդի արևելահայ հատվածին: Ջորավար Անդրանիկի այդ կարողությունները դրսևորվել է 1918-1919 թթ. նրա զանգեզուրյան ողջ գործունեության ժամանակ, որի արգասիքն է եղել համաժողովրդական սերն ու վստահությունը նրա նկատմամբ: Այդ վերաբերմունքը ցայտուն արտահայտվել է Միսիանի և բուն Ջանգեզուրի համազումարի ընդունած որոշումը. «Ի նկատի ունենալով, որ այլևս ուշ և անհնարին է գեներալ-մայոր Անդրանիկին պահել Ջանգեզուրում և ինքը հեռանում է մեր երկրից, մի յատուկ պատգամաւորութեամբ բարի երթ մաղթել նրան»<sup>18</sup>:

Ջորավար Անդրանիկի հանդեպ ժողովրդի կողմից արտահայտված վստահության վառ վկայությունն է հանդիսացել այն փաստը, որ 1919 թ. փետրվարին Ջանգեզուրի մի քանի գյուղերի

<sup>17</sup> Խույն տեղում, գ. 55, ք. 9:

<sup>18</sup> ՀԱԱ, ֆ. 201, գ. 1, գ. 41, ք. 40:

մեծաքանակ բնակիչներ՝ լսելով, որ զորավար Անդրանիկը գաղթականության հետ նախատեսել է անցնել Արևմտյան Հայաստան, խնդրագրերով դիմել են զորավարին՝ հայտնելով ընտանիքներով հանդերձ ներգաղթին մասնակցելու վերաբերյալ իրենց պատրաստակամության մասին<sup>19</sup>: Այդպիսի վստահության օրինակներից է նաև այն փաստը, որ իրենց զինյալներով Սասունի գնդի հրամանատարներ Մանուկը, Սուշեղը և Կարապետը, որոնք ժամանակին բաժանվել էին Հարվածող զորամասից և հեռացել Ջանգեզուրից, նորից միացել էին Էջմիածին շարժվող զորավար Անդրանիկին<sup>20</sup>: Միաժամանակ, այդ փաստերը վկայում են, որ հայ ժողովրդի արևմտահայ և արևելահայ հատվածների մոտ եղել է որոշակի համոզվածություն, որ զորավար Անդրանիկը նպատակադրված է եղել իր զորամասի ուղեկցությամբ գաղթականությանը տեղափոխել Արևմտյան Հայաստան:

Արևմտյան Հայաստան ներգաղթի հետ կապված գործընթացներում Անդրանիկին ներգրավելու հարցում առաջին հերթին շահագրգռված է եղել ՀՀ կառավարությունը: Այդ հարցը լուծելու համար կառավարությանը նախապես անհրաժեշտ է եղել դիմել որոշակի քայլերի՝ փորձելով հաղթահարել վերջին մեկ տարվա ընթացքում զորավար Անդրանիկի և Հայաստանի Հանրապետության իշխանությունների միջև փոխհարաբերություններում առաջացած տարածայնությունները և հարթել միմյանց նկատմամբ կուտակված դժգոհությունները: Այդ քաղաքական գիծն առաջ է տարել ՀՀ վարչապետի պաշտոնակատար, ներքին գործերի նախարար Ա. Խատիսյանը: Հատկանշական է, որ զորավար Անդրանիկին ՀՀ կառավարության հետ հաշտեցնելու քայլին Ա. Խատիսյանը դիմել է դեռևս 1918 թ. դեկտեմբերին: Ջորավար Անդրանիկին ուղղված նամակում Ա. Խատիսյանը հայտնել էր իր ցանկությունը՝ ՀՀ կառավարության և զորավարի միջև հարաբերությունները

կարգավորելու մասին: Սակայն Անդրանիկը պատասխան նամակում մերժել էր Ա. Խատիսյանի առաջարկը<sup>21</sup>:

Այնուամենայնիվ, ՀՀ կառավարությունը որդեգրել էր ներգաղթին զորավար Անդրանիկին ներգրավելու Ա. Խատիսյանի քաղաքականությունը և առաջինն է զննցել նրան ընդառաջ՝ այդ ուղղությամբ ձեռնարկելով համապատասխան քայլեր: 1919 թ. ապրիլի 9-ին ՀՀ կառավարությունը, լսելով ներքին գործերի նախարարի տեղակալ Ս. Մանասյանի «Անդրանիկի երևան ժամանելու մասին» զեկուցումը, որոշել է մայրաքաղաքում «պատշաճ պատվով» ընդունել Անդրանիկին, իսկ իր զորամասի վերաբերյալ «խորհրդակցել զինվորական վարչության հետ՝ համակերպելով զորքի տրամադրության հետ»<sup>22</sup>: Ակներև է, որ նման որոշման դրդապատճառներից առաջնայինը եղել է Արևմտյան Հայաստան ներգաղթի խնդրի արդյունավետ լուծման հրատապությունը: Միաժամանակ անտարակույս է, որ մայրաքաղաք Երևանում Անդրանիկի և իր զորամասի հանդիսավոր ընդունելությունը մեծապես կբարձրացներ հանրապետության իշխանությունների վարկանիշը ինչպես հանրապետությունում ապաստանած արևմտահայ փախստականների, այնպես էլ նրա սահմաններից դուրս գտնվող արևմտահայության մոտ:

Ջորավար Անդրանիկի և ՀՀ կառավարության միջև խախտված հարաբերությունները վերականգնելու և տարածայնությունները կարգավորելու նպատակով միջնորդական առաքելությամբ Արարատյան դաշտավայրի սահմանային Դավալու է ժամանել Հայաստանի Հանրապետության ռազմական նախարարի օգնական Դրոն (Դրաստամատ Կանայանը)՝ բարձրաստիճան զինվորականներից և քաղաքացիական պաշտոնյաներից կազմված մի պատկառելի պատվիրակության հետ: Սակայն զորավար Անդրա-

<sup>19</sup> ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 53, թ. 25-26:

<sup>20</sup> Սիմոնյան Գ., Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, էջ 562:

<sup>21</sup> Андраник Озаян, Документы и материалы, „Вестник архивов Армении“, Ереван, 1991, N 1-2.

<sup>22</sup> Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 152:

նիկի և Դրոյի միջև Դավալուի կայարանում ոտքի վրա կայացած կարճատև առանձնագրույցը չի հանգեցրել իշխանությունների համար դրական արդյունքի: Չորավար Անդրանիկը Երևանի փոխարեն էջմիածին գնալու մասին իր որոշումը թողել է անփոփոխ<sup>23</sup>: Միանշանակ է, որ փոխհարաբերությունները կարգավորելու նպատակ է հետապնդել նաև ԶԶ կառավարության միջնատր-նախագահի պաշտոնակատար, ներքին գործերի նախարար Ա. Խատիսյանի այցելությունը էջմիածին՝ զորավար Անդրանիկին<sup>24</sup>: 1919 թ. ապրիլի 18-ին «Վան-Տոսպ» արևմտահայ թերթի լրագրողին տված հարցազրույցում զորավար Անդրանիկն այդ հանդիպումների մասին ասել է, որ «երեկի գիս հալածող կառավարությունը, այսօր Խատիսյաններու և Դրօներու միջնորդութեամբ կուզեն վերականգնել իսպառ խախտված մեր հարաբերությունները, բայց ամեն հնարավորություն վերցված է այլևս և ինձ համար անընդունելի է չճանչցածս կառավարության մը մայրաքաղաքը մտնել և ստեղծել հարաբերություններ նույն կառավարության հետ»<sup>25</sup>:

Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևան այցելությունը և «պատշաճ պատվով» ընդունելությունը կարող էր դիտվել որպես ԶԶ կառավարության հետ հարաբերությունները կարգավորման ուղղությամբ առաջին քայլերից մեկը: ԶԶ կառավարության հետ հարաբերությունների կարգավորման անհնարինությունն Անդրանիկը բացատրել է «Երևանյան հայկական կառավարության հանդեպ» իր քաղաքական դիրքորոշումով: «Ամբողջ կյանքս անցուցած եմ կռիվներու և պայքարներու մեջ, և այդ այն պատճառով, որ մեր դատը մի օր բարեհաջող ելք ունենար, ամենեւն շատ ցանկացողը ես եմ եղած հայկական կառավարություն մը ստեղծումին, բայց երբ խոսքը կը վերաբերի Երևան-

<sup>23</sup> Միմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, էջ 562:

<sup>24</sup> «Հայկական Առանձին Հարուածող Չորամասը. Ժներալ Անդրանիկ», Պոսթոն, 1921, էջ 213-214:

<sup>25</sup> «Վան-Տոսպ», Երևան, 28 ապրիլի 1919 թ., N 5:

յան հանրապետության ես պիտի ըսեմ, որ այդ հանրապետությունն ու կառավարությունը միանգամայն անընդունելի են ինձ համար,- ասել է «Վան-Տոսպի» լրագրողին զորավար Անդրանիկը,- Հանրապետություն մը որ իբրև շնորհք տրված է մեզի բարբարոս թուրք կառավարության կողմե, այն կառավարության, որ հինգ ամբողջ դար շարունակ օղակի պես շրջապատելով ամբողջ հայությունը իր բնի մեջ խեղդած էր զայն և այս վերջին դեպքերը իր անօրինակ վանդալիզմի վերջին ահռելի տեսարանը պիտի կազմեին, կը կրկնեմ որ այդպիսի կառավարության մը կողմեն ստեղծված հանրապետություն մը ընդունելի է ոչ մեկ հայու համար»<sup>26</sup>: Հատկանշական է, որ զորավար Անդրանիկի այդ քաղաքական դիրքորոշումը փոփոխման չի ենթարկվել 1918 թ. հունիսից, երբ կտրականապես մերժելով Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից ստորագրված Բաթումի պայմանագիրը<sup>27</sup>, Օսմանյան կայսրության հետ կնքած հաշտությունը նա «վիրավորական» է համարել «ամեն հայասեր և հեղափոխական մարդու համար»<sup>28</sup>:

Անդրանիկը ներկայացրել է նաև իր դժգոհությունները ԶԶ կառավարությունից ասելով, որ այդ «իբր թե հայկական կառավարությունը» «ոչ մի ջանք չխնայեց ամեն կերպ արգելք հանդիսանալու իմ ամեն մեկ շարժման, ուզեց Հայաստանի սահմաններն դուրս վտարել գիս, ուզեց պառակտել իմ բանակս զանազան ու պատիր միջոցներով, Ղամարլուի ուղղությամբ ինձի միանալու խոսք տվող Վանսկի պոլկը [Վանի 3-րդ գունդ - 4.Հ.] ինչ էնթրիկներով ետ կեցուց այդ միանալու փորձեն – ձեզի բոլորիդ ծանոթ են, և այդ այնպիսի ժամանակ մը, երբ թյուրքը իր կամքը մեզ թելադրել է հետո, կսպառնար իսպառ բնաջնջել հայությունը, դարձյալ կը կրկնեմ, որ այդպիսի անհարազատ կառավարության մը ծառսը բոլոր մարդմե ուղղորդեալաբարեւոյն մտիւնալուապազելն

<sup>26</sup> Նույն տեղում:

<sup>27</sup> «Հորիզոն», 18 դեկտեմբերի 1918 թ.:

<sup>28</sup> «Աշխատանք», 22 հունվարի 1919 թ.:

զոյությունը ինձի համար անընդունելի է»<sup>29</sup>: Այնուհետև նա շարունակել է նշելով, թե «այդ Ձեր կառավարությունը, որ մինչև այսօր ալ Ղարաբաղն և Ջանգեզուրը իր տերիտորիայի մասը կը հաշվեն, և թերևս կը մտածեն հակառակ պարագային զենքի ուժի դիմել՝ օր մը մտաբերեց արդյոք Ղարաբաղն և Ջանգեզուրը պաշտպանող բանակի մասին, օր մը մտածեց այդ բանակի պարենավորման և ռազմամթերքի մասին: Բանակեն զատ Ձեր հանրապետությունը երբ հետաքրքրեցավ Ղարաբաղի ու Ջանգեզուրի բազմահազար զաղթականութեան մասին, չէ որ անոնք ալ հայեր էին և Ջանգեզուրն ու Ղարաբաղն ալ Հայաստանի մասը կը կազմեին, բարեհաճեցավ միայն մի անգամ 50 000 ռ. դրկել, այն ալ տեղը հասնելէ հետո կեսեն ավելին պաշտոնյաներուն և դիվանական ծախսերուն հատկացվեցավ, իսկ այդ 25-30 000 զաղթականությունը մինչև այսօր ապրած է մեր հայթայթած սուղ միջոցներով, և դեռ ֆունդ 1 ռ. 20 կոպեկեն ավելիով հաց չէ կերած: Մի կառավարություն, որ այդքան անհոգ է իր ժողովրդի մասին և ընդհակառակն կը քաջալերեն գողերն ու ավազակները, ապա ես դարձյալ կը կրկնեմ, որ այդպիսի ավազակներու կառավարություն մը չունի ինձ համար»<sup>30</sup>:

Անդրանիկը Հայաստանի առաջին հանրապետության իշխանություններին ներկայացրել է նաև հատվածական բնույթի մեղադրանք՝ առաջարկելով չմոռանալ, «որ երեկվա խնամակալներն են դարձյալ, որ այսօր կուզեն թուրքահայությունը ենթարկել իրենց, չիրաժարվելով իրենց տիրապետողի և խնամակալի տենչերեն»<sup>31</sup>: Արևելահայ հասարակական-քաղաքական ղեկավար գործիչների նկատմամբ այդպիսի բնութագրություններ առաջին անգամ բարձրացվել էր դեռևս 1917 թ. մայիսին՝ Արևմտահայ 1-ին համագումարում: Համագումարի նախօրյակին միջհատվածական փոխհարաբերություններում տեղ գտած

<sup>29</sup> «Վան-Տոսպ», Երևան, 28 ապրիլի 1919 թ., N 5:  
<sup>30</sup> Տե՛ս նույն տեղում:  
<sup>31</sup> Տե՛ս նույն տեղում:

անվստահությանը համագումարից հետո գումարվել էր անհանդուրժողականությունը և անբարյացակամ վերաբերմունքը՝ դրանից բխող սառնությունը, խորթությունն ու անտարբերությունը<sup>32</sup>:

Մերժելով Հայաստանի առաջին հանրապետության ճանաչումը, բազմաթիվ մեղադրանքներ ներկայացնելով հանրապետության իշխանություններին, արդյունքում անընդունելի համարելով պետական-քաղաքական և զինվորական իշխանությունների ներկայացուցիչներ Ա. Խատիսյանի և Դրոյի միջնորդությունները, զորավար Անդրանիկը հույսը կապել էր այն հանգամանքի հետ, որ ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակում բրիտանական հրամանատարությունը շահագրգռված կլինի պահպանել Հարվածող զորամասը: Սակայն 1919 թ. ապրիլի 15-ին էջմիածին ժամանած մայրո Գիբոնը միայն դատարկածեռն չէր վերադարձել Թիֆլիսից՝ չբերելով զորամասի առաջնահերթ կարիքները հոգալու համար անհրաժեշտ դրամական միջոցներ: Նա միայն բերել էր զորամասը՝ զորանոցային պայմաններում Սուրմալուում տեղակայելու մասին բրիտանական հրամանատարության առաջարկը, որից հետո կտրամադրվի զորամասի պահպանման համար անհրաժեշտ միջոցներ: Մինչդեռ, Անդրանիկը նպատակ է ունեցել իր զորամասով մտնել Արևմտյան Հայաստան՝ իր հետ տանելով արևմտահայ փախստականներին: Իհարկե, այդ ծրագիրը պետք է իրականացվեր Հայաստանի առաջին հանրապետության կառավարությունից անկախ՝ բրիտանական հրամանատարության համաձայնությամբ և անմիջական ղեկավարությամբ: Անդրանիկի այդ ծրագրի վերաբերյալ բրիտանական հրամանատարության մոտեցումը ճշտելու համար մայրո Գիբոնը նորից է մեկնել Թիֆլիս<sup>33</sup>:

<sup>32</sup> Հայրապետյան Կ., Հատվածականության դրսևորումները Արևմտահայ առաջին համագումարում, «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), ԵՊՀ, Երևան, 2013, էջ 82-93:  
<sup>33</sup> «Հայկական Առանձին Հարվածող Ձորամասը. ժեներալ Անդրանիկ», էջ 213:



Ներգաղթի իրագործման և դրա համար «թյուրքահայ առանձին զորամաս կազմելու մասին» իր այդ օրերի տեսակետը և մոտեցումները Անդրանիկը նեկայացրել է վերը հիշատակված հարցազրույցում՝ առաջնահերթ նշելով, որ այն «շատ բարդ և պատասխանատու գործ է և չպետք է թեթևամտորեն մոտիկանալ»<sup>34</sup>: «Եիշտ է որ մեր ժողովրդի համար կենսական խնդիր մըն է ներգաղթ սկսելը և քանի մենք ուշանանք, այնչափ ավելի ստիպված ենք վտանգել մեր ժողովրդի ֆիզիքական գոյությունը, որովհետև ուշ կամ կանուխ սովը կրնա սպառնալ մեզ, քանի որ դաշնակիցները չունին անսպառ մթերք մեզի հասցնելու, մանավանդ որ այսօր ամբողջ աշխարհն է սովի մատնված: Այդ անհրաժեշտությունը կզգամ ամենէն ավելի ես,- ասել է զորավար Անդրանիկը,- բայց չպիտի մոռնալ, որ ներգաղթը կարելի է միայն զինվորական ուժով և ոչ նվազ քան 5-6000 զորք, իսկ այդ զորքի ամբողջ պարենավորումը, ռազմամթերքը և ամեն կարգ ու սարքը ըլլալու է միմիայն դաշնակիցներու կողմէ: Եթե դաշնակիցները հանձն կառնեն այդ գործը, ապա ուրեմն կարելի է եզրակացնել, որ դաշնակիցները համաձայն են ներգաղթը սկսելու, որոշ երաշխավորություն կզգան երկրի ներսը, զեթ ներգաղթող ժողովրդի ֆիզիքական չսպառնալու չափ...»<sup>35</sup>:

Այնուհետև զորավարը ներկայացրել է Արևմտյան Հայաստան ներգաղթի ժամանակ «զորքի» կազմակերպման ձևը և նրա գործելակերպն ու անելիքները: «Դաշնակիցներու միջոցով պահվող այս բանակը պիտի ըլլա կանոնավոր բանակ, խմբապետական սիստեմը պիտի վերացվի: Բանակը պիտի առաջանա Ալաշկերտի և Վանի ուղղությամբ, մաքրելով ճանապարհները և հպատակեցնելով մուսուլման տարրերը, որոնց մեջ ներկայիս կա զորեղ պրոպագանդա և որոնք առանց դաշնակիցներու միջամտության հնարավոր չէ որ խաղաղ հպատակություն ցուցնեն կամ հակառակ դեպքին հեռանան հայկական գավառներեն: Այս պայ-

<sup>34</sup> «Վան-Տոսպ», Երևան, 28 ապրիլի 1919 թ., N 5:

<sup>35</sup> Նույն տեղում:

մանները եթե պիտի լրանան և ներգաղթը տեղի ունենա, առաջին առթիվ պիտի երթան տղամարդիկ, նվիրվելու ցանքսի աշխատանքին, բայց ատոնց համար ալ դաշնակիցները պիտի ապահովեն ապրուստի միջոց երկրին մեջ, որովհետև մեր սեփական միջոցներով ոչինչ կրնանք ընել: Ուրեմն եթե այս նպատակով և այս պայմաններով կազմվի տաճկահայ զորամասը, գուցե որևէ նպատակի կրնա ծառայել,- նշել է զորավար Անդրանիկը և շարունակել,- իսկ հուսալ թե հայկական կառավարությունը պիտի հոգա այդ զորամասի պետքերը, միանգամայն ծիծաղելի է, եթե նա կարող ըլլար իր զորքը կը պահեր և առաջ կառներ այն վատ բայց և իրավացի դասավորության...»<sup>36</sup>: Ներգաղթի կազմակերպման և իրականացման վերաբերյալ Անդրանիկի տեսակետը, ըստ էության, համընկել է ՀՀ կառավարության մոտեցումների հետ: Միակ էական տարբերությունը կայացել է ներգաղթի հետ կապված գործընթացներում ՀՀ կառավարության դերակատարության ընդունման մեջ:

Հարցազրույցի վերջում հայրենի բնակավայրեր արևմտահայ փախստականների վերադարձի և նրանց ուղեկցող զորամասի խնդրի հետ կապված Անդրանիկը մատնանշել է. «Այդ խնդիրը, որ այժմ հրապարակի վրա է, կարելի է երկու հանգամանքի վերագրել, նախ որ հայկական կառավարության դասալիք զորքը հոգնած և ուժասպառ կուզե դադար առնել, իսկ հետզհետե սեղմվող թուրքական օղակը կստիպե սահմաններու պաշտպանության ուշք դարձնել, և ուրեմն տաճկահայ զորամասը կազմված ներգաղթի նպատակով, կրնա սահմաններու պաշտպանության գործը իր վրա առնել, իսկ երկրորդը այն է, որ Տիգրան Պաղոասարյանի և Գրիգոր Պուլղարացիի պես խմբապետներ, որոնք պարապ են այժմ, կուզեն զործ ստեղծել իրենց համար և դարձյալ արկածախնդրության մղել ժողովուրդը և ես վստահ եմ, որ ոչ մի տաճկահայ պիտի երթա այդպիսի զորամասի մը ետևեն,

<sup>36</sup> Նույն տեղում:

որուն հիմքը դրված է ավազի վրա և որու նյութական ապահովությունը իբր թե պիտի ստանձնե Հայաստանի կառավարությունը»: Արևմտահայ կանոնավոր զորամաս ստեղծելու ՀՀ կառավարության ձեռնարկումներին զորավար Անդրանիկի կողմից տրված նմանօրինակ զնահատականը վկայում է Հայաստանի առաջին հանրապետության իշխանությունների նկատմամբ խորին անվստահության մասին: Արևելահայ պետական-քաղաքական զործիչների նկատմամբ արևմտահայ ազգային-քաղաքական ղեկավարների, այդ թվում՝ Անդրանիկի մոտ այդպիսի վերաբերմունքը հիմնվել է զոյություն ունեցող անվստահության զգացումի վրա, որը, առաջած լինելով նախկինում, վերածվել էր մի տեսակ հատվածական կարծրատիպի:

Ինչպես տեսնում ենք, 1919 թ. ապրիլին Անդրանիկը հանդես է եկել ոչ միայն ՀՀ կառավարության հանդեպ իր կողմից նախկինում արդեն իսկ արտահայտված քաղաքական դիրքորոշումով, այլև, խոսելով մեկ տարվա ընթացքում կուտակված դժգոհությունների մասին, ՀՀ կառավարությանը ներկայացրել է բավականին լուրջ մեղադրանքներ: Նա բացասական վերաբերմունք է ցուցաբերել հարաբերությունները կարգավորելու նպատակով ՀՀ կառավարության կողմից կատարված միջնորդությունների նկատմամբ: Միաժամանակ, Արևմտյան Հայաստան ներգաղթի և արևմտահայ փախստականներին ուղեկցող զինական ուժի վերաբերյալ զորավարը ունեցել է իր համակարգված մոտեցումները, որոնց առանցքը հանդիսացել է դաշնակիցների անմիջական մասնակցությունը ներգաղթի հետ կապված ռազմաքաղաքական խնդիրների լուծմանը, կանոնավոր զորամասի և ներգաղթյալների համար անհրաժեշտ «պետքերի» ապահովմանը: Անհրաժեշտ է նշել, որ Անդրանիկի այդ մոտեցումները հիմնականում համընկել են ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությանը: Միայն թե նա հույսեր չի տածել, որ ՀՀ կառավարությունն ի վիճակի կլինի միայնակ իրականացնել ներգաղթի կազմակերպման և իրականացման՝ այդ թվում, հայրենիք վերա-

դարձող փախստականներին ուղեկցող զորամասի ձևավորման և ապահովման գործը:

«Վան-Տոսպին» տրված հարցազրույցի հաջորդ օրը՝ 1919 թ. ապրիլի 19-ին, Երևանի քաղաքային այգում տեղի է ունեցել մի «ցավալի դեպք»<sup>37</sup>, որի ժամանակ Անդրանիկի զինվորների և տեղացիների միջև առաջացած խժոժությունը հրազենի կիրառմամբ աստվել է կառավարական ուժերի կողմից<sup>38</sup>: Այդ միջադեպը հնարավոր է շատ շուտ մոռացվեր կամ էլ հիշատակվեր միայն պատմաբանների կողմից որպես միջհատվածական բնույթի հերթական միջադեպերից մեկը, եթե նրան չհաջորդեր Անդրանիկի «Երեւանի վրայ» արշավանքը: «Անդրանիկ ինքը պատմած էր թե երբ էջմիածին կը գտնուէր, ծիաւորներ մութ գիշերով լուր բերած էին իրեն թէ իր զինուորները զինաթափ եղած են, եօթը հոգի սպաննուած են անոնցմէ և թէ հրացանածգութիւնը կը շարունակուի,- գրել է արևմտահայ ճանաչված գործիչ Ա. Չելեայանը,- Այս զգայացունց տեղեկութիւններուն վրայ էր որ Ջօրավարը ճամբայ ելած էր արշաւելու համար Երեւանի վրայ»<sup>39</sup>: Հիմնվելով չստուգված տեղեկատվության վրա՝ զորավար Անդրանիկը «դիրաբորբոք եւ յախուռն բնաւորութեան տէր մէկը», զինաթափել է էջմիածնի կայազորը, բանտարկել կայազորի սպաներին, կտրել տվել էջմիածնի հեռախոսակապը և հեռագրակապը ու, կարգը պահպանելու համար էջմիածնում թողնելով հարյուր զինվոր, «մնացեալ ուժերով՝ հետեւակ, ծիաւոր, թնդանօթածիգ, եւ այլ, կը քալէ Երեւանի վրայ»<sup>40</sup>:

Հաջորդ օրը առավոտյան դիրքավորվելով Երևանի բերդի դիմաց գտնվող Դալմայի այգիներում՝ զորավար Անդրանիկը «բլրի գլխին տնկում է դաշնակիցների դրոշակները, թնդանոթների բերանները ուղղում մայրաքաղաքի վրա, դիրքեր բռնում և

<sup>37</sup> ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 163:

<sup>38</sup> Միմոնյան Գ., Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, էջ 571-575:

<sup>39</sup> Չելեայան Ա., Ջորավար Անդրանիկ եւ հայ հեղափոխական շարժումը, կենսագրական ակնարկ, Երևան, 1990, էջ 554:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 551:

պատգամավորների միջոցով կառավարությունից բավարարություն ու հանցավորների պատիժ է պահանջում, հակառակ պարագային սպառնալով ոմբակոծել քաղաքը...»<sup>41</sup>: Ինչպես նշում է Չայաստանի իշխանությունների ներկայացուցիչ Ս. Վրացյանը, ստանալով Անդրանիկի ձեռնարկած գործողության մասին լուրը, ՉՉ կառավարությունը չնայած «կառավարական ու զինվորական շրջաններում» առաջ եկած «զայրուքին ու վրդովումին», զեներալներ Թ. Նազարբեկյանի և Չ. Չախվերդյանի «զենքի ուժով վերջ տալու խայտառակությանը» դիմումներին, «տատանվում էր. չէր ուզում տեղիք տալ եղբայրասպան ընդհարումների»<sup>42</sup>: Նման մոտեցման պայմաններում պատահական չէ, որ կառավարական զինված ուժերը հենց Դրոյի հրամանատարությամբ դիրքավորվեցին Անդրանիկի զորամասի դեմ-դիմաց՝ Ջանգվի մյուս ափին: Նամակով դիմելով Անդրանիկին՝ Դրոն գրել է, որ ինքը խնդրում է «իմ պաշտած հայդուկապետին, որ նա սեւ արատ չբերի իր յեղափոխական անցեալին և հրաժարուի Երեւանի դեմ քայլեր առնելուց: Միաժամանակ, իբրեւ Երեւանի նահանգի հրամանատար, պարտք եմ զգում զգուշացնել քեզ, որ եթէ չհրաժարուիս քո մտադրութիւնից, դու ինձ կը ստիպես դիմել զԼեւքի եւ կարող եմ վստահեցնել քեզ, որ Երեւան չես կարող մտնել: Այդ ուղղութեամբ հարկ եղած հրամանները տուած եմ»<sup>43</sup>: Միաժամանակ, ՉՉ կառավարությունը «մեջտեղ ձգելով» մի պատկառելի պատվիրկություն բաղկացած խորեն արքեպիսկոպոս Սուրաբեկյանից, Երևանում բրիտանական հրամանատարության և Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի բարձրաստիճան ներկայացուցիչներից, կարողացավ գորավար Անդրանիկին համոզել դադարեցնել արշավանքը և վերադառնալ Էջմիածին: Նամանավանդ պարզվել է, որ Անդրանիկի զինվորներից զոհվածներ չկան, իսկ բանտարկվածներն էլ ազատ են արձակվել:

<sup>41</sup> Վրացյան Ս., Չայաստանի Չանրապետություն, Երևան, 1993, էջ 349:

<sup>42</sup> Նույն տեղում:

<sup>43</sup> Չելեպյան Ա., նշվ. աշխ., էջ 553-554:

Անդրանիկի հետ Արևմտահայ գործադիր մարմնի բանակցություններ սկսելու նախաձեռնությանը նախորդել է Կովկասում բրիտանական հրամանատարության քաղաքական մասի ղեկավար, զեներալ Բիչի հետ կայացած խորհրդակցությունը: Ապրիլի 21-ին ՉՉ կառավարությանը ներկայացված Ա. Խատիսյանի հաղորդագրությունում նշվում էր, որ «Գեմ[երալ] Բիչի հետ ունեցած խորհրդակցությունից պարզվեց, որ նա մտադիր է գալ Երևան, որպեսզի ծանոթանա, թե ինչ տեսակետի վրա են կանգնած հայ քաղաքական գործիչները և զինվորական հեղինակավոր անձինք Տաճկահայաստանի և տաճկահայ գաղթականության վերադարձի նկատմամբ»<sup>44</sup>: ՉՉ կառավարությունը որոշել է կազմակերպել խորհրդակցություն զեներալ Բիչի հետ և «հրավիրել այդ խորհրդակցության զեն [երալ] Նազարբեկյանին, Ռուբեն Տեր Մինասյանին և այլ գիտակ անձանց»<sup>45</sup>: Արևմտահայ գործադիր մարմնի նախագահ Վ. Տերոյանը ապրիլի 22-ի Գործադիր մարմնի նիստում զեկուցելով «առաջնորդարանում զեն[երալ] Բիչի հետ ներգաղթի մասին ունեցած խորհրդակցության մասին», առանձացրել է մի քանի հանգամանք: Առաջինը, որ «ակնհայտ կերպով երևում է, որ Անգլիացիները ներգաղթը կազմակերպում են այս Չանրապետական կառավարության հետ»<sup>46</sup>: Երկրորդը, Վ. Տերոյանը՝ ներկայացնելով, որ խորհրդակցությունում քննարկվել են ներգաղթի երեք ծրագրեր, նշել է, որ «ներգաղթի կազմակերպության համար Չանրապետական կառավարությունը յանձն է առնում տալ 15-16.000 մարդ, Արևմտահայը նույնքան, որով 30.000 մարդու պետք է պարենավորել, Բիչը գտած է, որ այդքան մարդու պարենավորել և զինել առ այժմ անհնար է»<sup>47</sup>: Ստեղծված իրավիճակում զեներալ Բիչը լուծումը տեսել է ներգաղթի գործին զորավար Անդրանիկի մասնակցության մեջ: «Գեմ[երալ]

<sup>44</sup> Չայաստանի Չանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 161-162:

<sup>45</sup> Նույն տեղում:

<sup>46</sup> ՉԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, ք. 20 հավ.:

<sup>47</sup> Նույն տեղում:

Բիչը դիմել է գեներալ Անդրանիկին և առաջարկել կառավարության հետ համագործակցելով ներգաղթի կազմակերպության մեջ մտնել, սակայն Անդրանիկը չի համաձայնվել կառավարության հետ համագործակցել»,- գեկուցել է Վ. Տերոյանը:

Արևմտահայ գործադիր մարմինը, «քննելով ներգաղթի խնդիրը ամբողջությամբ, որոշում է մի փորձ կատարել ներգաղթի գինուրական կազմակերպությունը յառաջ բերելու գեներալ Անդրանիկի միջոցով, իր վրայ վերցնելով ամբողջությամբ այդ գործը, որպեսզի Գործադիր Մարմինը նույն իսկ նազազոյն հնարաւորութեան մեջ կատարած լինի իր պարտականութիւնը»<sup>48</sup>: Գործադիր մարմինը փաստացի իր վրա է վերցրել ՀՀ կառավարության և գորավար Անդրանիկի միջև բանակցություններ կազմակերպող միջնորդի դերակատարությունը: Այդ նպատակով որոշվում է նամակով դիմել Անդրանիկին, ինչի մասին Վ. Տերոյանը Գործադիր մարմնի նիստում «յատնում է, որ ինք հատիսեանին իրազեկ է պահել վերոյիշեալ դիմումեն»<sup>49</sup>: Նամակում Գործադիր մարմինը գրել է, որ «իբ և ամբողջ փախստական հայութեան աչքը դարձնում է Ձերդ Գերագացութեան վրայ, և յոյս ունի, որ դուք Ձեր փառաւոր անցեալով և ներկայով կը ներշնչեք այնպիսի անդրդուելի վստահութիւն մը թե՛ ամբողջ հայ ժողովրդի, և մասնաւորապէս փախստականներու առջև ինչպէս նաև դաշնակից ուժերու բարձր հրամանատարութեան մօտ, որ կարող կը լինեք անցնել այդ գործի զլուխը և իրականացնել այն ցանկալի ձևով»<sup>50</sup>: Այնուհետև նամակում ասվել է, որ կշռադատելով բոլոր հանգամանքները «Արևմտահայ Գործադիր Մարմինը որոշեց դիմել Ձերդ Գերագացութեան հետևեալ առաջակութեամբ. որու լուսաբանութեան համար Ձեր մօտ կուղարկէ իւր ներկայացուցիչները»<sup>51</sup>: Չնայած Անդրանիկի կողմից ՀՀ իշխանությունների

<sup>48</sup> Լույս տեղում, ք. 20 հակ.-21:

<sup>49</sup> Լույս տեղում, ք. 21:

<sup>50</sup> ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 9, ք. 77:

<sup>51</sup> Լույս տեղում, ք. 77-ի հակ.:

նկատմամբ դրսևորած անհանդուրժողական վերբերմունքի, ՀՀ կառավարությունը՝ ի դեմս Ա. Խատիսյանի, Արևմտահայ գործադիր մարմնի նախաձեռնած նման ձևաչափով բանակցությունների մասին իրազեկված է եղել Վ. Տերոյանի կողմից<sup>52</sup>: Զորավարը համաձայնվել է գնալ բանակցությունների այն պատճառով, որ 1919 թ. ապրիլի 23-ին Թիֆլիսից վերադարձած մայր Գիբոնը բերել էր Հարվածող գորամասի զլխավորությամբ Արևմտյան Հայաստան ներգաղթին նրա մասնակցության վերաբերյալ գեներալ Թոմսոնի մերժման որոշումը, ինչի մասին նույն օրը հայտնել է Ա. Խատիսյանին<sup>53</sup>:

«Թիւրքահայ առանձին զօրամասեր կազմելու վերաբերմամբ» ՀՀ կառավարութեան և Գործադիր մարմնի ու Անդրանիկի միջև բանակցությունները սկսվել են ապրիլի 24-ին Էջմիածնում: «Ծանր պատասխանատութեան գիտակցութեամբ» գորավար Անդրանիկի հետ բանակցությունների հանձն է առել Արևմտահայ գործադիր մարմնի նախագահ Վ. Տերոյանը<sup>54</sup>: Բացի Անդրանիկից և Վ. Տերոյանից, բանակցություններին առաջին օրը ներկա են եղել դիվանապետ Տիրայր եպիսկոպոսը, Կովկասում ֆրանսիական առաքելության ներկայացուցիչ Ա. Պուադեբարը, բրիտանական հրամանատարության ներկայացուցիչներ մայր Գիբոնը և հայազգի սպա Պալեոյանը: Համաձայն Վ. Տերոյանի՝ «այս վերջին երկուքը ամեն կերպ աշխատեցին արգելքներ յարուցանել և թույլ չտալ, որ գեներալ Անդրանիկը համաձայնի մեր առաջարկին»<sup>55</sup>: Վ. Տերոյանը գեկուցել է Գործադիր Մարմնին, որ «շատ մեծ դժարութեամբ ինձ յաջողեց գեներալ Անդրանիկին դուրս հանել իր արդար վրդովմունքի և զայրույթի տրամադրություններից դեպի հայ ժողովրդի ահաւոր դժբախտութեան ներքին պատճառները»՝ նշելով, «որ իմ այդ աշխատանքին մեծապէս

<sup>52</sup> Լույս տեղում, գ. 7, ք. 21:

<sup>53</sup> ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 53, ք. 17:

<sup>54</sup> ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 14, ք. 1 հակ.:

<sup>55</sup> Լույս տեղում, ք. 2:

օգնեց նորին ս. օծութիւն Ամենայն Հայոց Վեհ[ափառ] Կաթողիկոսը»: «Այն համեստ պահանջները, որ դրեց գեներալ Անդրանիկը ներգաղթի համար առանձին զօրամասեր կազմակերպելու վերաբերմամբ՝ կատարելապես ցոյց էին տալիս նրա զիջող, զոհաբերող և հայրենասեր բարեացակամութիւնը դեպի մեր տառապեալ փախստականութիւնը, Արարատեան Հանրապետութիւնը և մեր պատմական դատը», - հիացմունքով նշել է Վ. Տերոյանը<sup>56</sup>: Առաջին օրվա բանակցությունների արդյունքում զորավար Անդրանիկը խոստացել է չհարուցել «ծևական դժարություններ և ենթարկել ամբողջովին ներգաղթի դեպքում մեկ ռազմաճակատ ստեղծելու բոլոր պահանջներին և կարգադրություններին»<sup>57</sup>: Չորավար Անդրանակը, ըստ էության, համաձայնվել է ներգաղթի դեպքում համագործակցել ՀՀ կառավարության հետ, ինչը կարելի է համարել նրանց միջև փոխհարաբերությունների կարգավորման ուղղությամբ կատարված առաջին քայլ:

Ապրիլի 25-ին Վ. Տերոյանը վերադարձել է Եջմիածնից՝ «Հանր[ապետական] կառավարութեան հետ նոյն համաձայնութիւնը կայացնելու» համար<sup>58</sup>: Հաջորդ օրը՝ ապրիլի 26-ին, Վ. Տերոյանը երեք անգամ հանդիպել է Ա. Խատիսյանին և ներկայացրել Անդրանիկի հետ «գործակցելու» անհրաժեշտության վերաբերյալ մի շարք «հիմունքներ»: Դրանից բացի, Վ. Տերոյանը շեշտել է նաև «այն անհրաժեշտութիւնը, թէ պետք է ունենալ անկախ պետութեան վայել մի ներքին անկախ քաղաքականութիւն և թոյլ չը տալ, որ այդ հարցում ամենաբարեացակամ մեր «դաշնակիցն» էլ իր միջամտութիւնն ունենայ, ... թէ գեն [երալ] Անդրանիկին հեռանալու հնարաւորութիւն, եթէ չասենք դրդապատճառներ տւողները, միայն թուլացնել են ձգտում Հանրապետ[ական] կառ[ավարութեան] բարոյական և իրավական ուժը, բաժանում

<sup>56</sup> Լույս տեղում:

<sup>57</sup> Լույս տեղում:

<sup>58</sup> Լույս տեղում:

են աւելի հեշտ տիրելու համար... և այլն, և այլն»<sup>59</sup>: Միժամանակ, Վ. Տերոյանը Ա. Խատիսյանի հետ հանդիպման ժամանակ Անդրանիկի հետ գործակցելու իր առաջարկին տվել է «մի այնպիսի նշանակութիւն, որ նրա հետ գործակցելը Գործադիր մարմնի հետ գործակցել կը լիներ և նրան մերժելը՝ Գործադիր մարմնին մերժել»<sup>60</sup>:

Ապրիլի 26-ի երեկոյան ՀՀ կառավարությունն ընդունել է որոշում, որը Ա. Խատիսյանի բառացի փոխանցմամբ ձևակերպվել է հետևյալ կերպ. «Հանր[ապետական] կառավարութեան] Միստրական խորհուրդը միաձայնութեամբ գտնում է, որ գեներալ Անդրանիկի հետ համագործակցութիւն ոչ մի դեպքում հնարաւոր չի կարող լինել, եթէ գեներալ Անդրանիկը Երևան չգայ և չյայտնի իր կատարեալ հպատակութիւնը ներկայ կառավարութեան»<sup>61</sup>: Եթէ վերանանք այդ ժամանակի բոլոր ազգային-քաղաքական խնդիրներից և մոտենանք հարցին ֆորմալ-իրավական առումով, ապա ՀՀ կառավարության նման որոշումն ավելի քան տրամաբանական է եղել:

Հասկանալի է, որ մերժվելու էր այդ առաջարկը: Այնուամենայնիվ, այն քննարկվել է Անդրանիկի մոտ՝ իր սպայակույտի մասնակցությամբ: «Սառնութեամբ քննեց նաև այն պարագան, թե ինչքան նպատահարմար կը լիներ մեր դատի ընդհանուր պաշտպանութեան համար, եթէ պետք լիներ, որ գեն[երալ] Անդրանիկը Երևան գար և հպատակէր կառավարութեան, - գրել է Վ. Տերոյանը, - Բայց Հանր[ապետական] կառավարութեան բացարձակ անբարեացակամութիւնը պատմական այնպիսի մի վարկեանում, երբ պահանջում էր մեր բոլոր տեսակի և որակի ուժերի զինվորագրումը և քաջալերումը ապացուցանում էին միայն, որ կառավարութիւնը գերադասում է վարել իր առանձնայատուկ քաղաքականութիւնը, իր խնամակալութիւնը, Միացեալ Հայաս-

<sup>59</sup> Լույս տեղում, ք. 2 հակ.:

<sup>60</sup> Լույս տեղում, ք. 3:

<sup>61</sup> Լույս տեղում:

տանի կառավարութիւն դառնալու իր գաղտնի ձգտումները, մի Չայրենիք ստեղծելու իրաւունքի բռնագրաւումը և աններողամտութիւնը, քան թե նրա բարոյական և պատմական իրաւատեր հատւածի գործակցութիւնը և աշխատակցութիւնը»<sup>62</sup>։ Փաստորեն, Անդրանիկի և ՉՅ կառավարության միջև համագործակցության մերժելու մեղքը օգտելով վերջինի վրա, արևմտահայ կողմը նորից առաջ է բերել հատվածական բնույթի մեղադրանքներ։

Այսպիսով, արևմտահայ փախստականների ներգաղթի խնդիրը հանդիսացել է Չայաստանի Չանրապետության արտաքին քաղաքականության օրակարգային հարց։ ՉՅ կառավարության և Կովկասում բրիտանական զորքերի հրամանատարության միջև 1919 թ. մարտի վերջին և ապրիլին կայացած բանակցություններում առաջնահերթ դրվել է Արևմտյան Չայաստան փախստականների ներգաղթն իրագործելու հարցը։ Բանակցող կողմերը եկել են այն եզրակացության, որ արևմտահայ փախստականների հայրենի բնակավայրեր վերադառնալը պետք է իրականացվի հայկական կանոնավոր զորամասերի ուղեկցությամբ։ Սակայն, Չայաստանի առաջին հանրապետության զինված ուժերն այդ ժամանակ չունեին ներգաղթի համար անհրաժեշտ զորամասեր, իսկ արևմտահայերի կանոնավոր զորամասերի կազմավորման գործընթացը նոր պետք է ձեռնարկվեր։

Արևմտահայ փախստականների տունդարձի գործին իր մասնակցության մասին բրիտանական հրամանատարությանը ցանկություն էր հայտնել զորավար Անդրանիկը։ Սակայն, Կովկասում բրիտանական հրամանատարությունը մերժել է նրան։ Միաժամանակ, նրանք Անդրանիկին առաջարկել են տվյալ գործում համագործակցել ՉՅ կառավարության հետ։ Չորավար Անդրանիկի և ՉՅ կառավարության միջև հարաբերությունների կարգավորման, Արևմտյան Չայաստան ներգաղթի գործընթացներին Անդրանիկին իր զորամասով հանդերձ մասնակցության ապահով-

<sup>62</sup> Նույն տեղում թթ. 3 և հակ.։

մանն ուղղված Ա. Խատիսյանի քաղաքականությունը չի հանգեցրել ցանկալի արդյունքի։ Այդ իրավիճակը պայմանավորված է եղել երկու հիմնական հանգամանքով։ Առաջինը ներքինն է եղել։ Չայ ժողովրդի արևմտահայ և արևելահայ հատվածների ազգային-քաղաքական և պետական ղեկավարների միջև փոխհարաբերություններում հաղթահարված չէր հատվածականությունը՝ իր անվստահության և անհանդուրժողականության դրսևորումներով։ Մյուսը պայմանավորված է եղել այդ ժամանակահատվածում Անդրկովկասում բրիտանական հրամանատարության կողմից իրականացվող քաղաքականությամբ։

Այսպիսով, արևմտահայ փախստականների ներգաղթի խնդիրը հանդիսացել է Չայաստանի Չանրապետության արտաքին քաղաքականության օրակարգային հարց։ ՉՅ կառավարության և Կովկասում բրիտանական զորքերի հրամանատարության միջև 1919 թ. մարտի վերջին և ապրիլին կայացած բանակցություններում առաջնահերթ դրվել է Արևմտյան Չայաստան փախստականների ներգաղթն իրագործելու հարցը։ Բանակցող կողմերը եկել են այն եզրակացության, որ արևմտահայ փախստականների հայրենի բնակավայրեր վերադառնալը պետք է իրականացվի հայկական կանոնավոր զորամասերի ուղեկցությամբ։ Սակայն, Չայաստանի առաջին հանրապետության զինված ուժերն այդ ժամանակ չունեին ներգաղթի համար անհրաժեշտ զորամասեր, իսկ արևմտահայերի կանոնավոր զորամասերի կազմավորման գործընթացը նոր պետք է ձեռնարկվեր։

Արևմտահայ փախստականների տունդարձի գործին իր մասնակցության մասին բրիտանական հրամանատարությանը ցանկություն էր հայտնել զորավար Անդրանիկը։ Սակայն, Կովկասում բրիտանական հրամանատարությունը մերժել է նրան։ Միաժամանակ, նրանք Անդրանիկին առաջարկել են տվյալ գործում համագործակցել ՉՅ կառավարության հետ։ Չորավար Անդրանիկի և ՉՅ կառավարության միջև հարաբերությունների կարգավորման, Արևմտյան Չայաստան ներգաղթի գործընթացներին Անդրանիկին իր զորամասով հանդերձ մասնակցության ապահով-

## ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ

պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

### ՄԻ ԴՐՎԱԳ 1919-1922 ԹԹ. ՄԱՆՉԵՍՏՐՈՒՄ ԱՆԴՐԱՆԻԿ ՕՉԱՆՅԱՆԻ ԾԱՎԱԼԱԾ ԱԶԳԱՆՊԱՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԻՑ

Այս օրերին համայն հայությունը թե՛ Մայր հայրենիքում, թե՛ Ափյուռքում մեծ խանդավառությամբ տոնում է հայ ժողովրդի Մեծ զավակ Անդրանիկ Օզանյանի ծննդյան 150-ամյակը: Հայոց ազատամարտի նորագույն պատմության մեջ իր կատարած դերով առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Անդրանիկ Օզանյանը, ով զոյամարտի օրհասական պահերին ցուցաբերել է ազգային-քաղաքական գործչին բնորոշ աներևակայելի կազմակերպչական տաղանդ, երկաթյա կամք ու վճռականություն, բացառիկ հետևողականություն և շրջահայացություն: Ժողովրդական հերոս, որի կյանքը, հիրավի, մի ամբողջական հերոսապատում է:

Խորապես ճշմարիտ է, որ ժամանակը ծնում է իր հերոսներին: Նույնքան էլ ճշմարիտ է, որ ժողովուրդը, ապավինելով նրանց, դարեր շարունակ ամրապնդվում ու հզորանում է իր արժանի զավակների շուրջ հյուսված հերոսապատումներից: Ուստի պատահական չէ, որ Արցախյան մերօրյա Ազատամարտի ժամանակ Անդրանիկի մասին հյուսված երգերը դարձյալ համարվում էին ժողովրդի բաղձանքների ու ազատասիրության զգացումների ներշնչման աղբյուր: Այդպես էլ պետք է լիներ, քանզի իր պատմության բախտորոշ պահերին Անդրանիկի նման ռազմիկներին ժողովուրդն է ծնում, պահպանում ու հավերժացնում նրա անունը:

Անդրանիկի ապրած յուրաքանչյուր օր համապարտված է մեր պատմության ամենաճակատագրական ժամանակաշրջանների հետ: Ստորև ներկայացվող դրվագը դրա վառ ապացույցն է: Այսպես՝ 1919 թ. ապրիլին, երբ Անդրանիկը Հայաստանից հեռանում է Եվրոպա, հունիսի 16-ին նա արդեն Լոնդոնում էր, որտեղից հունիսի 27-ին փոխադրվում է Մանչեստր:

1919 թ. նոյեմբերին Անդրանիկը մեկնում է ԱՄՆ, որտեղից կրկին Մանչեստր է վերադառնում 1920 թ.: այստեղ բնակվելով մինչև 1922 թ.: Այդ ժամանակահատվածն Անդրանիկի համար լարված ու եռուն աշխատանքի օրեր էին: Ձորավարը, թեև հեռու էր Հայաստանից, սակայն հայրենիքում անօթևան ու սովամահ եղող զաղթականության օրհասական վիճակը գիշեր ու ցերեկ մտատանջում էր նրան: Սովն ու համաճարակն օր-օրի տասնյակ կյանքեր էին խլում: Պետք էր փրկել հայ ժողովրդին...

Ստեղծված պայմաններում հայ ժողովրդին օգնելու առաջնային միջոցը, որին կարող էր ի սպաս դնել Ձորավարն իր ուժերը, նրան նյութական օգնություն կազմակերպելն էր: Հանգանակության գործի կազմակերպումն առաջնակարգ նշանակություն է ստանում: Ուստի՝ Ձորավարը կոչով դիմում է Մանչեստրի հայությանը, պարբերաբար կազմակերպում ընդունելություններ, հանդիպումներ, հարցազրույցներ, խորհրդակցություններ և այլն: Նրա ջանքերով 1919 թ. սեպտեմբերի 11-ին ստեղծվեց «Հայ փախստականական հագուստեղենի ֆոնդ» ընկերությունը (պատվավոր նախագահ՝ Ա. Օզանյան), որը ընդգրկեց հազարավոր բարերարների՝ Ամերիկայից մինչև Հնդկաստան և բազմաթիվ այլ երկրներ<sup>1</sup>: 1919 թ. սեպտեմբերի 20-ին Անդրանիկը Մանչեստրից գնում է Լոնդոն և հիմնում «Հայ փախստականների հագուստեղենի ֆոնդ» կոմիտեն<sup>2</sup>:

Գլխավորելով հայ որբերին ու զաղթականությանն օգնող հայ-անգլիական կոմիտեի գործունեությունը, Անդրանիկը գործի բերումով այցելում է Ֆրանսիա, ԱՄՆ և այլ երկրներ: Հայաշատ վայրերում նա զրույցներ ու ելույթներ է ունենում հարազատ ժողովրդի ճակատագրի և հատկապես սովի և համաճարակի մատնված բազմահազար հայ որբերին ու զաղթականությանը

<sup>1</sup> Տես Հաշուետվություն Մանչեսթրի Հայ Փախստականական Հագուստեղենի ֆոնդի, 1919-1922, Վենետիկ, 1922, էջ 2-3, տես նաև Զելեայան Ա., Ձորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը (կենսագրական ակնարկ), Երևան, 1990, էջ 583:

<sup>2</sup> Տես Սիմոնյան Դր., Անդրանիկի ժամանակը, հ. Բ, Երևան, 1996, էջ 607-608:

նյութական և բարոյական օգնություն կազմակերպելու մասին: Գաղութահայերն ամենուրեք արծագանքում էին Անդրանիկի կոչերին: Գաղութներ ուղարկված հեռագրում ասվում էր. «Զօրավար Անդրանիկի կողմն աշատեղ բացուած է Հայ Փախստականական) Հագուստեղէնի Ֆընտ. Անգլիական Գանձարանը պիտի կրկնէ հանգանակուած գումարը: Նկատակն է հայթայթել հագուստեղէն, պլանքէթ և անհրաժեշտ իրեր, արգիլելու համար այն բազմաթիւ անխուսափելի մահացութիւնները՝ Կովկաս և Հայաստան ապաստանած և հագուստեղէն բացարձակապէս զուրկ 400.000 փախստականութեան»<sup>3</sup>: Կարճ ժամանակում Անդրանիկին հաջողվում է զգալի օգնություն կազմակերպել: Մինչև 1919 թ. նոյեմբերի 10-ը Լոնդոնի, Մանչեստրի և Հնդկաստանի հայերից հանգանակած գումարը կազմում էր 58 հազար ֆունտ ստեռլինգ: Մանչեստրի հանձնախումբն իր գործունեությունը շարունակեց մինչև 1922 թ.<sup>4</sup>:

Հատկանշական է, որ հայրենիքին նյութապէս օգնելու հարցում Զորավարի ուշադրության կենտրոնում է գտնվել նաև իրեն շատ հոգեհարազատ Զանգեզուրի հայությունը և այդտեղ հաստատված գաղթականությունը: Զանգեզուրում թուրք-թաթարների դեմ մղած կռիվների շրջանում (1918 թ. հուլիս – 1919 թ. մարտ) Անդրանիկն իր գորամասով անջնջելի հետք էր թողել հայրենասեր զանգեզուրցիների հոգում: Հանգանակած գումարներով Զանգեզուրի սովյալներին օգնելու խնդրանքով Անդրանիկին Թավրիզից հեռագրով դիմել էր Զանգեզուրում եղած ժամանակ նրա զինակից ընկեր, հասարակական-քաղաքական գործիչ Գեղեոն Տեր-Մինասյանը<sup>5</sup>:

<sup>3</sup> Հաշուետուութիւն Մանչեսթրի Հայ Փախստականական Հագուստեղէնի ֆընտի, էջ 10:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 88:

<sup>5</sup> Գեղեոն Տեր-Մինասյանը ծնվել է Կապանի խլաթաղ գյուղում՝ քահանայի ընտանիքում: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ծեմարանը: Սկզբում ուսուցչություն է արել Շուշիում, ապա՝ Գորիսում: Այնուհետև մանկավարժական գործունեությունը շարունակել է Շրվենանց գյուղում որպէս ավագ ուսուցիչ: Անդամակցել է

Ստորը բերվող փաստաթուղթը, որը ժամանակին հրատարակվել է Փարիզում լույս տեսնող «Ապագայ» լրագրում («Ապագայ», Բարիզ, 1921, հոկտեմբերի 1), ներկայացնում ենք առանց որևէ փոփոխության:

## ՀԱՎԵԼՎԱԾ

### Զօր. Անդրանիկի կոչը

25 սեպտեմբերի 1921 թ.  
Մանչեսթրը

Զօր. Անդրանիկ Մանչեսթրէն, ուր կը գտնուի այժմ, հետեւեալ նամակը դրկած է խմբագրութեանս.

Խմբագրութիւն «Ապագայ»-ի

Ղաւրժժէն 9 օգոստոս թուականաւ հասցէիս դրկուած հեռագիր մը կըսէ.

«Զանգեզուրի գաղթականներու օգնութեան հասէք»:

Հեռագիրը ստորագրուած է Պ. Գեղեոնէ, որ ինձ եւ ի մասնաւորի կովկասահայ մեծատուններու ծանոթ յարգելի եւ վստահելի անձնաւորութիւն մըն է, որուն գրածին պէտքէ հաւատ ընծայել:

Մանչեսթրի հայ «Բլօթինկ ֆօնտ»-ի դրամազուխը սպառուած ըլլալով, այս հեռագիրը կը յանձնեն արտասահմանցի հայ գաղութներու լուրջ ուշադրութեան:

ՀՅԴ-ին: 1918-1921 թթ. Սյունիքի համար ստեղծված ռազմաքաղաքական ծանր կացության ժամանակ զբաղվել է հասարակական-քաղաքական ակտիվ գործունեությամբ: Չինակցել է Անդրանիկին, Արսեն Շահնազյանին, այնուհետև՝ Գարեգին Նժդեհին: Զգալի ավանդ ունի թուրք-մուսալաթական հարձակումներից երկրամասի պաշտպանությունը կազմակերպելու գործում: Եղել է Ինքնավար Սյունիքի Սահմանադիր ժողովի նախագահ, Լեռնահայաստանի կառավարությունում զբաղեցրել է պետական վերահսկիչի պաշտոնը: 1921 թ. տարագրվել է Իրան: 1937 թ. վերադարձել է Խորհրդային Հայաստան: Նույն թվականի նոյեմբերին ծերբակալվել է, իսկ դեկտեմբերի 17-ին՝ զնդակահարվել (Ամբատյան Գ., Երկաթե վարագույրից այս կողմ, Երևան, 2009, էջ 145):



Բայց պետք է հոս շեշտել, որ ոչ միայն Զանգեզուրի, այլ ամբողջ հայ ժողովուրդը Հայաստանի սահմաններուն մէջ ենթակայ է աննախընթաց սովի մը վերահաս վտանգին: Հետեւապէս օրուան հրամայական պահանջին համապատասխան չափով մը պետք է գաղութները անմիջապէս օգնութեան հասնին վտանգեալ հայութեան: Յոյս ունիմ, որ մեր ազգ[ային] պաշտօնական մարմինները պետք եղած միջոցները ձեռք առած են եւ համապատասխան տնօրէնութիւնք եւս ըրած:

#### ԱՆԴՐԱՆԻԿ

#### ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ

պատմ. գիտ. թեկնածու

#### ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՌԹՅՈՒՆԸ ԱՄՆ-ՈՒՄ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Զորավար Անդրանիկ Օզանյանը, լինելով փորձառու, հեռատես ու խորագետ ռազմական գործիչ, միջազգային-քաղաքական ստիպողական հանգամանքների պարտադրանքով հարկադրված հրաժարական է տվել՝ դա բացատրելով հետևյալ կերպ. «Շրջապատուած ըլլալով դաւաճաններէ, կը հրաժարիմ Հայաստանի Երկրապահ Զօրամասի Հրամանատարութենէն»<sup>1</sup>:

1919 թ. ապրիլին՝ Զատիկի նախօրեին Զորավար Անդրանիկն իր զորամասով ժամանել է Ս. Էջմիածին, բանակը զորացրել, զենքն ու զինամթերքը տեղավորել տեղի պահեստում՝ փաստացի դրանք հանձնելով Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսին և հայտնել իր արտասահման մեկնելու մասին: Անդրանիկի ստորագրությունը կրող վկայականներով նրա հետ արտասահման են մեկնել նաև հատկապես արևմտահայ իր այն զինվորները, որոնք պետք է իրենց հարազատներին փնտրեին Կ. Պոլսում, Կիլիկիայում, Եվրոպայում և ԱՄՆ-ում<sup>2</sup>:

1919 թ. մայիսի 15-ին Անդրանիկը, Բաթումում նալ նստելով, դիմել է պանդխտության՝ անցնելով սկզբում Կ. Պոլիս, հետո՝ Իզմիր, ապա՝ Սալոնիկ, հունիսի 13-ին հասել է Մարսել, երկու օր անց՝ Փարիզ, ապա՝ Լոնդոն և Մանչեսթր, նոյեմբերին՝ Ալեքսանդրիա, Կահիրե, Պորտ-Սայիդ՝ ամենուրեք արժանանալով «պանդուխտ հայութեան երախտապարտ ովսանաներուն»: Սակայն Զորավարն անձամբ տխուր էր. «ոչ մէկ փառք, մեծա-

<sup>1</sup> Ժամկոչեան Ա., Զորավար Անդրանիկ կը պատասխանէ իր հակառակորդներուն, Փարիզ, 1945, էջ 95:

<sup>2</sup> Աւետեան Մ. Տեղակալ, Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) յուշամատեան եւ Զօր. Անդրանիկ (Վերլուծական հայեցողութեամբ և վաւերական տուեալներով), Փարիզ, 1954, էջ 222:

րանք զայն չկարողացան մխիթարել. քանի անոր սիրտը այրած էր՝ տաճկահայ ժողովուրդի ոճրային անեացունով, եւ զանկը պղտոր՝ հայկական դատի անորոշ կացութեամբ», - նշել է վերոհիշյալ իրադարձությունների ականատես, Անդրանիկի զինակից Մ. Ավետյանը<sup>3</sup>: Պանդխտության մեջ անգամ Անդրանիկը չի դադարել հայ կարոտյալներին և հայրենի երկրին ի նպաստ հանգանակություններ կազմակերպելուց:

Նույն նպատակով 1919 թ. նոյեմբերի 22-ին Ջորավար Անդրանիկի և զեներալ Յակոբ Բագրատունու մասնակցությամբ զինվորական հանձնախմբեր են մեկնել ԱՄՆ: Առաջինին ընկերակցում էր հրամանատար Յայկ Բոնապարտյանը, իսկ երկրորդին՝ փոխհրամանատար Միքայել Տեր-Պողոսյանը<sup>4</sup>:

Ջորավար Անդրանիկի ներկայությունն առանձնակի կշիռ է հաղորդել Ձիմվորական առաքելությանը: Ականատեսների զնահատմամբ՝ ԱՄՆ-ում «տեղւոյն հայրենաբաղձ Յայութիւնը՝ Ատլանտեանէն մինչեւ Խաղաղականը անոր ցույց տուաւ այնպիսի խանդավառ ընդունելութիւն մը, որ Ամերիկացիները սկսան զարմանքով իրարու հարցնել թէ ո՞վ էր իրենց երկիրը եկող այդ հիւրը: Ու երբ անոնք իմացան թէ այդ հիւրը Յայերու համար եղած է այն, ինչ որ Վաշինկթօն եղած է Ամերիկացիներու համար, ...զայն Ֆիլատելֆիոյ մէջ տարին բազմեցնելու Վաշինկթօնի պատմական աթոռին վրայ, բացառիկ պատիւ մը, որ Ամերիկայի մէջ վերապահուած է պատմութեան մէջ էջ մը գրաւող անձնաւորութեանց»<sup>5</sup>:

1919 թ. հոկտեմբերի 9-ին ԱՄՆ՝ Նյու Յորք էր մեկնել նաև Գ. Գ. Գրիգորյանը, որը իր ժամանակը անց էր կրել հայրենի երկրի և հայրենի ժողովրդի համար:

<sup>3</sup> Մնացականյան Ա. Ն., Յակոբյան Յ. Ղ., Ջորավար Անդրանիկ, հ. Ա, Մոսկվա, 1991, էջ 256, 257, Աւետեան Մ., նշվ. աշխ., էջ 223:

<sup>4</sup> Թեոֆիլ, Ամենուն տարեցոյցը, ԺՁ տարի, 4. Պօլիս, 1922, էջ 291, ճիզմեճեան Մ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց (1890-1925), Ֆրէզնօ, 1930, էջ 416-417, Զելեայան Ա., Ջորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը. կենսագրական ակնարկ, Երևան, 1990, էջ 590:

<sup>5</sup> Թերզիպաշեան Ա., Անդրանիկ, Բարիզ, 1942, էջ 397:

յուն, որի նպատակն էր երկրի ղեկավարությունից քաղաքական և տնտեսական աջակցություն խնդրել: Քաղաքական առաքելության կազմում էին՝ Դավիթանես Քաջազունին (առաջին վարչապետ), Գարեգին Փաստրմաճյանը (Արմեն Գարո՝ ԱՄՆ-ում Գ. Գ. Գրիգորյանի փոխարինողը), Արտաշես Էնֆիաճյանը (ֆինանսների նախկին նախարար) և Արտեմ Փիրալյանը (գյուղատնտես), Աբրահամ Տեր-Յակոբյանը (Ազգային պատվիրակության փոխնախագահ և լիազոր ներկայացուցիչ, որը գործում էր ԱՄՆ կառավարությանը կից), ինչպես նաև՝ Սուրեն Մելիքյանը (Դավի. Քաջազունու քարտուղար)<sup>6</sup>: ԱՄՆ կառավարությունը պատշաճ ընդունելության է արժանացրել իր «փոքր դաշնակցի» ազգային ընտրանու ներկայացուցիչներին, իսկ ամերիկահայերն ի պատիվ իրենց բարձրաստիճան հայրենակիցների, ամենուրեք խանդավառ ցույցերով են դիմավորել նրանց<sup>7</sup>:

«Յայրենիք» օրաթերթը հետևյալ կերպ է նկարագրել այդ պատմական իրադարձությունը. «[Նիւ Եորքի] նաւամատոյցը հաւաքուած էր բազմահազար բազմութիւն մը, հարիւրաւոր հայկական դրօշակով զարդարուած օթօմօպիլներով եւ կառքերով: Գիւրերը ցամաք ելան օդը թնդացնող ծափերու եւ կեցցէներու մէջ եւ հսկայական թափօրով մը առաջնորդուեցան Ուոլտորֆ Ասթորիա հօթելը, որուն ճակատը կը ծածանէր հայկական խոշոր դրօշակ մը:

Յայկական բոլոր ակումբները, մեծ վաճառատուները վայելչօրէն դրօշակազարդուած էին հայկական եռագոյնով: Երկարատեն Ֆիֆթ Էլընիի առետուրը կանգ առաւ ճամբայ տալու համար հայկական թափօրին:

Այսօր Նիւ Եորքի հայ գաղութի համար տօնական մեծ օր մըն է»<sup>8</sup>:

<sup>6</sup> Տօնապետեան Գ., Գ. Յ. Դաշնակցութիւնը Գիսիսային Ամերիկայի մէջ, Բ հատոր (1910-1923), Պոսթօն, 1995, էջ 490, 492, Զելեայան Ա., նշվ. աշխ., էջ 590, Թեոֆիլ, նշվ. աշխ., էջ 291-292:

<sup>7</sup> Գիզմեճեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 416-417:

<sup>8</sup> Տօնապետեան Գ., նշվ. աշխ., էջ 490, 492:

Ձորավար Անդրանիկի ցանկությունն էր, որպեսզի Հակոբ Բագրատունին և Հայկ Բոնապարտյանը, որպես արևելահայ և արևմտահայ հատվածները ներկայացնող երկու զորավարներ, «խորհրդակցութեամբ ու համերաշխօրէն վարեն այս յոյժ կարեւոր ու կենսական գործը, եւ Ամերիկեան կառավարութեան տրուած խնդրագրին ներքեւ երկու զօրավարները միատեղ ստորագրեն»: Ինչը, ցավոք, տեղի չի ունեցել, քանի որ Հ. Բագրատունին, առանց խմբի անդամների հետ համաձայնեցնելու, առաջինը և առանձին է ներկայացել ԱՄՆ Պատերազմական նախարարին՝ հանձնելով Ջինվորական առաքելության խնդրագիրը<sup>9</sup>:

Շուտով Անդրանիկն ու Հ. Բոնապարտյանը ևս Վաշինգտոնում հանդիպել են երկրի Պատերազմական նախարար Նյութոն Բեյքըրի հետ՝ տեղեկացնելով Հայաստանի վիճակի, զինվորական ու ռազմական կացության, որբերի, այրիների, գաղթականների մասին: Հակառակ ամեն ինչին՝ նրանք հորդորել են ընթացք տալ զորավար Բագրատունու խնդրագրին, ինչը ենթադրում էր ԱՄՆ-ի ռազմական օգնությունը Հայաստանի Հանրապետությանը՝ արտաքին թշնամիներից պաշտպանվելու և երկրի անվտանգությունն ապահովելու նպատակով, իսկ հետագայում նաև՝ զինվորական մասնագետներ պատրաստելու առումով: Ամերիկացի նախարարը հավաստիացրել է, թե. «Մեր լաւագոյնը պիտի ընենք Հայ ազգին համար»<sup>10</sup>: Հայ պատվիրակներն այցելել են նաև Սպիտակ տուն, որտեղ հանդիպել են նախագահ Վ. Վիլսոնի անձնական քարտուղար Ջոզեֆ Թյունալթիի հետ, որը նրանց է փոխանցել հայկական խնդրի վերաբերյալ վատառողջ նախագահի մտահոգությունն ու կարեկցանքը<sup>11</sup>:

Բայց և այնպես, Անդրանիկն այդ հանդիպումների հետ շատ հույսեր չէր փայփայում, որովհետև նկատել էր, որ ԱՄՆ-ում

<sup>9</sup> Ճիզմտեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 417, 418:

<sup>10</sup> Քաջունի Ե., Անդրանիկի եւ հայկական առանձին հարուստող զօրամասի հետ, Նիւ Ճըրսի, 1976, էջ 196, Ճիզմտեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 418-419:

<sup>11</sup> Չելեայան Ա., նշվ. աշխ., էջ 591:

առանձնապես առաջիկա նախագահական ընտրությունների հետ կապված երկրի արտաքին քաղաքականությունը «քիչ մը շատ վարամբոտ ու անորոշ էր»<sup>12</sup>:

ԱՄՆ-ում ևս Ձորավարի հոգին հայրենիքում էր՝ «Հայ ժողովուրդին ու մասնաւորաբար զրկուածներուն ու կարօտեալներուն հետ»<sup>13</sup>, և նա չի դադարել իր հայրենակիցների սատարմանն ուղղված հանգամակիչ ձեռնարկները: Այդ մասին Մ. Ճիզմտեանը գրել է. «Ամերիկահայութեան ցոյց տուած անօրինակ խանդավառութիւնը, որուն աղբիւրը անոր Հայրենիքի հանդէպ սնուցած սէրն ու հետաքրքրութիւնն էր, միացած առատութեան հետ զոր, այդ օրերուն ան կը վայելէր, Անդրանիկի մէջ նորէն արթնցուցին Հայաստան թողած իր եւ իր հիւրընկալներու արիւնակիցներուն թշուառութեան յիշողութիւնը, նորէն անոր մէջ արթնցուցին իր բան մը ընելու պարտաւորութեան զգացումը, ու ան՝ նախաձեռնող եղաւ եւ գլուխը կանգնեցաւ մեծ հանգամանակութեան մը»<sup>14</sup>:

Անձամբ Պողոս Նուբարի հատուկ հանձնարարությամբ իր վրա դրված Ջինվորական առաքելությունն ավարտելով՝ Ձորավար Անդրանիկը ԱՄՆ-ում Փարիզի Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչ Հայ ազգային միության (հիմնադիր նախագահ՝ Միհրան Սվազյան) հետ 1920-1921 թթ. ձեռնամուխ է եղել նաև հայ կարոտյալներին ու նորաստեղծ Հայաստանի Սոցիալիստական խորհրդային Հանրապետությանը սատարելու կոչված «Փրկության հանգանակությանը»: Ձորավարը հայ ազգային ու քաղաքական բոլոր կառույցներին և կուսակցություններին հրավիրել է մասնակցելու համազարդության այդ հանգանակությանը: Այդուհանդերձ, հանգանակության կազմակերպման առթիվ դեռևս 1919 թ. դեկտեմբերի 16-ին հրավիրված խորհրդակցությանը մասնակցել են միայն Հայ Առաքելական և

<sup>12</sup> Քաջունի Ե., նշվ. աշխ., էջ 196:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 195:

<sup>14</sup> Թեղրիպաշեան Ա., նշվ. աշխ., էջ 397:

Ավետարանական եկեղեցիների վարչությունները, Վերակազմյալ հնչակյան և Սահմանադիր-ռամկավար կուսակցությունների կենտրոնական մարմինները, ՀԲԸՄ շրջանային հանձնաժողովը: Հայ հեղափոխական դաշնակցություն ու Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություններն, վերջ ի վերջո, չեն մասնակցել<sup>15</sup>: Ա. Չելեպյանի բնորոշմամբ. «Սկզբնական գործակցութիւնը Ռամկավար-Հնչակեան-Դաշնակցական հատուածներուն միջեւ, շուտով տեղի պիտի տար պրկումներու եւ անհամաձայնութիւններու, հանգանակուած գումարներու բաշխումի ձեւին առնչութեամբ»<sup>16</sup>, ինչպես նաև՝ այլևայլ պատճառաբանություններով:

ԱՄՆ-ի Արևելյան, Միջին շրջաններում և Կալիֆոռնիայի նահանգում այդ առաքելությունը համապատասխանաբար համակարգել են Ամերիկայի հայ ազգային միության կողմից նշանակված գործիչներ Կարապետ Փափազյանը, Վահե Հայկը և Գերաշնորհ Շահե վրդ. Գասպարյանը: Սույն միջոցառումը շարունակությունն էր 1919 թ. հոկտեմբերին Անգլիայում Մանչեսթրում և Լոնդոնում, Անդրանիկի անցկացրած Հայ փախստականների հագուստեղենի ֆոնդի հանգանակության<sup>17</sup>:

Զորավար Անդրանիկի նախագահությամբ ընտրվել է «Փրկության հանգանակության» Կենտրոնական հանձնախումբ, որի կազմում էին՝ Շահե վրդ. Գասպարյանը (ատենապետ), Պատրիկ Կյուլպենկյանը (փոխատենապետ), Երվանդ Մեսիայանը (ատենադպիր), Մաղաք Պերպերյանը (փոխատենադպիր), Միհրան Գարակոչյանը (գանձապահ), Մ. Գոնտազյանը (փոխգանձապահ), Գ. Պետրոսյանը (ընդհանուր քարտուղար): Անդամներն էին՝ Ալեքսանդր Գևորգյանը, Աշոտ Թիրեաքյանը, Ավետիս Սեյանը, Անդրանիկ Պետիկյանը, Լեմվել Կոստիկյանը, Կարապետ Փուշմանյանը, Հրանտ Թելֆեյանը, Հակոբ Դերձակյա-

<sup>15</sup> Երզնկեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 419, 420, Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 292:

<sup>16</sup> Չելեպյան Ա., նշվ. աշխ., էջ 591:

<sup>17</sup> Երզնկեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 419:

նը, դոկտոր Հովհաննես Ծովիկյանը, Հ. Տեփոյանը, Վ. Տյուլսիզյանը, Տիգրան Տոնճյանը<sup>18</sup>: Հանգանակության ընդհանուր հաշիվները, բյուջեն ու դրամի առաքումը հսկելու նպատակով կազմվել է Ֆինանսական կոմիտե (Finance Committee) (անդամներ՝ Հ. Թելֆեյան, Ա. Թիրեաքյան, Լ. Կոստիկյան), իսկ հանգանակության քարոզչությունն իրականացնելու նպատակով՝ Հանրականության կոմիտե (Publicity Committee) (անդամներ՝ Հովհ. Ծովիկյան, Հ. Դերձակյան, Պողոս Նորհատ)<sup>19</sup>:

«Փրկության հանգանակության» կազմակերպման առիթով Զորավար Անդրանիկը դիմել է ԱՄՆ-ի հայությանը՝ կոչ անելով առատաձեռն մասնակցություն ունենալ ի նպաստ Հայաստանում և արտերկրում վերապրած հայրենակիցների փրկության: Կոչում մասնավորապես ասվում էր.

«Սիրելի հայրենակիցներ,

Ամերիկահայ գաղութը, ազգային ամեն տեսակ դեպքերու հանդեպ իր հայրենասիրության և առատաձեռնության ապացույցները տված է քանիցս: Վստահ եմ, որ այս անգամ ևս անիկա արժանի պիտի գտնվի իր համբավին և ինքնիրեն գերազույն չափով ցույց պիտի տա իր զոհաբերության ոգին՝ ներկա ճգնաժամային վայրկյաններու մեջ, լիարյուն մասնակցելով հանգանակության:

Հետևաբար ես կոչ կընեմ Ամերիկայի բովանդակ հայության:

Հանուն անոնց, որ հայ ազատագրության պայքարին առաջին օրերեն սկսյալ մինչև այսօր, մանավանդ վերջին չորս տարվան պատերազմի միջոցին, զեն ի ձեռին մարտնչեցան Ազատ Հայաստանի համար, և շատերը իրենց պատվական արյունով ոռոգեցին անոր Սուրբ Հողը:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 421-422, Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 292:

<sup>19</sup> Երզնկեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 421-422:

Հանուն անոնց, որ չարչարվեցան ու նահատակ ինկան հալածանքի և տարագրության ճամբաներու, աքսորավայրերու, բանտերու մեջ և կախաղաններու վրա:

Եվ հանուն անոնց, որ դեռ կը տառապին աննկարագրելի, անպատմելի աղետներու և թշուառության ճիրաններուն մեջ կը գտնվին Վաղվան Հայաստանի զինվորները, մտքի և տնտեսության մշակները, մեր ցեղին բովանդակ հանճարը և մեր ամբողջ հույսը:

Որպեսզի օգնության ազատարար ձեռքը կարկառենք իրենց, այսօր, այս ժամուն իսկ, որովհետև արդեն ՌԺԵ Է, և վաղը, գիտցե՛ք՝ ՇԱՏ ՌԺԵ ՊԻՏԻ ԸԼԼԱ:

Կոչ կընեն ամեն կարգի ազգային հաստատությանց ու կազմակերպություններու, նաև Որբախնամ ու Կարմիր Խաչ և Համաքաղաքացիական Միություններու և Ընկերություններու և անխտիր ամեն տեսակի ու դասակարգի, որպեսզի յուրաքանչյուրն իր կարողության լրիվ չափով մասնակցի հանգանակությանց և աջակցությունն ընծայե զայն կատարյալ հաջողություն մը ընելու համար, վստահ ըլլալով, որ հանգանակությունեն գոյացած գումարներն ապահովագույն միջոցներով և խղճմտությամբ պիտի հատկացվին գեթ մասամբ ամոքելու Ազգին ծովացյալ տառապանքը:

Հայրենակիցներ,

Եթե հավատք ու իղծ ունիք Հայ Ազգին ապագային և Ազատ Հայաստանի համար,

Եթե կհարգեք Ազատության համար ինկած Նահատակներու հիշատակը,

Եթե չէք ուզեր պատասխանատու մնալ ձեր խղճին ու պատմության առջև,

Տվեք, առատորեն տվեք, և մի զրկեք զձեզ Ազգին վերջին բեկորներուն, մեր նահատակներու թանկագին ավանդներուն օգնելու պատիվեն: ԱՆԴՐԱՆԻԿ»<sup>20</sup>:

<sup>20</sup> Անցանկանյան Ա. Ե., Հակոբյան Հ. Ղ., նշվ. աշխ., էջ 259-261:

Զորավար Անդրանիկն ու հրամանատար Հ. Բոնապարտյանը, շրջելով ողջ ԱՄՆ-ի երկայնքով՝ Ատլանտյանից մինչև Խաղաղ օվկիանոսի ափերը, իրենց խանդավառ ելույթներով կոչ են արել Հայաստանի համար ճակատագրական այդ պահին միահամուռ սատարել հայրենի ժողովրդի ու նորաստեղծ պետության տարաբնույթ կարիքներին: Ժամանակակցի գնահատմամբ, ամերիկահայությունը՝ «հարուստ թե՛ աղքատ, վաճառական թե՛ գործաւոր՝ հպարտութեամբ ու խանդավառութեամբ կ'ողջունեն իրենց հերոսները եւ որպէս նուիրական պարտականութիւն՝ առատաձեռն մասնակցութեամբ կը բերեն իրենց նիւթական բաժինը Փրկութեան Հանգանակութեան»<sup>21</sup>:

Ակզբնապես Զորավար Անդրանիկի և Ազգային պատվիրակության ներկայացուցիչ պրոֆ. Ա. Տեր-Հակոբյանի, ՀՀ ներկայացուցիչ Հ. Քաջազնունու, ԱՄՆ-ում ՀՀ ներկայացուցիչ դոկտոր Գ. Փաստրմաճյանի (Արմեն Գարո) միջև ԱՄՆ-ում կայացած համաձայնությամբ որոշվել էր «Փրկության հանգանակության» արդյունքը տնօրինել հետևյալ կերպ. Կովկասի որբերի ու կարոտյալների համար ՀՀ կառավարությանը հատկացնել հանգանակված ընդհանուր գումարի 40%-ը, Կ. Պոլսի Ազգային Պատրիարքության խնամատարական նպատակներին՝ 30%-ը, Կիլիկիայի շրջանի կարոտյալներին՝ 20%-ը, Եգիպտոսում գործող ՀԲԸՄ տնօրինմանը՝ 10%-ը, ինչպես նաև՝ որոշակի գումար էլ հատկացվելու էր Թավրիզի Ներսես Մելիք-Թանգյան սրբազանի տնօրինմանը՝ ի նպաստ կարիքավորների<sup>22</sup>:

Համազգային հերոս Անդրանիկի ջանքերը շուտով հաջողությամբ են պսակվել: Արդեն 1920 թ. օգոստոսին ամերիկահայության ու հիմնականում ՀԲԸՄ-ի շնորհիվ ընդհանուր առմամբ հանգանակվել է ավելի քան 532 հազար դուլար, որն առաքվել է հետևյալ նպատակներով՝ Հայաստանի Հանրապետություն՝ 175.440, Կիլիկիա՝ 109.170, Կ. Պոլսի Ազգային Պատրիարքութեան՝ 109.170:

<sup>21</sup> Երզնկեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 422:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 420, Քաջունի Ե., նշվ. աշխ., էջ 196:

յուն՝ 130.600, ՀԲԸՄ՝ 45.000, պարսկահայ կրթական գործեր՝ 21.000, Ազգային պատվիրակություն՝ 20.000, հանգանակության ծախսեր՝ 21.424, Հաղթանակի արժեթղթեր՝ 4.109, պատրաստի գումար՝ 5.290<sup>23</sup>: Փաստորեն, ընդհանուր առմամբ, Սահմանադիր-ռամկավար կուսակցության և Հայկական բարեգործական ընդհանուր միության մասնաճյուղերի աջակցությամբ հավաքված գումարի զգալի մասը հատկացվելու էր Հայաստանի Հանրապետությանը, և ինչպես Ավ. Թերզիպաշյանն է գնահատել, թեթևացնելու Անդրանիկի իսկ «քեն ըրած կառավարութեան ուսերուն վրայ ծանրացող բեռը»<sup>24</sup>:

Ազգային պատվիրակության կազմակերպած «Փրկության հանգանակությանն» իրենց մասնակցությունը չբերած ԶՅԴ գործիչներն ԱՄՆ-ում գտնվող ՀՀ առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունու ղեկավարությամբ այդ նույն ժամանակաշրջանում կազմակերպել են ի նպաստ Բանակի հանգանակություն, որին ամերիկահայերը նույնպես իրենց անմնացորդ մասնակցությունն են բերել՝ ընդհանուր առմամբ հավաքելով ավելի քան 561.201 դոլար<sup>25</sup>: Հանգանակված դրամը լիիրավ տնօրինելու միտումով ՀՀ-ն ամեն կերպ չեզոքացրել է Վերակազմյալ հնչակյանների՝ Բանակի հանգանակությանը միանալու փորձերը<sup>26</sup>:

Ամերիկահայերի շրջանում Անդրանիկի, Ամերիկայի հայ ազգային միության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների ծավալած հայաստանամաստ գործունեության ազդեցությունն այնքան մեծ էր, որ 1920 թ. ԱՄՆ-ի բանակում ծառայած 600 հայ զինվորականների թափորը երկրի տարբեր քաղաքներից հավաքվել է մայրաքաղաք Վաշինգտոնում և համաշխարհային ճանաչում ունեցող դիմաձևտային պլաստիկ վիրաբույժ Վարազդատ Գազանճյանի ղլխավորությամբ,

<sup>23</sup> Մնացականյան Ա. Ն., Հակոբյան Հ. Ղ., նշվ. աշխ., էջ 261, Քաջունի Ե., նշվ. աշխ., էջ 196, Ճիզմեճեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 422:

<sup>24</sup> Թերզիպաշյան Ա., նշվ. աշխ., էջ 397:

<sup>25</sup> Ճիզմեճեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 423:

<sup>26</sup> Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 293:

յամբ, հայազգի սպաների առաջնորդությամբ և նվազախմբի ուղեկցությամբ ճոխ զորահանդես իրականացրել: Անցնելով Վաշինգտոնի ղլխավոր փողոցներով՝ Սպիտակ տան, Արտաքին գործերի նախարարության, Կոնգրեսի (Ծերակույտ), Սենատի (Երեսփոխանական ժողով) առջևից՝ երթի մասնակիցները Հիշատակագիր են հանձնել երկրի բարձրաստիճան պաշտոնյաներին՝ խնդրելով «ներկայ Հայաստանի Հանրապետութեան ճանաչումն ու՝ պատմական Հայաստանը»: Նրանց դիմավորել են կոնգրեսական Հենրի Քեբլթ Լոջը, արտգործնախարար Բեյնբրիջ Քոլբին, սենատոր Ռոջերսը, որոնք հայասիրական ելույթներ են ճառել: Արդյունքում, ցույցից 12 օր անց ԱՄՆ-ը պաշտոնապես ճանաչել է Հայաստանի Հանրապետությունը՝ «իբրև քոյր Հանրապետութիւն»: Այդ ճանաչման մասին պաշտոնապես հայտարարել է Գ. Փաստրմաճյանը՝ դառնալով ԱՄՆ-ում ՀՀ դեսպանը մինչև 1920 թ. աշուն<sup>27</sup>:

1920 թ. ԱՄՆ-ից Անգլիա՝ Մանչեսթր, մեկնելուց առաջ Անդրանիկն իր երախտիքի խոսքն է հղել ամերիկահայությանը, որը, հակառակ ամեն տեսակի խոչընդոտների, «Փրկության հանգանակությանը» գործուն և առատաձեռն մասնակցություն էր ցուցաբերել: Նա նշել է. «Իմ խորին շնորհակալութիւններս կը յայտնեմ Ամերիկահայ Գաղութի բոլոր այն ազգայիններուն եւ կազմակերպութեանց, որոնք բարի եղան Փրկութեան Հանգանակութեան յաջողութեան համար բերելու իրենց նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը եւ գործակցութիւնը:

Ես կը հաւատամ թէ շնորհակալ են որբերը եւ այրիները որոնց արցունքները սրբեցիք մասամբ, եւ գոհ է Հայրենիքը մանաւանդ որ իր հեռաւոր զաւակները անտարբեր չեն իր ցաւերուն եւ կարօտութեանց հանդէպ:

Ուստի գոհ սրտով եւ հանգիստ խղճով կը մեկնիմ: Անդրանիկ»<sup>28</sup>:

<sup>27</sup> Նույն տեղում:

<sup>28</sup> Պատուոյ Գիրք Փրկութեան Հանգանակութեան Հայոց Ամերիկայի. 1920-1921. Անուանացանկ նուիրատուներու եւ ընդհանուր հաշուետուութիւն, Հրա-

1921 թ. զարմանը Փարիզում, կնքահայրությամբ ՀԲԸՍ հիմնադիր նախագահ և Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի, Անդրանիկն ամուսնացել է Նվարդ Քյուրքչյանի հետ<sup>29</sup> և որոշ ժամանակ անց՝ 1922 թ. հուլիսի 5-ին նորից մեկնել ԱՄՆ<sup>30</sup>:

Անդրանիկը բնակության վայր էր ընտրել Կալիֆոռնիան՝ հավանելով թե՛ կլիման, թե՛ հայաշատ բնակչությունը և թե՛ Ռիչարդսոնի հանքային ջրերը<sup>31</sup>, որոնք նպաստավոր էին նրա առողջության համար<sup>32</sup>:

Անդրանիկը մի որոշ ժամանակ մնացել է Սան Ֆրանցիսկոյում, հետո՝ օգոստոսի սկզբին, Սակրամենտոյի հյուսիսային կողմում գտնվող Չիքոյի քերմուկների հյուրանոցում, ապա՝ փոխադրվել Ֆրեզնո, որտեղ եղանակը չորային էր և նպաստավոր նրա ծանրացած առողջության համար: Սկզբում նա կառավարությունից ԱՄՆ-ում բնակվելու 6 ամսվա թույլատվություն ուներ, ապա այն երկարացրել է ևս 6 ամսով, իսկ մեկ տարին լրանալուց հետո օրինական ձևակերպում տվել ԱՄՆ-ում իր մշտական կեցությանը<sup>33</sup>:

Ֆրեզնոյում Անդրանիկի բնակարանը քանիցս հրո ճարակ է դարձել՝ իր հետ տանելով փաստաթղթեր, արժեքավոր իրեր: Շուտով Կալիֆոռնիայի առատածեռն հայությունը նրան է նվիրել մի բնակարան, որի ստորին հարկում նաև խանութ կար, որպեսզի «ազգային հերոսը նիւթական մտահոգութիւն չունենայ»<sup>34</sup>:

տարակրթին Փրկութեան Հանգանակութեան կեդրոնական հանգանակիչ լանձնաժողովին, Պոսթըն, 1921, էջ 2:

<sup>29</sup> Չելեայան Ա., նշվ. աշխ., էջ 646, Ղարիբջանյան Գ., ժողովրդական հերոս Անդրանիկ, Երևան, 1990, էջ 171:

<sup>30</sup> Չելեայան Ա., նշվ. աշխ., էջ 648, Քաջունի Եղ., նշվ. աշխ., էջ 200:

<sup>31</sup> Թերզիպաշեան Ա., նշվ. աշխ., էջ 399, 404-405, Ճիգմեճեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 424:

<sup>32</sup> Թերզիպաշեան Ա., նշվ. աշխ., էջ 399:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 404-405, Քաջունի Եղ., նշվ. աշխ., էջ 200, Ղարիբջանյան Գ., նշվ. աշխ., էջ 171, Չելեայան Ա., նշվ. աշխ., էջ 648, 654:

<sup>34</sup> Քաջունի Ե., նշվ. աշխ., էջ 201:

Այդուհանդերձ, Ջորավարի միտքն ու հոգին հայրենի երկրի ու ժողովրդի հետ էր: Ավ. Թերզիբաշյանը, նկարագրելով օտարության մեջ ազգային հերոսի հոգեվիճակը, գրել է. «Հանգանակութեան զբաղումէն անգամ մը զերծ՝ Անդրանիկ նորէն ինքզինքը մատնուած կը զգայ անգործութեան, միանակութեան ծանծրոյթին, որուն վրայ աւելնալու եկած հայրենաբաղձութիւնը՝ իր մէջ կ'արծարծէ այս անգամ ցաւը՝ որ ինքը՝ այսպէս թէ այնպէս, զրկուած է վայելելէ Հայրենիքին մէջ տիրող ազատութիւնը, որուն վրայ՝ որպէս անոր ռահվիրայ, ամենէն աւելի շատ իրաւունք ունէր»<sup>35</sup>:

Հռչակավոր ԱՄՆ-ում Անդրանիկ Ջորավարի հոգեմտավոր ապրումները Ա. Չելեայանը հետևյալ կերպ է նկարագրել. «Խաղաղական օվկիանոսի ափերուն խաղաղ ու անդորր կեանքը հերոսին կեանքը չէր. ան վարժուած չէր անգործ ու խաղաղ կեանքի. Քալիֆոռնիան աքսորավայրն էր Անդրանիկի...: ...Միակ սփոփանքը որ մնացած էր իրեն, այն էր՝ թէ Մայր Հայաստանի վերջին պատահիկը մտած ըլլալով հզօր Ռուսաստանի հովանավորութեան տակ, պիտի կրնար այնուհետեւ իր գոյութիւնը պահպանել, եւ բարգաւաճիլ խաղաղութեան մէջ»<sup>36</sup>:

Ջորավար Անդրանիկը, հեռավոր ԱՄՆ-ից ողջունելով Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը, նշել է. «Քարեբախտաբար [հայության] մյուս մնացած կեսն ալ խոհեմություն ունեցել է կարմիր դրոշակ պարզելու և կանգ առնել տալու թուրք հայաջինջ գրոհը»: Իսկ խորհրդային Հայաստանի ղեկավարների մասին արտահայտվել է՝ ասելով. «Լավ տպավորություն և մի անուշ համակրանք թողած են հանրապետության վարիչները մինչև հիմա»<sup>37</sup>: Պատմական Հայրենիքի 1/10 հողատարածքի վրա իր գոյությունը հերոսների արյան գնով նվաճած և թեկուզ խորհրդային կարգավիճակով փրկված ու պահպանված Հայաստանին սատարելու մասին Ջորավարի հավատամքը

<sup>35</sup> Թերզիպաշեան Ա., նշվ. աշխ., էջ 397-398:

<sup>36</sup> Չելեայան Ա., նշվ. աշխ., էջ 648:

<sup>37</sup> Ղարիբջանյան Գ., նշվ. աշխ., էջ 171:

պարզից էլ պարզ է և բոլոր ժամանակների համար պատգամի արժեք ունի. «Այժմ բազմաչարչար և հալածված հայ ժողովուրդը ունի իր հայրենիքը... Պետք է ուժ տալ Հայաստանի շինարարական ձեռնարկներուն և զորացնել զայն՝ իբրև մեր ապագա հույսերու խարիսխը...»<sup>38</sup>:

Ուստի՝ հաստատվելով ԱՄՆ-ում և արժանանալով համայնքի «համակրալից» ընդունելությանն ու վերաբերմունքին՝ Անդրանիկն ամեն կերպ շարունակել է իր հայրենամյներ առաքելությունը՝ «սատարելու համար հայ ժողովուրդի նիւթական ու բարոյական բարձրացման, որք եւ աստանդական Հայը կապելու համար մայր հայրենիքին»<sup>39</sup>:

1921-1927 թթ. Անդրանիկը մշտապես առանձնակի ոգևորությամբ է ընդունել խորհրդային հայրենիքից Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ), Կարմիր խաչի և այլ պատվիրակությունների այցը ԱՄՆ<sup>40</sup>, համագործակցել և ուղղորդել դրանց արտերկրի մասնաճյուղերի գործունեությունը:

Բանզի Անդրանիկի ղեկավարած «Փրկության հանգանակության» կենտրոնական հանձնաժողովի գործունեությունը 1921 թ. համընկել է նույն տարվա սեպտեմբերին ՀՍԽՂԿ Ժողկոմխորհի ղեկրետով ստեղծված և իր մտերիմ բարեկամ Հովհ. Թումանյանի ղեկավարած ՀՕԿ-ի գործունեությանը, Ջորավարն իր գլխավորած «Փրկության հանգանակության» մարմինները շատ շուտով վերանվանել է Հայրենիքի վերաշինությանն աջակցող հանձնաժողովների, որոնք փաստացի վերածվել են ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի: Հովհ. Թումանյանի մահից հետո ևս Անդրանիկը շարունակել է համագործակցել ՀՕԿ-ի հետ<sup>41</sup>:

Անդրանիկը, որը տարիներ շարունակ տեսել էր օգնության կարոտ հայ որբերի ու այրիների վիճակը, չէր կարող հանգիստ

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 167:

<sup>39</sup> Գոտուլեան Գ., Ջոր. Անդրանիկ եւ իր կեանքն ու պատերազմները, Պէրոս, 1929, էջ 37, Աւետեան Մ., նշվ. աշխ., էջ 224:

<sup>40</sup> Ղարիբջանյան Գ., նշվ. աշխ., էջ 174:

<sup>41</sup> Մնացականյան Ա. Ն., Հակոբյան Գ. Ղ., նշվ. աշխ., էջ 261:

ապրել բարեկեցիկ միջավայրում: Ահա թե ինչու շրջագայել է ԱՄՆ-ի հայաշատ քաղաքներով և ամերիկահայերին կոչ արել օգնել թշվառության դեմ մաքառող հայրենակիցներին՝ որբերին, գաղթականներին: Քարոզչական այդ գործունեության ընթացքում Ջորավարի առողջությունը գնալով վատթարացել է<sup>42</sup>:

Մահվանից երեք շաբաթ առաջ՝ 1927 թ. օգոստոսի սկզբին, Կալիֆոռնիայում իր պատվին կազմակերպված ճաշկերույթի ժամանակ Անդրանիկն արտերկրի հայրենակիցներին հորդորել է բարյացակամ վերաբերմունք ունենալ Հայաստանի նկատմամբ. «Պետք է բարյացակամ ըլլալ Հայաստանի ներկա կառավարության հանդեպ» և ամեն կերպ աջակցել Հայաստանի վերաշինությանը<sup>43</sup>:

1927 թ. օգոստոսի 31-ին դադարել է բաբախել «անզուգական հերոսի սիրտը՝ որ վախ չճանչցաւ, ու անընդհատ բաբախեց իր ժողովուրդին համար...»: Ջորավարի վերջին խոսքերն էին. «Ափսո՛ս, գործս կէս մնաց...»<sup>44</sup>: 1927 թ. սեպտեմբերի 7-ին Ֆրեզնոյի հայկական փոքրիկ եկեղեցում տեղի է ունեցել Ջորավար Անդրանիկի հուղարկավորությունը, որին ներկա էին ավելի քան 10.000 հայեր, ինչպես նաև՝ օտարներ, այդ թվում՝ Ֆրեզնոյի քաղաքապետը և կառավարիչը: Ջորավարի վերջին հրաժեշտը տեղի է ունեցել հայ և ամերիկացի սպաների զինվորական պատիվներով<sup>45</sup>: Անդրանիկի աճյունը ժամանակավորապես ամփոփվել է Ֆրեզնոյի «Արարատ» հայկական գերեզմանատանը, ապա՝ Հայաստանում հանգրվանելու կարգադրությամբ փոխադրվել Նյու Յորք, որտեղ ամերիկյան եպիսկոպոսական մեծ եկեղեցում տեղի է ունեցել քաղաքացիական հոգեհանգիստ: Սակայն 1928 թ. հունվարի վերջին Ջորավարի հարազատների և զինակիցների ուղեկցությամբ շոգենավով Անդրանիկի աճյունը Հայաստան տեղափոխելիս քաղաքական դրդապատճառներով,

<sup>42</sup> Քաջունի Եղ., նշվ. աշխ., էջ 201:

<sup>43</sup> Ղարիբջանյան Գ., նշվ. աշխ., էջ 174:

<sup>44</sup> Քաջունի Եղ., նշվ. աշխ., էջ 202, Ղարիբջանյան Գ., նշվ. աշխ., էջ 176:

<sup>45</sup> Թերզիպաշեան Ա., նշվ. աշխ., էջ 414-415, Գոտուլեան Գ., նշվ. աշխ., էջ 38:



այնուամենայնիվ, հնարավոր չի եղել այն հասցնել Հայրենիք, այլ փոխադրվել է Փարիզ, որտեղ հունվարի 29-ին 7.000 ներկաների, ինչպես նաև Ֆրանսիայի նախագահի գրասենյակի և Ջինվորական նախարարության աշխատակիցների մասնակցությամբ վերաթաղվել է տեղի Պեր Լաշեզ գերեզմանատանը<sup>46</sup>։

Արտերկրում իր հայրենի երկրի ու ժողովրդի համար հանգանակություններ կազմակերպելուց բացի, Անդրանիկը նաև թղթին է հանձնել և հրատարակել իր վկայություններն ու օրագրությունները՝ նպատակ ունենալով պատմության և գալիք սերունդների անաչառ դատաստանին ներկայացնել անցած ռազմական իր ողջ գործունեությունը, ինչպես նաև՝ պատասխան տալ ՀՅԴ կուսակցության կողմից իր հասցեին արվող մեղադրանքներին։ Ձորավարն իր մտածումները հրատարակել է առանձին գրքերով։

ԱՄՆ-ում մեծ Ձորավարը հայրական գորովանքով է վերհիշել իր սիրելի զինվորներին։ Այսպես՝ 1924 թ. հունիսի 18-ին Ֆրեզնոյում, հանդես գալով համայնքի առջև, նա գնահատանքի ու երախտագիտության պատմական դարձած խոսքն է ուղղել «իր այն զինուորներուն որոնք մինչև վերջ կանգնեցան իր կողքին եւ կերտեցին Հայուն փառքը»՝ այն հույսով, որ «օր մը մի գուցէ այդ զոհաբերումները պէտքի մը ծառայեն»<sup>47</sup>։

«ՅԱՐԳԱՆՔԻ ՀԱՄԱՐ (Զինուորներուս)» վերտառությամբ գրության մեջ, Ձորավարը, հակառակ պատմաքաղաքական անխուսափելի հանգամանքների բերումով հայրենի երկրում ստեղծված անվերահսկելի հանգամանքներին, բարձր է գնահատել հայ զինվորի անձնուրաց նվիրումը հայրենիքին ու ժողովրդին, որոնց անօրինակ քաջությունը հիացրել և զայրացրել է ինչպես Արևմուտքի երկրների ղեկավարներին ու զինվորական

<sup>46</sup> Քաջունի Եղ., նշվ. աշխ., էջ 202, Դարիբջանյան Գ., նշվ. աշխ., էջ 179, 180, Մնացականյան Ա. Ն., Հակոբյան Հ. Ղ., նշվ. աշխ., էջ 285, Գուտուլեան Գ., նշվ. աշխ., էջ 39։

<sup>47</sup> Կարինեան Գ., Ազգային հերոս Ձոր. Անդրանիկ եւ իր պատերազմները. Ձոր. Անդրանիկ Էրզրումի ճակատին վրայ, Բարիզ, 1953, էջ 190։

հրամանատարությանը, նույնպես և անգամ թշնամուն։ Անդրանիկի իսկ բնորոշմամբ՝ մարտական գործողություններից բացի, հայ կամավոր զինվորականությունը դարձել էր նաև որբերի ու գաղթականների պաշտպանն ու ապավենը, ինչպես նաև ռուսական զորքի առաջապահ «Լապտերները»՝ իրենց կյանքով լուսավորելով հայրենի տարածքների ազատագրման սրբազան ճանապարհը<sup>48</sup>։

Ձորավար Անդրանիկ Օզանյանն իր ողջ կյանքում հնարավոր բոլոր միջոցներով պայքարել է ազգի թշնամիների դեմ, ծառայել հայրենի հողի պաշտպանության և ժողովրդի ազատության համար։ Քաղաքական ստիպողական հանգամանքների բերումով հայտնվելով օտարության մեջ, այնուամենայնիվ, նա չի քաղաքականացրել իր հարաբերությունները Հայաստանի ինչպես դաշնակցական, այնպես էլ խորհրդային իշխանությունների հետ։ Ընդհակառակը, երբ Ձորավարի հողապահական պայքարը միջազգային ուժերի կողմից կասեցվեց, և նրա զործը, իրոք, որ կիսատ մնաց, այդուհանդերձ, հայտնվելով պանդխտության մեջ, նոր պայմաններում նա շարունակեց նպաստել այժմ արդեն ազգի գեներֆոնդի փրկությանը՝ տարագրության մեջ հայտնված գաղթականության դեպի հայրենի տարածքներ ներգաղթեցնելուն, տեղավորելուն ու երկրում թշվառության հաղթահարմանը։ Արտերկրում կազմակերպելով պարբերական հանգանակություններ և հանդես գալով հայաստանակենտրոն ելույթներով ու գրվածքներով՝ ազգային հերոս Անդրանիկը շարունակել է իր հայրենամապաստ ու ազգանվեր առաքելությունը՝ սկիզբ դնելով սփյուռքի վերածված հայության սերունդները Հայաստանի հետ կապելու գործընթացին։

<sup>48</sup> Ձորավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը. 1914-1917, Օրագրուած գորավարին թիկնապահ զինուորէն, Պոսթոն, 1924, էջ 197։

**ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ**  
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

### **ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ**

Հայ ժողովուրդն իր դարավոր ազգային-ազատագրական պայքարի ընթացքում առաջ է քաշել բազմաթիվ հերոսներ, անձնուրաց մարտիկների մի փայլուն համաստեղություն, որոնց մեջ առանձնանում է այդ պայքարի մեծագույն հերոս Անդրանիկ Օզանյանը:

Այսօր երախտագետ հայ ժողովուրդը նշում է մեր պատմության այդ պայծառ դեմքերից մեկի, կյանքը մեր ազգի ազատագրական պայքարին անմնացորդ նվիրած մեծ զորավարի ծննդյան հորեյսանական 150-ամյակը: Մեծ հայրենասերի մասին ասված խոսքը ոչինչ չի ավելացնում նրա փառքին և նրան անհրաժեշտ չէ, այլ մեզ, ապագա սերունդներին, որոնց ուժ ու կորով է հաղորդում նրա հերոսական կյանքի պատմությունը, մի պատմություն, որն անջնջելի հետք է թողել յուրաքանչյուր հայի սրտում: Իզուր չէ, որ անվանվում է ժողովրդական հերոս, քանզի նրա անձեռակերտ հուշարձանի աներեր պատվանդանն ինքը՝ ժողովուրդն է: Անդրանիկ զորավարը պայքարի ասպարեզ մտավ ժողովրդի կարիքից դրդված՝ նրան անհուն տառապանքներից փրկելու համար, սնվեց ու կերտվեց ցեղի ձգտումներին ու ոգեղեն կերպարին համապատասխան: Այստեղ տեղին է հիշել աշխարհահռչակ գեղանկարիչ Մարտիրոս Մարյանի խոսքերը. «Եթե հայերս իրավունք ունենք մեր անցյալը հերոսական անվանելու, և եթե հարատևել ենք որպես ժողովուրդ առ այսօր, ապա այդ բանում մենք մեծագույն չափով պարտական ենք նաև մեր դարավոր հերոսապատումի հավերժ անմոռանալի դյուցազուններից մեկին՝ Անդրանիկին»<sup>1</sup>:

<sup>1</sup> Անդրանիկ Օզանյան. Մատենագիտություն, Երևան, 1989, էջ 1:

Անդրանիկն իր ժողովրդի պես կենսասեր էր ու լավատես, օժտված արդարամիտ խստությամբ: Ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանի բնութագրմամբ «Անդրանիկը հայոց քաջերից քաջն էր, ազգային-ազատագրական շարժման առաջապահ դրոշակակիրը, որի ձայնը տիրական էր, հեղինակությունն՝ անվիճելի, վճիռն՝ անվերաքննելի: Անհատնում է ժողովրդի սերը Անդրանիկի հանդեպ: Հայ ժողովուրդը նրա մեջ մարմնավորել է Արևմտյան Հայաստանն օսմանյան լծից ազատագրված տեսնելու իր դարավոր իղծերն ու տենչերը»<sup>2</sup>:

Արդարև, Ղորավար Անդրանիկն այն ազգային գործիչներից է, որին ժողովուրդը հերոսացրել էր դեռևս նրա կենդանության օրոք: Նրա կյանքը դարձել է լեգենդ, որ պատմել են սերնդեսերունդ՝ զրավոր ու բանավոր: Զորավարի մասին ստեղծվեցին երգեր, բանաստեղծություններ, կերտվեցին իրապատում հիմքով բազմաթիվ առասպելական պատմություններ:

Այդ մեծ ժողովրդականությունն Անդրանիկը նվաճել է պայքարի բովում հանդես բերած իր հերոսության ու մարդկային վեհ գծերի շնորհիվ: Նա անվեհեր ու քաջարի մարտիկ էր՝ բնածին ռազմական տաղանդով օժտված, անշահախնդիր, խելացի ու շիտակ, ջերմ հայրենասեր:

«Անդրանիկը հայ ժողովրդի համար անհատ չէ, այլ մարմնացումն է մի հզոր ու անսասան գաղափարի,- գրել է Ավետիս Ահարոնյանը,- եվ իբրև այդպիսին նա ժողովրդի երևակայության մեջ անանձնացած, դյուցազնացած է: Կուռք է Անդրանիկը, որ մեր ժողովուրդն է կռել, կոփել ու քանդակել համապատասխան իր դարավոր իղծերի, ձգտումների, ամբողջ իր իղեալին, արդարության և իրավունքի ծարավ իր հոգու պահանջներին:

Անդրանիկը սոսկական հեղափոխական մարտիկ չէր, նա Հայոց աշխարհի ըմբոստացումն էր, հայ տրորված, անարգված հողի վիթխարի աղաղակը, թե՛ էլ չե՛մ կարող, չե՛մ կարող տոկալ:

<sup>2</sup> Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Երևան, 1996, էջ 3:

եվ հենց դրա համար է, որ հողի ու քրտինքի մարդիկ այսպես պինդ սիրեցին նրան»<sup>3</sup>:

Ամեն անգամ, երբ ժողովրդին պատել է ազգային անպաշտպանվածության զգացումը, նա միշտ էլ պատասխան է փնտրել իր անցյալի պատմության մեջ: Ահա թե ինչու հոգեբանորեն արդարացված է այն վերաբերմունքը, որն այսօր մեր ժողովուրդը դրսևորում է իր ազգային հերոսի՝ Անդրանիկի նկատմամբ: Անդրանիկը չի ծառայել ոչ մի վարչակարգի: Նրա քաղաքական հավատամքը ժողովրդի ազատագրական սրբազան պայքարին ծառայելն է եղել: «Ես, – ասում էր նա, – մեկ իդեալ և մեկ նպատակ ունեի՝ հարվածել մեր դարավոր թշնամուն: Ասկե դուրս որևէ պետության կամ կառավարության դեմ շարժման հակառակ մնացի մինչև վերջ»<sup>4</sup>: Նա երբեք չհավատաց թուրք իշխանավորների խոսքերին:

Ավելի քան երեք տասնամյակ Անդրանիկը գտնվում էր հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի առաջին գծում՝ հանդես գալով նախ որպես շարքային մարտիկ, այնուհետև՝ ազատագրական պայքարի ջոկատներ կազմակերպող ու մարտի տանող, ապա՝ որպես հայկական ազգային խոշոր միավորումների կազմակերպիչ ու տաղանդավոր գորահրամանատար: Սակայն այս ամենի հետ միասին նրան օտար չէին ընտանեկան սերը, ուրախությունն ու վիշտը: Նա սրտացավ հայր էր և դաժան վրիժառու, անվախ հերոս և հասարակական-ռազմական գործիչ, որը գործում էր հասարակական-քաղաքական բարդ իրադրությունների մեջ, հաճախ շրջապատված դավադիրներով ու դավաճաններով: Անդրանիկը, որպես հասարակ մահկանացու, հավատում էր մարդուն, պետություններին ու կուսակցություններին, նրանց ղեկավարների տված խոստումներին: Երբեմն նա համակվում էր պատրանքներով, խաբվում, հիասթափվում էր՝ ծանր տանելով ժողովրդի և իր ապրած ողբերգությունը, հիասթափվում

<sup>3</sup> Ահարոնյան Ա., Երկերի ժողովածու, հ. 5, Բոստոն, 1984, էջ 382:

<sup>4</sup> Սիմոնյան Դ., նշվ. աշխ., էջ 5:

էր, բայց կրկին մոլեգնում էր: Պարզ էր նրա բնավորությունը, շիտակ նրա հոգին, և անզիջող՝ արդարության նրա սուրը:

Ռազմաքաղաքական պայքարի այս բոլոր ոլորտներում էլ Անդրանիկի նպատակը մեկն է եղել՝ հայոց ազատագրական պայքարը հասցնել իր հաղթական ավարտին՝ Հայաստանն ազատագրել բռնակալների ճիրաններից, ստեղծել հայկական անկախ ու ազատ պետականություն: Անդրանիկի բաղձանքի այդ մասը իրականացվել է: Ստեղծվել է անկախ Հայաստանի Երրորդ Հանրապետությունը: Սակայն այդպես էլ չիրականացավ Անդրանիկի գլխավոր ցանկությունը՝ Արևմտյան Հայաստանի ազատագրումը:

Տասնամյակներ շարունակ ազատության ասպետի ճակատին հանիրավի խարանվել են սուտ ու պատիր, ստոր, չարամիտ պիտակներ: Անկարայի ու Բաքվի ծայնափողը դարձած խորհրդային կենտրոնական իշխանության սաղրանքների, երկդիմի քաղաքականության հետևանքով Անդրանիկի անունը ջնջված էր Հայոց պատմության դասագրքից: Նրա մասին գրված մենագրությունների մեծ մասը խորհրդային տարիներին չիրատարակվեցին: Ջորավարին վերաբերող արխիվադարանների դռները փակ էին ոչ միայն Բաքվում և Մոսկվայում, այլև բուն Հայաստանում: Դաժան ժամանակներ էին: Սակայն այդ խավարի մեջ էլ երբեմն-երբեմն առկայծում էին լույսի թույլ շողեր: Կային խիզախներ, որոնք կյանքի գնով գաղտնի, երբեմն հրապարակավ հնչեցնում էին ճշմարտության ծայրը: Ժողովուրդը չէր մոռանում պանծալի գորավարին: Տարածում էր նրա դիմանկարը, երգում նրան ծոնված բոցաշունչ երգերը, ստեղծում նորերը, այսուայնտեղ, առանց պետական արտոնագրի, կանգնեցնում արձաններ (Ուջանում, Ոսկեհասկում և Վերին Սանահինում) ու իրենց արու զավակներին կոչում նրա անունով: Ջորավար Անդրանիկի կյանքը, հիրավի, մի ամբողջական հերոսապատում է, որ ամփոփում է հայ ժողովրդի երեք տասնամյակների զոհառատ մաքառումները:

Մեր կարծիքով միանգամայն ճիշտ է նկատել ակադեմիկոս Յ. Սիմոնյանը, երբ իր «Անդրանիկի ժամանակը» երկհատոր աշխատության մեջ գրում է. «Անդրանիկի գործունեությունն անկողմնակալ զնահատելու համար անհրաժեշտ է ելնել պատմական այն բարդ պայմանների ամբողջությունից, որոնցում ապրել ու գործել է նա»<sup>5</sup>: Նրա կյանքի ու գործունեության առաջին շրջանը՝ մինչև 1904 թ. վերջը, հիմնականում անցել է Արևմտյան Հայաստանում, որտեղ, 1890-ական թթ., պայքար էր մղվում բուրժուական բռնակալության դեմ: 1890-ական թթ. Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի նկատմամբ կիրառված քաղաքականությունն այլ բան չէր, եթե ոչ ցեղասպանություն, որն իրականացվում էր անլուր հետապնդումների, տնտեսական հրեշավոր շահագործման ու քայքայման և ֆիզիկական բնաջնջման միջոցով: Հայ ժողովրդի ազատագրական պայքարի բոլոր ուղղությունների վրա իր կնիքն էր դրել հենց այս հանգամանքը, այսինքն՝ բնաջնջման վտանգի դեմ պայքարը՝ ինքնապաշտպանությունը: Թուրքական յաթաղանի դեմ արևմտահայության ինքնապաշտպանական պայքարում մեծ տեղ է գրավում հայդուկային շարժումը: «Պետք էր ցույց տալ հայերին, թե հայ բազուկը գիտե հրացան բռնել, հայ սիրտը գիտե կռվել և պաշտպան կանգնել իր իրավունքներուն: Այս ամենը պետք էր ի հայտ բերեին սարսափ մը ճան ֆիդայիներ, որոնք ուխտած էին զոհվիլ ազգին ազատության սիրույն, արդարացնելով այն մեծ հավատքն ու հույսը, որ ժողովուրդը կենտրոնացած էր իրենց վրա», – ասում էր գորավար Անդրանիկը 1901 թ. հոկտեմբեր-նոյեմբերին:

Հայդուկները կամ ֆիդայիները վրեժխնդիր էին լինում հայ ժողովրդի նկատմամբ գործադրված վայրագությունների համար և իրենց պայքարով վառ էին պահում նրանց ազատատենչ ոգու կրակը: «Այսուհետ իմ բարձր Հայաստանի լեռներն են լինելու, իմ ամենաբաղձալի երազանքը՝ հայրենիքի համար մեռնելը: Բարով

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 4:

արժանանամ հրեղեն զնդակի համբույրին»: Ֆիդայիների երդման այս խորիմաստ խոսքերը մեկնաբանման կարիք չունեն: Նրանք մշակել էին կյանքի ու մահվան սեփական կարգախոսը: Շատերը կարծես պողպատածույլ արծաճներ էին: Բոլոր վայելքներից կամուփին հրաժարված ֆիդային կարող էր «ամուսնանալ միայն հրացանի հետ» և ցանկացած պահի, առանց տատանվելու, իր երիտասարդ կյանքը նվիրաբերելու հայրենիքի ազատագրության զոհասեղանին: Քիչ էին ապրում, բայց հավերժ մնում էին ազատության կարոտ ու փրկություն տենչացող բազմահազար իրենց հայրենակիցների սրտերում: Հենց այս պայքարի ընթացքում ձևավորվեցին մեծ հերոսի ռազմական տաղանդի, քաջության, հայրենիքի ազատագրմանը մինչև վերջ նվիրվելու գծերը:

Այստեղ պետք հիշել, որ Անդրանիկն առաջին հայդուկապետ էր, կամ հայ ժողովրդի ռազմական տաղանդի առաջին մարմնացումը չէր: Նրանից առաջ, նրա հետ և նաև նրանից հետո ֆիդայական շարժումը, հայոց ազատագրական պայքարը երևան հանեց հայտնի ու անհայտ բազում ռազմիկներ, անվեհեր ֆիդայիներ: Այս առասպելական հերոսներն անխտիր արժանի են ունենալու իրենց տեղը մեր ազատագրական պայքարի տարեգրությունում: Ազատության հավերժական տենչով վառվող անզուգական մարտիկներ էին Արաբոն ու Աղբյուր Սերոբը, Գևորգ Չաուչն ու Հրայր Դժոխքը, Գուրգենն ու Սմբատը, Նիկոլ Դումանն ու Վարդանը, Չոլոն, Դրոն ու Նժդեհը և այլք: «Կամավոր նահատակների մի ընտիր խումբ, որ պայքարի մտավ քառորդ դար առաջ և որոնց շարքից էր Անդրանիկը, նույնքան անձնագոհ էր, որքան սա: Նոր մարտական հայության առաջին ծիլերն էին, ամեն մեկը ընտրված հազարի միջից, ամեն մեկը մի գորավոր անհատ, բայց այդ ընտիրների և գորավորների մեջ աչքի ընկավ Անդրանիկը: Այդ փայլուն շարքն ունեցավ բազմաթիվ հետևորդներ, որ իբրև տիպար, իբրև նոր տեսակը հայության՝ իրենց խորքով տարբեր չէին նրանից, բայց նրանց շարքում միակն եղավ Անդրանիկը, որ ստացավ համազգային հերոսի հռչակ և անուն: Նույնն էր բարո-

յական խորքը, բայց տարբեր էին խառնվածքն ու կարողությունները».- գրել է Նիկոլ Աղբալյանը<sup>6</sup>: Նրանց պայքարն ընթացավ արդար ըմբոստացմամբ, արդար հատուցումով, եզակի արիությանբ ու ինքնամոռաց նվիրումով: Նրանք՝ այս առասպելական հերոսները, իրենց գոյության իմաստը տեսան հեղափոխության ակիքների փոթորկումների մեջ՝ ամեն բույն պատրաստ կռվելու բռնակալության դեմ, հաղթելու կամ խորտակվելու: Նրանք հայոց ազատամարտի անվեհեր պաշտպանները եղան, մեր աշխարհի հսկաների դյուցազնության համբավը հասցրին մի նոր բարձրության և ընկան այդ հերոս ռազմիկներից շատերը՝ իրենց փոթորկահույզ ու անձնական կյանքն անմնացորդ նվիրելով ազգին, նրա ահեղ գոյամարտի ուղիներում: Նրանք ընկան տանջահար ժողովրդի փրկության ճանապարհներին՝ առասպելական հերոսներին արժանի մահով: Հայոց մեծ զորավարն աճեց ու մեծացավ այս հերոսների միջավայրում՝ մկրտվելով նրանց շարքերում: Եվ, միգուցե, եթե չլիներ հերոսների այս պայծառ համաստեղությունը, չէր լինի նաև Անդրանիկը՝ մեր ազգի հերոսն ու անվեհեր մարտիկը, հայոց լեգենդը: Սակայն պետք է ընդգծել, որ փառապանծ հերոսների շարքում Անդրանիկը գրավում էր իր ուրույն ու բացառիկ տեղը՝ մարտական փայլուն կարողություններով, խիզախ նախաձեռնություններով, անսպառ եռանդով, բնածին ռազմագիտությամբ:

«Երկու հզոր հիմնական կիրք ուներ-անվերապահ ատելություն դեպի մեր ազգային թշնամիները, ու խորին սեր դեպի ժողովուրդը. մանավանդ խոնարհ խավերը,-նկատել է զորավարի քարտուղար Ե. Քաջունին,- Եղավ միշտ արդարամիտ ու հանդուգ՝ առասպելական չափերով: Կռիվ վարելու, դիրք ընտրելու իր ընդունակությունը մարզարեության կմոտենար: Միշտ խնայեց իր զինվորներին ու չնչին զոհերով մեծ գործեր կատարեց: Իբրև

<sup>6</sup> Չորավար Անդրանիկ, Երևան, 1990, էջ 12:

մարդ անշահախնդիր էր, ուղղամիտ ու արդարադատ: Ուներ սքանչելի հիշողություն և պատմելու շնորհք: Ձիմակիցները մնացին նրա ծանր ծեռքի տակ, միշտ կարգապահ ու հնազանդ, որովհետև նրա հրամանատարության տակ կռվի պահերին իրենք իրենց ապահով էին զգում: Իր գթասրտությունն ու արդարամտությունը հարգանք ներշնչեցին նույնիսկ մեր թշնամիներին»<sup>7</sup>:

Անդրանիկ Թորոսի Օզանյանը ծնվել է 1865 թ. փետրվարի 25-ին Սեբաստիայի (ներկայումս Սվազ) նահանգի Շապին-Գարահիսար գյուղաքաղաքում, արհեստավորի ընտանիքում: Մեկուկես տարին դեռ չբուրած՝ մահանում է մայրը: Որբուկի խնամքն իրենց վրա են վերցնում հայրը և ամուսնացած քույրը՝ Նազելին<sup>8</sup>: 10 տարեկան հասակում ընդունվում է տեղի ազգային Մուշեղյան վարժարանը և ավարտում այն 1882 թ., ապա որպես հյուսն աշխատանքի է անցնում քաղաքի արհեստանոցներից մեկում: Նախնական կրթությունը Անդրանիկին շատ բան էր տվել՝ նրա մեջ հայրենասիրություն և ազգային ոգի ու կորով դաստիարակելու գործում: Դրա համար Անդրանիկն ու իր համաքաղաքացի հայ երիտասարդներից շատերը պարտական էին իրենց բանիմաց և հայրենաշունչ ուսուցիչներին՝ Նազարեթ քին. Քիպարյանին և Հաջի Պետրոս աղային<sup>9</sup>: Հետագայում Անդրանիկը ջերմությամբ է վերհիշում այդ երկու հայրենանվեր մտավորականներին: Նրան այլևս չհաջողվեց շարունակել կանոնավոր ուսումը: Այսուհետ կյանքն ու պայքարը դարձան նրա մեծ ուսուցիչները:

Դեռ վաղ հասակից ականատես լինելով օսմանյան պաշտոնյաների վայրագություններին՝ Անդրանիկն ատելությամբ է լցվում նրանց հանդեպ: Այդ ատելությունն ավելի է բորբոքվում, երբ թուրք պաշտոնյան 1883 թ. Շապին-Գարահիսարում ծեծում է

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 26:

<sup>8</sup> Միմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 50:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 54:

նրա անմեղ հորը, հասցնում մարմնական վնասվածք, վիրավորում ազգային արժանապատվությունը: Չհանդուրժելով այդ ամենը՝ պատվասեր երիտասարդն արժանին է հատուցում հրոսակին: Իշխանությունները ձերբակալում են նրան: Սակայն բարեկամների օժանդակությամբ ազատվում է բանտից: Անդրանիկը 1884 թ. մայիսին մեկնում է Կ.Պոլիս և աշխատանքի անցնելով արքունական զինապահեստի շինարարության վրա որպես հյուսն, աշխատում է մինչև 1886 թ.: Այս վերադառնում է հայրենի քաղաք, որտեղ ամուսնանում է համաքաղաքացի Սողոմոն աղայի աղջկա՝ Վերոնիկա Թաշճյանի հետ: Անդրանիկը հայրենի քաղաքում անգործ չմնաց, ազգականներից մեկի հետ բացեց պղնձագործի արհեստանոց-խանութ: 1887 թ. ամռանը քաղաքում բռնկված տիֆի համաճարակի պատճառով մահացավ Անդրանիկի նորածին զավակը: Անդրանիկը մասնակցեց հայրենի քաղաքում կառուցվող եկեղեցու շինարարությանը, որպես հյուսն, բարեգործական նպատակներով: Հոգևոր առաջնորդի պատվերով 1889 թ. եկեղեցու ներքնահարկում ուրիշ բարերարների անունների շարքում գրվեց նաև Օզանյան ընտանիքի անունը: Առաջնորդվելով եկեղեցական կարգով՝ կիրակի օրերը որպես տոն յուրաքանչյուր հայ պարտավոր էր փակել խանութները, արհեստանոցները և աշխատավայրերն ու ներկա լինելու սուրբ Աստվածածնի պատարագին: Տեսնելով, որ մի դրամապաշտ հայ, խախտելով ավանդույթը, խանութը բացել և առևտուր է անում, փորձում է նրան կարգի հրավիրել, սակայն վեջինս վեճի է բռնվում Անդրանիկի հետ: Այդ տեսնելով՝ մոտեցող ոստիկանները ձերբակալում են Անդրանիկին<sup>10</sup>:

Նա 27 օր բանտ նստելուց հետո ազատվում է կալանքից: 1890 թ. աշնանը Վերոնիկան երկրորդ զավակն ունեցավ: Անդրա-

<sup>10</sup> Կարապետյան Հ., Անդրանիկ, հ. 1, Երևան, 1992, էջ 16:

նիկը երջանիկ էր և Լևոն կնքեց նրա անունը: Բայց երեխան ապրեց ընդամենը մի քանի ամիս<sup>11</sup>:

Չավակի մահը ծանր հարված եղավ երիտասարդ ծնողներին: Անվերջ հետապնդումները և նորից բանտարկվելու վտանգն Անդրանիկին ստիպեցին թողնել հայրենի օջախն ու ընտանիքը և նորից պանդխտության մեկնել Կ.Պոլիս, նույն աշխատանքին:

1891թ. կեսերին Անդրանիկը հանկարծակի իմանում է, որ մահացել են հայրն ու կինը՝ Վերոնիկան: Միշտ հպարտ ու խրոխտ երիտասարդի հոգեկան խռովքը սահման չուներ: Ընտանեկան ծանր ողբերգությունը նրան մղում է միայնության, նա կտրվում է ընկերների ու հարազատների միջավայրից՝ լուռ սգալով իր անդառնալի կորուստները:

Բարեբախտաբար, Անդրանիկի հոգեկան դրաման երկար չի տևում: Ընկերների օգնությամբ աստիճանաբար սպիանում են հոգեկան ծանր վերքերը: Նա սկսում է խմբեր կազմել, նրանց գորավարժությունների տանել քաղաքից դուրս: Հայ երիտասարդների հավաքույթների զրույցի նյութը ժողովրդի փրկության գործն էր: Անդրանիկի եզրակացությունն այն էր, որ ժողովրդի փրկության միակ ուղին զինված ապստամբությունն է, որին պիտի նախորդեին ինքնապաշտպանական զոյամարտերը:

Անդրանիկը դառնում է պոլսահայ երիտասարդության սիրելին: Նա աշխատելով զինագործարանում՝ նպատակ ուներ ուսումնասիրել զենքի արտադրությունը և հարմար պահի նման գործարան հիմնել Արևմտյան Հայաստանի որևէ քաղաքում: Սակայն նա երկար չի մնում Օսմանյան կայսրության մայրաքաղաքում: 1891 թ. վերջին անցնելով Սևաստոպոլ, Յալթա և Ռումինա՝ 2 տարի մնում է այստեղ: Այս շրջապայում է հայկական մի շարք գաղթօջախներում, Կովկասում, հաղորդակից դառնում Երևանի, Թիֆլիսի, Հյուսիսային Կովկասի հայերի ազատագրման

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 17:

ծրագրերին, ապա անցնում Բաթում<sup>12</sup>: Սակայն կարոտը նրան ձգում էր հայրենիք: Իմանալով, որ Օսմանյան կայսրությունում նախապատրաստվում և իրականացվում են հայկական ջարդեր՝ 1893 թ. նա Բաթումից գալիս է Կարս և անցնում Արևմտյան Հայաստան, ապրիլին հասնում է Սասուն, մայիսին՝ Մուշ՝ միանալով Տարոնի զինյալներին: Այստեղ ծավալվել էր հայդուկային շարժումը<sup>13</sup>:

Հայդուկները, հրաժարվելով անձնական ու ընտանեկան կյանքից, վերցնելով հրացանը, փամփուշտակալը, ճամփորդական պարկը, բարձրանում էին հայոց լեռները: Այդ տարիներին հայոց շարժման, հերոսական ու անհավասար պայքարի կենտրոնը դարձավ Սասունը, քանզի թուրքերը որոշել էին հիմնահատակ կործանել դարեր շարունակ սուլթանական լուծը չհանդուրժող այդ լեռնագավառը: Այստեղ էին կազմակերպվել Արաբոյի և Աղբյուր Սերոբի հայդուկային խմբերը, որոնց գործուն մասնակիցներն էին Գևորգ Չաուշը, Գուրգենը, Հրայր Դժոխքը: Պայքարում աչքի ընկան Միհրան Տամատյանը, Մուրադը, Շենիկի տանուտեր Գրգոն, որոնց անունները ոսկե տառերով գրվեցին Հայոց պատմության էջերում: Ազգային պայքարի այս նոր ալիքը Անդրանիկին ձգեց Սասուն: 1894 թ. ապստամբության պարտությունից հետո նա գալիս է Ռուսաստան, նորից լինում է Սևաստոպոլում, Յալթայում, ապա մի քանի օրով՝ Անդրկովկասում՝ նպատակ հետապնդելով նախ զենք տեղափոխել Երկիր, ապա կազմավորել կամավորական նոր ջոկատներ: 1895 թ. հուլիսին Անդրանիկը 26 հոգանոց մի ջոկատով վերադառնում է Արևմտյան Հայաստան և միանում նախ Վազգենի, Գուրգենի և ապա՝ հայդուկապետ Աղբյուր Սերոբի խմբին<sup>14</sup>: Աղբյուր Սերոբն ու Անդրանիկը դառնում են ոչ միայն զենքի, այլև գաղափարի մարտական ըն-

<sup>12</sup> Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 72:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 73, նաև Կարապետյան Հ., նշվ. աշխ., էջ 30:

<sup>14</sup> Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 74, 75:

կերներ: Սերոբը բարձր է գնահատում Անդրանիկի բանիմացությունն ու մարտավարական հնարքները ու հաճախ էր ասում. «Այս տղան մեծ անուն պիտի ունենա»: 1899 թ. Սասնո Գեղաշեն գյուղի ռես Ավեի դավաճանությամբ թունավորվում է Սերոբ փաշան և սպանվում քուրդ ցեղապետ Բշարե Խալիլի ձեռքով<sup>15</sup>: Սերոբի սպանությունից հետո հայդուկային շարժման գլուխ անցավ Անդրանիկը, որը ոչ միայն փոխարինեց մարտական ընկերոջը, այլ նաև վրեժխնդիր եղավ նրան թունավորողներից ու սպանողներից՝ իր հավատարիմ զինակիցներից Գևորգ Չաուշի հետ:

Նրա նոր սխրանքների առհավատչյան դարձավ Մշո Առաքելոց վանքի պաշտպանությունը: 1901 թ. նոյեմբերի 1-ին 37 հայդուկներով Անդրանիկն ամրացավ վանքում: Նրա հետ էին Գևորգ Չաուշը, Սեբաստացի Մուրադը, Սմբատ Բորոյանը, Հակոբ Կոտոյանը, Սպաղանցի Մակարը և ուրիշներ: Ֆերիք և Ալի փաշաների ղեկավարած թուրքական երկուհազարանոց բանակի հարձակումները, Բարձրագույն դրան սպառնալիքները չեն կոտրում վանքում պաշարվածների անսասան կամքը: Ի վերջո, թուրքերը հարկադրված բանակցությունների են գնում Անդրանիկի մոտ: Հայդուկների դուրս գալը երկաթյա օղակից հրաշք էր թվում: Առաքելոց վանքի կռիվը նոր ոգևորություն է առաջացնում ջարդերից արնաքամ եղած ամբողջ արևմտահայության մեջ<sup>16</sup>:

Անդրանիկի անունը թնդում էր ամենուր: Մշո Առաքելոց վանքի պաշտպանական մարտերից հետո նրա աչքի ընկնող հաղթանակներից էր Ծովասարի, Աղթամարի և Գոմեր գյուղի կռիվները: Տարոնի, Սասունի և Վասպուրականի 1902-1904 թթ. հերոսամարտերը մեծ ճանաչում բերեցին Անդրանիկին՝ նրան դարձնելով արևմտահայ ազատագրական շարժման ոգին<sup>17</sup>:

<sup>15</sup> Գևորգյան Հ., էջեր հայոց ազատամարտի, Երևան, 2005, էջ 164:

<sup>16</sup> Անդրանիկ, Առաքելոց վանքին կռիվը, էջ 69:

<sup>17</sup> Մնացականյան Ա., Հակոբյան Հ., Չորավար Անդրանիկ, Կ. Ա, Մոսկվա, 1991, էջ 67-77:

1904 թ. ապրիլին սասունցիներն Անդրանիկի ղեկավարությամբ դիմեցին ինքնապաշտպանության: 15-հազարանոց կանոնավոր զորքերի և քուրդ հրոսակների զրոհներին Յրայրի, Անդրանիկի, Գևորգ Չաուչի, Սեբաստացի Սուրադի և մյուս ֆիդայիների ջոկատները դիմակայում էին հերոսաբար: Անդրանիկի ղեկավարած զինյալ ջոկատները փայլուն հաղթանակներ տարան մի քանի անգամ գերազանցող օսմանյան զորքերի դեմ: Բայց ուժերն անհավասար էին: Ջոհվում է Յրայրը, նրա հետ նաև մեկ տասնյակ ֆիդայիներ: Թուրքերը ճնշեցին սասունցիների զինված դիմադրությունը, ամայացրին Սասունի Շենիկ, Սեմալ, Գելիգուզան և այլ գյուղերը: Հայ շինականները հեռացան հարազատ վայրերից, իջան Մշո դաշտ:

Պարտությունից հետո հայդուկները բաժանվում են 2 խմբի, մեկը Սպաղանցի Մակարի ղեկավարությամբ ամրանում է Սասնա բարձր լեռներում և շարունակում պայքարը, իսկ մյուսը՝ Անդրանիկի և Գևորգ Չաուչի ղեկավարությամբ, անցնում է Վասպուրական՝ ամրանում Աղթամարում, պայքարի նոր ափք բարձրացնելով Արևմտյան Հայաստանի դաշտային հատվածում: Շուտով թուրքական զորքը շրջապատում է Աղթամարը՝ հույս ունենալով, որ վերջապես կբռնի Անդրանիկին ու կոչնչացնի նրան: Սակայն Անդրանիկն այս անգամ ևս հնարամտությամբ կարողանում է դուրս գալ պաշարումից և փոքրաթիվ հայդուկներով անցնել Պարսկաստան, ապա՝ Անդրկովկաս: Այս հերոսական դրվագով, փաստորեն, եզերվում է Անդրանիկի կյանքի ու գործունեության առաջին՝ հայդուկային պայքարի շրջանը, որը, իհարկե, հիմք դարձավ նրա հետագա լայնահուն գործունեության համար: 1904 թ. հոկտեմբերին հասնելով Թիֆլիս՝ Անդրանիկը խնդիրներ է ունենում տեղի հայ մտավորականության ու հայկական գործիչների հետ<sup>18</sup>: Որոշվում է ժամանակավորապես դադարեցնել պայքարը, նախ զինել ժողովրդին, ապա նոր, հարմար պահի

<sup>18</sup> Սիմոնյան Գ., նշվ. աշխ., էջ 228, 232:

վերսկսել այն: Անդրանիկը մեկնում է Բուլղարիա՝ նպատակ ունենալով հայ ազատագրական պայքարը զուգորդել բուլղարականին՝ միասնական ճակատ ստեղծելով ընդհանուր թշնամու՝ Օսմանյան կայսրության դեմ:

1905-1914 թթ. համարվում է Ջորավարի կենսագործունեության երկրորդ շրջանը, որը նա անցկացրեց երկարատև տարագրության մեջ: 1905 թ. նա մեկնում է արտասահման, լինում Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Իրանում, Եգիպտոսում և մինչև 1914 թ. բնակվում ու գործում է հիմնականում Բուլղարիայում<sup>19</sup>: Արտասահմանում նա նույնպես հայկական շարժման հորձանուտում էր: Ձենք ու զինամթերք էր հայթայթում հայդուկային խմբերի համար: Այդ տարիներին ևս նա համոզված էր, որ թուրքական վայրագությունների դեմ պայքարի հարվածային ուժը հայդուկներն են: Պատահական չէ, որ 1906 թ. նա գրեց իր «Մարտական հրահանգները», որը գործնականում հանդիսանում էր հայդուկային շարժման Կանոնադրությունը: Սա խորհրդանշական փաստ է, որը հաստատում է հայդուկային շարժմանը տևական բնույթ տալու նրա մտադրությունը<sup>20</sup>:

1912 թ. աշնանը բռնկվում է Բալկանյան առաջին պատերազմը՝ ընդեմ թուրք բռնակալների: Բուլղարական դրոշի տակ կռվելու են գնում Անդրանիկն ու Գարեգին Նժդեհը: Նրանք թուրքական բանակի դեմ կռիվներում հավաքագրում են 273 հայ կամավորների և որպես զորահրամանատարներ ղեկավարում են 14 հաղթական ճակատամարտեր՝ դրսևորելով ոչ միայն քաջություն, այլ նաև ռազմական մտածողության թարմություն ու հնարամտություն<sup>21</sup>: Երբ Անդրանիկը ռազմավարական մեծ հմտությամբ գերի է վերցնում թուրքական զորամիավորման գլխավոր

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 280-342:

<sup>20</sup> Անդրանիկ, Մարտական հրահանգներ, Երևան, 1992:

<sup>21</sup> Սիմոնյան Գ., 1912-1913 թթ. բալկանյան պատերազմները և հայերը, Երևան, 2014, էջ 122, 128, 135, 136, նաև՝ Մնացականյան Ա., Հակոբյան Գ., նշվ. աշխ., էջ 108:



շտաբը՝ հայատյաց Յավեր փաշայի զլխավորությամբ, որով ստիպված զինաթափվում է 11 հազարանոց զորամիավորումը 4 փաշաների, 243 այլ սպաների հետ, ցնծում է ողջ Բուլղարիան և համայն հայությունը: Այդ առիթով բուլղարական բանակի հրամանատարը դիմում է Անդրանիկին հետևյալ խոսքերով. «Դուք՝ հայերդ, բոլորդ էլ հերոսներ եք, բոլորդ էլ առյուծի նման կռվեցիք»: 1913 թ. հունվարին հայկական վաշտը հաղթական կռիվներով մտնում է Մարմարայի եվրոպական ափին փռված Ռոդոսթո քաղաքը: Անդրանիկը ստանում է Բուլղարիայի մարտական սպայի կոչում: Նա և իր շատ զինակիցներ պարգևատրվում են Բուլղարիայի մարտական շքանշաններով:

1914 թ. սկսվում է նրա գործունեության երրորդ շրջանը: Այդ ընթացքում 1914-1919 թթ. Անդրանիկը հիմնականում գործել է Անդրկովկասում: 1914 թ. սկսված Առաջին համաշխարհային պատերազմից մեծ ակնկալիքներ ունենալով՝ Անդրանիկը տեղափոխվում է Թիֆլիս և նշանակվում Կովկասյան բանակի հրամանատարության տակ գործող հայկական կամավորական առաջին ջոկատի հրամանատար: Նրա գունդն աչքի է ընկնում և շահում է Աշնակի, Սարայի, Սուլա Յասանի, Բարդուղիմեոսի վանքի, Բաշկալայի, Յայոց ձորի, Աղթամարի, Կորճկենի, Դատվանի, Վարդենիսի (Սուշի մոտ), Արճեշի, Բերկրիկալեի ճակատամարտերը: Սակայն զորավարի ռազմական արվեստի փառապսակը դարձավ 1915 թ. ապրիլի 18-ին Դիլմանի նշանավոր ճակատամարտը, որն իրավամբ համարվեց կովկասյան ռազմաճակատի կարևոր իրադարձություններից մեկը: Այս առիթով կովկասյան երկրորդ հրաձգային դիվիզիայի համանատար, գեներալ-մայոր Թ. Նազարբեկյանն ասել է. «Դիլմանի համբավավոր ճակատամարտը շահողը զորավար Անդրանիկն էր: Անդրանիկը տեղանքի և թշնամու էության գերազանց իմացությամբ, իր ռազմական փորձով ու խորհուրդներով, իմ ջոկատում եղած ժամանակ, բազմիցս մատուցել է անգնահատելի ծառայություններ: Անձամբ նրա խենթորեն խիզախ մարդու, նշանաբանն էր - հարձակում: Բացի

այդ, իր մեծ վստահությամբ Անդրանիկը գերազանցորեն ազդում էր անվարժ զանգվածի վրա և համառությամբ ու կամային ուժեղ կարգուկանոն պահպանում խմբում»<sup>22</sup>:

Վերհիշելով Դիլմանի ճակատամարտում Անդրանիկի խաղացած դերը՝ ընդհանուր զորահրամանատար, գեներալ-լեյտենանտ Չեռնոզուբովը տարիներ հետո գրել է. «Անդրանիկն այստեղ դրսևորեց իր բոլոր հատկությունները. խիզախորեն պաշտպանում էր ոչ միայն իրեն հանձնարարված մարտական ճակատը, այլև դրսևորում էր ակտիվություն մեր կողմից կազմակերպվող հակազորոհների ժամանակ: Այդ ճակատամարտում զորամասը մեծ կորուստներ տվեց, բայց արժանացավ մարտական փառքի, և այդ կռվին մասնակցած ամեն մի կամավոր հպարտությամբ կարող է ասել. Անդրանիկի հրամանատարությամբ զորամասը պատվով մասնակցեց Դիլմանի հռչակավոր ճակատամարտին, որը փրկեց Կովկասը թշնամու ներխուժումից: Ես՝ ի դեմս Անդրանիկի, միշտ տեսնում էի եռանդուն հայրենասերի, Յայաստանի ազատության համար մարտնչող մարտիկի, խոր կերպով իր հայրենիքը սիրողի»<sup>23</sup>:

Դիլմանի հաղթական ճակատամարտի համար զորավար Անդրանիկն ու իր ենթակայության տակ գործող կամավորներից շատերը արժանանում են կառավարական բարձր պարգևներ: Այս հաղթական ճակատամարտից մի քանի օր անց՝ ապրիլի 24-ին, երիտթուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ արևմտահայերի զանգվածային բնաջնջման դիվային պլանի իրագործմանը, որին զոհ են գնում ավելի քան մեկ ու կես միլիոն հայեր: Յայերը զրկվեցին իրենց հայրենիքից: Ջարդերից փրկված արևմտահայության բեկորները ցրվեցին աշխարհով մեկ: Անդրանիկը նվիրվում է նրանց փրկության գործին. Յուսիսային Կովկասում կուտակվել էին մեծ թվով փախստականներ,

<sup>22</sup> Չորավար Անդրանիկ, էջ 46:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 44:

գրադվում է նրանց տեղավորման ու սնունդ և հագուստ հայթայթելու հարցերով:

Դիլմանից հետո Անդրանիկի տարած երկրորդ մեծ հաղթանակը 1916 թ. փետրվարի 19-ին Բիթլիսի ազատագրումն էր<sup>24</sup>: Յրամանատարությունը հանձնելով Ամբատին և հրաժեշտ տալով զորամասին՝ 1916 թ. մարտի 18-ին Անդրանիկը մեկնեց Կովկաս:

Վախենալով, որ հայկական կամավորական զորամասերը աստիճանաբար կարող են ինքնուրույն բանակի կերպարանք ստանալ, ցարական իշխանությունները որոշեցին ցրել հայկական կամավորական զնդերը: 1916 թ. սեպտեմբերին նրանք վերակազմավորվում են ռուսական բանակի հրացանակիր զնդերի:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո առաջ քաշվեց արևմտահայերի համազգային համագումար հրավիրելու գաղափարը: Եվ այսպես, 1917 թ. մայիսին հրավիրվեց Արևմտահայերի առաջին համագումարը, որը ստեղծեց Արևմտահայոց ազգային խորհուրդը, նրա պատվավոր նախագահ ընտրվեց Անդրանիկը: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո հաշտության մասին հրովարտակով ռուսական զորքերի կողմից ռազմաճակատի լքումը սպառնալիքի տակ դրեց շուրջ 150 հազար արևմտահայերի կյանքը: Բոլորը գիտեին, որ Արևմտահայաստանին տիրելուց հետո թուրքերը չեն հապաղելու ներխուժել Արևելահայաստան:

Արևմտահայոց Ազգային խորհուրդը, քննելով Արևմտյան Հայաստանի տագնապալի վիճակը, որոշում է մի նոր մարմին՝ «Ապահովության խորհուրդը» ստեղծել, որը ստանձնում է Արևմտյան Հայաստանի կառավարության պարտականությունները և Անդրանիկի առջև խնդիր է դնում խորհել ինքնապաշտպանության կազմակերպման մասին: Որոշվում է ստեղծել երկրապահ դիվիզիա, որի հրամանատար է ընտրվում Անդրանիկ

Օզանյանը<sup>25</sup>: Այդ պաշտոն վարողը, համաձայն ռուսական բանակում գործող կարգի, պետք է ունենար գեներալ-մայորի կոչում: 1918 հունվարին Կովկասյան ռազմաճակատի շտաբի պետի ժամանակավոր պաշտոնակատար գեներալ-մայոր Լևանդովսկու հրամանով Անդրանիկը նշանակվում է ծևավորվող հայկական երկրապահ դիվիզիայի հրամանատար և նրան շնորհվում է ռուսական բանակի գեներալ-մայորի կոչում: Նույն տարվա փետրվարին նշանակվում է Էրզրումի պաշտպանության ղեկավար: Սակայն ռազմաճակատը կազմալուծված էր, զինվորները ծայրաստիճան բարոյալքված էին, և Էրզրումի պաշտպանությունը, չնայած Անդրանիկի գերմարդկային ջանքերին, ձախողվում է: Հայկական առանձին հարվածային զորամասը հետ քաշվելով, նահանջելով հասնում է Ալեքսանդրապոլ: Նրա հետ ու նրա պաշտպանությամբ Անդրկովկաս են հասնում նաև հազարավոր արևմտահայ գաղթականներ: Նրանց մի մասն Անդրանիկի զորամասի հետ Դիլիջանի, Նոր Բայազետի վրայով շարժվում է դեպի Նախիջևան: Իմանալով, որ Վանից գաղթող հայերին ոչնչացման վտանգ է սպառնում, Անդրանիկը շարժվում է դեպի Խոյ (Պարսկաստան): Սակայն թուրքական զերակշիռ ուժերը փակում են նրա ճանապարհը:

Վերադառնալով Նախիջևան՝ Անդրանիկն այն հայտարարեց Խորհրդային Ռուսաստանի անբաժանելի մաս, իսկ հուլիսի 14-ին հեռագրեց Բաքու՝ Ստ. Շահումյանին, հայտարարելով, որ իր ուժերը դնում է Ռուսաստանի կենտրոնական կառավարության տրամադրության տակ: Պատասխան հեռագրում Ստ. Շահումյանը նրան անվանում է «իսկական ժողովրդական հերոս»<sup>26</sup>: Գոտեպնդված Ստ. Շահումյանի պատասխանից՝ որոշում է մտնել Լեռնային Ղարաբաղ, այնտեղից գնալ և միանալ Բաքվի Կոմունայի զորքերին և շարունակել պայքարը թուրքերի և մուսավա-

<sup>24</sup> Մնացականյան Ա., Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 138-141:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 157, 158:

<sup>26</sup> Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, հ. Բ, Երևան, 1996, էջ 262, 263:

թականների դեմ: Կանխատեսելով հայոց զորամասերի միացման հնարավորությունները՝ դեռևս 1918 թ. հունիսին ռազմական նախարար Էնվեր փաշան թուրքական բանակին հրամայել էր. «Փակեք բոլոր ճանապարհները Անդրանիկի առջև, որ նա իր զորամասով չկարողանա օգնության հասնել Ստ. Շահումյանին: Եթե այս 2 ուժերը միանան, այլև անհնարին կլինի Բաքվի գրավումը»<sup>27</sup>: Չափազանց ծանրացավ Անդրանիկի ու նրա զորամասի վիճակը: Ջորավարը նպատակ ուներ ամրանալ Արցախում, սակայն անգլիական ռազմական միսիայի պետ, գեներալ Թոմսոնի պահանջով հարկադրված թողնում է Լեռնային Ղարաբաղը և վերադառնում Չանգեզուր<sup>28</sup>: Եվ եթե դաշնակից Անգլիան արգելք չհանդիսանար Անդրանիկի առաջխաղացմանը դեպի Ղարաբաղի սիրտ Շուշի՝ ասելով, որ խաղաղություն է կնքվել և Ղարաբաղի հարցը կլուծվի միջազգային խորհրդաժողովում, ապա Ջորավարին ոչինչ չէր խանգարի, քանի որ Անդրանիկը կռիվներով արդեն մաքրել էր Լաչինի տարածքը թուրքերից և ոչնչացրել հարակից ծորերը հսկող դարանակալ զորքերին և հեշտությամբ կազատագրեր Ղարաբաղը, և մենք այսօր չէինք ունենա Ղարաբաղյան հարցն իր այսքան նահատակներով ու զոհողություններով:

Վերադառնալով Չանգեզուր՝ Անդրանիկն այնտեղ մնում է շուրջ 10 ամիս՝ մինչև 1919 թ. մարտը: Հետագայում նրան փոխարինեց Գարեգին Նժդեհը: Նրանք ամրապնդեցին երկրամասի պաշտպանությունը, որով փրկվում է տարածաշրջանի 80-հազարանոց հայությունը, և երկրամասը հետագայում մնում է Հայաստանի կազմում<sup>29</sup>: Կյանքի դառը փորձով իմաստացած Անդրանիկը հանգում է այն եզրակացությանը, թե Հայաստանը ողջակիզվեց ոչ միայն Թուրքիայի, այլև նրա դաշնակից Կայսերական Գերմանիայի ու Բրիտանիայի դիվանագիտական սիրախաղերի հետևանքով: Անդրանիկն այդ օրերին կտրուկ շրջադարձ է կա-

տարում եվրոպական կողմնորոշումից ու վերջին հույսը կապում է ժողովրդի ինքնապաշտպանական պայքարի հետ:

1919 թ. ապրիլին Անդրանիկն իր զորամասով գալիս է Ամենայն Հայոց կաթողիկոսի նստավայրը, ցրում է զորամասը, ունեցվածքը հանձնում է Հայոց հայրապետին և մեկընդմիջտ հեռանում հայրենիքից՝ իր հոգում պահելով արևմտահայության ապրած աղետի անբուժելի վերքը: Նա դառնությամբ և զայրությամբ էր արտահայտվում արևմտյան պետությունների նկատմամբ, որոնք ջանքեր չգործադրեցին Արևմտյան Հայաստանի փրկության համար: Բայց նա չէր կորցրել հավատը հայ ժողովրդի ապագայի հանդեպ:

Անդրանիկի կյանքի չորրորդ շրջանն (1919-1927 թթ.) անցնում է արտասահմանում, որտեղ նա զբաղվում էր Կովկասում, Եվրոպայում, ԱՄՆ-ում և այլուր ապաստանած հայ փախստականներին օգնելու, խորհրդային Հայաստանին նյութական և այլ կարգի աջակցություն հասցնելու խնդիրներով, ուրախանում է խորհրդային Հայաստանի հաջողություններով, երազում հայրենիք վերադառնալու մասին<sup>30</sup>: 1922 թ. Ջորավարն, ի վերջո, հաստատվում է ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքում, որտեղից Հայաստանին նվեր է ուղարկում իր ոսկեդաստակ սուրը: 1927 թ. օգոստոսի 31-ին Ֆրեզնոյի իր առանձնատանը, ընդամենը 62 տարեկան հասակում, դադարում է բաբախելուց Հայոց Ջորավարի մեծ ու հայրենակարոտ սիրտը: Անդրանիկը թաղվում է քաղաքի հայկական Արարատյան գերեզմանատանը, իսկ 1928 թ. զինակիցները նրա աճյունը տեղափոխում են Փարիզ և մեծ շուքով ամփոփում Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանատանը: Վերջապես 2000 թ. իրականացավ Մեծ Ջորավարի երազանքը. նրա դին տեղափոխվեց ու ամփոփվեց հայրենիքում՝ Եռաբլուր գերեզմանատանը՝ Արցախյան ազատամարտի հերոսների կողքին, դառնալով ուխտատեղի:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 271-272, 320:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 455-457:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 526-590:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 591-632:

Սակայն այսօր էլ Անդրանիկը մեզ հետ է, մեծերի հոբելյանները չեն նշվում նրանց փառաբանելու, այլ նրանց կյանքից ու պայքարից դասեր քաղելու համար: Իսկ որո՞նք են Մեծ Ջորավարի դասերը, նրա պատվիրանները: Անդրանիկն իր կենսափորձով ու ազատագրական պայքարով ապացուցել է.

✓ Անհատի, ազգի ժողովրդի համար չկա ավելի մեծ նպատակ ու արժեք, քան ազատությունը:

✓ Լինելով ազատության գաղափարի մեծ մարտիկ՝ Անդրանիկն իր ազգի ազատությանն էր ձգտում, նրա անկախությանը հասնելու միջոցով հայոց ինքնիշխանության վերականգնումը դիտելով իբրև բացարձակ գաղափար: Անկախության միջոցով՝ դեպի ազատություն՝ այս է նրա դասը: Բայց դա հայի համար արյան ու պայքարի ճանապարհ էր:

✓ Ամենամեծ դասը անկախ պետականության ձեռքբերումն ու նրա ամրապնդումն է, որին նա ձգտում էր:

✓ Ամենամեծ պատվիրանն ապագա սերնդին՝ կուտակված անսահման հայրենասիրությունն էր, ազգասիրությունը: Ժողովուրդը հենց այդ հատկանիշների համար նրան ընտրեց առաջինը, իսկ ժողովուրդը երբեք չի սխալվում:

✓ Օտար բռնակալության դեմ հայության պայքարի հաղթական ելքը Անդրանիկը տեսնում էր զինվելու մեջ, սեփական բանակ ունենալու և այն պահպանելու կարողության մեջ: Նա շեշտում էր, որ կյանքի փորձություններն իրեն և իր ընկերներին բերել են այն համոզման, որ «հայն իր կյանքը պաշտպանելու մեկ միջոց միայն ունի, մեկ պաշտպան, ան ալ զենքն է ու զինավարժությունը: Մարդ ոչ հերոս և ոչ էլ կռվող է ծնվում, – ասում էր Անդրանիկը, – այլ զենքը մարդուն կռվելու ընդունակություն կտա և դիմադրության ոգի կստեղծի նրա մեջ»<sup>31</sup>: Հրաշք էր կարծես, որ մշտապես լինելով առաջին գծի վրա, միշտ հեզմելով մահը, Անդրանիկը թշնամու գնդակից անխոցելի մնաց: Թե՛ հայը և թե՛

<sup>31</sup> Ջորավար Անդրանիկ, էջ 18:

թշնամին ամենայն լրջությամբ հավատում էին, թե գնդակն անգոր է հերոսի առջև:

✓ Հերոսը հայության շահերը միշտ բարձր էր դասում ամեն ինչից: Նրա միտքը սևեռված էր հայ ժողովրդի անվտանգության ապահովման, գոյության պահպանման վրա: Հարգելով հարևան ժողովուրդների հետ բարեկամությունը՝ նա պաշտպանում էր իր ազգի անկախության ու անվտանգ ապրելու իրավունքը՝ գտնելով, որ քանի դեռ հարևան ժողովուրդները չեն հանգել միմյանց հանդուրժելու գաղափարին, խաղաղություն լինել չի կարող: Մյուս կողմից՝ Անդրանիկը բազմիցս շեշտում էր, որ եթե ժողովուրդն ինքը չի դարձնում իր ճակատագիրը, ապա ուրիշները չեն կարող ըստ ամենայնի աջակից լինել նրա ձգտումներին:

✓ Անդրանիկն ազգային միասնության հետևողական ջատագով էր ու չէր հանդուրժում ազգային պառակտումը: Նա կարողացավ վեր բարձրանալ ազգային հատվածական կողմնորոշումներից և գործակցել բոլոր նրանց հետ, ովքեր առանց երկմտելու գնում էին հայրենիքի ազատագրության համար պայքարի ճանապարհով: Պատահական չէ, որ հերոսին իրենցն են համարում հայության բոլոր հատվածները: Վերհիշելով ժողովրդի միասնությանն ուղղված Անդրանիկի դասերը, այսօր ցավով նշում ենք, որ ազգի մեջ շարունակում են հատվածականությունն ու պառակտումը: Մենք դեռ ազգովի չենք հրաժարվել հատվածականության ավտից:

✓ Իբրև անհատ Անդրանիկն իր ազգի նման բարդ էր ու հակասական: Նա այնչափ բարի էր ու մարդամոտ: Հերոսը տրամադրության մարդ էր: Նա անզիջում էր, երբ խոսքը վերաբերում էր սկզբունքներին, դաժան էր, երբ խախտվում էր զինվորական կարգապահությունը, երբ ականատես էր լինում շահամոլությանն ու անարդար կեցվածքին: Անդրանիկն իբրև մահկանացու ուներ նաև թերություններ ու վրիպումներ, որոշ սխալներ, բայց մեր ժողովրդի բոլոր խավերի համար Անդրանիկն անքննադատելի ու լուսավոր դեմք է. լեզունդները երբեք չեն եղծվում, այլ արևի պես

ճառագայթում են արդարության ու ազատության ծարավ հոգիներում:

✓ Մինչև կյանքի վերջն Անդրանիկը հոգեպես տառապում էր իր հարազատ Արևմտահայաստանի կորստի համար: Նա երագում էր հայոց միասնական ազատ ու անկախ հայրենիքի մասին: Թեև Հայաստանի և Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունները Ազատ, Անկախ ու Միացյալ Հայաստանի անանց գաղափարի մարմանավորման առաջին հանգրավներն են, սակայն ոչ լրիվ, քանի դեռ Արևմտյան Հայաստանը չի ազատագրված: «Գործս կիսատ մնաց», – կյանքի մայրամուտին հերոսի այս խոսքերը թախծալի ափսոսանք էր: Նրա գործն այսօր էլ կիսատ է:

✓ «Անդրանիկ» հավերժական անունը մեր մյուս հերոս ֆիդայիների անունների հետ միասին մշտապես եղել են հայոց ազատամարտի ներշնչման աղբյուր: «Հայ ֆիդայիների ըմբոստ ճակատները մենք դեռ պետք է համբուրենք», – վաղամեռիկ գրող Մուշեղ Գալշոյանի այս խոսքերն Արցախյան գոյամարտի օրերին դարձան իրականություն: Հենց Անդրանիկի և մյուս հերոս ֆիդայիների դրոշի ներքո, նրանց սրբազան անուններով սկսվեց Արցախյան ազատագրական պայքարը, որը, լինելով համաժողովրդական զարթոնքի հուժկու սկիզբը, Անդրանիկի և մյուս ֆիդայիների հերոսապատումի շարունակությունն էր, ազգային ինքնագիտակցության իրացման, տասնամյակների պայքարի տարեգրության և իր սեփական բնօրրանում արժանապատիվ ապրելու հայի իրավունքի վերահաստատ մաս: Ղարաբաղյան հատվածի շուրջը համախմբված հայ ժողովուրդը բազմաթիվ զոհերի ու զրկանքների գնով հաղթեց իր ազատությանն ու անկախությանը սպառնացող ադրբեջանական պետական մեքենային: Արցախյան ազատագրական պատերազմը Անդրանիկ Չորավարի լուսավոր պատգամի՝ հայ ժողովրդի միասնության ու միաբանության նախանձեղի օրինակ է: Անդրանիկը հայ ժողովրդի համար հանդիսացավ մի հավաքական կերպար, էպոսի մի յուրատիպ հերոս, որն իր մեջ անփոփում է ոչ միայն ժողովրդի իղծերը,

այլ նաև նրա ոգին, բնավորությունն ու մտածողությունը: Անդրանիկն այն առասպելական հերոսն է, որի հետ մեր ժողովուրդն իր բախտն ու ապագայի հույսերն է կապում:

Այսօր էլ, երբ մեր ժողովուրդը երկու տասնամյակից ավելի հաղթանակած ու ազատագրված Արցախի հետ միասին գտնվում է անկախության մեջ, իր ազգային վերամիավորման ճանապարհին, մեզ հետ է Անդրանիկը՝ իր սթափ հայացքով, քաղաքական ճիշտ կողմնորոշումներով և մեր հաղթանակի պահպանման նկատմամբ անկոտրում կամքով ու հավատով:

## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Օ

### ԳՐԻԳՈՐ ՂԱԶԱՐՅԱՆ

#### ՀՈՒՇԵՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱՍԻՆ

ժողովրդական մի հին ավանդություն կա, որ իբրև ինչքան մարդ կա աշխարհում, այնքան էլ աստղեր կան երկնքում: Ամեն մարդ մի աստղ ունի և երբ տերը մահանում է, աստղն էլ հանգչում է երկնքում...

Այդ ավանդությունը իր ժամանակին շատ գեղեցիկ կերպով մշակել է մեր ժողովրդի մեծ գավակ Միքայել Նալբանդյանը. իր «Վայր ընկնող աստղերը» բանաստեղծությունով, որտեղ հայրը պատասխանում է դստեր հարցին.

Ասում են, որ ամենայն մարդ

Աստղիկ ունի երկնքում

Շշմարի՞տ է հայրիկ, ասա,

Ի՞նչ որտե՞ղ է փայլում...

Այո, դստրիկ, այդ աստղերը

Ունեն հաշիվ ու համար,

Եվ մեզանից յուրաքանչյուրը

Աստղ ունի իր համար:

Ապա - հայրիկ, տե՛ս, տե՛ս աստղ թռավ,

Հետքից պայծառ հետք թողեց...

Ապա այն ի՞նչ աստղ է հայրիկ,

Որ այնպես պարզ վառվում է:

Հայրը պատասխանում է, որ

... այն լուսավոր բակն է

Նրա առաքինի գործերը» և այլն...

Եթե այս գեղեցիկ պատկերավորումը փոխադրելու լինենք հայ ժողովրդի մեծ հերոս Անդրանիկին, ապա ամենայն վստահությամբ և համարձակորեն կարող ենք ասել, որ նրա մեծ, լուսավոր «բակ բռնած» աստղը մարեց, բայց իր հետքից մի ան-

մար, պայծառ գիծ թողեց: Եվ ինչքան պատմության խոր գիրկն է անցնում Անդրանիկը, այնքան ավելի է պայծառանում նրա անունը, գործն ու գաղափարը...

Անդրանիկի համար կարելի է ասել, որ նա մի հստակ նպատակ է ունեցել, մի պարզ գաղափարի է ծառայել: Դա հայ աշխատասեր, քրտնաջան, իրավագուրկ, տառապող նախ արևմտահայության ազատագրումն էր թուրքական հայատյաց, հայակեր, ջարդարար սուլթանիզմի ճանկից, ապա հսկա պետությունների երկնաքարերի (հակասությունների) արանքում ճնշվող, ճխլվող ամբողջ հայության պահպանումը՝ ձգտելով բոլոր նման ժողովուրդների բարեկամությանն ու միացմանը... Եվ նա բոլոր նրանց հետ էր, ովքեր աշխատում ու պայքարում էին այդ նպատակի համար:

Ես տեսել եմ ինչպես նրան փոխադարձ ու պատշաճ հարգանքով էին վերաբերվում և՛ ազատագրված (Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ) հայկական վիլայեթների կոմիսար գեներալ Օսինսկին, նրա տեղակալ բժ. Ջավրիկը (ղաշնակցական), և՛ պետական դումայի, ապա Անդրկովկասյան սեյմի անդամ Մ. Պապաջանյանը (կադետ), և՛ հնչակյան լիդեր Լազոն և՛ ասորիների ներկայացուցիչ բժիշկը (ազգը չեմ հիշում), և՛ քուրդ շեյխերը, որոնք իմ ներկայությամբ հատուկ տեսակցություն ունեցան նրա հետ, և՛ ռուս զինվորները, հատկապես շարքային կազակները (առած էր դարձել գեներալ Չերնոզուբովի կազակներին Անդրանիկի խոսքը՝ Kazak! hazad!), լեհ սպաները, բուլղարները և այլն: Հանրահայտ է Անդրանիկի նամակը Ստ. Շահումյանին և նրա պատմական պատասխանը):

Այդպիսին էր հերոսը և քուն ու դադար չունեի այդ գաղափարի կենսագործման համար:

Եվ եթե Մեծ եղեռնից «չարչարյալ-խայչալ» հայ ժողովրդի մի որոշ մասը կարողացավ ազատվել տաճկական յաթաղանի կործանումից, բնաջնջումից, դրանց ազատագրման մեջ, սխալված չեմ լինի ասել, որ իր մեծ լուծան ունի Անդրանիկը: Զուր չէ, որ երախտապարտ հայ ժողովուրդն էլ նրա անվան շուրջը եր-

գեր, մինչև իսկ առասպելներ է հորինել («Գնդակ չի դիպչում», Ուջան գյուղում հուշարձան կանգնեցնել և այլն):

Պատահականություն էլ չէր, որ 1922 թ. Հայաստանի խորհրդայնացման տարեդարձի առթիվ Ամերիկայում կազմակերպված հանդիսավոր նիստին նա իր ելույթում պաշտպանել է խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում, որով իրագործվել է իր նպատակը՝ փրկվել, ազատ ու ապահով կյանք է ստեղծվել հայ տառապած ու ոչնչացման եզրին հասած, մեծ հազարամյակների պատմություն ունեցող ժողովրդի համար, որի մեր դարաշրջանի մարտիրոսագրության տառապանքների մեծ վկան է եղել ինքը և որի համար նա զոհաբերել է իր ողջ կյանքը, ողջ էությամբ...

Փա՛ռք հերոսին, հարգանք նրա հիշատակին:

\*\*\*

Անդրանիկը միջակից բարձր հասակով մարդ էր, սակավախոս, ծանրաբարո: Առանց հռետորական ձիրքի խոսում էր արևմտահայ բարբառով, լավ տիրապետում էր տաճկերենին, քրդերենին: Դեմքը սևացած էր, քիչ ծաղկատար, քիկնեղ, հաստատուն զինվորական քայլվածքով: Մարմնի մաշկը սպիտակ էր (ես այցելել եմ նրան հիվանդ՝ անկողնում պառկած ժամանակ), հազնվում էր կոկիկ, վերին աստիճանի մաքուր: Առիթը բաց չէր թողնում բաղնիք գնալու:

Բնավորությամբ համեստ էր, վերաբերվում էր ամենքին հավասար: Ամենագրավիչը նրա մեջ աչքերն էին՝ արծվային հայացքով: Այդ հայացքը, որ ուղղում էր մեկին, դիմացինը չէր դիմանում, ինքը հառում էր գետնին:

Իմ այս հիշողությունների մեջ նրա ոճը ես, իհարկե, լրիվ չեմ կարող տալ, այլ այնքան, որքան մնացել է մոտ կես դար առաջ կատարվածը իմ լսածի ու հիշողությանս մեջ...

## ԻՄ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ (1915 թ.), ես որպես պահեստային զինվոր, զորակոչվեցի բանակ և 1917 թ. ավարտելով սպայական դպրոցը, ծառայում էի Թիֆլիսից ոչ հեռու՝ Բելի-Կյուչում (Թեթրիսծղալի), բանակած 218-րդ գնդում, որպես վաշտի հրամանատար:

Նույն թվի սեպտեմբերին ստացվեց Կովկասյան ֆրոնտի շտաբի հրամանը, որով ես նշանակվում էի Ավստրիական ֆրոնտ և պիտի մեկնեի Շեպետովկա (Ուկրաինա):

Երբ ներկայացա շտաբ՝ փաստաթղթերս ստանալու, ինձ հայտնեցին, որ Շեպետովկա գնալն անհնարին է, ճանապարհները փակ են և ես պետք է սպասեմ: Սպասելուս օրերին ինձ (Թիֆլիսում) հանդիպեց ծանոթ կապիտան Շերմազանյանը (նկարիչ) և խորհուրդ տվեց չսպասել, այլ խնդրել ուղարկելու Կովկասյան ճակատ, մանավանդ որ Թիֆլիսում կազմակերպվում է Հայկական հատուկ զորամաս:

- Այդ հարցում քեզ կարող է օժանդակել կապիտան Անուշավան Տեր-Ղևոնդյանը (կոմպոզիտոր), որը ծառայում էր Կովկասյան բանակի շտաբում:

Ես ներկայացա, Տեր-Ղևոնդյանը վերցրեց փաստաթղթերս, իսկ հետևյալ օրն էլ ստացա գործուղում Հայկական հատուկ զորամաս, որի շտաբը գտնվում էր նախկին Սերգեևսկի և Լերմոնտովի փողոցների անկյունի մի գեղեցկաչեն երկհարկանի տան մեջ:

Շտաբի պետը, ընդունելով փաստաթղթերս, դիմեց մի գեղեցկադեմ երիտասարդ զինվորականի և մեզ ծանոթացնելով պատվիրեց, որ ինձ ներկայացնի Անդրանիկին, որն այդ զորամասի հրամանատարն էր:

Երիտասարդ զինվորականն անվանի բանաստեղծ Հովհաննես Թումանյանի տղան էր՝ Համլիկը<sup>1</sup>:

- Ես Ձեզ ճանաչում եմ,- ասացի:

<sup>1</sup> Համլիկը զոհ գնաց անհատի պաշտամունքին:

- Որտեղի՞ց:

- «Հասկեր» ժուռնալից, ծանոթ եմ Ձեր տպագրած գեղեցիկ գրածներին:

- Դուք էլ աշխատակցում էիք ամսագրին:

- Այո, մի երկու բան տպագրվեց, հետո պատերազմն ամեն մի իղձ խափանեց...

Համլիկը ինձ ծանոթացրեց շտաբի մյուս աշխատակիցների հետ, որոնք ռուսներ, ուկրաինացիներ, հրեաներ էին և ասաց, որ շուտով կներկայացնի Անդրանիկին: Անդրանիկի մասին ես շատ էի լսել, կարդացել թերթերում, իսկ եղբայրս՝ կոմպոզիտոր Դանիել Ղազարյանը, մի քանի անգամ թիֆլիսի Երևանյան հրապարակում ցույց էր տվել քաղաքացիական մաքուր տարազով հագնված մի գրավիչ մարդու՝ ասելով. «Քաջ Անդրանիկն է»: Ես շատ ուրախ էի, որ բախտ կունենամ այդ լեգենդար հերոսին ոչ միայն մոտիկից տեսնելու, այլև աշխատելու նրա հրամանատարության տակ գտնվող զորամասում:

Քիչ անց եկավ Անդրանիկը, զինվորական հագուստով՝ առանց ուսադիրների:

Նրա արտաքինը, զինվորական կեցվածքը, հաստատուն քայլվածքն անցնջելի վեհ տպավորություն թողին իմ վրա:

Մի քանի հաղորդումներ և զեկուցումներ լսելուց հետո, որոնց վերաբերյալ տալիս էր կտրուկ կարգադրություններ, Համլիկը ինձ ներկայացրեց: Ես զգաստ կանգնած, սպասում էի: Նա նստած տեղից ձեռքը մեկնեց ինձ, ես արագ սեղմեցի այն, տվեց մի քանի հարցեր, ապա դարձավ Համլիկին.

- Թողեք մնա շտաբում, մեզ հետ:

Հետևյալ օրը ստացա հրամանս, որով ես նշանակվում էի Հայկական հատուկ զորամասի շտաբի հատուկ հանձնարարությունների ավագ սպայի պաշտոնում:

Այդ օրվանից ես ամեն օր հանդիպում էի Անդրանիկին, կատարում նրա առանձին հանձնարարությունները:

## ՀԱՏՈՒԿ ԶՈՐԱՄԱՍԸ

Ծանր ու դժվարին դրության մեջ էր այդ օրերին Կովկասյան ճակատը, հատկապես Երզնկա-Էրզրում հատվածը: 1918 թ. փետրվարի 13-ին Հայկական հատուկ զորամասի գնդապետ Թորգոմը հանդիսավոր զորահանդեսում հայտարարել էր Հայաստանի անկախությունը, որը տեղիք էր տվել մեծ խլրտումների<sup>2</sup>...

Ռուսական զորքերը հետ էին քաշվում, տեղի էր ունենում քաղաքական հակադիր ուժերի մեծ բախում:

Անդրանիկին հանձնարարել էին կազմակերպել 1000-2000 հոգուց մի հատուկ զորամաս, գնալ և փակել առաջխաղացող բշնանու ճամփան. Կովկասյան ճակատի հրամանատար, գեներալ Օդիշելիձեից տագնապալի հեռագրեր էր ստացվում և սպառնում էր ճակատը բաց անել: Օդիշելիձեն բացասական դեր խաղաց հայ ժողովրդի այդ ճակատագրական օրերին:

Կազմակերպվող զորամասը գտնվում էր Թիֆլիսի «Պեսկի» կոչված թաղամասում, մի եռահարկ տան մեջ, ուր հաճախ այցելում էր Անդրանիկը: Մեր առաջ դրված էր մի կարևոր հարց՝ շտապ կերպով զգեստավորել, զինել, պարենավորել արդեն հավաքագրած զորամասը, ստանալ անհրաժեշտ քանակությամբ զնացքներ և փոխադրվել ճակատ:

Թեև մեծ դժվարություններով, բայց արդեն լուծվում էին պարենավորման, զգեստավորման, անգամ զինման հարցերը, բայց գնացքները ստանալու հարցը դարձել էր «Հարցերի հարցը» և դժվար լուծելի խնդիր: Կովկասյան շտաբը, թե Անդրկովկասյան երթուղիների վարչությունը, այնտեղ նստած հակահայկական տարրերը, թե ուրիշ պատճառներից անասելի ձգձգվում էր այդ ժամանակ դեռ ոչ այնքան բարդ հարցի լուծումը: Այդ ձգձգումը անչափ ջղայնացնում էր Անդրանիկին, բայց ոչ շտաբի

<sup>2</sup> Թորգոմը ասել և հայտարարել էր. «Հանուն հայ ազգի, հանուն բոլոր նահատակներու, որ այս հողին վրա ընկան, հանուն արդարության իրավունքի և ազատության սրբազան սկզբունքներու, ես՝ գնդապետ Թորգոմ, հայկական զորագնդի հրամանատար և Կարինի կայազորի պետ, այսօր Ձեր պետ, վաղը Ձեզի հավասար, կհռչակիմ Հայաստանի անկախությունը»:



պետին (Զինկկիչին), որը անձամբ էր զբաղվում դրանով (նա հետագայում անպետք, անգամ վնասակար մարդ դուրս եկավ):

Այդ վիճակի մեջ էր Հատուկ գործասը 1918 թ. փետրվարի սկզբին:

### ԳԵՆԵՐԱԼԻ ՊԱԳՈՆՆԵՐԸ

Շտաբի աշխատողներս գրասենյակում նստած աշխատում էինք, երբ ներս մտավ շտաբի պետ Զինկկիչը՝ մի փաթեթ ձեռքին և, կանչելով իր աղյուտանտ Շուսովին, ինչ որ բան առանձին խոսելուց հետո դարձավ մեզ և ասաց.

- Ոչ մի տեղ չհեռանալ, մինչև Անդրանիկի գալը:

Անդրանիկն այս անգամ ուշացավ, թեև ժամը 1-ին մոտ էր:

Նա վերջին օրերս շատ էր մտազբաղ, ֆրոնտից, առանձնապես Երզնկայից ստացվող անհաճո լուրերն ու տեղեկությունները շատ էին հուզում նրան, մանավանդ որ այնքան դժվարություններով կազմակերպված գործառն անգործ նստել էր Թիֆլիսում, գնացքներ չտալու պատճառով և սկսել էր քայքայվել: Եվ ամեն օր ներս մտնելուց նրա առաջին հարցը լինում էր.

- Ի՞նչ եղավ վազոններու խնդիրը:

Երբ իմանում էր, որ դեռ որոշակի ոչինչ չկա, ջղայնանում էր շտաբի պետի վրա, միաժամանակ Համլիկին կամ ինձ հանձնարարում էր գնալ այս կամ այն մարդու, պաշտոնյայի մոտ և արագացնել «վազոններու հարցի» դրական լուծումը...

Երբ շտաբի պետը մի առանձին ժպիտով կարգադրեց, որ չհեռանանք մինչև Անդրանիկի գալը, մենք ենթադրեցինք, որ «վազոններու հարցը» վերջապես լուծվել է և գործառն կմեկնի ճակատ, որին այնքան ձգտում էր Անդրանիկը:

Ժամը 1-ին մոտ էր, երբ առաջին հարկից հայտնեցին, որ «Փաշան» եկավ (այդպես էին անվանում նրան ամենքը):

Մինչև նրա մեզ մոտ բարձրանալը, շտաբի պետը մյուս սենյակից հավաքեց բոլոր աշխատակիցներին, իսկ ինքը ինչ որ գործով դուրս գնաց:

Անդրանիկը ներս եկավ, բոլորին սիրալիք բարևեց, անցավ իր փոքրիկ սեղանի մոտ, նստեց ու զանազան հարցեր էր տալիս Համլիկին, երբ նորից ներս մտավ Զինկկիչը: Անդրանիկը ուշադրությունն ուղղեց նրան և սպասում էր նրա տեղեկություններին, երբ Զինկկիչը ուղիղ ձգվեց և գոչեց.

- Встать! Смирно!

Ամենքս ոտքի ցատկեցինք և զգաստ կանգնած սպասում էինք: Զինկկիչը ծոցից հանեց և, բացելով Կովկասյան Զինվորական շտաբի հրամանը, սկսեց հանդիսավոր կերպով կարդալ այն, որով Անդրանիկին շնորհվում էր գեներալ-մայորի աստիճան: Անդրանիկն ուշադիր, հանգիստ, բայց մի քիչ շվար լսում էր նստած տեղից՝ սպասելով հրամանը վերջանալուն:

Հրամանը կարդալուց հետո Զինկկիչը բացեց ձեռքի փաթեթը և, միջից հանելով մի զույգ ոսկեզույն գեներալ-մայորի ուսադիրներ, մոտեցավ, դրեց Անդրանիկի առջև և ձեռքը մեկնեց շնորհավորելու: Անդրանիկը առանց շարժվելու ձեռք տվեց ու նայում էր ինձ և Համլիկին: Երբ մյուսներն էլ պատրաստվում էին մոտենալ և շնորհավորել, Համլիկը բացատրեց եղելությունը:

Նա, որ մինչ այդ լրիվ չէր հասկացել, բացատրությունից հետո արագ ոտքի կանգնեց և հուզված գոչեց.

- Այս ի՞նչ խաղ է, որ կխաղան ինձ հետ... Ես անոնցմե «վազոն» կուզեմ, անոնք ինձի «պազոն» կուտան... Չեմ ուզեր ես անոնց աստիճանը: Անդրանիկը ատոնց պետքը չունի... Ու տեղը նստելով ընկճված, բայց հուզված մի քիչ հետո շարունակեց.

- Հայ ժողովուրդը այնտեղ արնաքամ է լինում, ոչնչանում է գաղթի ճամփին, անոնց պետք է օգնության հասնել, իմ փեռք ու ոտքս հոս կապել եմ և վազոններու փոխարեն ինձի պազոն կուտան...

Ապա դառնալով շտապի պետին, որի նվիրած ուսադիրներն էլ այնպես ընկած էին սեղանին, կոպտաբար և արհամարհանքով ասաց.

- Ես քեզի պատվիրել եմ, որ զնաս ու վագոններ բերես, դու գնացել ես ու ինձ պագոններ ես բերել, չեմ ուզում...

Համլիկը դժվարությամբ էր կարողանում շտկված ձևով նրա խոսքերը թարգմանել շտաբի պետին:

Ամենքը շփոթված դրության մեջ էին...

- Չեմ ուզեր, ամեն մի ժամը հայու ապրելու – չապրելու հարցն է, մենք այնտեղ նստել ենք, վագոն չկա... Ես անոնց...

Ու տաճկերեն մի համեստ հայհոյանք տալով ասաց.

- Ես ինքս կանեմ: Ասելով դուրս գնաց ոսկեփայլ ուսադիրները թողնելով սեղանին ընկած:

... Մի քանի օրից հետո վագոնները տրված և էշելոնը պատրաստ էր՝ զորամասը մինչև Սարիղամիշ, ապա ֆրոնտ տեղափոխելու:

#### ՂԱՐԱԲԻԼԻՍՑԻՆԵՐԻ ԴԻՄԱՎՈՐՈՒՄԸ

Ճանապարհին զանազան ընդհարումներից խուսափելու համար, Անդրանիկի կարգադրությամբ, մեր և զինվորներով բարձված գնացքները գնում էին մի առանձին զգուշությամբ:

Այժմ, երբ որևէ առիթ է լինում ինձ գնալ Թիֆլիս, ես մի առանձին հուզմունքով եմ գնում, ապա վերադառնում այն ուղեմասով, որը սկսվում է Սողանլուխ կայարանից մինչև Այրում կայարանը... Գնացքում նայում եմ հանգիստ, երեխան ծոցին, մաքուր անկողնում, հարմար կուպեում քնած երիտասարդ կնոջը, նայում եմ «Երևանյան կոնյակով», «Ճանապարհը կարճեցրած», այժմ խռմփացնող երիտասարդ մարդուն, ու հիշում եմ ինչքան կյանքեր ու հույսեր են մարել այդ տարիներին այս փոքրիկ ուղեմասում...

Հանգիստ անցանք Նավթլուղ-Սանդար կայարանները և մոտեցանք վտանգավոր Սաղախլու կայարանին: Անդրանիկի կարգադրությամբ ամեն ինչ մարտական վիճակում էր, բայց կարգադրված էր ոչ մի էքսցեսի առիթ չտալ: Մենք վագոններից դուրս չէինք գալիս, իսկ այդ անվախ մարդը, որ քուն չուներ,

ամեն տեղ դուրս էր գալիս, կարգադրություններ անում, ազատ անց ու դարձ էր անում գնացքների առջևով:

Գիշերը մտանք Լոռու ձորը: Շատերը պառկեցին քնելու: Անդրանիկն էլ էր պառկել, առանց հանվելու: Ցուրտ, ձմեռային, փետրվարյան գիշեր էր... Փամբակ կայարանը անցնելուց հետո լույսը սկսել էր բացվել: Ղարաքիլիսա (ներկայումս՝ Կիրովական) մոտենալուց առաջ նա վեր կացավ, լվացվեց, ապա կիսապառկած վիճակում հանգիստ ծխում էր:

Ես կանգնել էի լուսամուտի առաջ և մտքերիս մեջ խորասուզված նայում էի դուրս: Համլիկն էլ լվացվել և սրբվում էր, երբ գնացքը մտավ Ղարաքիլիսա կայարանը: Իմ ուշադրությունը գրավեց մի մեծ բազմություն, որ դրոշակներով, տրանսպարանտներով կայարանի սանդուղքներով բարձրանում էր և հավաքվում կառամատույցում:

- Համլիկ, արի նայիր, այս ի՞նչ բազմություն է:

Համլիկը՝ թեթև նայելով.

- Երևի զորահավաք է, - շարունակեց սրբիչով սրբվել:

Գնացքը կանգ առավ, ես մոտեցա դռանը, բացի ու կանգնած հետաքրքրությամբ դիտում էի «Ուռուճ, ուռուճ» կանչող բազմությանը, երբ մի քանի հոգի բազմությունից մոտեցան ինձ:

- Դուք փաշայի շտաբի՞ց եք:

- Իսկ ինչո՞ւ համար եք հարցնում:

- Մենք ուզում ենք տեսնել Անդրանիկին, բարի երթ մաղթել նրան: Խնդրում ենք հաղորդեք իրեն:

Ես վարանում էի, բայց, մտածելով, որ միզուցե որևէ անհրաժեշտություն կա, և դա մի կողմից էլ կարող է հաճույք պատճառել Անդրանիկին՝ այդ անձնական կյանք չունեցող մարդուն, ասացի, - սպասեցեք:

Ես ներս եկա: Դրսում Անդրանիկի հասցեին ուռույտներն ու կեցցեներն ուժեղանում էին: Մոտեցա Անդրանիկին, զեկուցեցի, բայց նա ոչինչ չպատասխանեց, կիսաբերան ժպտաց: Համլիկն էլ դուռը բացեց և ուզում էր իջնել, բայց նրան ճանաչեցին, թույլ չտվին և նորից կրկնեցին իրենց պահանջը: Համլիկը մոտեցավ

ինձ, հարցրեց, թե փաշան ի՞նչ պատասխանեց: Ես ասացի. «Բե-  
խի տակին ժպտաց...»:

Մենք երկուսով մոտեցանք և սկսեցինք համոզել: Նա կա-  
մաց ելավ տեղից, հագավ իր զինվորական վերարկուն, որին,  
այնուամենայնիվ, կպցրել էին զեներալական ուսադիրները, մո-  
տեցավ լուսամուտին: Դրսում նորից պոռթկացին ուռուցաներն ու  
կեցցեները...

Նա մի րոպե հետո հեռացավ լուսամուտից դեպի կուպեն:  
Դուրսը չէր խաղաղվում... Մեկ էլ շրջվեց և դիմեց դուռը. մենք  
հետևում էինք իրեն: Դռան մեջ նրա երևալը մի հսկայական  
օվազիա առաջացրեց, իսկ վագոնի դռան առաջ (սովորական  
հին ձևի 3-րդ կարգի վագոն էր), մեկը սկսեց բարի երթի ճառ  
ասել: Անդրանիկը սպասեց մինչև նա վերջացրեց և երբ մեկ  
ուրիշն էլ էր ուզում սկսել, նա ձեռքով լռության նշան արեց,  
ապա մի աստիճան ցած իջնելով սկսեց հանգիստ տոնով  
խոսել.

- Ինձ տեսնիլ կուզեք, ահա ես... Բայց ինչո՞ւ այսպես կու-  
զեք տեսնիլ: Ահա կնայիմ ձեզի և կտեսնիմ, որ ձեր մեջ շատ-  
շատերը կամ զինվորի հագուստով են, կամ զինվորացու, ան-  
զամ օֆիցերներ, ամենքն ալ զենքի ընդունակ: Մեր վագոննե-  
րում տեղ շատ կա, ահա նստեք այդ վագոնները գնանք այն-  
տեղ, ուր մեզ անհամբեր կսպասեն, ուր թշնամին կսպառնա  
ֆրոնտը պատռել... Նստեք վագոնները գնանք այնտեղ «ուռու»  
կանչենք, և դուք ամեն օր, ամեն ժամ կրնաք ինձի տեսնիլ... Ես  
միշտ ձեզի հետ կլինեմ...

Մանիֆեստանտները սկսեցին գլուխները կախել, մեկը դե-  
պի գետին էր նայում, մյուսը լեռներին, ոմանք էլ հետ էին շարժ-  
վում...

- Այ դու,- ասաց ու մատով ցույց տվեց առաջին շարքերում  
կանգնած մեկին:

- Առողջ զինվոր ես, բարձր էլ ուռու կգոչես. անցիր վա-  
զոն, դասալի՞ք ես. դու, դու, այ-դու, եկեք ամեն մի զինվորը ին-

ձի համար մի մեծ ուժ է: Ի՞նչ եք կանանց հետևում թագմվել,  
ճիշտ չէ՞, ի՞նչ եք լռել...

Ապա վագոնի աստիճաններից ցած իջնելով.  
- Բոլոր զինվորականներն ու զինվորներն անցնեն այս  
կողմ, ինձի տեսնել կուզեք, եկեք.

Ապա դառնալով մոտիկ կանգնած էշելոնի պետին՝ ավե-  
լացրեց.

- Պետք է հավաքել բոլորին:  
Երբ էշելոնի պետը պատիվ բռնելով շրջվեց և շարժվեց դե-  
պի վագոնները՝ համապատասխան կարգադրություն անելու,  
ամբոխը սկսեց հետ-հետ գնալ, իսկ տեսնելով զինվորների շար-  
ժումները, թափելով իրենց ձեռքի դրոշակները և «Բարի ճանա-  
պարհ» մակագրություններով տրանսպորանտները, սկսեցին  
իրար խառնվել, ապա փախչել դեպի քաղաք:

- Հապա ինձի տեսնել կուզեիք, ու՞ր կփախչիք: Ուր էլ  
փախչելու լինեք, տաճիկը, եթե նրան չդիմադրենք, ամեն տեղ  
ձեզ կհասնի, կոչնչացնի: Ու՞ր պիտի գնաք...

Ու հուզված անց ու դարձ էր անում վագոնի առջև: Այդ  
խառնաշփոթության ժամանակ բազմության միջից քսանից  
ավելի զինվորներ և մի օֆիցեր շարք կանգնած մի կողմում,  
սպասում էին:

- Դուք ի՞նչ եք:  
- Մենք պատրաստ ենք ձեր հրամանին, փաշա, - զեկուցեց  
օֆիցերը:

- Ապրիք, տղաքս, շատ ապրիք,- ապա ավելացրեց,- այ-  
նուամենայնիվ Ղարաբաղի խայում նամուսով մարդիկ գտնվեցին:

... Շոգեքարշը սուլեց:

- Գնացեք տղաքս, պատրաստվեցեք: Մեր ետևից մեր  
մյուս գնացքն է գալիս: Թե չէք փոշմանի, կգաք նրանց հետ: Մի  
քանիսը շրջվեցին, իսկ մնացածները, «Փաշա մենք գալիս ենք  
քեզ հետ» ասելով, առանց ուշք դարձնելու մոտները կանգնած  
կանանց հորդորանքին, վագոնի ու մտան վագոնները:

Անդրանիկը բարձրացավ վազոնի սանդուղքին, վառեց ծխախոտը, մռայլվեց, մայեց Ղարաքիլիսայի՝ ամպով փաթաթված ծյունոտ սարերին, դատարկված կայարանին ու կամաց ներս մտավ: Չյունն առատորեն թափվում էր...

Շոգեքարշը նորից սուլեց ու գնացքը կամացուկ սկսեց առաջ շարժվել...

\*\*\*

Հետագայում երբ լուր ստացվեց տաճիկների կողմից Ղարաքիլիսայի գրավման, ապա և Վանա ծորում կատարված սպանդի մասին, ես հուզմունքով ու հառաչանքով հիշում էի իմաստուն հերոսի խոսքերը:

Իսկ երկրորդ համաշխարհային պատերազմի օրերին, երբ թերթերում կարդում էի Նելսոն Ստեփանյանի, Հունան Ավետիսյանի և շատ-շատ ուրիշ հայորդիների հերոսագործությունները Մոսկվայի մատույցներում, Օդերի, Վիսլայի ափերին, Բրեստի ամրոցում, Բեռլինի պարիսպների տակ, որտեղ նրանք Հայաստանից հեռու իրենց արյունով այնտեղի հողերը ներկեցին՝ պաշտպանելով իրենց փոքր, բայց հոգու չափ սիրելի, անմոռանալի Հայաստանը, իմ աչքերի առջև կանգնում էր Անդրանիկի մռայլ դեմքը, ծխախոտը ձեռքին իր իմաստուն, հեռատես խոսքերով:

- Ղարաքիլիսան պետք է էրզրումի պատերի տակ պաշտպանել, Երզնկայում...

... Անմոռանալի հերոս...

### ԷՐԶՐՈՒՄԻ ՏԱԾԿԱԿԱՆ ԱՊՍԱՍԲՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՈՒՄԸ

Մեծ են Անդրանիկի մատուցած ծառայությունները ոչ միայն հայ ժողովրդին, այլև առաջին հերթին ռուս, ապա այլ ժողովուրդներին՝ բուլղար, հույն, ասորի, քուրդ ժողովուրդներին: Մի կողմ թողած ռուսական բանակի շարքերում նրա կատարած մարտական մեծ ծառայություններն ու քաջագործությունները՝

ես կանգ կառնեմ նրա այն մեծ կազմակրպչական գործի վրա, որով նա փրկեց ոչնչացումից ոչ միայն տասնյակ հազարավոր հայ ընտանիքներ, այլև ռուսական բանակը...

Այդ օրերին (1918 թ. սկզբներին) էրզրումը նման էր մի գործել սկսող հրաբուխի: Բազմապիսի ու բազմաքանակ հակադիր ուժեր կուտակվել ու հանդիպել էին այդտեղ իրար: Մեծ հայրենասերների կողքին այդտեղ վիստում էին ամեն գործարքի գնացող, հարստանալու ձգտումով այդտեղ եկած տարրեր, Մեծ եղեռնից մի կերպ ազատված, արդարացի վրեժով լցված որդեկորույս հայրեր, ծնողազուրկ որդիներ, դրանց հետ մեկտեղ նաև հարբեցողներ, ուտել-խմելու՝ Բաքուի երկրպագուներ, օրգիաների սիրահարներ, անզլիացի, ամերիկացի, ֆրանսիացի ջուր պղտորող, ծուկ որսացող, հայերենին, տաճկերենին լավ տիրապետող միսիոներներ, պատվելիներ, զանազան տիպի մեծ ու փոքր չափի դիպլոմատներ, ամեն ազգի լրտեսներ, հայասերներ, հայատյացներ, ցարիզմի մոլի երկրպագուներ, զտարյուն հեղափոխականներ, պատերազմին կողմնակիցներ և հակառակորդներ, և այլն, և այլն: Այդ բոլորի վրա ավելացրած Երզնկայի ֆրոնտից դեպի էրզրում կատարված նահանջը, քաղաքում ստեղծվել էր մի խառնաշփոթ դրություն, որը օգտագործում էին քաղաքական և բուրժուական սպեկուլյանտները...

Այդ դրությունից նույնպես օգտվելով՝ տաճկական ղեկավարների հրահանգով ու ղեկավարությամբ Կարինում (էրզրում) նախապատրաստվել էր խոշոր մասշտաբի ապստամբություն: Ռուսական բանակի թիկունքում կազմակերպվող այդ օպերացիան ոչ միայն ոչնչացման վտանգ էր ստեղծում այդտեղ արևմտյան և այլ շրջաններից կուտակված հայ գաղթականությանը, այլ նաև ռուսական միլիոնամոց բանակին, որը տարածված էր ճակատից մինչև Սարիղամիշ:

Ապստամբության մեջ ընդգրկված էին ոչ միայն էրզրում քաղաքի, այլև ամբողջ վիլայեթի տաճիկները, դրանց շարքում էլ գերությունից հեշտությամբ փախած, կամ իրենց հայտնի ճա-

նապարհներով էրզրում սողոսկած տաճկական զինվորներ և սպաներ:

Ապստամբության աշխատանքներին և հետագա ծավալման համար մասնակի մասնակից էին և մուսավաթական աղրբեջանցիները, որոնց ներկայացուցիչը «Կարմիր խաչի» անվան տակ գտնվում էր էրզրումում (հայատյաց Թովֆիբաշև Թե Աղան): Տաճկական այդ ծանր ու մեծ մասշտաբի հարվածները հմտորեն և արագ վերացրեց Անդրանիկը:

\*\*\*

1918 թ. փետրվարի սկզբին մեծ դժվարություններով հասանք էրզրում: Մեր ապրանքատար մեքենան մեծ ճիգ գործադրելով բարձրանում էր Ղավա-Բոյնի հաստ ձյունաշերտի միջով: Անդրանիկը չհամբերեց, նստեց այդտեղ բերված իր սպիտակ ձին և շտապեց քաղաք:

Անդրանիկը ինչպես ամենուր, այնպես էլ էրզրումում ուներ բազմաթիվ, անհաշիվ համակրողներ և իրեն նվիրված զինակիցներ: Էրզրում հասնելուց նրան այդ զինակիցները զեկուցում են օրավուր այդ մեծ աղետի, վտանգի մասին, որի վրա տեղի ոչ քաղաքացիական, ոչ էլ զինվորական ղեկավարներն առանձին ուշադրություն չեն դարձնում: Անդրանիկը, տեսնվելով ինչպես քաղաքի պարետի, այնպես էլ կոմիսար Տիգրան Աղամայանի (մաթեմատիկայի նախկին համեստ ուսուցիչ) և այլ պաշտոնական անձերի հետ, իմանալով, որ նրանք գործնական քայլեր չեն արել, խիստ նախատեց՝ առանձնապես Աղամայանին, ապա սկսեց ինքը գործել:

Իրեն հավատարիմ մարդկանց միջոցով նա լրիվ տեղեկություն ստացավ շարժման մանրամասնությունների և նրանց ղեկավարների մասին, որոնց ցուցակի մեջ էին մտնում ոչ միայն զինվորական ուժեր, այլև հոգևորականներ: Եվ ահա, Անդրանիկի մշակած ծրագրով իր մարդկանց միջոցով նա հայտարարեց, որ ցանկանում է վերջ տալ պատերազմին, հաշտություն կնքել և իրեն մոտ է հրավիրում քաղաքի ներկայացուցիչներին՝

բանակցելու: Հետևյալ օրը առավոտյան սկսվեց օպերացիան, որը ինքն էր ղեկավարում: Շտաբի պետ Զինկևիչը և իր աղյուտանտ Շումովը այդ օրը հարբած էին, ինչպես ասում են՝ «До брезгу»: Դրանց առանձնացրեց և հատուկ հսկողության տակ առավ:

Մենք տեղավորված էինք Սանասարյան վարժարանի մոտ գտնվող երկհարկանի շենքի երկրորդ հարկում: Իր տղաները, որոնք ազատ տիրապետում էին տաճկերենին, գնում և հրավիրում էին ցուցակի մարդկանց: Ով չէր գալիս, բերում էին ուժով:

Եկողներին դռան մոտ սիրալիք ընդունում էին, ապա մենք՝ սպաներս, առաջնորդում էինք դահլիճ՝ նախապես զինաթափ անելով: Դահլիճում նրանց հյուրասիրում էին Ղայվեյով:

Ժամը 13-ին մոտ հավաքվել էին մոտ 40 հոգի: Մուսավաթիստին չէին կարողացել բերել. նա պատճառաբանել էր, թե ինքը ռուսահպատակ է, կապ չունի հաշտության գործողության հետ, դիմել էր քաղաքի պարետին և նրա օգնությամբ, մինչև Անդրանիկի կտրուկ հրամանը՝ «բերել», ծպտյալ ճողոպրել էր Սարիդամիչի ուղղությամբ: Երբ «հրավիրվածներ»-ի հավաքը վերջացավ, Անդրանիկն իր գեներալական հագուստը հագած մտավ դահլիճ: Անդրանիկը տաճկերեն խոսեց հաշտության անհրաժեշտության մասին, որից հետո ելույթ ունեցան ներկայացուցիչները: Վիճաբանությունները սաստկացան, երբ Անդրանիկը նրանց առաջարկեց անմիջապես գնալ Ղարս՝ զլխավոր հրամանատարության հետ վերջնական համաձայնություն կայացնելու: Նրանք հրաժարվում էին: Որոշ ժամանակից հետո Անդրանիկը թողեց դահլիճը, կարգադրելով հավաքվածներին դուրս տանել:

Դուրսը ամբողջ շենքը շրջապատված էր հայկական զինված զորամասով, որի միջով ապստամբության ղեկավարները չէին կարող անցնել: Երբ տղաները բոլորին դուրս էին տարել, Անդրանիկը դուրս եկավ պատշգամբ, խոսեց տաճկերեն, ապա իր հրամանով օղակելով ապստամբության ղեկավարներին, մեծ

զգուշությամբ նրանց տարան դեպի Ղարս գնացող երկաթգծի կայարանը...

\*\*\*

Նույն օրը կատարված ուժեղ խուզարկությունը հայտնաբերեց և հավաքեց մեծ քանակությամբ հրազեն, անգամ զնդացիրներ, որոնց պահողները նույնպես ձերբակալվեցին: Այդպես Անդրանիկն իր ժամանակին կանխեց և ձախողեց տաճկական այն մեծ ապստամբությունը, որը խոշոր աղետ պիտի բերեր իր ծանր հետևանքներով ժողովրդի ու բանակի գլխին...

### ՍԵՎ ԳԻՇԵՐԸ

Ցերեկը անցկացրեցինք ծանր ապրումների մեջ: Կարինի փետրվարյան սառնամանիքն այնքան էլ չէր ազդում մեզ վրա, համարյա չէինք զգում...

Երզնկան ընկել էր, պատերազմական գործողությունները փոխադրվել էին Երզրումին մոտիկ: Ճիշտ է՝ Երզրումում նախապատրաստված տաճկական ապստամբությունը ձախողվեց և լիկվիդացվեց, բայց Անդրանիկի բոլոր ջանքերը՝ ողջ կայազորը միավորելու և հսկա բանակը դիմադրության կազմակերպելու, չէին հաջողվում:

Փետրվարի 26-ին, թե 27-ին (1918 թ.) Անդրանիկի գլխավորությամբ մի փոքր զորայուն առաջ շարժվեց, դիմեց հարձակման գերազանցող ուժերի դեմ: Անդրանիկը Յամլիկին և ինձ թույլ չտվեց շտաբից հեռանալ՝ տալով որոշ հանձնարարություններ: Մենք շտաբի կտուրից հեռադիտակով տեսնում էինք, թե ինչպես Անդրանիկը թուրը ձեռքին անց ու դարձ էր անում շարքերի առջևով, ինչպես նաև առաջ անցավ, շարքերն էլ՝ նրա հետևից, բայց քիչ հետո շարքերը վարանեցին, պառկեցին ու սկսեցին խրամատավորվել... Անդրանիկի հրամանը, որ բոլոր մարտկոցների թնդանոթները կրակեն, չէր կատարվել (զնդա-

պետ Դուլուխանովի, թե Մորիելի պատճառով), երեկոյան դեմ նա, թևից թեթև վիրավորված, վերադարձավ շտաբ:

Փետրվարյան կարճ օրն անցնում էր: Ֆրոնտում, որ հասել էր Երզրումին շատ մոտ, վտանգավոր ու ահավոր լուսություն էր տիրում: Շատ ուշ էր, քունը հաղթում էր մեզ: Յամլիկի հետ առանց հանվելու, պառկեցինք տախտակե թախտին ու անմիջապես մեր աչքերը փակվեցին: Կեսգիշերից անց էր, երբ դուռն աղմուկով բացվեց, մենք անմիջապես արթնացանք:

Բավական ուշ՝ որոշ կարգադրություններ անելուց հետո, մեզ շարժվելու նշան տվեց... Մեր մեքենան դուրս եկավ դարպասից ու մի կողմ քաշված կանգ առանք՝ իրեն սպասելով: Շատ ուշ Երևաջ ինքը՝ սպիտակ ձիուն հեծած: 1918 թ. փետրվարի 28-ին՝ առանց թշնամու ակտիվ գործողության ու կռվի, Երզրումն իր հսկայական զինապաշարով ու մթերքներով անցավ թշնամու ձեռքը...

### «ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ»

1918 թ. մարտի 1-ը, մի առանձնահատուկ օր էր: Երկու օր առաջ ձյունախառն փոթորիկը այնպես էր մոլեգնում Դավ-Բոյնում, որ աչքը չէիր կարող բացել...

Իսկ մարտի 1-ին տառապած, չարչարված հայ ժողովրդի դաժան բախտը մի անգամ ժպտաց, և զարնանային արևը տաքացրեց Երզրումից մինչև Սարիղամիշ ձգված բանակի և զաղթականության իրար խառնված քարավանները:

Մենք էլ, բոլորի հետ միասին, հետ էինք գնում... Ես «գնում»-ը գիտակցաբար եմ ասում և ընդգծում, որովհետև մեզ ո՛չ հետապնդող, հալածող թշնամի կար, ո՛չ հարձակման ճնշում կամ վտանգ, ո՛չ էլ ռազմական պլանով տեղաշարժ: Չկար ոչ էլ հրացանի կամ թնդանոթի թեկուզ կրակոցի ծայն:

Չսկա բանակը ինքն իրեն, տարերային ուժով հետ էր գնում... Մեր բեռնատար ավտոն, որի մեջ գտնվում էինք և մենք՝

շտաբի աշխատողներս, Հասան-Կալայից 25-30 կիլոմետր հեռավորության վրա դեռ չհասած, խրվեց ցեխի մեջ և, որքան չարչարվեցինք, ոչ մի կերպ չկարողացանք դուրս բերել:

Այդ ժամանակահատվածում զորամասերը, գաղթականությունը եկան և մեր մոտով անցան գնացին: Մենք մնացինք ծյունապատ դաշտում, Էրզրում-Սարիղամիշ նեղգիծ երկաթուղու գծին մոտիկ: Վերջին գնացքը, ծայրեծայր բեռնված մարդկանցով, եկավ և մերոնցից մի քանի հոգի նստեցին գնացին: Մնացինք ես, Համլիկը, մի լենինականցի՝ Արտյուշ անունով և Համլիկի սպասյակ Սիրաքը:

Ելք էինք փնտրում այդ վիճակից դուրս գալու: Լենինականցին հրացանի երկու զնդակով կարողացավ կտրել հեռախոսայուններին բարձր ձգված լարերը, որոնք մենք միացրինք մեր դաշտային հեռախոսի ապարատին և կապվեցինք Հասան-Կալայի կայազորի պետի հետ, խնդրեցինք օգնություն:

Նա պատասխանեց, որ տեղում ամեն ինչ իրար է խառնված, բայց կաշխատի հնարավորն անել:

Մի կես ժամից մեր հեռախոսային կանչին այլևս ոչ ոք չէր պատասխանում: Մի ժամաչափ սպասելուց հետո, ես և Համլիկը մնացինք ավտոյի մոտ, մյուսներին ուղարկեցինք գոնե մոտակայքից մի օգնություն բերելու, ավտոն ցեխից դուրս քաշելու համար:

Տեսնելով, որ ոչ մի տեղից ոչ մի հույս չկա, ուղարկվածները չվերադարձան: Աչքի ու հեռադիտակի տեսողության դաշտում ոչ ոք չի երևում և միայն մենք ենք այդ ամայի ծյունապատ դաշտում, որոշեցինք թողնել ավտոն և գնալ: Ոչնչացնելով՝ ինչ հնարավոր էր և, կարևորը, վերցնելով մեր հրացաններն ու բավականաչափ փամփուշտ, ոտքով ճանապարհ ընկանք երկաթգծի ուղղությամբ: Արդեն մութն ընկել էր, երբ մենք, հոգնած, սոված ու ծարավ հասանք Հասան-Կալա և ներկայացանք Անդրանիկին: Նա իջևանել էր մի երկհարկանի թեյատանը, որին սպասարկում էր մի տաճկախոս հույն, թե՞ տաճիկ:

Անդրանիկը մեզ տեսնելով անկեղծորեն ուրախացավ և կարգադրեց անմիջապես մեզ թեյ և ուտելիք տալ: Հոգնածությունից մի կերպ թեյ խմելուց և թեթև ուտելուց հետո, այդ սենյակում ուրիշների հետ հազմված պառկեցինք հատակին և քնեցինք: Անդրանիկն էր, որ չէր քնում և ներս ու դուրս էր անում: Ես, առհասարակ, նրան միշտ ոտքի վրա եմ տեսել: Առավոտյան ժամը 10-ին մոտ էր, երբ մենք լվացված սպասում էինք կարգադրության:

Այդ ժամին ես կանգնել էի թեյատան 2-րդ հարկի լուսամտի առաջ և նայում էի դեպի դուրս: Մեկ էլ տեսա՝ փողոցի մի կողմից դուրս եկան 40-50 դպրոցահասակ երեխաներ և զույգ-զույգ, իրար ձեռք բռնած, գնացին դեպի մերձակա բլուրը: Ես (դեռ նախկին ուսուցիչ էի) միամտաբար կարծեցի, որ դա որևէ դպրոց կարող է լինել և հաճելիորեն զարմացա, որ այդ պայմաններում պարապմունք է լինում: Իմ հաճելի զարմանքը փոխվեց, երբ տեսա, որ դասատուների կամ դեկավարների փոխարեն նրանց ուղեկցում և առաջ էին քշում մի քանի հրացանավորներ... Համլիկը մյուս սենյակից 2 բաժակ թեյ ձեռքին մոտեցավ ինձ: Ես նրա (ճա ինձանից ավելի փորձ և հմտություն ուներ) ուշադրությունը հրավիրեցի այդ «դպրոցականների» անսովոր երթի վրա:

Համլիկը անմիջապես կռահեց և առանց վայրկյան կորցնելու վազեց Անդրանիկի մոտ: Ես նոր գլխի ընկա և նույնպես շտապեցի Անդրանիկի մոտ: Հասա այն պահին, երբ Անդրանիկը նույնպես իր սենյակի պատուհանից տեսնելով, զայրացած, արագ-արագ տաճկերեն կարգադրություն էր անում իրենից միշտ անբաժան Հայրիկին (այդպես էինք անվանում արագաշարժ, միշտ ոտքի վրա այն լավ մարդուն, որը միշտ հոգ էր տանում Անդրանիկին) և ուրիշ տղաների, որոնք անմիջապես վեր թռան և հրացաններն առնելով արագ դուրս վազեցին՝ հուզված տաճկերեն խոսելով: Պարզվեց, Հասան-Կալայի պարետը, թե մի այլ «քալազյոգ խմբապետ» հավաքել էր թրքական այդ երեխաներին և կարգադրել տանել և բլուրի հետևում ոչնչացնել...

Մենք լուսամուտից նայում էինք: Անդրանիկի ուղարկած տղաները արագ հասան և կանգնեցրին երթը:

Մի փոքր վիճաբանությունից հետո տանող զինվորները, իմանալով Անդրանիկի կարգադրությունը և տեսնելով նրան լուսամուտից նայելիս, հետ դարձան, իսկ փաշայի տղաները Հայրիկի ղեկավարությամբ երկու կողմից շրջապատելով, հնարավորինս զգույշ առաջ տարան երեխաներին: Այս ու այն տնից դուրս էին վազում ուրիշ երեխաներ և միանում խմբին: Անդրանիկը խիստ կարգադրել էր, որ այդ երեխաներին անվնաս տանեն և հանձնեն մոտակա գյուղի մոլլային, իսկ նրանից ստացական բերեն:

Մի տեսակ տարօրինակ բան կար տաճկահայերի մեջ: Նրանք, թեև խոր ատելություն էին տածում դեպի տաճիկները, բայց իրար հետ խոսում էին տաճկերեն, զվարթ ու տխուր ժամերին երգում էին տաճկերեն երգեր, թեև հայերեն գիտեին: Թերևս դա բնագրական համակրանք է դեպի չարքաշ տաճիկ աշխատավորությունը և զզվանք՝ դեպի տաճիկ բորենիները...

Երբ բլուրի զագաթին հասած երթը մի պահ կանգ առավ, հավաքվեց, մի փոքր իրար մեջ խոսելուց հետո, երեխաները հետ նայեցին այն լուսամուտին, որտեղ կանգնած էր Անդրանիկը...

Հասան-Կալայից հետո, Քյուֆրի-Քոյում պատահեցի Հայրիկին և հետաքրքրվեցի, թե ի՞նչ արին երեխաներին: Նա ծոցագրպանից հանեց տաճկերեն գրված թուղթ և խնամքով բաց անելով ցույց տվեց: Ես խորհուրդ տվի, որ հանձնի փաշային:

... Այդքան մեծահոգի ու բարեսիրտ էր ցասման վրեժով լցված հայ ժողովրդի պանծալի հերոսը՝ Անդրանիկը:

### ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐԸ

Էրզրումի անկման և մեծ նահանջի առաջին օրը Անդրանիկի ղեմքին էր ընկճվածություն նկատվում, բայց՝ ոչ հուսալքում: Այդ երեկո, երբ մենք հասանք Հասան-Կալա, նա գետնին նստած թեյ էր խմում, խոսում զինվորների, խորհրդակցում

սպաների հետ և կարգադրություններ անում զաղթող ժողովրդին տեղավորելու, հանգիստ տալու, հետախուզություն կազմակերպելու, պաշտպանության գիծ ստեղծելու, տարերային նահանջը մի կերպ հունի մեջ դնելու հարցերի մասին:

Նա առանձնապես անհանգստանում էր Խնուսի ուղղությամբ գտնվող զորքերի և զաղթող ժողովրդի վիճակով, որոնք, չիմանալով մեր նահանջի մասին, կարող էին շրջապատման մեջ ընկնել և զլխովին ոչնչանալ: Նա վստահ էր, որ հետ քաշվող զորամասերը Սարիղամիշում կանգ կառնեն, հնարավոր կլինի կազմակերպել դիմադրություն և առաջին հերթին ապահովել զաղթականության անվտանգ շարժվել դեպի Անդրկովկաս, Ռուսաստան... Սակայն հրաբխից դուրս ժայթքած լավայի պես առաջ (ավելի ճիշտ՝ հետ) սողացող զորքը Սարիղամիշում կանգ չառավ, այլ ինչպես տարերային ուժով եկել էր, այնպես էլ շարունակեց հոսել դեպի հյուսիս... Իսկ մարտի 3-ին կա 4-ին ճակատի հրամանատար գեներալ Օդիշելիժեի հրամանով թողնվեց Սարիղամիշը և բանակը նահանջեց Ղարս (մինչ այդ ենթադրվում էր՝ Սարիղամիշը, որպես նախքան պատերազմի սահմանագլուխ, կդառնա նահանջի վերջին կետը):

Մեր շտաբը, որի որոշ աշխատողներ թողել և գնացել էին շտաբի պետ Զինկևիչի հետ, ղեկավարում էր գնդապետ Պավել Պետրովիչ Բեժան-Բեկը (թիֆլիսեցի հայ. ռուսախոս, ավելի շատ երաժիշտ, քան զինվորական...): Շտաբը Սարիղամիշից տեղափոխվեց Կարս, ապա՝ Ալեքսանդրապոլ: Անդրանիկը չմիացավ մեզ, այլ մնաց Սարիղամիշում:

Մարտի առաջին կեսերին, երբ Ալեքսանդրապոլում էինք, մի սարսափելի ցուրտ օր եկան ինձ հայտնեցին, որ փաշան Ալեքսանդրապոլի թեմի փոխանորդի բնակարանում է և իր մոտ է կանչում Համլիկին կամ ինձ: Համլիկը բացակա էր, ես անմիջապես գնացի առաջնորդարան, որը գտնվում էր Լենինականի ներկայիս քաղսովետի շենքի ձախ կորպուսի տեղում: Այդ շենքի երկրորդ հարկի սենյակներից մեկում էր գտնվում Անդրանիկը: Նրա հետ էին 10-15 հոգի ալեքսանդրապոլցիներ, որոնք ծալա-



պատիկ հատակին կամ սակավաթիվ աթոռներին նստած փոխանորդի հետ (մի երիտասարդ աշխույժ վարդապետ) հուզված խոսում էին օրվա քաղաքական անցուդարձից և նախաճաշում: Ես ընդհանուր բարև տալուց հետո մոտեցա Անդրանիկին, նա ծեռքը մեկնեց, բարևեց և սիրալիր առաջարկեց ինձ իրենց հետ նախաճաշել: Ես հրաժարվեցի:

Ինչքան էր փոխվել... Սև, մռայլ ամպեր էին կարծես նստած նրա՝ այնքան աշխուժություն արտահայտող դեմքին: Հոգնած ու նվաղած էին նրա անքուն, կրակոտ աչքերը... Մի քանի հարց տալուց հետո ասաց.

- Հեռագիր մը պետք է գրես:

Ես անմիջապես հանեցի բլոկնոտս և մատիտս. ուշադրությամբ լսում էի: Ամենքը մի պահ լռեցին:

- Գրի՛ր Թիֆլիս՝ շտաբին (այսինքն՝ Կովկասյան), Ջավրիկին, Ազգային խորհրդին և մյուսներուն:

Ես արագ նշումներ էի անում:

- Գրի՛ր «գայլերու ոհմակի և դավաճաններու շրջապատի մեջն են ընկել...»:

Նրա ծայրը հուզված էր, բայց խորխտ:

- Գրի՛ր, ես իմ վրայն կծգեմ...

Երկար էր հեռագիրը, ես այժմ բովանդակությունը լրիվ դժվարանում եմ վերհիշել (թերևս արխիվներում գտնվի այն): Ես արագ գրում էի՝ ինքս էլ հակվելով և մտածելով, որ այս ծանր ու պատասխանատու պահին Անդրանիկի մի կողմ քաշվելը և մի այնպիսի հեռագրի հրապարակումը մի նոր ծանր հարված չէ՞, ճանփաներում այս ցրտին փռված ու ցրված մեր ժողովրդին...

- Փաշա, թույլ տուր մի փոքր...

- Ոչ, ոչ, ինչ ասացի, այն էլ գրիր, - խոսքս ընդհատեց նա ընկճված ծայնով:

Նա վերցրեց ինձանից գրածս ու տառ առ տառ, քիմիական մատիտով դրեց իր ստորագրությունը լատիներեն՝ «Andranik» (այս հեռագրի իսկականը երկար ժամանակ պահում էի. բնակարանիս տեղափոխության ժամանակ կորցրի):

Ես դուրս եկա և շտապեցի գտնել Համլիկին:

- Համլիկ՝ ջան, արի տեսնենք՝ ինչ անենք այս հեռագիրը: Մոտ մի ժամ մտածում էինք, փաշայի մոտ գնալ փոփոխված տեքստով, կամ մեկին ուղարկել՝ կասեցնելու և հետ վերցնելու այդ հեռագիրը: Ինչքան ծանր ապրումներ ուներ այդ ՍԱՐԴԸ, որ թողնում ու հեռանում էր այն գործից, որին նա նվիրել էր իր ամբողջ կյանքը...

... Մի եիկու ժամից թարգմանված տեքստը հանձնեցինք գինվորական հեռագրատուն...

\*\*\*

Մի քանի օր անց հանդիպեցի Ալեքսանդրապոլի (Լենինականի) նախկին առևտրական դպրոցի (Ենթակայիս ֆիլիարմոնիայի) մուտքի սանդուղքների վրա: Սիրալիր բարևեց, հարցուփորձ արեց: Երկար խոսել չկարողացանք: Նրան համոզել էին և նա ընդունում էր նոր կազմակերպված մի զորամասի զորահանդեսը, որի հրամանատար էր նշանակված ինքը (զեն. Նազարբեկովի կորպուսում): Ջորամասը, մի քանի անգամ պտտվելով շենքի և հրապարակի շուրջը, գալիս անցնում էր նրա առջևով՝ «ուռռա» և «կեցցեներ» կանչելով...

Փոթորկվող օվկիանոսում ղեկը, կողմնացույցը և կայները ջարդված մեծ նավի (հայ ժողովրդի) հզոր, հերոս, իմ տարաբախտ մեծ նավապետ, ի՞նչ հրաշք կփրկի նավը... Բայց կատարվեց փրկության մեծ հրաշքը, կատարվեց Սարդարապատում...

Ինչ էլ լինի, քանի կա հայ ժողովուրդը, նրա տենչանքը՝ ազատ, խաղաղ ապրելու իր երկրում, նրա սրտում միշտ կաս ԴՈՒ...

## ՔՆԱՐԻԿ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՎԱՅԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ

Զորավար Անդրանիկի մասնակցությունը Բալկանյան պատերազմներին ..... 3

### ՌՈՒԲԵՆ ՍԱՅԱԿՅԱՆ

Հայ կամավորական առաջին խմբի մարտական գործողությունները Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատում (1914 թ. հոկտեմբերի 23 – 1916 թ.) ..... 11

### ԳԱՅԱՆԵ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ

Արևմտահայ դիվիզիան և ԱՄՆ-ի քաղաքականությունը 1917-1918 թթ. .... 49

### ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

1918 թ. գարնանը Անդրանիկ Օզանյանի Ջավախք մեկնելու հանգամանքների շուրջ ..... 77

### ՀԱՍՈ ՍՈՒԲԻԱՅԱՆ

Ինչպես հայդուկապետն արժանի հակահարված տվեց թուրք փաշային. 1918 թ. Անդրանիկի պատասխանը Նուրիի զրպարտություններին ..... 99

### ՀՐԱՆՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Արցախահայության նամակները Զորավար Անդրանիկին ..... 106

### ԿԱՐԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Անդրանիկը և արևմտահայ փախստականների ներգաղթի խնդիրը 1919 թ. ապրիլին ..... 113

### ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Մի դրվագ 1919-1922 թթ. Մանչեստրում Անդրանիկ Օզանյանի ծավալած ազգանպաստ գործունեությունից ..... 138

### ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ

Զորավար Անդրանիկ Օզանյանի գործունեությունը ԱՄՆ-ում և ամերիկահայությունը ..... 143

### ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

Զորավար Անդրանիկի գործունեության պատմության դասերը ..... 160

### ՀԱԿԵԼՎԱԾ

### ԳՐԻԳՈՐ ՂԱԶԱՐՅԱՆ

Հուշեր Անդրանիկի մասին ..... 184

**ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆ – 150**

(հոդվածների ժողովածու)

**ANDRANIK OZANYAN – 150**

(collection of articles)

**АНДРАНИК ОЗАНЯН – 150**

(сборник статей)

Համակարգչային ձևավորող՝ Ա. Մարանգոյան  
Տպագրիչ՝ Լ. Միրադյան

Ստորագրված է տպագրության՝ 25.09.2015 թ.

Տպարանակը՝ 250 օրինակ

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՍԻԱ**

**ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА**

**INSTITUTE OF HISTORY OF NAS RA**

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4

РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4

24/4, Marshal Baghramyan ave., 0019, Yerevan

<http://www.acadmhistory.am>